ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ ՏԱՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 339
ԳՄԴ 65.5
Հ 247

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հեղինակներ՝

Թորոս Թորոսյան
Գրիգոր Հայրապետյան
Դիանա Գալոյան
Նարեկ Հովակնյան
Նարինե Կոտիկյան
Լիլիթ Սարգսյան

Գիտական խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Վլադիմիր Հարությունյան**

Թեմայի ղեկավար և
մասնագիտական խմբագիր՝
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Թորոս Թորոսյան**

Հ 247 Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում/ Թ. Թորոսյան, Գ. Հայրապետյան, Դ. Գալոյան, Ն. Հովակնյան, Ն. Կոտիկյան, Լ. Սարգսյան: Գիտական խմբագիր՝ Վ. Հարությունյան, Թեմայի ղեկավար և մասնագիտական խմբագիր՝ Թ. Թորոսյան.- Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012: 240էջ:

Աշխատանքում դիտարկված է Հայաստանի և Թուրքիայի դերը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, տրված է նրանց մակրոտնտեսական և արտաքին առևտրի բնութագիրը, քննարկված են հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը և նրանց միջև անմիջական ուղղակի տնտեսական հարաբերությունների ձևավորման դեպքում հնարավոր օգուտները և ռիսկերը:

Գիրքը նախատեսված է գիտաշխատողների, գործարարների, դասախոսների, ասպիրանտների, մագիստրանտների և բակալավրիատի ուսանողների համար:

ՀՏԴ 339
ԳՄԴ 65.5

ISBN 978-5-8080-0938-7
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2012

INSTITUTE OF ECONOMICS, NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ARMENIA AND TURKEY IN THE PROCESSES OF REGIONAL ECONOMIC INTEGRATION

YEREVAN
"Gitutyun" Publishing house, NAS RA
2012

Բաժինների հեղինակներ՝

Գլուխ 1		տ. գ. դ., պրոֆ.	Թորոս Թորոսյան
		տ. գ. թ., դոց.	Գրիգոր Հայրապետյան
			Լիլիթ Սարգսյան
Գլուխ 2		տ. գ. թ., դոց.	Դիանա Գալոյան
			Նարինե Կոտիկյան
Գլուխ 3	**3.1.**	տ. գ. դ., պրոֆ.	Թորոս Թորոսյան
			Նարինե Կոտիկյան
	3.2.		Լիլիթ Սարգսյան
Գլուխ 4	**4.1.**	տ. գ. թ.	Նարեկ Հովականյան
	4.2.	տ. գ. թ., դոց.	Դիանա Գալոյան
			Նարինե Կոտիկյան

Dr. Vladimir Harutyunyan, Scientific editor
Dr. Toros Torosyan, Team supervisor and Specialist editor

Chapter Authors:

Chapter 1

Doctor of Economics, Professor Toros Torosyan
Candidate of Economic Science, associated professor G. Hayrapetyan
L. Sargsyan

Chapter 2

Candidate of Economic Science, associated professor D. Galoyan,
N. Kotikyan

Chapter 3

3.1. Doctor of Economics, Professor Toros Torosyan,
N. Kotikyan
3.2. L. Sargsyan

Chapter 4

4.1. Candidate of Economic Science N. Hovakanyan
4.2. Candidate of Economic Science, associated professor D. Galoyan,
N. Kotikyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 7

Գլուխ 1. Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տնտեսության և արտաքին առևտրի բնութագիրը

1.1. ՀՀ բնառեսուրսային և մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը **16**

1.2. ՀՀ արտաքին առևտրի զարգացման միտումները և կառուցվածքային տեղաշարժերը **29**

Գլուխ 2. Թուրքիայի Հանրապետության (Թուրքիա) տնտեսության և արտաքին առևտրի նկարագիրը

2.1. Թուրքիայի տնտեսաաշխարհագրական բնութագիրը ... **51**

2.2. Թուրքիայի արտաքին առևտրի վիճակի և կառուցվածքի վերլուծությունը **88**

Գլուխ 3. Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին առևտուրը

3.1. Հայաստանի և Թուրքիայի միջև ապրանքների առևտրի ուսումնասիրությունը **105**

3.2. Հայաստանի և Թուրքիայի ծառայությունների ոլորտների զարգացումները սահմանի բացման պարագայում **126**

Գլուխ 4. Թուրքիա, Հայաստան, Եվրամիություն (ԵՄ) և հայ-թուրքական սահմանի վերաբացումը

4.1. Թուրքիայի և ՀՀ տնտեսությունների համեմատականները ԵՄ ինտեգրման համատեքստում **151**

4.2. Հայ-թուրքական սահմանի վերաբացման սոցիալ-տնտեսական հետևանքները **173**

Վերջաբան **208**

CONTENTS

Introduction 12

Chapter 1. The characteristics of the economy and external trade of Republic of Armenia (RA)

1.1. The analysis of natural recourse and macroeconomic situation of RA..... 16

1.2. Tendencies and structural moves of RA external trade development 29

Chapter 2. The characteristics of the economy and external trade of Republic of Turkey

2.1. The economic and geographic characteristics of Turkey.. 51

2.2. The analysis of Turkey`s external trade condition and structure 88

Chapter 3. The external trade of RA and Turkey

3.1. The analysis of commodity trade structure of Armenia and Turkey 105

3.2. The development of service sphere of Armenia and Turkey in the condition of border opening 126

Chapter 4. Turkey, Armenia, European Union and the opening of Armenian-Turkish border

4.1. Comparing Armenian and Turkish economies in the context of EU integration 151

4.2. The social-economic consequences of Armenian-Turkish border reopening 173

Conclusion 226

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Եվ վատ բերքից հետո պետք է ցանել»
Սենեկա

1991թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան ճանաչեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այդուհանդերձ, առ այսօր՝ 20 տարի անց, Թուրքիան դեռ խուսափում է ուղղակի դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց Հայաստանի հետ՝ նախընտրելով շարունակել փակ սահմանի քաղաքականությունը: **Նշենք, որ մեր հասարակության մեջ ընդունված է տվյալ խնդիրը ձևակերպել որպես հայ-թուրքական սահմանի բացում (վերաբացում): Այդ իսկ պատճառով մեր հետազոտության մեջ մենք ևս կօգտագործենք նման արտահայտություն: Սակայն, մեր կարծիքով, հարցի բուն տնտեսագիտական իմաստը երկու երկրների միջև չմիջնորդավորված ուղևորաբեռնափոխադրման երկաթգծային (Գյումրի-Ղարս) և ավտոմոբիլային (Մարգարայի կամրջով) ճանապարհների վերաբացումն է և այլ ուղղակի ուղիների ստեղծումը: Հայտնի է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև գործում է Երևան-Ստամբուլ և Երևան-Անթալիա օդային կապը: Ընդ որում՝ այս երկու դեպքում էլ օրինական ձևով իրականացվում են անձնագրային և մաքսային բոլոր անհրաժեշտ ձևակերպումները, որոնք գոյություն ունեն տարբեր երկրների միջև, այսինքն՝ այս տեսանկյունից սահմանը բաց է: Ուստի, մեր կարծիքով, խնդրի տնտեսագիտորեն ճիշտ ձևակերպումը երկու երկրների միջև անմիջական և ուղղակի առևտրատնտեսական կապերի ձևավորումը, իրականացումը և կազմակերպումն է, քանի որ այս դեպքում հասկանալի է, որ կկրճատվեն տրանսպորտային ծախսերը, և ավելի արդյունավետ կդառնա տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև:**

Հայաստանը մշտապես ժխտել է Թուրքիայի կողմից սահմանի

փակման կամ այսպես կոչված շրջափակման կամ էմբարգոյի իրավականությունը: Երևանը բողոքում է, որ Թուրքիան դրանով իսկ խախտում է Կարսի պայմանագիրը, ԱՀԿ ազատ առևտրի ապահովման պարտավորությունը, Հազարամյակի մարտահրավերների ծրագիրը և միջազգային իրավունքի այն բոլոր կետերը, որոնք վերաբերում են դեպի ծով ելքի ապահովմանը ծովային սահման չունեցող երկրների համար: Թուրքիան իր հերթին ընդդիմանում է՝ պնդելով, որ միջազգային իրավունքի տեսանկյունից փակ սահմանը չի կարող դիտարկվել որպես շրջափակում: Ավելին, որպես ապացույց Անկարան հրապարակում է պաշտոնական տեղեկատվություն Հայաստանի և Թուրքիայի միջև առկա կապերի վերաբերյալ՝ հետ մղելով ցանկացած տեսակի նմանատիպ մեղադրանքները և ժխտելով իր կողմից Հայաստանի հանդեպ սանկցիաների կիրառման հնարավորությունը:

Եվ իրոք, փակ սահմանը և բոլոր տեսակի կապերի սառեցումը, իհարկե, անհաղթահարելի խոչընդոտ դարձան երկու երկրների միջև առևտրային հարաբերությունների զարգացման համար: Այդուհանդերձ, 1990-ական թվականները բնորոշվեցին նրանով, որ աստիճանաբար, երբեմն տարերային կերպով, որոշակի ճանապարհներ մշակվեցին էմբարգոն շրջանցելու համար՝ սկիզբ դնելով փակ սահմանի պայմաններում երկկողմանի ապրանքաշրջանառության հաստատմանը: Դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում առևտրականներն ու անհատ ձեռներեցները եկան ստանձնելու երկու երկրների միջև միակ միջնորդ օղակի դերը, իսկ նրանց կողմից իրականացվող գործարքները ժամանակի ընթացքում էլ ավելի կատարելագործվեցին և այսօր ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ:

Իրականությունը եկավ փաստելու, որ զուտ վարչաքաղաքական պատնեշներով անհնար է ամբողջությամբ բացառել առևտուրը. գործարարներն իրենց շահերն ունեն ու առևտուր են անում ինչպես անուղղակի, այնպես էլ ուղղակի խողովակներով:

Խոսելով հայ-թուրքական հարաբերությունների և դրանց զարգացման մասին՝ այսօր տնտեսագետների և գործարարների շրջանում թերևս մի քանի հիմնական հարցեր են արծարծվում. ե՞րբ կբացվի սահմանը, ինչպիսի՞ն կլինի հայ-թուրքական տնտեսական համագործակցությունը, ո՞ր ոլորտները կընդգրկվեն, ի՞նչ ծավալի կապիտալի արտահոսք կամ ներհոսք տեղի կունենա, որքանո՞վ

կկրճատվեն տրանսպորտային ծախսերը հումքի ներմուծման դեպքում նոր ուղիներն օգտագործելու պարագայում, ո՞ր ոլորտներում կարելի է համատեղ ներդրումներ իրականացնել, որքանո՞վ կբարձրանա ներդրումների շահութաբերությունը կամ հետգնման ժամկետը: Եվ վերջապես տնտեսագիտության մեջ տրվող ամենակարևոր հարցերից մեկը՝ որքանո՞վ այն կնպաստի տնտեսության արդյունավետության բարձրացմանը և տնտեսական աճին:

Սակայն շատ քիչ են այն վերլուծությունները, որոնք լույս են սփռում հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հեռանկարների վրա՝ անկախ նրանից՝ սահմանը բացվում է, թե ոչ: Տարբեր տնտեսական գնահատականներ են տրվում վերոնշյալ վերջին երկու հարցերին: Սակայն այդ հարցերի պատասխանները գտնելու համար նախ և առաջ պետք է մանրազնին ուսումնասիրել ու հասկանալ առկա իրողությունն ու միտումները՝ խորապես ուսումնասիրելով արտաքին առևտրին վերաբերող հարցերը:

ՀՀ արտաքին տնտեսական կապերի համակարգում առավել կարևորվում են առևտրատնտեսական հարաբերությունները հարևան երկրների հետ, քանի որ դա է ՀՀ՝ համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու միակ ուղին: Այդ առումով սույն հետազոտության ուսումնասիրության առարկան ՀՀ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների ձևավորման ու զարգացման և դրա հետագա կատարելագործման հարցերն են: Բարդությունն այն է, որ ՀՀ հարևան 4 երկրներից առևտրատնտեսական օրինական կապեր իրականացվում են փաստորեն Վրաստանի և Իրանի հետ: Կարևոր խնդիր է մնում Թուրքիայի հետ առևտրատնտեսական կապերի օրինական հաստատումը և իրականացումը, սա էլ իր հերթին պահանջում է ուսումնասիրել այն սոցիալ-տնտեսական հետևանքները, որոնք կարող են առաջանալ ՀՀ և Թուրքիայի առևտրատնտեսական կապերի զարգացման արդյունքում:

Ներկայումս Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն չունեն պետականորեն կարգավորվող ուղղակի առևտրատնտեսական հարաբերություններ: Փաստացի, երկու երկրների միջև արտաքին առևտուրը և մարդկային ռեսուրսների շարժը հիմնականում իրականացվում է հարակից տարածքներով (Վրաստան, Իրան): Բացառություն է կազմում գոյություն ունեցող օդային ուղղակի կապը (Ստամբուլ, Անթալիա): Նշենք, որ ՀՀ տնտեսության մեջ, հատկապես ար-

տաքին առևտրում, մասնավորապես ներմուծման հատվածում, Թուրքիան որոշակի դերակատարություն ունի: Սակայն գործնականորեն ներազդել այդ գործընթացների վրա պետականորեն հնարավոր չէ, քանի որ երկու երկրների միջև գոյություն չունեն դիվանագիտական և հատկապես տնտեսական համագործակցության պայմանագրեր, ուստի, օրինակ, հնարավոր չէ կիրառել արտաքին առևտուրը կարգավորող գոյություն ունեցող լծակներ:

Եթե ՀՀ և Թուրքիայի միջև արտաքին առևտուրը լինի օրինական ճանապարհով և ուղիղ կապով, ակնհայտ է, որ կնվազեն տրանսպորտային ծախսերը, և համապատասխանաբար կիջնեն ապրանքների գները: Այս պայմաններում կառաջանան որոշակի խնդիրներ և ռիսկային իրավիճակներ ՀՀ տնտեսությունում, օրինակ՝ ներքին արտադրողներին պաշտպանելու անհրաժեշտություն:

Ինչպես գիտենք, Հայաստանի և Թուրքիայի միջև սկսվել է պաշտոնական գործընթաց երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Այս գործընթացը, բնականաբար, կարող է նպաստել սահմանի բացմանը, երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի աշխուժացմանը: Վերոնշյալը պահանջում է որոշակի տնտեսագիտական հետազոտություններ իրականացնել սահմանի բացման դրական և բացասական դրսևորումները բացահայտելու առումով:

Աշխատանքը պարունակում է նախ և առաջ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման վերլուծությունը՝ մակրոտնտեսական մակարդակում: Առանձնակի ուշադրություն է դարձվել Հայաստանի արտաքին առևտրի զարգացման դինամիկային, դրա ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությանը:

Հետազոտության մեջ տրվել է Թուրքիայի տնտեսության ընդհանուր բնութագիրը, որն ընդգրկում է երկրի տնտեսաաշխարհագրական դիրքը, տնտեսության զարգացման մակրոտնտեսական իրավիճակը, երկրի արտաքին առևտուրը աշխարհի տարբեր երկրների հետ և այլն:

Հետազոտության մեջ մեծ տեղ է զբաղեցրել հայ-թուրքական առևտրատնտեսական կապերի վերլուծությունը: Ուսումնասիրության ընթացքում վեր են հանվել այն հիմնական թերությունները, որոնք գոյություն ունեն երկու երկրների միջև արտաքին առևտրում:

Հիմք ընդունելով համեմատական առավելությունների սկզբունքը՝ ուսումնասիրվել են Հայաստանի և Թուրքիայի արտադրական մասնագիտացման հիմնախնդիրները՝ երկու երկրների միջև արտաքին առևտրի հետագա զարգացման տեսանկյունից:

Աշխատանքում առանցքային տեղ է զբաղեցրել այն հնարավոր տնտեսական խնդիրների և ռիսկերի ուսումնասիրությունը, որոնք կարող են դրսևորվել ՀՀ առանձին ոլորտներում և բնագավառներում հայ-թուրքական սահմանի վերաբացման արդյունքում: Աշխատանքը տրոհվել է ըստ իրական հատվածի հիմնական ճյուղերի, ինչպես նաև ծառայությունների ոլորտի հիմնական ենթաճյուղերի: Տրվել են տնտեսական ռիսկերի բնութագիրը և դասակարգումը, որը տեսամեթոդական հիմք է ծառայում հայ-թուրքական սահմանի վերաբացումից ակնկալվող տնտեսական ռիսկերի սահմանազատման համար:

Տնտեսական ռիսկերը նախ և առաջ ընդգրկում են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը: Հատուկ ուշադրության է արժանացել տնտեսության այլ ոլորտներում հավանական տնտեսական ռիսկերի ուսումնասիրությունը, մասնավորապես արտաքին առևտրում, ծառայությունների ոլորտում, տրանսպորտում և կապում, ֆինանսական հատվածում, զբոսաշրջությունում և այլն: Բացահայտվել են նաև սահմանի բացման արդյունքում բնակչության և աշխատուժի միգրացիոն հոսքերի հնարավոր փոփոխությունները, և առաջարկվել դրանց կարգավորման մեխանիզմները:

Իրականացված հետազոտության հիման վրա փորձ է արվել գնահատել հավանական առաջացող ռիսկերը ՀՀ տնտեսության մեջ հայ-թուրքական սահմանի վերաբացումից հետո: Հետազոտության վերջնական արդյունքում մշակվել են կոնկրետ առաջարկություններ հնարավոր տնտեսական ռիսկերը նվազեցնելու և սահմանի բացումից ձևավորվող բացասական տնտեսական երևույթների կարգավորման ուղղությամբ:

INTRODUCTION

"Even after a bad harvest there must be sowing"
Seneca

On December 16th of 1991 Turkey recognized the independence of newly formed Republic of Armenia. Though, till now, after 20 years Turkey is still avoiding forming straight diplomatic relations with Armenia preferring to continue the policy of closed border.

Let`s mention that in our society it is common to qualify this problem as "Armenian-Turkish border opening (reopening)". That`s why in our research we shall also use that expression. But in our opinion the main economic meaning of the problem is the reopening of the land railway (Gyumri-Kars) and automobile (Margara Bridge) roads, which will allow organizing straight cargo-passenger transfers between the two countries. It is well-know that between Armenia and Turkey Yerevan-Istanbul and Yerevan-Antalya air connections exist. On the same time in both cases passport and customs document executions are legal, just like they are in the relations between Armenia and other countries. This means that in this point the border is open. Thus, in our opinion, the problem lies upon the formation, realization and organization of direct trade-economic relations, as in this case it is obvious that transportation fees will reduce and the economic cooperation between countries will become more effective.

Armenia has always denied the reality of existence of blockade or embargo, caused by Turkey with closed border. Armenia complains that by closing the border Turkey breaches The Kars Agreement, the WTO free trade insurance liabilities, Millennium Challenge program and all those issues of international law, that concern to the land locked countries. Turkey in his turn opposes that in the terms of international law closed border cannot be considered as a blockade. Moreover, as

a prove Ankara publishes an official information about the relations of Armenia and Turkey, breaking all kind of accusations and denying the possibility of using sanctions towards Armenia.

Truly, closed border and the lack of all kind of relations, for sure became an undefeatable obstacle for the development of trade relations between two countries. However, in 1990-s gradually, sometimes even spontaneously, some ways have been developed in order to avoid the embargo, and to start the bilateral commodity turnover in the conditions of closed border.

The absence of diplomatic relations made the traders and businessmen to become the only connecting path between the two countries, and by time their activities started to cover many other spheres. The reality came to prove that just by administrative and political obstacles it is impossible to exclude the whole trade: the businessmen have their interests and organize trade both by direct and indirect ways.

Today talking about the development of Armenian-Turkish relations economists and businessmen ask some questions: when will the border open?, what kind will the Armenian-Turkish cooperation be?, which spheres will it include?, what volume of capital inflow or outflow will take place?, how much will the transportation fees reduce during the import of raw materials?, in which spheres joint investments can be made?, how much will the profitability of investments or its buy-back time reduce? And finally one of the main questions asked in economics is – how much will it affect the efficiency of economy and economic growth?

However there are a few analyses' that shape the prospects of Armenian-Turkish economic relations, no matter the border will open or no. Different economic estimations are given to the upper mentioned last two questions. But in order to find the answers of those questions first of all we have to study and understand the current situation and its tendencies in details, concentrating on the external trade issues.

In the system of RA external economic relations more important are considered to be the relations with neighbor countries, as it is

the only way to integrate to the world economy. Thus, the object of this study is the formation and the development of RA regional economic integration and its further improvement. The difficulty is that among the four neighbor countries legal trade and economic relations RA has only with Georgia and Iran. An important problem continues to stay the formation and realization of legal relations with Turkey, which in its turn makes the study of the possible social-economic consequences, a need.

Currently there are no state organized direct trade-economic relations between Turkey and Armenia. In fact the trade and the mobility of human resources between the two countries are mainly realized by transit ways (Georgia, Iran). The only exclusion is the direct air connection (Istanbul, Antalya). It should be mentioned that in the economy of RA, especially in import sector, Turkey plays a specific role. But it is impossible to influence those processes on the state level, as there are no signed diplomatic and especially economic cooperation agreements between the two countries. In this case it is impossible to use any of the existing trade regulation instruments.

If the trade between Armenia and Turkey is direct and legal, it is obvious that the transportation fees and thus the commodity prices will reduce. In these conditions some risky economic situations will occur in Armenian, for example the necessity of local producer's protection.

As we know, Armenia and Turkey started an official process in the direction of forming diplomatic relations between the two countries. This process, naturally, may affect the border opening and the increase of the trade-economic relations. The above mentioned makes the necessity of some economic studies, devoted to the identification of border opening positive and negative consequences, more obvious.

This research first of all includes the analysis of social-economic development of RA in macroeconomic level. A separate attention has been paid to the dynamics of Armenian external trade development, its commodity and geographic structure.

The research also includes the general characteristics of

Turkish economy, its economic and geographic situation, the analysis of current macroeconomic situation of the country and its external trade with the rest of the world, etc.

The analysis of Armenian-Turkish trade-economic relations plays a big role in this research. During the study we have also revealed the main disadvantages existing in trade relations of two countries. Taking into account the principal of comparative advantages the problems of Armenian and Turkish productive specialization have been studied from the point of the further development of external trade of two countries.

In the research a leading role is also given to the analysis of the problems and economic risks, which may occur in the different spheres and sectors of the Armenian economy after the reopening of the border. The research has been divided by the main branches of the real sector, as well as by the main sub branches of service sector. We have also characterized and classified the category of economic risks, which can serve as a theoretical and methodological base for the delimitation of expected economic risks after the border opening.

The economic risks first of all include the industry, agriculture and construction. A special attention has been paid to the analysis of the possible economic risks which may occur in the other spheres of economy, especially external trade, service sector, transportation and communication, financial sector, tourism, etc. We have also revealed the possible changes in population and labor migration flows, as well as proposed mechanisms of its regulation.

On the bases of realized study we have tried to evaluate the possible economic risks and worked out suggestions, which will allow to reduce those risks and to regulate the negative economic phenomena occurring after border opening.

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. ՀՀ բնառեսուրսային և մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը

Հայաստանի Հանրապետությունը պետություն է Եվրոպայի և Ասիայի սահմանագլխին՝ Հարավային Կովկասում:

Հայաստանը գտնվում է Եվրոպա տարածաշրջանում՝ Սև և Կասպից ծովերի միջև, և չունի ելք դեպի ծով: Այն հյուսիս-արևելքից սահմանակից է Վրաստանին և Ադրբեջանին, իսկ հարավ-արևմուտքից՝ Իրանին և Թուրքիային:

Սահմանի երկարությունն է՝ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հետ՝ 556 կմ, Նախիջևանի Ինքնավար Մարզի՝ 221 կմ, Վրաստանի՝ 164 կմ, Իրանի՝ 35 կմ և Թուրքիայի հետ՝ 268 կմ:

Հայաստանի բնակչությունը 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 3,2 մլն մարդ[1]: Հայերը կազմում են ազգաբնակչության 96%-ը: Բացարձակ մեծամասնությունը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ է: Ազգային փոքրամասնությունները՝ ռուսներ, եզդիներ, քրդեր, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, հրեաներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 29.8 հազ. քառ. կմ տարածք: Հայաստանը լեռնային երկիր է: Տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1830 մետր է (ամենացածր կետը 375 մետր է, ամենաբարձրը՝ 4090 մետր):

Հայաստանն ունի հանքահումքային և նյութական որոշակի պաշարներ, որոնք կարող են հիմք ծառայել արտաքին առևտրա-

[1] Այստեղ և հետագայում բոլոր տվյալները, որոնց վերաբերյալ չեն լինի հատուկ հղումներ, հիմնված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերի վրա:

տնտեսական կապերի զարգացման ու ծավալման համար[2]: Հայաստանն ունի երկաթի արդյունաբերական նշանակություն ունեցող երկու (Աբովյանում և Հրազդանում) հետախուզված պահուստային հանքավայրեր: Նշված հանքավայրերի երկաթի հանքաքարերը համալիր են. բացի հիմնական՝ երկաթի բաղադրիչից, պարունակում են արժեքավոր հողատարրեր և հազվագյուտ ցրված տարրեր: Աբովյանի հանքավայրի հանքաքարերը պարունակում են ցերիումի և իտրիումի խմբերի հազվագյուտ հողատարրեր, իսկ Հրազդանի հանքաքարերը պարունակում են նաև մի շարք արժեքավոր հազվագյուտ ցրված տարրեր՝ գերմանիում, գալիում, թալիում, նիոբիում, ինդիում, տանտալ, ցիրկոնիում:

Հայտնի են նաև երկաթաքարի հեռանկարային հանքավայրեր (Սվարանցի, Բազումի), որոնց ուսումնասիրությունները դադարեցվել են երկրաբանահետախուզական աշխատանքների տարբեր փուլերում և հետագա հետազոտման համար, անկասկած, արդյունաբերական հետաքրքրություն են ներկայացնում: Սվարանցի տիտանամագնետիտային ֆորմացիայի հանքաքարերը համալիր են և բացի հիմնական երկաթի բաղադրիչից՝ պարունակում են մագնեզիում, տիտան, վանադիում և այլ բաղադրիչներ:

Գունավոր և ազնիվ մետաղներից պետք է առանձնացնել մոլիբդենը և պղինձը, որոնք պղնձամոլիբդենային համալիր հանքաքարերի ֆորմացիայի գլխավոր բաղադրամասերն են: Մոլիբդենի բոլոր հետախուզված պաշարների զգալի մասը, ինչպես նաև ուղեկից ազնիվ մետաղների (ոսկի և արծաթ) որոշակի մասը առնչվում են պղնձամոլիբդենային հանքավայրերի նշված տիպին:

Հանրապետության պղնձամոլիբդենային հանքավայրերից կարելի է հիշատակել առավել խոշոր Քաջարանի, Թեղուտի, Ագարակի, Հանքավանի հանքավայրերը: Աշխարհում ամենախոշորներից մեկը (ըստ պաշարների և արդյունահանման քանակի) Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրն է:

Հայաստանում ամենատարածվածը կապարացինկային հանքագոյացումներն են (պղնձամոլիբդենից և բուն պղնձայինից հետո):

---

[2] Տե՛ս մանրամասն՝ Թ.Թորոսյան, Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր, Երևան 2001, էջ 48-52:

Հայտնաբերված են բուն կապարացինկային և պղնձակապարացինկային, ինչպես նաև համալիր բազմամետաղային հանքաքարերի (մասնավորապես՝ ոսկեբազմամետաղային ֆորմացիայի) հանքավայրեր: Հանքաքարերը պարունակում են նաև արժեքավոր հազվագյուտ մետաղներ: Ոսկեբազմամետաղյա հանքաքարերը պարունակում են կապար, ցինկ, պղինձ, ոսկի և արծաթ, ինչպես նաև հազվագյուտ և ցրված մետաղներ: Հեռանկարային են ոսկեբազմամետաղային հանքավայրերը (Լիճքվազ-Թեժ, Շահումյան, Ազատեկ, Արմանիս և այլն):

Գունավոր մետաղների հանքավայրերի բոլոր վերոնշյալ ֆորմացիաների հանքաքարերը բնութագրվում են ազնիվ մետաղների բավարար պարունակությամբ և հաճախ (ոսկեբազմամետաղային ֆորմացիայի հանքաքարեր) հենց ոսկու պարունակության շնորհիվ ձեռք են բերել արդյունաբերական նշանակություն:

Հանրապետությունում կան նաև բուն ոսկու հանքավայրեր՝ Սոտքի (Զոդ), Մեղրաձորի, Տերտերասարի և այլն:

Հայաստանը հարուստ է բնական հանքային կլանիչներով, օրինակ՝ բենթոնիտներով: Հանրապետության բարձրորակ բենթոնիտների հումքային հենքը ներկայացված է Սարիգյուղի շահագործվող հանքավայրի խոշոր պաշարներով: Սարիգյուղի հանքավայրի հաստատված պաշարներից բացի հայտնի են նաև Նոյեմբերյանի նախնական հետախուզված հանքավայրի բենթոնիտների պաշարները:

Հայաստանն առաջատար տեղ է գրավում պեռլիտի հումքի որակով և պաշարներով: Պեռլիտի պաշարներով համաշխարհային տնտեսության մեջ առանձնանում են Հայաստանը, Վրաստանը, Թուրքիան և Հունաստանը: Հանրապետության պաշարների հաշվեկշռում նշված է երեք հանքավայր: Պեռլիտի 3 հանքավայրերից երկուսը՝ Արագածինը և Զրաբերինը, շահագործվում են: Պեռլիտը որպես լցանյութ օգտագործվում է ջերմամեկուսիչ բետոնի, ռետինատեխնիկական և պլաստմասսայե իրերի արտադրության մեջ, որպես զտիչ նյութ՝ նավթի և յուղերի մաքրման արտադրություններում, իսկ որպես բաղադրիչ՝ խեցեգործության և ապակու արտադրություններում: Այստեղ հարկ է նշել, որ հետագայում հայ-թուրքական հարաբերության զարգացմամբ պայմանավորված և

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան ունի զգալի փորձ և հաջողություններ պեռլիտի արդյունահանման և վերամշակման գործում, կարելի է լուրջ համագործակցություն հիմնել պեռլիտի արդյունահանման և վերամշակման ոլորտում: Պեռլիտի վերամշակումից կարելի է ստանալ արտադրանք, որն օգտագործվում է արդյունաբերության, շինարարության և գյուղատնտեսության մեջ:

Դիատոմիտի հումքային հենքը ընդգրկում է 5 հանքավայր: Ընդհանուր առմամբ՝ դիատոմիտները կիրառվում են ոչ ալկոհոլային խմիչքների, գարեջրի, գինիների, մրգահյութերի, ինսուլինի, գլիցերինի, յուղերի, օշարակների մաքրման և գունազերծման համար, որպես զտիչ նյութ՝ քիմիական և նավթամշակման արդյունաբերության մեջ, պլաստմասսաների, ռետինատեխնիկական իրերի, թղթի արդյունաբերության և այլնի համար, որպես լցանյութ՝ ցեմենտի արդյունաբերության մեջ:

Բնական ցեոլիտները Հայաստանի հանքային կլանիչների տեսականու մեջ նոր հանքատեսակ են: Ցեոլիտները կիրառվում են արդյունաբերության (գազերի և հեղուկների մաքրման, տարանջատման համար), գյուղատնտեսության (մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու նպատակով, գյուղատնտեսական կենդանիների անասնակերի համար՝ որպես հավելախառնուրդ և այլն), ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում (ձեռնարկությունների գազային արտանետումները ծծմբի, ազոտի և ամոնիակի օքսիդներից մաքրելու համար): Բնական ցեոլիտների լայն կիրառությունը պայմանավորված է բարձր կլանիչ, կատիոնափոխանակիչ և կատալիտիկ հատկություններով: Պաշարների հանրապետական հաշվեկշռում նշված է ցեոլիտների մեկ՝ Նոյեմբերյանի (Նոր Կողբի տեղամաս) հանքավայրը, որի պաշարների հնարավորությունները բավականին մեծ են:

Հայաստանն ունի քարաղի մեծ պաշարներ: Հետախուզված պաշարները Երևանի հանքավայրում հաշվառված են հետևյալ տեղամասերով՝ Ավանի, Էլարի, Զեյթունի և Պտղնու:

Հաշվառված է բնական երեսպատման քարերի ավելի քան մի քանի տասնյակ հանքավայր: Այսպես՝ ֆելզիտային տուֆերը բարձր դեկորատիվ, նախշավոր, բազմագույն քարերն են, տրավերտինը, որը բարձր որակի, դեղնավուն շինաքար է, գունավոր կոնգլոբրեկ-

չիաներ և գունավոր (կանաչ) մարմարը, գրանիտոիդները տարբեր գույներով և նախշերով քարատեսակներ են, որոնք խմբավորված են 4 հանքավայրերում:

Հայաստանում շատ են բազմազան գունագեղ քարերի խոշոր հանքավայրերը: Պաշարներով ու հումքի որակով եզակի են օբսիդիանի (վանակատ) հանքավայրերը, ագաթ պարունակող հանքաշերտերը, օնիքսանման մարմարը, հասպիսը, լիստվենիտը, քարացած փայտը, վանակնը (լեռնաբյուրեղ), մեղեսիկը և այլն: Վերջին տարիներին գունագեղ քարերի անվանացանկը համալրվել է նոր տեսակներով, որոնք նախկինում հանրապետությունում հայտնաբերված չէին՝ փիրուզը, նեֆրիտոիդը, դեմանոիդը, Սևանի ժադը, ազնիվ սերպենտինը և այլն: Թանկարժեք քարի պաշարներում հաշվառված է փիրուզի մեկ՝ Թեղուտի հանքավայրը, իսկ ոսկերչական և տեխնիկական հաշվեկշռով երեք՝ Սարիգյուղի (Իջևան), Տաշիրի և Շահնազարի հանքավայրերը:

Գեղազարդային քարերի պաշարներում հաշվառված են օնիքսանման մարմարի, օբսիդիանի, լիստվենիտի, գաբրոանորտոզիտի և մեղեսիկով հանքավայրերը:

Հայկական շատ հանքավայրեր, օրինակ՝ Թեղուտի փիրուզի, Ջրաբերի և Արտենիսի ծիածանվող և սովորական օբսիդիանի, Իջևանի (Սարիգյուղի) ագաթի, Նոր Խարբերդի օնիքսանման մարմարի, Աարխարի քարացած փայտի և այլ հանքավայրերը եզակի են թե՛ պաշարներով, թե՛ հումքի որակով: Հայկական գունագեղ քարերից պատրաստված զարդարիկ և ոսկերչական իրերն աչքի են ընկնում գեղարվեստական բարձր արժեքով և հայտնի են հանրապետության սահմաններից դուրս:

Ագաթը գունագեղ քարերի ընտանիքի ամենագրավիչ տարրերից է: Յուրահատկությամբ աչքի են ընկնում Իջևանի հանքավայրի ժապավենաձև և շերտաձև ագաթները: Հանդիպում են արծաթափայլ (Ջրաբերի հանքավայր), ինչպես նաև՝ ոսկյա, մանուշակագույն, երկնագույն և կապույտ երանգներով (Հանքավանի հանքավայր) ծիածանվող օբսիդիաններ:

Մարմարային օնիքսները (կամ օնիքսանման մարմարները) բնութագրվում են ժապավենաձև կամ համակենտրոն պատկերներով: Շերտավոր տեսակների հետ հանդիպում են նաև պուտավոր

ու միագույն տարատեսակների օնիքսներ: Հայկական օնիքսներից ստացվող սալիկների չափերը հասնում են ավելի քան 1 քառակուսի մետրի:

Քարացած փայտը՝ Հայաստանի փայտանյութի հանածոն, առանձնանում է երանգապնակի բազմազանությամբ՝ սպիտակից մինչև սև, հատկապես գեղեցիկ են շագանակագույնը և յասամանագույնը: Քարացած փայտի կտրվածքն ունի նրբաշերտ կառուցվածք, որը պայմանավորված է երփներանգ շերտերի հաջորդությամբ և համապատասխանում է ծառի աճի տարեկան օղակներին:

Հայաստանի ընդերքը հարուստ է նաև հանքային ջրերի մեծ պաշարներով: Այդ ջրերը տարբերվում են ֆիզիկաքիմիական կազմի, ջերմաստիճանի և բուժիչ հատկությունների բազմազանությամբ: Հանքային ջրերի գերակշիռ մասը ունի ածխաթթվային պարունակություն:

Այսպիսով, ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Հայաստանը հարաբերականորեն (ելնելով իր զբաղեցրած տարածքից և բնակչության թվաքանակից) հարուստ է հանքահումքային պաշարներով, սակայն ներկայումս, հիմնականում շրջափակման պատճառով, հանքահումքային արդյունաբերությունը Հայաստանում չի զարգանում իր ամբողջ ներուժով: Այս ենթատեքստում, մեր կարծիքով հայ-թուրքական սահմանի վերաբացումը հետագայում լրացուցիչ խթան կհանդիսանա այս ոլորտի զարգացման համար՝ շնորհիվ շատ ավելի ցածր տրանսպորտային ծախսերի:

Մյուս կողմից հարկ է նշել, որ զարգացող երկրները համաշխարհային տնտեսության մեջ սկզբնական շրջանում հիմնականում առանձնանում էին որպես հումք արտահանող երկրներ: Այս պարագայում իհարկե շատ ավելի շահեկան կլինի Հայաստանի համար, եթե արտահանվի ոչ թե հենց հանքահումքային արտադրանքը, այլ դրա վերամշակումից ստացված արտադրանքը:

Զարգանալով իր ռեսուրսային կարողությունների հիման վրա՝ ՀՀ տնտեսությունը 2000թ. վեր տնտեսական աճի տեմպով դասվում է աշխարհում ամենաարագ զարգացող տնտեսությունների թվին: Արդյունքում վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի ՀՆԱ-ն ավելի քան կրկնապատկվել է:

ՀՀ տնտեսության նման հաջողությունը պայմանավորված է նաև իրականացված շուկայական բարեփոխումներով, հատկապես

ֆիսկալ և դրամավարկային կտրվածքով: ՀՀ տնտեսության զարգացման գործում նաև շատ մեծ դեր են ունեցել և շարունակում են ունենալ արտասահմանից ստացվող տրանսֆերտները:

Ինչևէ, մինչ ճգնաժամը վերջին տասնամյակի ընթացքում ունեցած կայուն տնտեսական աճի գրանցման արդյունքում Հայաստանը միացավ Համաշխարհային բանկի դասակարգմամբ եկամուտների միջին մակարդակով գնահատվող երկրների խմբին: Տնտեսական աճը հանգեցրեց իրական աշխատավարձերի ավելացմանը, զբաղվածության մակարդակի կայունացմանը և սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի ավելացմանը: Այդ ամենը, մասնավոր տրանսֆերտների աճող հոսքի հետ համատեղ, նպաստեց աղքատության մակարդակի զգալի կրճատմանը :

Անցումային շրջանի առաջին փուլում արտադրության ծավալները կտրուկ նվազեցին, և զգալի ավելացավ աղքատության մակարդակը: Հետագայում տնտեսական աճի ու ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների կողմից մշակված աղքատության դեմ պայքարի ծրագրերի շնորհիվ աղքատության մակարդակը զգալի նվազեց Հայաստանում: Այդ տեսակետից հետաքրքիր է դիտարկել ՀՀ ՀՆԱ-ի ճյուղերի կառուցվածքի փոփոխությունները:

Գծապատկեր 1

ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը (%)



Ինչպես նկատում ենք գծապատկեր 1-ից, ՀՆԱ-ի կառուցվածքում նշանակալիորեն կրճատվել է գյուղատնտեսության բաժինը հօգուտ ծառայությունների ոլորտի, իսկ արդյունաբերության բաժինը գրեթե չի փոխվել (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ մակրոտնտեսական որոշ ցուցանիշների աճի տեմպերը (%)

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
ՀՆԱ	13.2	14.0	10.5	13.9	13.2	13.7	6.8	-14.4	2.1
Արտաքին ապրանքաշրջ.	22.4	31.6	5.5	33.8	14.6	39.1	23.7	-27	18.8
Արտահանում	47.8	35.7	5.4	34.7	1.9	17.2	-7.2	-34	46.5
Ներմուծում	12.5	29.6	5.6	33.4	21.6	49.1	35.0	-25.3	12.9
Շինարարություն	45	41	15	41	38	20	9.8	-36.4	-3.3
Արդյուն. արտադրանքի ծավալ	14.6	15.1	2.4	7.6	-0.9	2.6	3.1	-7.9	9.7
Գյուղատնտեսություն	4.4	4.3	14.5	11.2	0.4	9.6	1.3	-0.1	-13.5
Սպառողական գների ինդեքս	1.1	4.7	7	0.6	2.9	4.4	9	3.1	9.4
Գործազրկություն	-8.9	-6.7	-8.4	-18	-4.9	-11.2	-0.5	8.6	

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից, մակրոտնտեսական բոլոր ցուցանիշների գծով նկատվել է աճի տեմպերի զգալի նվազում 2008թ. և հատկապես 2009թ.: Նշանակալիորեն նվազել է արտահանման աճի տեմպը՝ 2009թ. կազմելով -34%, և զգալիորեն կրճատվել է շինարարության աճի տեմպը՝ 2009թ. կազմելով 36.4%: Այստեղ հարկ է նշել, որ արտահանման աճի տեմպը նվազման միտում էր ձեռք բերել դեռ 2004թ.՝ պայմանավորված հայկական դրամի փոխարժեքի արժևորմամբ: Հակառակ դրան, կրկին պայմանավորված դրամի փոխարժեքի արժևորմամբ, 2004թ. սկսած զգալիորեն աճել է ներմուծման աճի տեմպը:

Անդրադառնալով ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի ներհոսքին՝ կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ-ի նշանակալի աճ սկսել է գրանցվել սկսած 2006թ. (գծապատկեր 2): 2008թ. ՕՈՒՆ-ի ծավալը 2005թ. մակարդակի հետ համեմատած աճել է գրեթե չորս անգամ՝ 2008թ. կազմելով 925.3 մլն դոլար[3]: 2009 և 2010թթ. ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի նվազման հիմնական պատճառը գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամն է, որի արդյունքում նվազեց համաշխարհային ՕՈՒՆ-ի ծավալը:

[3] Այստեղ և հետագայում նկատի ունենք ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 2

ՕՈՒՆ-ի դինամիկան 2000-2010թթ. (մլն դոլար)



Մյուս կողմից, կարող ենք փաստել, որ հանրապետություն ներհոսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքում ԵՄ երկրների դերն այնքան էլ մեծ չէ (գծապատկեր 3): Հանրապետություն ներհոսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքի վերաբերյալ ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար դիտարկենք մաքուր պաշարները 2009թ. վերջին: Այսպես, մաքուր պաշարներով առաջին տեղում է Ռուսաստանը (ավելի քան 2.8 մլրդ դոլար), երկրորդ տեղում՝ Ֆրանսիան (393.7 մլն դոլար), երրորդ տեղում՝ Արգենտինան (242.3 մլն դոլար), չորրորդ տեղում՝ ԱՄՆ-ը (226.2 մլն դոլար), և վերջապես հինգերորդ տեղում է Գերմանիան (149.5 մլն դոլար): Այսինքն, եթե դիտարկենք առաջին հնգյակը, ապա ՕՈՒՆ-ի ծավալով ԵՄ երկրներից այդտեղ առանձնանում են միայն Ֆրանսիան և Գերմանիան:

Գծապատկեր 3

ՕՈՒՆ-ի ներհոսքն ըստ հիմնական երկրների՝ 2009թ. (մլն դոլար)



Օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունների 60-65%-ը այս կամ այն կերպ կապված է սփյուռքի ներկայացուցիչների հետ: Սակայն հարկ է նշել, որ 6 մլն սփյուռքահայի առկայության պարագայում մենք ունենք սփյուռքի հետ կապված օտարերկրյա ներդրումներով ընդամենը 3000 ձեռնարկություն: Հետևաբար կարելի է պնդել, որ ՀՀ տնտեսությունը դեռևս այդքան էլ գրավիչ չէ ներդրողների համար:

Այս ամենով հանդերձ՝ ներդրումների և արտահանման աճի զգալի մասը կապված է հանքարդյունաբերության ներառման և հումքի արտահանման հետ: Սա էլ առաջին հերթին պայմանավորված է համաշխարհային շուկայում թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների գների բարձրացմամբ:

2009թ. տվյալներով առավել խոշոր ներդրումներ կատարած երկրներն են՝ Ռուսաստանը (672 մլն դոլար), Արգենտինան (50.6 մլն դոլար), ԱՄՆ-ը (34.5 մլն դոլար), Մեծ Բրիտանիան (26.8 մլն դոլար) և Գերմանիան (19.5 մլն դոլար): Իրականացված ներդրումները հիմնականում ուղղվել են նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրմանը և արտադրական հզորությունների ընդլայնմանը:

Այժմ անդրադառնանք միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանին տված գնահատականներին:

Սկսած 1995թ.-ից՝ «Ուոլ Սթրիթ Ջորնըլ»-ը և Հերիթիջ հիմնադրամը իրականացնում են ամենամյա խոր քննություն այն գործոնների, որոնք առավել ուղղակի ազդեցություն են ունենում տնտեսական ազատության և բարգավաճման գործում (Տնտեսական ազատության ցուցանիշ): Ընդհանուր տնտեսական ազատությունը պարզելու համար վերլուծության են ենթարկվել հետևյալ գործոնները՝ առևտուր, հարկային բեռ, պետության միջամտությունը տնտեսության մեջ, դրամային քաղաքականություն, ստվերային շուկա, բանկային գործունեություն և ֆինանսներ, օտարերկրյա ներդրումներ, կարգավորում և այլն: Ուսումնասիրության մեջ Հայաստանը դասակարգված է որպես «մեծամասամբ ազատ»: Դիտարկման համաձայն՝ տնտեսության մեջ կառավարության միջամտությունը կարող է բնութագրվել որպես կայուն (չափավոր մակարդակ): Առևտրային քաղաքականությունը գնահատված է կայուն (շատ թույլ պաշտպանություն). ներմուծվող ապրանքները հիմնականում

ազատ են քանակական, լիցենզավորման կամ այլ պահանջներից: Կապիտալի/դրամամիջոցների հոսքը և օտարերկրյա ներդրումները նկարագրված են որպես կայուն (փոքր արգելքներ): Հայաստանը պետական հավասար վերաբերմունք է դրսևորում օտարերկրյա ներդրողների նկատմամբ, ովքեր ունեն բիզնես հիմնելու միևնույն իրավունքները, ինչ որ Հայաստանի քաղաքացիները տնտեսության ոլորտների մեծ մասում: Մասնավորեցումն ընթացքի մեջ է և բաց է օտարերկրացիների համար:

«World Street Journal»-ի և «Heritage Foundation» հիմնադրամի կողմից հրապարակվող Տնտեսական ազատության ցուցանիշի՝ 2011թ. դասակարգման արդյունքում Հայաստանը 161 երկրների շարքում զբաղեցրել է 36-րդ տեղը 2010թ. 38-րդ տեղի համեմատությամբ: (Համեմատության համար նշենք, որ 2005թ. ՀՀ-ն զբաղեցնում էր 42-րդ տեղը):

2011թ. ՀԲ-ի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Doing Business 2011» («Գործարարություն 2008») զեկույցի համաձայն՝ Հայաստանը 183 երկրների շարքում զբաղեցրել է 48-րդ տեղը (2010թ. 44-րդի փոխարեն)՝ առաջ անցնելով ԱՊՀ և հարևան բոլոր երկրներից[4]: Իսկ մեր անմիջական հարևանների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ն «Doig Business 2011» զեկույցում զիջում է միայն Վրաստանին, որը զբաղեցնում է 12-րդ տեղը և բավականին առաջ է Թուրքիայից, Ադրբեջանից և Իրանից, որոնք զբաղեցնում են համապատասխանաբար 65-րդ, 54-րդ և 129-րդ տեղերը, թեպետ որոշ առանձին ցուցանիշներով ՀՀ-ն դեռևս զիջում է Թուրքիային:

Անդրադառնալով վերջին տարվա փոփոխություններին՝ նշենք, որ 2010 թվականին ծառայությունների ոլորտը տնտեսական աճին մեծ նպաստում է ունեցել (գծապատկեր 4): Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.8%-ային կետը, իսկ ծառայությունների իրական աճը կազմել է 4.5%: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) աճել է 10%-ով՝ տնտեսական աճին նպաստելով 1.4%-ային կետով, իսկ շինարարությունը աճել է 3%-ով և նպաստել է ևս 0.5%-ային կետով: Գյուղատնտեսությունը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 15.7%-ով՝

[4] Համաշխարհային բանկ և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարություն 2011» զեկույցի հիման վրա:

2.6%-ային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

Գծապատկեր 4

Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը



Դիտարկելով ՀՀ արդյունաբերության կառուցվածքի փոփոխությունը՝ կարող ենք փաստել, որ 2000-2010թթ. ընկած ժամանակահատվածում վերամշակող արդյունաբերության բաժինը գրեթե մնացել է անփոփոխ: Մյուս կողմից զգալիորեն աճել է հանքագործական արդյունաբերության բաժինը, և գրեթե երկու անգամ կրճատվել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման բաժինը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ արդյունաբերության կառուցվածքը (%)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արդյունաբերություն	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Հանքագործական արդ.	5.3	6.6	9.1	10.9	18.1	17.4	17.6	15.9	14	14	17.7
Վերամշակող. արդ.	64.5	65.1	66.6	67	62.9	65.1	65.0	66.7	67.8	66.2	66.1
Էներգետիկա	30.2	28.3	24.3	22.1	19.0	17.5	17.4	17.4	18.2	19.8	16.2

2001-2007թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ տնտեսության աճի միջին տեմպը կազմել է 12%: Տնտեսական աճի տեմպի նշանակալի նվազում է նկատվել 2008թ.՝ պայմանավորված գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամով՝ 2008թ. կազմելով 6.8%:

2010թ. արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի

ծավալների 9.7% աճ՝ 2009 թվականի 7.8% նվազման դիմաց: Արդյունաբերական արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված էր հանքագործական արդյունաբերության և մշակող արդյունաբերության համապատասխանաբար 24.3% և 11.5% աճերով: Հանքագործական արդյունաբերության աճին նպաստել են համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացումը և արտաքին պահանջարկի վերականգնումը: Մշակող արդյունաբերության ոլորտում նշանակալի են պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության 31.6%, խմիչքների արտադրության՝ 31.6%, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների արտադրության 30.3% աճերը:

2010թ. գյուղատնտեսության անկումը պայմանավորվել է բուսաբուծության 20.3%, անտառային տնտեսության 10.7% և ձկնորսության 3.9% նվազմամբ: Բուսաբուծության անկումը կրել է նաև տարվա առաջին ամիսների անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությունը, իսկ անասնաբուծության մեջ աննշան՝ 0.3% աճ է արձանագրվել:

Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տեղեկատվության և կապի (24.3%), տրանսպորտի (21.6%), ֆինանսական և ապահովագրական գործունեության (20.8%), ծառայությունները, ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական (6.7%) և կրթության (5.2%) ծառայությունները:

2010 թվականին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 1779.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, համադրելի գներով աճել է 4.2%-ով: Ընդ որում, մանրածախ առևտուրն աճել է 0.6%-ով, մեծածախ և ավտոմեքենաների առևտուրը՝ համապատասխանաբար 12 և 7.9%-ով՝ վկայելով տնտեսական աշխուժացման մասին:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը 2010 թվականին կազմել է 20.1% (2009 թվականին՝ 15.7%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը կազմել է 2010 թվականի ՀՆԱ-ի 45.8%-ը՝ նախորդ տարվա 43.2%-ի փոխարեն:

Այսպիսին է ՀՀ տնտեսությունում առկա բնառեսուրսային և վերջին 10 տարվա կտրվածքով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակը:

Աղյուսակ 3

Արտահանման և ներմուծման նպաստման չափը ՀՀ տնտեսական աճին 2002-2010թթ.

Տարի	ՀՆԱ-ի աճը, % նախորդ տարվա նկատմամբ	ՀՆԱ-ի աճին արտահանման աճի նպաստման չափը, %-ային կետ	ՀՆԱ-ի աճին ներմուծման նպաստման չափը, %-ային կետ
2002	13,2	8,0	-6,5
2003	14,0	6,5	-9,4
2004	10,5	2,1	-2,8
2005	13,9	3,7	-5,3
2006	13,2	0,8	-3,4
2007	13,7	1,3	-5,1
2008	6,8	-0,1	-3,4
2009	-14,4	1,9	-4,7
2010	1,8	1,1	-1,1

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՀՀ տնտեսական աճի վրա արտահանման և ներմուծման նպաստման չափերը: Նշենք, որ օրինակ, 2007թ. տնտեսական աճին արտահանման նպաստման 1.3%-ային կետը նշանակում է, որ տվյալ տարում 13.7% տնտեսական աճի 1.3%-ային կետը բաժին է ընկնում արտահանման աճին, իսկ նույն տարում ներմուծման աճը նպաստում է 5.1%-ային կետով տնտեսական աճի նվազման, այլ կերպ ասած, եթե տվյալ տարում ներմուծման աճ չլիներ, այլ այդ ներմուծվող ապրանքը արտադրվեր տեղում (և, օրինակ, արտահանվեր), ապա տնտեսական աճը կլիներ (13.7+5.1=) 18.8%:

1.2. ՀՀ արտաքին առևտրի զարգացման միտումները և կառուցվածքային տեղաշարժերը

Հայ-թուրքական առևտրային հարաբերությունների վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու համար նպատակահարմար ենք գտնում նախ և առաջ քննարկել ՀՀ-ի արտաքին առևտրի դինամիկան և նրա կառուցվածքի փոփոխությունները:

Աղյուսակ 4

ՀՀ արտաքին առևտուրը (մլն դոլար)

Տարիներ	Արտաքին առևտրաշրջա-նառության ծավալը	Տեսակարար կշիռը %-ով		Առևտրային հաշվեկշիռ
		արտահանում	ներմուծում	
2000	1182,6	25,2	74,8	-587,6
2001	1217,1	28,2	71,8	-531,5
2002	1498,3	33,9	66,1	-483,9
2003	1947,5	34,8	65,2	-591,3
2004	2073,6	34,9	65,1	-627,8
2005	2775,6	35,0	65,0	-827,8
2006	3176,7	31,0	69,0	-1206,5
2007	4420,1	26,1	73,9	-2115,5
2008	5483,3	19,3	80,7	-3368,9
2009	4031,3	17,6	82,4	-2610,9
2010	4794,3	21,1	78,9	-2771,5

Գծապատկեր 5

ՀՀ արտաքին առևտուրը



Աղյուսակ 4-ից երևում է, որ 2000-2010թթ. ընթացքում ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը ավելացել է մոտ 4 անգամ, այդ թվում՝ ներմուծումը՝ 4,3 անգամ, իսկ արտահանումը՝ 3,3: Եթե 2000թ. ամբողջ ապրանքաշրջանառության մեջ արտահանումը

կազմում էր 25,2%, իսկ ներմուծումը՝ 74,8%, ապա 2005թ. դրանք հասան իրենց գագաթնակետին՝ համապատասխանաբար 35% և 65%: Դրանից հետո նկատվում է արտահանման մասի նվազեցում (հատկապես 2008-2009թթ., ինչը բացատրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով), և ներմուծման բաժնի համապատասխանաբար բարձրացում: 2010թ. տվյալներով արտահանումը կազմում էր 21,1%, իսկ ներմուծումը՝ 78,9%: Բոլոր դեպքերում նկատվում է հանրապետությունում առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի աճ. բացասական սալդոն 2000-2010թթ. ավելացել է գրեթե 5 անգամ՝ կազմելով -2771,5 մլն դոլար:

Կառուցվածքային տեղաշարժեր են նկատվում նաև արտահանման և ներմուծման աշխարհագրական և ապրանքային կառուցվածքներում: ՀՀ ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառության մեջ զգալի բաժին են կազմում հեռավոր արտասահմանյան երկրները (տե՛ս գծապատկեր 6): Եթե 2000թ. ԱՊՀ երկրների բաժինը կազմում էր 21%, ապա հեռավոր արտասահմանյան երկրներինը՝ 79%, իսկ 2010թ. համապատասխանաբար՝ 28 և 72%:

Գծապատկեր 6

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 2000-2010թթ. ըստ երկրների խմբի (մլն դոլար)



Գծապատկեր 7

ՀՀ արտահանման ծավալը, մլն դոլար



Գծապատկեր 8

ՀՀ ներմուծման ծավալը, մլն դոլար



2000-2010թթ. ապրանքաշրջանառությունը հեռավոր արտասահմանյան երկրների հետ ավելացել է 3,6 անգամ, այն դեպքում, երբ ԱՊՀ երկրներինը՝ մոտ 5,6 անգամ: Այդ նույն ժամանակաընթացքում հեռավոր արտասահմանից ներմուծման ծավալները ավելացել են ավելի քան 4, իսկ ԱՊՀ երկրներինը՝ 5 անգամ: Հեռավոր արտասահմանյան երկրների հետ առևտրում դրսևորվել է առևտրային հաշվեկշռի դեֆիցիտ՝ -2119,1 մլն դոլար, որը կազմում է հանրապետության ընդհանուր առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի գումարի 76,5%-ը: Առևտրային կառուցվածքում հեռավոր արտասահմանյան երկրների զգալի բաժինը բոլոր դեպքերում հարկ է դիտարկել որպես

դրական երևույթ, քանի որ դա նշանակում է, որ Հայաստանը միջազգային շուկայում ձեռք է բերել իր համեստ տեղը: Մյուս կողմից, ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության համեմատաբար փոքր մասը բացասական է, քանի որ այդ երկրների հետ եղած ավանդական կապերը կարող են հնարավորություն ստեղծել արտահանումը ավելացնելու, իսկ դա կարող է նպաստել առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի կրճատմանը:

Աղյուսակ 5

ՀՀ արտահանման բաժինը արտաքին ապրանքաշրջանառության մեջ՝ ըստ առանձին երկրների (2000-2010թթ. %-ներով)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ռուսաստան	14,8	17,7	12,8	13,9	10,8	12,2	12,3	17,5	19,7	15,1	13,3
Թուրքմենստան	1,8	0,2	0,5	0,5	0,1	0,1	0,2	0,2	0,4	0,4	0,8
Վրաստան	5,2	3,6	3,3	2,3	4,0	4,8	5,5	7,6	7,7	7,4	5,5
Բելառուս	0,3	0,4	0,3	0,3	0,3	0,3	0,4	0,2	0,3	0,7	0,4
Ուկրաինա	1,1	3,2	1,6	1,0	1,4	1,4	2,3	4,0	2,1	1,8	1,0
Ղազախստան	0,4	0,3	0,2	0,2	0,2	0,3	0,4	0,6	0,3	0,3	0,3
Ավստրիա	0	0	0	0	0,2	0,3	0,4	0,5	0,5	1,1	0,5
Բելգիա	25,0	13,6	18,3	18,1	14,9	12,8	11	8,7	8,5	6,6	8,8
Ֆրանսիա	0,2	0,2	0,2	0,3	0,3	0,2	0,4	0,8	1,0	0,8	0,5
Գերմանիա	4,3	3,3	5,6	6,5	11,5	15,6	15,0	14,8	17,4	16,2	15,8
Իտալիա	0,9	1,8	2,3	2,8	3,9	2,6	2,9	2,6	2,6	1,0	0,5
Նիդեռլանդներ	0,9	0,4	2,2	3,2	3,6	13,7	12,9	13,5	12,4	7,3	9,1
Մեծ Բրիտանիա	3,4	5,9	10,1	6,2	0,2	0,0	0,8	0,2	3,9	0,2	0,0
Հունաստան	1,0	0,6	0,2	0,8	0,1	0,1	0,1	0,2	0,0	0,0	0,0
Շվեյցարիա	2,9	2,6	1,5	1,8	6,3	3,6	7,3	4,3	1,1	3,5	1,7
Իրան	10,0	9,3	6,2	3,3	4,2	2,9	3,0	3,3	2,4	4,7	2,8
Թուրքիա	0,5	0,3	0,3	0,2	0,3	0,3	0,2	0,3	0,2	0,2	0,1
Արաբական Միացյալ էմիրություններ	1,8	2,1	2,8	2,4	1,2	1,1	0,6	0,6	1,0	0,8	0,9
ԱՄՆ	12,6	15,3	9,2	8,2	9,8	6,4	6,6	4,5	5,0	9,4	8,9
Բուլղարիա	0,2	0	0,3	0,2	0,7	0,1	0,1	4,1	5,6	8,5	15,3
Այլ երկրներ	12,7	19,2	22,1	27,8	26	21,2	17,6	11,5	7,9	14	13,8
ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Աղյուսակ 6

ՀՀ ներմուծման բաժինն արտաքին ապրանքաշրջանառության մեջ ըստ առանձին երկրների (2000-2010թթ., %-ներով)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ռուսաստան	15,5	19,8	19,5	13,7	11,8	13,5	13,9	22,0	19,2	23,9	16
Թուրքմենստան	0,1	0,1	2,5	7,6	7,6	6,3	0,5	0,3	0,9	0,4	0
Վրաստան	2,2	2,1	3,2	0,8	1,0	1,1	1.6	1,4	1,1	1,2	5,9
Բելառուս	0,1	0,1	0,2	0,4	0,5	0,7	0,8	0,7	0,6	0,7	0,8
Ուկրաինա	1,4	2,5	4,6	4,3	6,0	7,0	7,4	7,7	7,1	6,1	5,4
Ղազախստան	0,4	0,1	0,2	0,2	0	0,1	7,3	0,5	0,4	0,1	0,2
Ավստրիա	0,3	0,5	0,3	0,3	0,4	0,3	2,0	3,8	3,7	1,7	1,3
Բելգիա	9,5	4,8	9,2	9,8	7,6	8,0	5,5	3,5	2,1	1,8	2,2
Ֆրանսիա	2,0	1,4	1,2	1,3	1,4	2,6	3,2	4,6	2,9	2,2	1,9
Գերմանիա	4,1	3,9	4,3	4,6	5,9	7,8	6,6	6,8	5,8	5,3	3,3
Իտալիա	2,9	3,4	3,7	3,5	3,3	3,3	4,0	3,5	3,6	3,4	2,6
Նիդեռլանդներ	1,4	0,8	1,0	0,7	0,5	0,5	0,5	0,6	0,5	0,8	1,4
Մեծ Բրիտանիա	6,7	10,4	2,9	2,1	0,8	0,6	1,0	1,3	1,0	0,9	3,1
Հունաստան	6,1	1,5	1,2	1,9	2,1	1,4	2,3	1,2	0,9	0,9	0,5
Շվեյցարիա	2,6	3,0	1,0	3,1	4,3	2,5	0,9	0,7	0,4	3,7	3,2
Իրան	9,3	8,9	3,7	3,5	3,3	3,3	5,2	4,3	4,6	4,9	5,2
Թուրքիա	4,6	3,8	3,9	3,2	3,3	3,7	4,4	4,0	6,1	5,3	4,7
Արաբական Միացյալ էմիրություններ	4,7	5,4	4,4	1,2	1,0	1,2	0,9	0,6	0,7	0,9	9
ԱՄՆ	11,6	9,6	5,3	7,1	6,6	6,2	4,8	4,4	4,9	3,6	4
Բուլղարիա	0,8	0,0	5,0	3,9	3,9	1,5	1,9	2,7	2,7	2,6	0,5
Այլ երկրներ	13,7	17,9	22,7	26,8	28,7	28,4	25,3	25,4	30,8	29,6	28,8
ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Պետք է նշել, որ ԱՊՀ երկրներից Հայաստանի ամենահիմնական առևտրային գործընկերը Ռուսաստանն է, չնայած նրա բաժինը հանրապետության արտահանման մեջ նվազում է: Եթե 2000թ. Ռուսաստանին բաժին էր ընկնում Հայաստանի արտահանման ծավալի 14,9%, ապա 2010թ.՝ 13,3%-ը: ԱՊՀ երկրներից երկրորդ կարևոր գործընկերը Ուկրաինան է, հատկապես ներմուծման գծով: Պահպանվում են ավանդական առևտրային կապերը մեր հարևան

Վրաստանի հետ. 2010թ. նրա բաժինը ներմուծման գծով կազմել է Հայաստանի ներմուծման ընդհանուր ծավալների 6%-ը, իսկ արտահանման՝ 5,5%-ը: Հեռավոր արտասահմանյան երկրներից արտահանման մեջ կարևոր տեղ են գրավում Գերմանիան (2010թ.՝ 15,8%), Բուլղարիան (15,3%), ԱՄՆ-ը (8,9%) Նիդեռլանդները (9,1%), Բելգիան (8,8%): Իսկ ՀՀ-ի ներմուծման կառուցվածքում որոշակի բաժին են զբաղեցնում Արաբական էմիրաթները (9%), Իրանը (5,2%), ԱՄՆ-ը (4%), Թուրքիան (4,7%):

Տեղին է քննարկել նաև ՀՀ արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքը: Ընդհանուր առմամբ, ՀՀ արտահանման ծավալի մեջ ամենամեծ բաժինը կազմում է հանքահումքային արտադրանքը. 2010թ. այն հասավ 27,3%-ի 2000թ. 10,9%-ի փոխարեն: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը և թանկարժեք մետաղների բաժինը զգալիորեն նվազել է՝ 34% 2000թ., 13,3% 2010թ.: Արտահանման մեջ որոշակի մեծ կշիռ ունեն նաև պատրաստի սննդի արտադրանքները: Որոշակի բաժին է զբաղեցնում նաև մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների արտահանումը, սակայն դրանց տեսակարար կշիռը հանրապետության արտահանման ընդհանուր ծավալի մեջ նվազում է: Այսպես, 14,8% 2000թ., 3%՝ 2010թ.:

Աղյուսակ 7

ՀՀ արտահանումը՝ ըստ առանձին ապրանքախմբերի (2000-2010թթ., %-ներով)

		2000	2005	2006	2007	2008	2009	2010
	ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100	100	100	100
	այդ թվում՝							
1	Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	0,7	0	0	0	0,9	2,2	2,3
2	Բուսական ծագման արտադրանք	1,6	0,3	1,6	1,5	2,3	2,7	1,6
3	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0	0	0,4	0	0	0	0
4	Պատրաստի սննդի արտադրանք	4,8	4,1	9,6	12,5	15,9	14	13
5	Հանքահումքային արտադրանք	10	6,6	13,9	15,5	16,3	20,4	27,3
6	Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանք	2,8	1,9	0,5	0,8	1,5	0,9	0,9
7	Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	4,1	2,8	2,8	1,9	1,8	1,4	1,5

		2000	2005	2006	2007	2008	2009	2010
8	Կաշվե հումք, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0,5	0,5	0,3	0,2	0,3	0,3	0,2
9	Փայտ և փայտյա իրեր	0,1	0,1	0,2	0,3	0,1	0,1	0,1
10	Թուղթ և թղթից իրեր	0,3	0,2	0,4	0,5	0,2	0,2	0,1
11	Մանածագործական իրեր	5,7	3,4	3,6	3,1	3,8	2,1	0,7
12	Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	2	0,8	0,5	0,1	0,1	0,1	0,1
13	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	0,8	0,6	1	1,8	1,3	1,9	1,6
14	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	34	48,3	30,6	18,1	14,4	14,8	13,3
15	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	11,6	16,3	28,5	33,9	32,8	32,8	32,9
16	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	13,8	11,8	2,1	4,4	3,8	3	2,9
17	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	4,3	0,9	1,5	2,3	2,6	1,7	0,5
18	Սարքեր և ապարատներ	1,5	0,9	2,3	2,7	1,7	1,1	0,7
19	Արդյունաբերական տարբեր ապրանքներ	1,3	0,5	0,1	0,2	0,1	0,2	0,2
20	Արվեստի ստեղծագործություններ	0,1	0	0,1	0,2	0,1	0,1	0,1

Գծապատկեր 9

ՀՀ արտահանումը՝ ըստ առանձին ապրանքախմբերի 2010թ., %-ներով



Աղյուսակ 8

ՀՀ-ի ներմուծումը՝ ըստ առանձին ապրանքախմբերի
(2000-2010թթ., %-ներով)

		2000	2005	2006	2007	2008	2009	2010
	ԸՆԴԱՄԵՆԸ	100	100	100	100	100	100	100
	այդ թվում՝							
1	Կենդանի Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	3,8	2,5	1,8	1,9	2,8	2,9	2,7
2	Բուսական ծագման արտադրանք	11,1	5,5	5,1	5,7	5,3	6	5,7
3	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	2	1,5	1,2	1	1,2	1,6	1,3
4	Պատրաստի սննդի արտադրանք	7,8	8,1	7,5	7,8	7,9	8	8,2
5	Հանքահումքային արտադրանք	20,5	16,5	16,7	15,8	15	16,3	17,9
6	Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանք	9,3	6,6	6,9	6,7	6,1	7,6	7,5
7	Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	2,6	2,7	3,6	4	4,2	3,9	3,9
8	Կաշվե հումք, մորթի և դրանցից պատրաստված իրեր	0,2	0,2	0,2	0,1	0,2	0,2	0,2
9	Փայտ և փայտյա իրեր	0,5	0,7	1,1	1,4	1,6	1,5	1,5
10	Թուղթ և թղթից իրեր	2,6	1,8	1,9	1,7	1,8	2	1,8
11	Մանածագործական իրեր	3,6	2,6	2,7	2,1	3,5	2,8	3,2
12	Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	0,6	0,6	0,8	0,4	0,7	0,7	0,8
13	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	1,3	1,9	2,3	2,3	2,6	2,2	2,2
14	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	12,8	19,3	14,3	9,1	6,9	3,2	4,2
15	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	2,8	5,2	7,5	10,4	9,5	11,3	9,7
16	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	13,2	12,9	13,7	13,1	14,5	18,9	17,3
17	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	2,5	8,4	9	12,9	13	7,4	8,2
18	Սարքեր և ապարատներ	1,4	1,6	2	1,9	1,3	1,6	1,8
19	Արդյունաբերական տարբեր ապրանքներ	1,3	1,2	1,5	1,4	1,9	1,9	1,9
20	Արվեստի ստեղծագործություններ	0,1	0,2	0,2	0,3	0	0	0

Գծապատկեր 10

ՀՀ ներմուծումը՝ ըստ առանձին ապրանքախմբերի (2010թ., %-ներով)



Ներմուծման ծավալի մեջ կայուն մեծ տեսակարար կշիռ ունեն հանքահումքային արտադրանքը և մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները, ապրանքախմբերը՝ 2010թ. համապատասխանաբար 17,9% և 17,3%:

Վերջին տարիներին նկատվում է նաև ներմուծումը տեղական արտադրանքով փոխարինելու միտում: Մյուս կողմից, որոշ սննդամթերքների արտադրություն հանրապետությունում կամ հնարավոր չէ, կամ տնտեսապես նպատակահարմար չէ, օրինակ, բրինձը, ձավարեղենը, սուրճը, կակաոն, ալյուրը, շաքարավազը, ձկան պահածոն և այլն: Բնականաբար դրանց ներմուծումը չի կարող նվազել:

ՀՀ արտաքին առևտրի ոչ գոհացուցիչ վիճակը կարելի է բացատրել հատկապես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ տնտեսական կապերի խզմամբ, քանի որ մինչ ԽՍՀՄ փլուզումը Հայաստանի համար արտաքին շուկայի մոտ 90%-ը բաժին էր ընկնում ԽՍՀՄ հանրապետություններին, 6-8%-ը՝ Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ երկրներին, իսկ 2-4%-ը՝ զարգացող և զարգացած երկրներին[5]:

[5] А.С.Шахбазян, “Международные экономические отношения и проблемы развития экономики Армении”, Ереван, 1996 стр. 51-53.

Միայն վերջին շրջանում Հայաստանի կողմից կնքված միջպետական համաձայնագրերն ու մի շարք միջազգային կառույցներին, մասնավորապես ԱՀԿ անդամակցությունը խթանեցին, որ արտաքին առևտուրն ուղղորդվի համեմատաբար ավելի քաղաքակիրթ հուն՝ իրականացվելով միջազգային նորմերին համաձայն, իսկ 2000թ.-ից արդեն ՀՆԱ-ի միջին տարեկան 10% աճի տեմպերին համընթաց սկսեցին գրանցվել նաև արտահանման և ներմուծման աճի միտումներ:

Գծապատկեր 11

ՀՀ արտաքին առևտրի մարզային բաշխվածության կառուցվածքը 2010թ.[6] (ըստ բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, առանց ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի ծավալների)





ՀՀ արտահանման և ներմուծման հիմնական մասը բաժին է ընկնում Երևանին, Սյունիքի և Կոտայքի, Լոռվա և Արարատի մարզերին: Սակայն ակնկալվում է, որ հայ-թուրքական սահմանի բացման պարագայում զգալիորեն կակտիվանա նաև Շիրակի մարզի դերը արտաքին առևտրում, ինչպես նաև առավել մեծ չափերի կարող են հասնել պեռլիտի արդյունահանումն ու վերամշակումը, այսինքն՝ զգալիորեն կմեծանա նաև Արագածոտնի մարզի ակտիվությունը, որտեղ էլ առկա են հիմնական հանքավայրերը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ արտաքին առևտրատնտեսական քաղաքականության գլխավոր և նախապատվելի ուղղություններն են՝ համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապե-

[6] Արտաքին առևտրի ծավալների բաշխումն ըստ մարզերի իրականացվել է ըստ կազմակերպությունների գրանցման վայրի:

տության ինտեգրումը, արտահանման խթանումը, ներդրումների ներգրավումը, արտաքին տնտեսական գործունեության զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի կրճատումը, արտերկրի հետ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնումը, արտաքին առևտրատնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնող համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

Երկկողմ համագործակցության ոլորտում կարևորվում է գերակայությունների և երկրների այն նախապատվելի շրջանակի որոշումը, որոնց հետ հաստատված առևտրատնտեսական համագործակցության խորացումը և նոր ուղիների հաստատումը առավել նպաստավոր կլինեն Հայաստանի Հանրապետության համար: Դրանցից են՝ Եվրոպական միության երկրները, ԱՊՀ երկրները, ԱՄՆ-ը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրները և այլն:

ՀՀ-ն ազատ առևտրի համաձայնագրեր ունի կնքած Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի, Թուրքմենստանի, Վրաստանի Հանրապետության, Մոլդովայի, Ղրղզստանի, Ղազախստանի և Տաջիկստանի հետ: Այդ համաձայնագրերով նախատեսվում են փոխադարձ չկիրառվող մաքսատուրքերը և հարկերը: Արտահանման ժամանակ պահպանվում է տվյալ ռեժիմից հանված ապրանքների որակների ցանկը, որոնք որոշված են ակտով ազատ առևտրի ռեժիմից:

Իսկ արտաքին առևտրի ռեժիմի կիրառման վերաբերյալ համաձայնագրեր կնքված են Եվրամիության, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բուլղարիայի, Կանադայի, Չինաստանի, Կիպրոսի, Հունգարիայի, Լիբանանի, Լեհաստանի, Ռումինիայի, Սիրիայի, Շվեյցարիայի, Վիետնամի, Իսրայելի, ԿԺԴՀ-ի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Լիտվայի, Սլովենիայի, Էստոնիայի, ԱՄԷ-ի, Լատվիայի, Կատարի հետ: Մնացած երկրների հետ առևտրային հարաբերությունները կարգավորվում են երկկողմ միջպետական համաձայնագրերով:

Վերլուծելով ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը՝ կարելի է փաստել, որ ըստ 2000-2010թթ. արտաքին առևտրի վերաբերյալ վիճակագրության՝ ԱՊՀ երկրներին բաժին է ընկնում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության միջինը 26.5%-ը, ոչ ԱՊՀ երկրներին՝ մնացած 73.5%-ը, իսկ ԵՄ երկրների մասնաբաժինը կազմել է միջինը 33% (տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը և առևտրային հաշվեկշռի մնացորդը 2000-2010թթ.՝ ըստ երկրների խմբի (մլն դոլար) և տոկոսներով

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արտաքին ապրանքաշրջանառությունը	**1185.2**	**1219.2**	**1492.3**	**1965.1**	**2073.6**	**2775.6**	**3176.7**	**4420.1**	**5480.8**	**4001.9**	**4794.3**
%	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	**100**	**100**
այդ թվում											
ԱՊՀ երկրներ	247.0	307.6	398.1	410.3	511.9	594.4	784.1	1264.4	1471.8	1183.6	1341.3
%	*20.8*	*25.2*	*26.7*	*20.9*	*24.7*	*21.4*	*24.7*	*28.6*	*26.8*	29.6	28.0
ԵՄ երկրներ	409.8	362.7	476.3	687.4	757.6	1062.0	1164.6	1526.8	1750.5	1211.3	1534.5
%	*34.6*	*29.7*	*31.9*	*35.0*	*36.5*	*38.3*	*36.7*	*34.5*	*31.9*	30.3	32.0
Առևտրային հաշվեկշռի մնացորդ	**-584.2**	**-535.6**	**-481.9**	**-593.9**	**-628.1**	**-827.8**	**-1206.5**	**-2115.5**	**-3342.5**	**-2606**	**-2771.5**
%	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	**100**	**100**
այդ թվում											
ԱՊՀ երկրների հետ	-100.2	-129.4	-205.5	-152.2	-164.9	-218.8	-359.1	-553.8	-792.4	-905.3	-942.7
%	*17.1*	*24.2*	*42.6*	*25.6*	*26.2*	*26.4*	*29.8*	*26.2*	*23.7*	34.7	34.0
ԵՄ երկրներ	-195.8	-177.7	-75.5	-160.3	-237.4	-153.6	-217.6	-401.2	-598.1	-590.9	-531.9
%	*33.5*	*33.2*	*15.7*	*27.0*	*37.8*	*18.5*	*18.0*	*18.9*	*17.9*	22.7	19.2

ՀՀ արտահանման և ներմուծման մեջ ԱՊՀ և ԵՄ երկրների տեսակարար կշիռները ներկայացված են աղյուսակներ 10-ում և 11-ում, որոնցից երևում է, որ ՀՀ արտահանման և ներմուծման մեջ երկրների որևէ խմբի մոտ չի գրանցվել կայուն աճի կամ նվազման միտում:

Աղյուսակ 10

ՀՀ արտահանումը 2000-2010թթ.՝ ըստ երկրների խմբի (մլն դոլար) և տոկոսներով

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արտահանման ծավալ	**300.5**	**341.8**	**505.1**	**685.6**	**722.9**	**973.9**	**985.1**	**1152.3**	**1069.1**	**697.8**	**1011.4**
%	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***
այդ թվում											
ԱՊՀ երկրներ	73.4	89.1	96.3	129.1	125.1	187.8	212.5	355.3	339.7	139.1	**199.3**
%	*24.4*	*26.1*	*19.1*	*18.8*	*17.3*	*19.3*	*21.6*	*30.8*	*31.8*	19.9	***16.9***
ԵՄ երկրներ	107.0	92.5	200.4	263.5	260.1	454.2	473.5	562.8	576.2	310.2	**501.3**
%	*35.6*	*27.1*	*39.7*	*38.4*	*36.0*	*46.6*	*48.1*	*48.8*	*53.9*	44.5	***54.0***

Աղյուսակ 11

ՀՀ ներմուծումը 2000-2010թթ.՝ ըստ երկրների խմբի (մլն դոլար) և տոկոսներով

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ներմուծման ծավալը	**884.7**	**877.3**	**987.2**	**1279.5**	**1351.0**	**1801.7**	**2191.6**	**3267.8**	**4411.6**	**3304.1**	**3782.8**
%	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***	***100***
այդ թվում											
ԱՊՀ երկրներ	173.6	218.5	301.8	281.2	290.0	406.6	571.6	909.1	1132.1	1044.5	***1141.9***
%	*19.6*	*24.9*	*30.6*	*22.0*	*21.5*	*22.6*	*26.1*	*27.8*	*25.7*	31.6	***30.7***
ԵՄ երկրներ	302.8	270.2	275.9	423.9	497.5	607.8	691.1	964.0	1174.3	901.1	***1033.2***
%	*34.2*	*30.8*	*27.9*	*33.1*	*36.8*	*33.7*	*31.5*	*29.5*	*26.6*	27.3	***26.5***

Գծապատկեր 12

Հայաստանի արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը





2000-2010թթ. ՀՀ ընդհանուր ներմուծման ծավալներում ԱՊՀ և ԵՄ երկրների մասնաբաժինները համապատասխանաբար եղել են՝ 28% և 28.8%:

ԱՊՀ երկրներից Հայաստանի հիմնական առևտրային գործընկերը Ռուսաստանն է: Նշված ժամանակահատվածում ՀՀ ներմուծման բաժնում զգալի բաժին ունի նաև Վրաստանը, որի բաժնեմասը 2008թ. ՀՀ արտահանման մեջ կազմել է 7.7%, 2009թ.՝ 7.6%, իսկ 2010թ.՝ 4.7%: ՀՀ ներմուծման մեջ 2010թ. Վրաստանի բաժնեմասը կազմել է 1.44%: Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ ներմուծման մեջ Վրաստանի բաժնեմասը հաշվարկվել է ըստ ապրանքի ծագման երկրի

հատկանիշի, իսկ եթե մենք որպես վերլուծության հիմք ընդունենք առևտուր անող երկրի հատկանիշը, ապա Վրաստանի բաժնեմասը զգալի աճում է՝ կազմելով 6.04%: Իսկ ԵՄ երկրներից արտահանման մեջ առաջատար դիրքեր ունեն Գերմանիան, Նիդեռլանդները, Բելգիան:

Ինչ վերաբերում է տարածաշրջանի հետ առևտրին, ապա դրա ծավալները հարաբերականորեն կայուն և ցածր մակարդակում են գտնվում: Գաղտնիք չէ, որ պատճառը Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմաններն են, ինչը բացասական մեծ ազդեցություն է թողնում թե՛ ընդհանրապես Հայաստանի տնտեսության և տարածաշրջանի զարգացման հեռանկարի, թե՛ մասնավորապես արտահանողների վրա՝ ելնելով չափազանց բարձր տրանսպորտային ծախսերի հանգամանքից: Օգտվելով Հայաստանը արտաքին աշխարհի և հիմնական առևտրային գործընկեր երկրների հետ ցամաքային ու ծովային միակ կապուղին լինելու փաստից՝ Վրաստանը հայրենական արտահանողներից ու ներմուծողներից պաշտոնապես ու հաճախ նաև չարդարացված բարձր գումարներ է գանձում: Մասամբ սրանով է պայմանավորվում նաև ապրանքային առևտրի կառուցվածքը, քանի որ արտահանողներն ու ներմուծողները հարկադրված են լինում բարձր արժեք/կշիռ հարաբերակցություն ունեցող արտադրանքների առևտուր կատարել[7]:

Վերլուծելով վիճակագրական տվյալները՝ կարող ենք փաստել, որ աստիճանաբար ընդլայնվում է ՀՀ արտահանման շուկաների աշխարհագրությունը: Խոսելով ՀՀ արտաքին առևտրի մասին՝ պետք է նշել, որ այլ կլինեին առևտրի ցուցանիշները, եթե ՀՀ-ն չունենար տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ: Մասնավորապես, Հայաստանում տրանսպորտային ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի և արտաքին առևտրաշրջանառության նկատմամբ ամենաբարձրերից մեկն է աշխարհում՝ համապատասխանաբար գերազանցելով համաշխարհային միջինները մոտ 3.3 և 1.8 անգամ (ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը կազմում է շուրջ 70,2%, Ադրբեջանում՝ 71.44%[8]):

---

[7] Տ. Զրբաշյան, Հ. Բարսեղյան և ուրիշներ, Հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար: Ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ, գործունեություն 3.2.6, 2005թ., էջ 19:

[8] Ն.Հ. Խուբլարյան, Տարածաշրջանային երկրների հետ Հայաստանի առևտրային կապերի հիմնախնդիրները, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006թ., էջ 16-18:

Չնայած խորացող առևտրային հարաբերություններին, պետք է նկատել, որ Հայաստանի տնտեսության բացվածությունը դեռևս բավականին փոքր է թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրների համեմատ: Հատկապես ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման ցուցանիշը Հայաստանում ամենափոքրն է դիտարկված մի շարք երկրների ցանկում (գծապատկեր 13): Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանի ցուցանիշը գերազանցում է կամ համարժեք է միայն այնպիսի մեծ ներքին տնտեսություն ունեցող երկրներին, ինչպիսիք են՝ Ռուսաստանը, Թուրքիան և Չինաստանը:

Գծապատկեր 13

Տնտեսության բացվածության ցուցանիշ 2010թ., %



Կարելի է հստակ գնահատել արտաքին առևտրի ազդեցությունը ազգային տնտեսության զարգացման վրա: Այդ նպատակով կիրառվում է տնտեսության բացվածության ցուցանիշը, որը հաշվարկվում է արտաքին առևտրի ծավալները հարաբերելով ՀՆԱ-ին՝ արտահայտված %-ներով: Առաջին գլխում մենք նշեցինք, որ փոքր երկրներում, որտեղ ռեսուրսները և բնական պայմանները բազմազան չեն, տվյալ ցուցանիշը մեծ կլինի, քանի որ արտասահմանից ավելի շատ ապրանքներ են ներմուծվում, քան արտադրվում, իսկ մեծ երկրներում հակառակը, տվյալ ցուցանիշը ավելի փոքր է, քանի որ սեփական արտադրությունը ավելի բազմազան է: Մյուս կողմից փոքր երկրներում տնտեսության բացվածության ցուցանիշը համեմատաբար շատ ավելի մեծ է, քանի որ ներքին «սահմանափակ»

շուկայի պայմաններում հետագա տնտեսական աճը պայմանավորված է արտաքին աշխարհով: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա չնայած որ ՀՀ-ն փոքր երկիր է, տվյալ ցուցանիշը ՀՀ-ում 2010թ. կազմել է մոտ 51.1%: Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ տնտեսության բացվածության ցուցանիշի մեծությունը հիմնականում պայմանավորված է ներմուծման ծավալների մեծությամբ:

Մասնավորապես, կարելի է հաշվել արտաքին ապրանքաշրջանառության մեծությունը՝ արտահանումը և ներմուծումը, հաշվարկված բնակչության մեկ շնչի հաշվով: Հայաստանում բնակչության մեկ շնչին ընկնող արտաքին առևտրաշրջանառությունը 2010թ. կազմել է 1590 ԱՄՆ դոլար (այստեղ և հետագայում՝ դոլար):

Արտաքին առևտրի ազդեցությունը ազգային տնտեսության վրա արտացոլվում է ՀՆԱ-ում արտահանման և ներմուծման տեսակարար կշիռների միջոցով:

ՀՆԱ-ում արտահանման մեծ տեսակարար կշիռը վկայում է համապատասխան արտադրանքով ազգային տնտեսության հագեցվածության մասին, ինչպես նաև միջազգային շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության մասին: ՀՀ-ում 2009թ. տվյալ ցուցանիշը կազմել է 8%: Թեպետ պետք չէ մոռանալ, որ այս ցուցանիշի վրա իր զգալի ազդեցությունն է ունեցել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Այսպես, արդեն 2010թ. այս ցուցանիշը կազմել է 11.1%: Առավել ակնառու կլինի դիտարկել 2000-2010թթ. տվյալ ցուցանիշի միջինը, որը կազմել է 15.8%:

Տվյալ ցուցանիշը հաշվարկվում է նաև առանձին ճյուղերի համար՝ ճյուղի արտահանման և արտադրության հարաբերությամբ: Հայաստանում առանձին ոլորտներում տվյալ ցուցանիշը հաշվարկելիս հետաքրքրություն է ներկայացնում թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների ոլորտը, որտեղ նշված ցուցանիշը 34% է: Հաշվի առնելով, որ ընդհանուր տնտեսության համար նույն ցուցանիշը 16.2% է, կարելի է պնդել, որ ՀՀ-ն մասնագիտացված է մետաղների արտահանման մեջ, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում արտահանման մասնագիտացված միակ ոլորտը հումքի արտահանման ոլորտն է: Իսկ տվյալ փաստը այնքան էլ ուրախալի չէ:

Վերոնշյալից կարելի է հանգել այն գաղափարին, որ ՀՀ տնտեսությունը մակրոտնտեսական ցուցանիշներով թեպետ երբեմն համա-

հունչ է զարգանում համաշխարհային տնտեսությանը, սակայն տվյալ ցուցանիշների համահունչ լինելը ամենևին էլ չի վկայում այն մասին, որ ՀՀ տնտեսությունը զարգանում է համաշխարհային տնտեսությանը համարժեք ձևով: Մասնավորապես արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում թեպետ 2010թ. կազմել է 11.1%, սակայն արտահանումը հիմնականում ապահովվում է մի քանի ոչ հեռանկարային ճյուղերի միջոցով: Ավելին, չնայած այն հանգամանքին, որ մինչև համաշ-խարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ տնտեսությունում արձանագրվում էր երկնիշ տնտեսական աճ, սակայն այդ աճի հիմնական աղբյուրներն էին արտերկրից ստացվող տրանսֆերտներն ու շինարարության ոլորտը, այսինքն՝ ապահովվում էր տնտեսական աճ առանց տևական արտադրության զարգացման: Հետևաբար ՀՀ տնտեսությունը յուրաքանչյուր պահի կարող էր պայթել, ինչին էլ ականատես եղանք 2008-2009թթ.: Անհրաժեշտ է հետագայում լրջորեն մտածել տնտեսական աճի ապահովման աղբյուրների, ինչպես նաև ՀՀ արտահանման մրցունակության բարձրացման և տեսականու բազմազանության մասին:

Ի տարբերություն Հայաստանի արտահանման աշխարհա-գրական կառուցվածքի վերջին տարիների տարբերակվածության՝ դրա ապրանքային տարբերակվածությունը դեռևս շատ փոքր է և տնտեսական աճի ապահովման տեսանկյունից ոչ արդյունավետ: Արտահանման մեծ մասը կազմում են արտահանման կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեցող 4 ապրանքա-խմբերը (թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղ-ներ, պատրաստի սննդի արտադրանք և հանքահումքային մթերքներ), որոնց տեսակարար կշիռը 2000-2010թթ. ընթացքում ՀՀ արտահան-ման ծավալներում կազմել է միջինը 80.9%: Եթե այդ 4 ապրանքա-խմբերին միացնում ենք ևս երեքը (պլաստմասսա, կաուչուկ, ռետին, մեքենաներ, սարքավորումներ և մանածագործական իրեր), որոնք փոքր բաժին չունեն արտահանման կառուցվածքում, ապա ստացվում է, որ 2000-2010թթ. արտահանման միջինում 91.6%-ը բաժին է ընկնում 7 ապրանքախմբերի:

Այս ամենը վկայում է այն մասին, որ Հայաստանի ապրան-քային արտահանումը բարձր աստիճանի կենտրոնացվածություն

ունի, ինչը արդեն իսկ նպաստավոր հանգամանք չէ տնտեսական աճի բարձր ու կայուն տեմպեր ապահովելու համար:

Ընդ որում, միջազգային փորձը վկայում է, որ ներկայումս տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովում են այն երկրները, որոնց արտահանման կառուցվածքը փոփոխվել է ցածր տեխնոլոգիատարության ապրանքներից դեպի բարձր տեխնոլոգիատարության ապրանքներ: Իսկ բնական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը ամենևին էլ բարձր տնտեսական աճի գրավական չէ: Ուստի հարկ ենք համարում արտահանման ու տնտեսական աճի կապը բացահայտելու համար վերլուծել ՀՀ արտահանումը տեխնոլոգիատարության տեսանկյունից: Այդ նպատակով օգտագործենք Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից մշակված ապրանքների տեխնոլոգիատարության դասակարգումը՝ ըստ ISIC 3 (International Standard Industrial Classification of All Economic Activities, Rev.3) դասակարգման[9]՝ մեկ փոփոխությամբ. միավորենք միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքախմբեր ենթախումբը՝ ՀՀ վիճակագրական տվյալների համապատասխանությունը վերոնշյալ դասակարգումը ապահովելու համար: Արդյունքում՝ ըստ տեխնոլոգիատարության՝ մենք առանձնացնում ենք 3 ապրանքախմբեր՝ ռեսուրսատար (հանքահումքային արտադրանք, գյուղատնտեսական արտադրանք, կենդանական և բուսական արտադրանք՝ բացառությամբ պատրաստի սննդի արտադրանքի), ցածր տեխնոլոգիատար (վերամշակող արդյունաբերություն, ներառյալ՝ թանկարժեք և ոչ թանկարժեք քարերից ու մետաղներից իրեր, փայտյա և թղթե արտադրանք, սնունդ, խմիչք, ծխախոտ, տեքստիլ արդյունաբերություն, կաշվե իրեր, կոշկեղեն) և միջին ու բարձր տեխնոլոգիատար ապրանքներ (քիմիական արդյունաբերություն՝ ներառյալ դեղագործություն, պլաստմասսայից իրեր, ռետին, կաուչուկ, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, սարքեր և ապարատներ, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտ):

---

[9] OECD Directorate for Science, Technology and Industry, Economic Analysis and Statistics Division, The OECD's classification of sectors by technology, ISIC rev. 3 Technology intensity definition, 7 July, 2011.

Աղյուսակ 12

Արտահանման տեխնոլոգիատարությունը ՀՀ-ում, %-ով

	Ռեսուրսատար	Ցածր տեխնոլոգիատար	Միջին և բարձր տեխնոլոգիատար	Ընդհանուր
2001	11,9	71,8	16,3	100
2002	9,3	77,9	12,8	100
2003	8,2	81,6	10,2	100
2004	12,7	79,6	7,7	100
2005	11,4	82,9	5,7	100
2006	16,3	74,7	9	100
2007	17,3	70,7	12	100
2008	19,3	71,3	9,4	100
2009	25,5	66,2	8,3	100
2010	31,3	62	6,7	100

Աղյուսակ 12-ը վկայում է, որ ՀՀ արտահանման մեջ ցածր, միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների տեսակարար կշիռը 2010թ. 2001թ.-ի համեմատ նվազել է, իսկ փոխարենը աճել է ռեսուրսատար ապրանքների տեսակարար կշիռը, չնայած դրան՝ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ցածր տեխնոլոգիատարության ապրանքները (նշված ժամանակահատվածում՝ ավելի քան 60%): Ընդ որում, ռեսուրսատար ապրանքներ ենթախմբում նշված ժամանակահատվածում արտահանման աճ գրանցվել է բոլոր ապրանքախմբերում, սակայն այս ենթախմբի հիմնական մասը բաժին է ընկնում հանքահումքային մթերքներին (2010թ.՝ 27.3%): Դիտարկելով ոլորտը արտահանման աճի տեսանկյունից՝ կարող ենք փաստել, որ, օրինակ, 2007թ. ռեսուրսատար ապրանքների արտահանման աճը ընդհանուր արտահանման աճի մեջ կազմել է 24.2%, ինչը համադրելով աղյուսակ 3-ի տվյալների հետ (2007թ. արտահանման աճը տնտեսական աճի մեջ 1.3% էր)՝ կարող ենք պնդել, որ 2007թ. ռեսուրսատար ապրանքների արտահանումը տնտեսական աճին նպաստել է 0.3%-ային կետով: Ցածր տեխնոլոգիատարության ապրանքների մեջ հիմնական տեսակարար կշիռն ունեն թանկարժեք քարեր և մետաղներ (միջինում՝ 32%), ոչ թանկարժեք

մետաղներ և դրանցից իրեր (միջինում՝ 23.5%) և պատրաստի սնունդ (միջինում՝ 12%) ապրանքախմբերը: Ընդ որում, ցածր տեխնոլոգիատարության ապրանքների արտահանման աճը 2007թ. ամբողջ արտահանման աճի մեջ կազմել է 43%, իսկ միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտահանման աճը՝ 32.8%-ը, ինչը համադրելով աղյուսակ 3-ի տվյալների հետ՝ կարող ենք փաստել, որ ցածր տեխնոլոգիատարության ապրանքների արտահանման աճը 2007թ. ապահովել է ՀՀ տնտեսական աճի 0.6%-ային կետը, իսկ բարձր և միջին տեխնոլոգիատարության ապրանքների արտահանումը՝ 0.4%-ային կետը:

Նշենք, որ արդյունաբերական պաշարներ և կապիտալ ապրանքներ ապրանքախմբերը ընդհանուր առմամբ կազմում են ամբողջ ներմուծման միջինում մոտ կեսը, որի ազդեցությունը տնտեսական աճի վրա պարզելու համար անհրաժեշտ է էկոնոմետրիկ վերլուծություն: Ընդ որում՝ փոքր-ինչ ուրախալի է այն հանգամանքը, որ 2010թ. 2000թ. համեմատ նկատվում է կապիտալ ապրանքների ներմուծման աճ, չնայած արդյունաբերական պաշարների ներմուծումը գրեթե անփոփոխ է, սակայն նման հարաբերակցությունը դեռևս բավարար չէ տնտեսական աճի վրա հնարավոր դրական ազդեցություն ունենալու համար: Իսկ սննդամթերք, խմիչք, վառելիք և այլ սպառողական ապրանքներ ապրանքախմբերը կազմում են ողջ ներմուծման միջինում 51%-ը, ընդ որում, եթե հաշվի առնենք, որ վառելիքն ու տրանսպորտային միջոցները օգտագործվում են ինչպես վերջնական սպառման, այնպես էլ արդյունաբերական նպատակներով, ապա կարող ենք ասել, որ վերջնական սպառման ապրանքները, առանց վառելիքի և տրանսպորտային միջոցների, կազմել են ներմուծման մոտ 1/3-ը, ուստի կարող ենք պնդել, որ վերջնական սպառման նշված 2 ապրանքախմբերը բացասական նպաստում են ունեցել տնտեսական աճի վրա:

Խոսելով ՀՀ արտաքին առևտրի մասին, պետք է նշել, որ այլ կլիներին առևտրի ցուցանիշները, եթե ՀՀ-ն չունենար տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ: Մասնավորապես, Հայաստանում տրանսպորտային ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի և արտաքին առևտրաշրջանառության նկատմամբ ամենաբարձրերից մեկն է աշխարհում՝ համապատասխանաբար գերազանցելով համաշխարհային միջինները մոտ 3.3 և 1.8 անգամ (ՀՆԱ-ի

նկատմամբ հարաբերակցությունը կազմում է շուրջ 70,2%, Ադրբեջանում՝ 71.44%[10]): ՌԴ-ի հետ երկաթուղային հաղորդակցության վերականգնումը Հայաստանի համար անհրաժեշտություն է: Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, Աբխազիայի տարածքով դեպի Ռուսաստան Հայաստանի բեռնափոխադրման արժեքը կնվազի շուրջ 1/3-ով:

Կատարելով վերլուծություն տարածաշրջանի երկրների նկատմամբ ՀՀ ներմուծման և արտահանման առաձգականության և տրանսպորտային ծառայությունների արտահանման և ներմուծման ցուցանիշների շուրջ, հանգում ենք այն եզրակացության, որ օրինակ՝ ներմուծման գների ինդեքսի նույնիսկ 1% նվազման դեպքում (ինչը կարող է հետևանք լինել տրանսպորտային ծախսերի նվազեցման) դեպի Հունաստան ապրանքների արտահանման ծավալները կարող են աճել: Այս իմաստով լուրջ քայլ կարող է լինել հայ-թուրքական սահմանի բացումը, ինչը մեր երկրին արտաքին շուկաներ ներթափանցման, ինչպես նաև արտահանման-ներմուծման հետ կապված տրանսպորտային ծախսերի կրճատման հնարավորություններ կընձեռի: Թուրքական շուկան մեծ պահանջարկ է ներկայացնում ոչ միայն հայկական շինանյութերի, այլև էլեկտրաէներգիայի նկատմամբ, որոնց հաշվին հայ-թուրքական սահմանի բացման պայմաններում ՀՀ արտահանումը կաճի, կկրճատվի արտադրանքի տեղափոխման տևողությունը, ինչը իր հերթին կնպաստի մեր արտադրանքի մրցունակության բարձրացմանը արտաքին շուկայում:

[10] Ն.Հ. Խուբլարյան, Տարածաշրջանային երկրների հետ Հայաստանի առևտրային կապերի հիմնախնդիրները տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր. Երևան, 2006թ., էջ 16-18:

ԳԼՈՒԽ 2

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ԹՈՒՐՔԻԱ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Թուրքիայի տնտեսաաշխարհագրական բնութագիրը

Թեև հետխորհրդային շրջանում Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունները սկսվեցին Հայաստանի անկախությունից անմիջապես հետո Թուրքիայի կողմից Հայաստանի պետության ճանաչմամբ, սակայն Թուրքիան տարբեր պատճառներով չցանկացավ Հայաստանի հետ պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Ավելին՝ 1993թ. Թուրքիան քաղաքական նկատառումներով փակեց Հայաստանի հետ իր սահմանները: Ստեղծված իրավիճակում էապես տուժում են թե՛ ՀՀ և թե՛ Թուրքիայի տնտեսական շահերը: Այնուամենայնիվ, ցանկացած երկրի հետ արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարների և արդյունավետության գնահատումից առաջ անհրաժեշտ է տալ այդ երկրների տնտեսաաշխարհագրական բնութագրերը՝ տնտեսական համագործակցության առավել շահավետ ոլորտները բացահայտելու համար: Այս առումով կարևորվում է Թուրքիայի տնտեսության ոլորտների առաջնայնության, դրանց զարգացման դինամիկայի ուսումնասիրությունը, դրա ռեսուրսների, տարածքային մեծության, ժողովրդագրական տվյալների համադրությունը, տեղը և դերը համաշխարհային առևտրային և այլ տնտեսական հարաբերությունների համակարգում:

Այսպես, Թուրքիայի տարածքը ունի 1600 կմ երկարությամբ և 800 կմ լայնությամբ ընդգծված ուղղանկյան ձև: Այն իր լճերի հետ միասին զբաղեցնում է մոտ 786 կմ^2 տարածք, որի 96%-ը գտնվում է ասիական, իսկ 4%-ը եվրոպական մայրցամաքում: Տարածքային մեծությամբ Թուրքիան աշխարհի 37-րդ երկիրն է, որը երեք կողմից շրջապատված է ծովերով: Այն սահմանակցում է ութ երկրների հետ.

առավել երկար սահմանագիծը Սիրիայի հետ է՝ 822 կմ, այնուհետև Իրանի՝ 499 կմ և Իրաքի՝ 331 կմ: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի 619 կմ երկարությամբ ձգվող սահմանը դարձավ ոչ թե Թուրքիա-ԽՍՀՄ, այլ Թուրքիա-Հայաստան (325 կմ) - Ադրբեջան (Նախիջևան - 18 կմ) - Վրաստան (276 կմ) սահման: Հայաստանի հետ Թուրքիայի սահմանը սկսվում է Սիլդիր լճից և ձգվում է մինչև Դիլուչու, որը Թուրքիայի ամենաարևելյան հենակետն է և այն սահմանագիծը, որը Թուրքիան ունի Ադրբեջանի, Հայաստանի և Իրանի հետ: Չնայած նրան, որ հայ-թուրքական սահմանը փակ է, այնուամենայնիվ, Գյումրիի Ախուրյան գետից կարելի է տեսնել Անիի ավերակների որոշ հատված, որի նպատակով էլ ստեղծվել է չեզոք տարածք զբոսաշրջիկների համար: Եվրոպական սահմանով Թուրքիան հարևան է Հունաստանի (206 կմ) և Բուլղարիայի (240 կմ) հետ:

Բնակչությունը, 2009թ. մարդահամարի արդյունքների համաձայն, 71.5 մլն է, իսկ բնակչության բնական աճի տեմպը կազմում է տարեկան 1.31%: Բնակչության 87.4%-ը գրագետ է, իսկ կյանքի միջին տևողությունը 73.1 տարի է[11]:

Աղյուսակ 13

Թուրքիայի ամենամեծ գավառները՝ ըստ բնակչության թվաքանակի 2010թ.[12]

Գավառ	Բնակչություն	Գավառ	Բնակչություն
Ստամբուլ	12,946,730	Դիյարբակի	843,360
Անկարա	4,223,398	Մերսին	843,429
Իզմիր	2,774,103	Կայսերի	826,523
Բուրսա	1,667,321	Էսկիսեհիր	629,609
Ադանա	1,584,053	Դենիզլի	498,643
Գազիանտեպ	1,324,520	Սանլիուրֆա	498,111
Կոնիա	1,036,027	Սամսան	495,145
Անթալիա	928,229	Ադապազարի	414,537

Թուրքիան մի շարք միջազգային կազմակերպությունների համահիմնադիր-անդամ է՝ Միացյալ ազգերի կազմակերպություն (1945թ.), Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն (1961թ.), Եվրոպական անվտանգության և համագոր-

[11] Statistical Indicators 1923-2008, Turkish Statistical Institute, Ankara 2008, p 8.
[12] www.dtm.gov.tr

ծակցության կազմակերպություն (1973թ.) և G20 (1999թ.): 1949թ. Թուրքիան նաև Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ է՝ Իզմիրում և Ադանայում ունենալով համապատասխան գրասենյակներ: Իսկ 1995թ. միացել է նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությանը: Քաղաքական ոլորտում Թուրքիան ունի երեք հիմնական խնդիրներ, որոնք առնչվում են 1915թ. Հայկական ցեղասպանության ճանաչմանը, 1974թ. Հյուսիսային Կիպրոսի օկուպացման հետևանքով Հունաստանի հետ սրված հարաբերությունների կարգավորմանը և ինքնուրույն պետականության ստեղծման համար բնակչության 20%-ը կազմող քուրդ փոքրամասնության պայքարին:

Թուրքիան բաժանված է 7 տարածաշրջանների, որոնցից երեքն են մոտ հայկական սահմանին՝ Արևելյան Անատոլիա, Հարավ-արևելյան Անատոլիա և Սևծովյան տարածաշրջանի արևելյան հատված[13]:

Թուրքիան հարուստ է բնական ռեսուրսներով, սակայն դրանցից միայն մի քանիսն են նշանակալի, օրինակ՝ քրոմի հանքաքարի պաշարները: Առկա են նաև քարածխի, գորշածխի, նավթի, երկաթի, ցինկի, պղնձի, վոլֆրամի, ուրանի, մոլիբդենի, մանգանի, սնդիկի և պեռլիտի պաշարներ: Բացառությամբ Իրանի՝ Թուրքիան Մերձավոր Արևելքի միակ երկիրն է, որը հարուստ է քարածխի պաշարներով, ընդ որում հատկապես մեծ են արդյունահանման ծավալները: Աշխարհի աղի պաշարների 63%-ը ևս կենտրոնացած է Փոքր Ասիա թերակղզում: Չնայած Թուրքիան ունի նավթի պաշարներ, սակայն դրանք բավարար չեն նույնիսկ ներքին պահանջարկը բավարարելու համար:

Թուրքիան բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ մեծությամբ աշխարհի 15-րդ, իսկ անվանական ՀՆԱ մեծությամբ 37-րդ երկիրն է[14]: 2010թ. տվյալներով Թուրքիան 15-րդ խոշորագույն տնտեսությունն է աշխարհում և 6-րդը՝ ԵՄ պետությունների համեմատ: Թուրքիան 10-րդն է աշխարհում պողպատի արդյունաբերության ծավալներով և 15-րդը մեքենաշինության մեջ: Թուրքական ավիացիան ամենաարագ աճողներից մեկն է Եվրոպայում և առաջատարը երթևեկության ցուցանիշներով, իսկ Ստամբուլի Աթաթուրքի անվան օդանավակայանը լավագույնն է համարվում Հարավային Եվրոպայում:

---

[13] www.wikipedia.org

[14] World development report 2010. The World Bank, Washington DC 2010, p 251.

Թուրքիան 7-րդն է աշխարհում՝ որպես ամենաայցելվող տուրիստական ուղղություն՝ տարեկան հյուրընկալելով 26.5 մլն զբոսաշրջիկ, բացի այդ, աշխարհի 100 լավագույն հյուրանոցներից 20-ը գտնվում են հենց այս երկրում[15]: Համաձայն Forbes ամսագրի՝ 2010թ. Թուրքիայում ապրում էր 38 միլիարդատեր, որի արդյունքում երկիրը ամենաշատ միլիարդատերեր ունեցող երկրների շարքում գրավեց 6-րդ տեղը՝ առաջ թողնելով ԱՄՆ-ին, Չինաստանին, Ռուսաստանին, Հնդկաստանին և Գերմանիային[16]:

CIA-ը դասակարգում է Թուրքիան որպես զարգացած երկիր[17]: Սակայն ավելի հաճախ այն մասնագետների կողմից բնորոշվում է որպես նոր արդյունաբերական երկիր, իսկ Համաշխարհային բանկը, Մերիլ Լինչը և “The Economist” ամսագիրը Թուրքիան անվանում են ոչ այլ կերպ, քան արագ աճող շուկայական տնտեսություն[18]:

Հանրապետության ստեղծման առաջին վեց տասնամյակների ընթացքում՝ 1923-1983թթ., Թուրքիան ավելի հակված էր տնտեսության ստատիկ մոտեցման պահպանմանը՝ կառավարության կողմից բյուջեի խիստ պլանավորման, մասնավոր հատվածի, արտաքին առևտրի, արժութային հոսքերի և օտարերկրյա ուղղակի ներդրումների նկատմամբ սահմանափակումների կիրառման պայմաններում: Այնուամենայնիվ, սկսած 1983թ., Թուրքիան սկսեց իրականացնել հետևողական բարեփոխումներ՝ վարչապետ Թուգութ Օզալի գլխավորությամբ, վերափոխելով ստատիկ տնտեսությունը շուկայական հարաբերությունների սկզբունքների և մասնավոր հատվածի գերակայության վրա հիմնված տնտեսության: Բարեփոխումները ապահովեցին արագ տնտեսական աճ, որն ընդհատվում էր 1994թ., 1999թ. և 2001թ. ֆինանսական ճգնաժամերով: Այնուամենայնիվ, 1981-2003թթ. Թուրքիան արձանագրեց ՀՆԱ 4% միջին տարեկան աճ[19]: Հարկաբյուջետային լրացուցիչ բարեփոխումների բացակայությունը, որը

---

[15] World Economic Outlook, IMF, Washington DC 2008, p 136.

[16] http://www.forbes.com/2010/03/10/worlds-richest-people-slim-gates-buffett-billionaires-2010_land.html

[17] Developed Countries, World Factbook, CIA, Washington DC 2010, p 45.

[18] http://news.xinhuanet.com/english/2009-06/28/content_11612750.htm
http://www.economist.com/world/europe/displayStory.cfm?story_id=14041662
http://www.worldbank.org.tr/WBSITE/EXTERNAL/COUNTRIES/ECAEXT/TURKEYEXTN

[19] Statistical Indicators 1923-2008, Turkish Statistical Institute, p. 688-692.

ուղեկցվում էր համատարած կոռուպցիայով, հանգեցրեց բարձր գնաճի, թույլ զարգացած բանկային համակարգի և մակրոտնտեսական անկայունության:

2001թ. տնտեսական ճգնաժամից սկսած՝ ֆինանսների նախարարի կողմից ձեռնարկվեց բարեփոխումների մի ամբողջ շարք, ինչը թույլ տվեց արժեզրկման տեմպերը կրճատել մինչև միանիշ թվեր, բարձրացնել զբաղվածության մակարդակը և ներգրավել օտարերկրյա ներդրումներ: Թուրքիայի տնտեսական զարգացումը միջազգային կազմակերպությունների և արևմտյան գերտերությունների կողմից դիտվում է որպես համաշխարհային կարևորություն ներկայացնող գործընթաց է՝ հաշվի առնելով երկրի չափերը, տարածաշրջանում ունեցած ազդեցությունը և ռազմավարական աշխարհագրական դիրքը, որ միմյանց է կապում արևելքն ու արևմուտքը:

Եվ իրոք, Թուրքիան գտնվում է տնտեսական ու քաղաքական մի այնպիսի խաչմերուկում, որտեղ հատվում են աշխարհի խոշորագույն տարածաշրջաններից երեքը՝ Եվրոպան, Միջին Արևելքն ու նախկին ԽՍՀՄ-ի երկրները: Բալկանյան թերակղզու և մնացյալ Եվրոպայի հարևանությունը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի, Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի արագ աճող տնտեսությունները աննախադեպ տնտեսական ու գործարար հնարավորություններ են բացում Թուրքիայի առջև:

Պատահական չէ, որ գնալով ավելի ու ավելի մեծ թվով վերազգային կորպորացիաներ և միջազգային կազմակերպություններ են իրենց տարածաշրջանային կենտրոնները տեղակայում հենց Թուրքիայում: Իսկ վերջիններիս փորձը երաշխավորում է Թուրքիան՝ որպես գրավիչ ներդրումային ուղղություն և արտահանման շահավետ պլատֆորմ:

Այսպիսով, Թուրքիան աստիճանաբար տնտեսական բարեփոխումների օգնությամբ բաց արեց իր տնտեսությունը, կրճատեց կառավարության վերահսկողությունը արտաքին առևտրի և ներդրումների նկատմամբ և ազատականացրեց տնտեսության մի շարք ոլորտներ (աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Թուրքիայի տնտեսության բացության մակարդակը 2004-2010թթ.[20]

Տարիներ	Տնտեսության բացությունը (արտաքին առևտրային շրջանառության /ՀՆԱ * 100%)	Արտաքին առևտրային հաշվեկշիռ/ՀՆԱ * 100%
2004	41.1	-5.1
2005	39.5	-6.3
2006	42.8	-8.8
2007	42.7	-21
2008	45	-23
2009	39.4	-6.2
2010	40.7	-9.7

2002-2007թթ. Թուրքիայի ՀՆԱ-ի աճը կազմեց տարեկան միջինը 7.4%, որը դարձրեց Թուրքիան աշխարհի ամենաարագ զարգացող երկրներից մեկը: 2008թ. տնտեսական աճը կազմեց 14%, սակայն 2009թ. սկզբներին Թուրքիայի տնտեսությանը հարված հասցրեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: ԱՄՀ կանխատեսումների համաձայն՝ 2009թ. Թուրքիան պետք է արձանագրեր 5.1% տնտեսական անկում, այն դեպքում, երբ Թուրքիայի կառավարությունը կանխատեսում էր միայն 3.6% անկում: Ի վերջո անկումը կազմեց 4.8%: Իսկ արդեն 2010թ. գրանցվեց 8.9% տնտեսական աճ[21]:

Ժամանակի ընթացքում ավելի ակնհայտ է դառնում Թուրքիայի տնտեսության կախվածությունը հիմնական մեծ քաղաքների արդյունաբերությունից, որն ավելի կենտրոնացված է երկրի արևմտյան գավառներում: Այստեղ առավել պակաս է Թուրքիայի համար ավանդական համարվող այնպիսի ճյուղի կենտրոնացվածությունը, ինչպիսին գյուղատնտեսությունն է, սակայն վերջինս մինչ այժմ համարվում է Թուրքիայի տնտեսության հենասյունը: 2010թ. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 9%-ը, արդյունաբերությանը 26%-ը, իսկ ծառայություններին՝ 65%-ը, այն դեպքում, երբ

[20] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Turkey`s Statistical Yearbook 2008, Turkish statistical institute, Ankara 2008 (էջ 253, 316, 326) և Turkey's Statistical Yearbook 2010, Turkish statistical institute, Ankara 2010 (էջ 285, 363) տվյալների հիման վրա:

[21] www.turkstat.gov.tr

տնտեսապես ակտիվ բնակչության 27%-ը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում[22]:

Հարկ է խոսել նաև Թուրքիայի զբոսաշրջության ոլորտի մասին, որը վերջին 20 տարիների ընթացքում աննախադեպ զարգացում ապրեց և դարձավ տնտեսության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: 2008թ. Թուրքիա են այցելել ավելի քան 29 մլն զբոսաշրջիկներ, որը տնտեսության համար ապահովել է 21.9 մլրդ դոլար[23] կամ համախառն արտահանման 15.4%-ը: Թուրքիայի տնտեսության մյուս առանցքային ոլորտներից կարելի է համարել բանկային համակարգը, շինարարությունը, էլեկտրոնիկան, տեքստիլ արտադրությունը, սննդարդյունաբերությունը, մեքենաշինությունը, քիմիական արտադրությունը և այլն: Թուրքիան ունի նաև մեծ և զարգացող մեքենաշինական արդյունաբերություն: Միայն 2008թ. արտադրվել են մեկ միլիոնից ավելի ավտոմեքենաներ: Վարկանիշով Թուրքիան այս ոլորտում համարվում է 6-րդը Եվրոպայում և 15-րդը աշխարհում: Թուրքիան նաև խոշոր նավաշինական երկիր է: 2007թ. այն զբաղեցնում էր աշխարհում 4-րդ տեղը նավերի պատվերների թվով՝ առաջ թողնելով միայն Չինաստանին, Հարավային Կորեային և Ճապոնիային (աղյուսակ 15):

Դեռևս 1959թ. Թուրքիան հայտ է ներկայացրել ԵՄ անդամագրվելու նպատակով, սակայն Կիպրոսի հետ ունեցած հակամարտության, ինչպես նաև ներքին ոչ կայուն քաղաքական վիճակի պատճառով հետաձգվեց անդամության հարցը մինչև 1987թ.: 1995թ. Եվրամիության հետ կնքվեց մաքսային միության պայմանագիր, իսկ 1999թ. Հելսինկիում կայացած Եվրոպական խորհրդի համաժողովի ընթացքում Թուրքիան ընդունվեց որպես թեկնածու երկիր՝ անդամ դառնալու նպատակով: Նոր կառավարությունը, Արդարության և զարգացման կուսակցության հիմնադրի ղեկավարությամբ, արտաքին քաղաքականությունը գրեթե ամբողջովին կողմնորոշեց դեպի արևմուտք: Բավականին դրական տեղաշարժեր արձանագրվեցին երկրի ներքին քաղաքականության մեջ: Մասնավորապես իրականացվեցին մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնք ուղղված էին երկրում ժողովրդավարական ռեժիմի հաստատմանը, մարդու

[22] Turkey's Statistical Yearbook 2010, Turkish statistical institute, Ankara 2010, p. 363.
[23] Նույն աղբյուրը:

իրավունքների պաշտպանությանը և այլն: Եվ չնայած այս ամենի արդյունքում, ի վերջո, Բրյուսելը որոշակիացրեց Եվրամիությանն անդամակցելու կապակցությամբ Թուրքիայի հետ բանակցությունները սկսելու ժամկետը (3 հոկտեմբերի, 2005թ.), այնուամենայնիվ 2005թ. սեպտեմբեր ամսվա դեպքերը ստիպեցին կասկածի տակ դնել այն հարցը, թե որքանով է Թուրքիան ժողովրդավարական: Եվրամիությանն անդամակցելու համար ժողովրդավարության հաստատումն ունի առանցքային նշանակություն, քանի որ 1992թ. Եվրամիության անդամների կողմից ստորագրված Մաաստրիխտյան համաձայնագրի «F» կետում նշվում է, որ ԵՄ անդամ կարող է դառնալ միայն ժողովրդավարական երկիրը, որտեղ պաշտպանվում են մարդու իրավունքները[24]: Ուստի միանշանակ չէ, որ Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը երբևէ կդառնա իրականություն:

Աղյուսակ 15

Հիմնական արդյունաբերական ապրանքների արտադրությունը Թուրքիայում 2006-2010թթ.[25]

	2006	2007	2008	2009	2010
Սննդի արդյունաբերություն					
Ալյուր *(հազ. տ.)*	3484.2	3721.6	3934.8	4194.8	4460
Շաքարավազ *(հազ. տ.)*	2023.7	1795.5	2132.1	2522.4	2465.6
Մարգարին *(հազ. տ.)*	647.5	604.6	619.3	702.8	599.7
Վերամշակող արդյունաբերություն					
Ֆիլտրով ծխախոտ (տ)	125.8	126.1	134.9	132.9	115.2
Թուղթ *(հազ. տ.)*	3487.4	3852.6	4303.2	4190.8	5001.8
Ցեմենտ*(հազ. տ.)*	49107.1	50995.1	54027.2	55741.2	60580.6
Ջուլածո երկաթ*(հազ. տ.)*	23307.5	25760.8	26809.1	25303.7	29029.8
Արդյունաբերական ապակի *(հազ. տ.)*	482.6	505.8	487.6	334.8	719.1
Բենզին*(հազ. տ.)*	3759.5	4147.3	4509.1	3878.3	3882.7
Դիզելային վառելիք *(հազ. տ.)*	6104.1	5955.1	6045.3	2730.2	**
Մեքենաշինություն					
Ավտոմեքենա *(հատ)*	757.0	855.4	899.3	752.4	885.1
Բեռնատար ավտոմեքենա *(հատ)*	134.2	154.9	162.7	84.2	**
Տրակտոր *(հատ)*	47.0	40.5	31.0	21.1	43.4
Ավտոբուս *(հատ)*	6.1	7.3	8.1	5.9	5.2

[24] Մաաստրիխտյան համաձայնագիրը կնքվել է 1992թ. հոլանդական Մաաստրիխտ քաղաքում:

[25] Turkey`s Statistical Yearbook 2010, Turkish statistical institute, Ankara 2010, pp. 243-246.
** Տարեգիրքը տվյալներ չի տրամադրում:

Սակայն Թուրքիայի անդամակցությունը չի կարելի գնահատել միայն Եվրամիության տեսանկյունից: Հարց է առաջանում. ինչո՞ւ է Թուրքիան ձգտում դեպի Եվրամիություն, այն դեպքում, երբ արևելքում երկրի դերը կլիներ շատ ավելի ազդեցիկ և դոմինանտ: Միանշանակ է նաև այն հանգամանքը, որ Եվրամիությանն անդամակցելու դեպքում Թուրքիան պարտադրված կլինի գնալ մի շարք զիջումների և կորուստների՝ կապված կրոնական, էթնիկական և այլ խնդիրների հետ: Իհարկե, չի կարելի հերքել նաև այն, որ Թուրքիայի նախաձեռնությամբ 1992թ. 12 երկրներ փորձեցին ստեղծել ինտեգրացիոն խմբավորում՝ Սևծովյան տնտեսական համագործակցությունը (ՍՕՏՀ)՝ որպես Եվրամիությանը հակակշիռ[26]: Այնուամենայնիվ, քանի որ ինտեգրացիոն խմբավորման ստեղծման ժամանակ խախտվել էր տարածաշրջանային տնտեսական ինտեգրման տրամաբանությունը, և չէին պահպանվել նախադրյալները, ինտեգրացիոն կառույցը չկայացավ: Վերլուծաբանների կարծիքով ՍՕՏՀ-ի չկայացման պատճառ էր նաև այն, որ Թուրքիան, իր վրա վերցնելով խմբավորման առաջատարի դերը, ճիշտ չէր հաշվարկել իր ռեսուրսները, որոնց անբավարարության հետևանքով էլ ինտեգրացիոն կառույցը փլուզվեց[27]: Սակայն, քանի որ Թուրքիան, ի տարբերություն Ռուսաստանի, ստանձնելով «քաղաքական հովանավորի» դերը, ավելի շատ փորձում է օգուտներ քաղել, քան օգտակար լինել, ուստի ՍՕՏՀ-ի չկայացման պատճառը ավելի շատ կարելի է համարել ինտեգրման նախադրյալների անտեսումը:

Այնուամենայնիվ Թուրքիան ձգտում է դեպի Եվրամիություն, իսկ վերջինս բացի ժողովրդավարության հաստատումից Թուրքիայի առջև դնում է նաև այլ խնդիրներ, մասնավորապես կապված «հայկական հարցի», «քրդական հարցի» լուծման և Կիպրոսի Հանրապետության ճանաչման հետ: Մի շարք վերլուծաբանների կարծիքով, սակայն, «հայկական հարցը» անդամակցության խնդրի համար այդքան էլ որոշիչ չէ[28]: Սակայն, եթե ի վերջո Թուրքիան

---

[26] The Summit Declaration on Black Sea Economic Cooperation. Istanbul, 25 June 1992. Black Sea Economic Cooperation. Handbook of Documents. V 1. Istanbul, July 1995 (p.3).

[27] “Le Figaro” journal, Paris 10.12.2003

[28] Migdalovitz Carol, Turkey: Selected Foreign Policy Issues and U.S. Views, Congressional Research Service, November 28, Istanbul 2010.

դառնա ԵՄ լիիրավ անդամ, ապա Հարավային Կովկասի երկրները ձեռք կբերեն մի շարք առավելություններ՝ անմիջականորեն սահմանակցելով Եվրամիությանը:

Մի շարք վերլուծաբանների կողմից կարևորվում է նաև այն հարցը, թե արդյոք թուրք ազգը համարում է իրեն եվրոպացի: Իհարկե, զուտ էթնիկական և մշակութային տեսանկյունից սա բավականին կարևոր հարց է, սակայն քանի որ Եվրամիությունն առաջին հերթին տնտեսական կառույց է, ուստի գտնում ենք, որ ազգային նույնականացումն (indentity) այդքան էլ որոշիչ դեր չի խաղում:

Թուրքիայի անդամակցության հարցը Եվրամիության տեսանկյունից ուսումնասիրելիս միանշանակ է դառնում, որ այսօր ԵՄ կառավարության անդամները հայտնվել են բավականին բարդ իրադրության առջև: Անդամակցության բանակցությունները արդեն սկսվել են, և չնայած վերլուծաբանների կարծիքով դրանք կարող են տևել 10-15 տարի, այնուամենայնիվ այսօր արդեն եվրոպական մի շարք երկրներում արթնացել են հակաթուրքական տրամադրություններ, հատկապես Թուրքիայի՝ մուսուլմանական պետություն լինելու հետ կապված: Այսպես, եթե 2003թ. ֆրանսիական «Ֆիգարո» թերթում հրապարակված հանրային կարծիքի հետազոտման տվյալները վկայում էին, որ ֆրանսիացիների 56%-ը դեմ է Թուրքիայի անդամակցությանը, իսկ այդ հարցում քրիստոնեության ինքնության պաշտպանության փաստարկը դրվում էր միայն երրորդ տեղում (ըստ նրանց՝ իրական վտանգը ներգաղթողների զանգվածային ներհոսքի հեռանկարն էր), ապա 2008թ. հարցումները փաստում էին, որ հասարակության 80%-ն է դեմ, իսկ կրոնական տարբերության փաստարկն արդեն առաջին տեղում էր[29]: Սա բնական է, քանի որ աշխարհի տարբեր տարածաշրջաններում ձևավորված բազմաթիվ ինտեգրացիոն խմբավորումներից և ոչ մեկը կրոնական «խառնուրդներ» չի պարունակում, ընդհակառակը մուսուլմանական աշխարհն այսօր հակված է հենց կրոնական հիմքի վրա միավորվելու կողմը (օրինակ՝ Իսլամական պետությունների միությունը):

[29] Balkan Trust for Democracy Given Award of Excellence From USAID's Global Development Alliance, The German Marshall Fund of the US, November 2005.

Պակաս կարևոր չէ նաև մեծաթիվ թուրքերի ներգաղթի հիմնախնդիրը: Այսօր արդեն Գերմանիայում ապրում են 3 մլն-ից ավելի թուրքեր, և պատահական չէ, որ Թուրքիայում ռեէմիգրացիայի խթանման ծրագրերի մեծ մասը բաժին է ընկնում հենց Գերմանիային: Բնականաբար, ընդհանուր շուկայի պայմանագրին անդամակցելուց հետո, ոչինչ չի կարող խոչընդոտել թուրք բնակչության մուտքը Եվրոպա: Կարելի է ենթադրել նաև, որ բնակչության միգրացիան դեպի Եվրոպա ցանկալի է, քանի որ այսօր վերջինս կանգնած է ժողովրդագրական հիմնախնդրի առջև: Այսպես, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում նորածինների 10%-ը բաժին է ընկնում իմիգրանտներին, Շվեյցարիայում այդ թիվը հասնում է 24%-ի, իսկ Լյուքսեմբուրգում մինչև 38%-ի[30]: Այնուամենայնիվ, քանի որ բնակչության (հատկապես աշխատուժի) զանգվածային միգրացիան ունի նաև մի շարք բացասական հետևանքներ, այն է՝ հասարակության մեջ ավելանում են սոցիալական լարվածության տարրերը և ազգային անհանդուրժողականությունը, ուստի հատկապես մահմեդական բնակչության ներգաղթը կարող է դիտվել որպես խիստ բացասական երևույթ:

Որոշ թուրք վերլուծաբանների կարծիքով, եթե Եվրամիությունը շարունակի նման փաստարկներով մերժել Թուրքիայի անդամակցության հարցը, ապա վերջինս վաղ թե ուշ ինքը դուրս կգա «խաղից»[31]: Սա անկասկած անցանկալի երևույթ է ԵՄ-ի համար, քանի որ Թուրքիան բավականին հարուստ է ռեսուրսներով և կապող օղակ է արևմուտքի ու արևելքի միջև: Սակայն ԵՄ-ը կարող է շարունակել օգտվել Թուրքիայի ռեսուրսներից և նրա «կամուրջի» կարգավիճակից՝ պահելով երկիրը միայն որպես մաքսային միության անդամ (ինչը ենթադրում է, որ առևտուրը ԵՄ անդամների հետ ազատ է, իսկ երրորդ երկրների հետ առևտրում սահմանվում են միասնական մաքսատուրքեր): Ուստի միանշանակ է, որ Թուրքիայի անդամակցության բանակցությունները կտևեն տասնյակ տարիներ, մինչդեռ դրանց բարեհաջող ավարտը ևս երաշխավորված չէ:

Սակայն նույնիսկ այժմ էլ, օգտվելով ԵՄ-ի հետ կնքված մաք-

---

[30] Е.Ф. Авдокущин, Международные экономические отнощения, Москва 1999, стр.145.

[31] Orhan Kilercioglu, “We`ll Leave,” Turkish Daily News, September 7, 2005.

սային միության պայմանագրից, Թուրքիան ավելացրել է արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական արտադրության ծավալը՝ միևնույն ժամանակ շահելով եվրոպական կապիտալ ներդրումներից: 2010թ. Թուրքիայի արտահանումը կազմեց 113.9 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 185.5 մլրդ 2009թ.՝ 102.1 և 140.9 միլիարդի համեմատ[32]:

Նշենք, որ 2010թ. արդյունքներով Թուրքիան 16-րդ խոշորագույն տնտեսությունն է աշխարհում և 6-րդը՝ ԵՄ պետությունների համեմատ իր ՀՆԱ-ի գնողունակության համարժեքով[33]: Թուրքիան 10-րդն է աշխարհում պողպատի արդյունաբերության ծավալներով և 15-րդը մեքենաշինության մեջ: Այս երկրի ավիացիան ամենաարագ աճողներից մեկն է Եվրոպայում և առաջատարը երթևեկության ցուցանիշներով, իսկ Ստամբուլի Աթաթուրքի անվան օդանավակայանը լավագույնն է համարվում Հարավային Եվրոպայում[34]: Թուրքիան 7-րդն է աշխարհում՝ որպես ամենաայցելվող տուրիստական ուղղություն՝ տարեկան հյուրընկալելով 26.5 մլն զբոսաշրջիկ[35], բացի այդ, աշխարհի լավագույն 100 հյուրանոցներից 20-ը գտնվում է հենց այս երկրում[36]: Համաձայն Forbes ամսագրի՝ 2010թ. մարտի դրությամբ երկրի ֆինանսական մայրաքաղաք համարվող Ստամբուլն ուներ 35 միլիարդատեր՝ զբաղեցնելով 4-րդ տեղն աշխարհում՝ Նյու Յորքից, Մոսկվայից և Լոնդոնից հետո[37]:

Central Intelligence Agency-ն (CIA) դասակարգում է Թուրքիան որպես զարգացած երկիր[38]: Սակայն ավելի հաճախ այն մասնագետների կողմից բնորոշվում է որպես նոր արդյունաբերական երկիր, իսկ Համաշխարհային բանկը, Մերիլ Լինչը և “The Economist” ամսագիրը Թուրքիան անվանում են ոչ այլ կերպ, քան արագ աճող

---

[32] Turkey`s Statistical Yearbook 2010, Turkish Statistical Institute, Ankara 2010, p. 285.

[33] «Թուրքիայի տնտեսական իրավիճակը», Թուրքիայի վարչապետին կից ներդրումների խրախուսման և ներգրավման գործակալություն (ISPAT), 2010թ. (www.invest.gov.tr):

[34] Ismail Bitirim, “Investment Climate in Turkey”, 2010, p. 12:

[35] Նույն տեղում, էջ 14:

[36] Նույն տեղում, էջ 14:

[37] “Billionaire Cities” 2010, Forbes հանդեսի անվանակարգ:

[38] Central Intelligence Agency, The world Factbook, զարգացած երկրների ցուցակ, www.cia.gov:

շուկայական տնտեսություն[39]: ՀԲ-ի տվյալներով Թուրքիան միջին բարձր եկամտով երկիր է՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվարկով:

Թուրքիայի տնտեսական զարգացումը միջազգային կազմակերպությունների և արևմտյան գերտերությունների կողմից դիտվում է որպես համաշխարհային կարևորություն ներկայացնող գործընթաց՝ հաշվի առնելով երկրի չափերը, տարածաշրջանում ունեցած ազդեցությունը և ռազմավարական աշխարհագրական դիրքը, որ միմյանց է կապում արևելքն ու արևմուտքը[40]:

Եվ իրոք, Թուրքիան գտնվում է տնտեսական ու քաղաքական մի այնպիսի խաչմերուկում, որտեղ հատվում են աշխարհի խոշորագույն տարածաշրջաններից երեքը՝ Եվրոպան, Միջին Արևելքն ու նախկին ԽՍՀՄ երկրները: Բալկանյան թերակղզու և մնացյալ Եվրոպայի հարևանությունը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի, Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի արագ աճող տնտեսությունները աննախադեպ տնտեսական ու գործարար հնարավորություններ են բացում Թուրքիայի առջև:

Պատահական չէ, որ գնալով ավելի ու ավելի մեծ թվով վերազգային կորպորացիաներ և միջազգային կազմակերպություններ են իրենց տարածաշրջանային կենտրոնները տեղակայում հենց Թուրքիայում: Իսկ վերջիններիս փորձը երաշխավորում է Թուրքիան որպես գրավիչ ներդրումային ուղղություն և արտահանման շահավետ պլատֆորմ:

Որպես շահավետ ներդրումային դաշտ՝ Թուրքիայի միջազգային հեղինակությունը մեծ չափով ձևավորվել է շնորհիվ շուկայի այն բազմազան հնարավորությունների, որ Թուրքիան կարող է տրամադրել թե՛ ներքին տնտեսության մեջ, թե՛ արտահանման ուղղությամբ: Թուրքիան օժտված է բավական որակավորված աշխատուժով և դինամիկ ներքին շուկայով, ինչպես նաև տեղակայված է մի տարածաշրջանում, որտեղ արտադրվում է համաշխարհային արտադրանքի մոտ 1/4-ը[41], իսկ այդ շուկաների ներուժը հաշ-

---

[39] “Turkey's economy sees recovery signs as risks remain”, China View, 28 հունիսի 2009, “Turkey's fragile economy: Fund management”, The Economist, 16 հուլիսի, 2009:

[40] “Country Partnership Strategy with The Republic of Turkey For The Period 2008-2011”, IBRD, IFC, 25 հունվարի, 2008:

[41] Թուրքիայի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության արտահանման զարգացման կենտրոն, 2008թ.

վարկվում է միլիարդավոր սպառողներով, այդ թվում[42]՝

- Մշտապես աճող ներքին շուկա՝ մոտ 72 մլն մարդ:
- Մոտիկ տեղակայված վճարունակ և խոշոր եվրոպական շուկաներ՝ 650 մլն մարդ, Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի արագ աճող տնտեսություններ՝ 220 մլն մարդ:
- Բազմազան և ընդլայնվող Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա՝ 600 մլն[43] մարդ:

Թուրքիայի ներուժը վաղուց է ճանաչվել միջազգային հանրության կողմից, սակայն համարյա մշտապես առկա քաղաքական խնդիրները ու անկայունությունը մեծ խոչընդոտ են երկրի համար՝ սահմանափակելով վերջինիս տնտեսական պոտենցիալը: Իսկ անհապաղ լուծում պահանջող այնպիսի կառուցվածքային խնդիրներ, ինչպիսիք են ինֆլյացիայի բարձր մակարդակը, զգալի գործազրկությունը, ոչ կայուն փոխարժեքը և եկամուտների անհավասար բաշխումը, ժամանակին չստանալով բավարար ուշադրություն, իրենց հերթին հետաձգել են երկար սպասված տնտեսական ու քաղաքական բարեփոխումները:

Այսպես, չնայած անցած 20 տարիներին երկրի տնտեսությունը կրել է զգալի տնտեսական տատանումներ, 2001թ. հետո այն կրկին սկսեց արձանագրել կայուն և բարձր աճի տեմպեր, մինչև համաշխարհային ճգնաժամի հետևանքների ի հայտ գալը: Թուրքիայի տնտեսությունը զգալի աճ է գրանցել այս 6 տարիների ընթացքում: ՀՆԱ-ն և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշները ակնհայտորեն վկայում են ազգային տնտեսության ներուժի ու կայունության մասին՝ ընդգծելով տնտեսության ինտեգրման մակարդակը գլոբալ գործընթացների հետ:

Թուրքիան, իր երիտասարդ բնակչությամբ, դինամիկ մասնավոր սեկտորով և բաց տնտեսությամբ ունի թերևս բոլոր նախադրյալները՝ աճի այս տեմպերը վերականգնելու համար: Սակայն այս ամենով հանդերձ, դեռևս առկա է մի կարևորագույն հարց, որ իր պատասխանն է պահանջում. արդյոք Թուրքիան պատրա՞ստ է ձեռ-

---

[42] Dr Yılmaz Argden “An Overview Of The Turkish Economy: Outlook And Current Perspectives”,

[43] Ismail Bitirim, “Investment Climate in Turkey”, 2010, էջ 33:

նարկել անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար այս աճի ու կայունության շարունակականությունը: Եվ այս հարցի պատասխանն իրոք միանշանակ չէ:

Բնականաբար անցյալի խնդիրների մի զգալի մասն այլևս տեղ չունի երկրի ապագայի պատկերում՝ հաշվի առնելով Թուրքիայի ներկայիս տնտեսական միջավայրն ու այն մեծ հնարավորությունները, որ ստեղծված են ներդրողների համար, սակայն հիմնավորելու համար այս փաստարկները Թուրքիայի ներկա վիճակն ու ակնկալվող հնարավորությունների քննարկումը պետք է նախ և առաջ սկսել երկրի տնտեսության պատմական դիտարկումից:

Թուրքիայի տնտեսությունը լրջագույն փոփոխություններ է կրել վերջին 20 տարիների ընթացքում՝ պետական միջամտությամբ հովանավորչական տնտեսությունից վերածվելով շուկայական ազատական համակարգի: Բեկումնային բարեփոխումներն այս տնտեսությունում սկսվել են 1980թ.՝ ներառելով այնպիսի համակարգային քայլեր, ինչպիսիք են գների վերահսկման զգալի թուլացումը, սուբսիդիաների կրճատումը, տնտեսության մեջ պետական սեկտորի նվազեցումը, արդյունաբերական և ծառայությունների ոլորտների աճի խթանումը, արտաքին առևտրի ազատականացումը, մաքսադրույքների վերանայումը, կապիտալի տեղաշարժի հեշտացումը, օտարերկրյա ներդրումների խթանումը, արտահանման խթանումը և այլն:

Իրականում երկրի տնտեսության ինտեգրման բարձր մակարդակը համաշխարհային գործընթացներին, Եվրոպային մոտ գտնվելն ու Եվրոպա մուտք գործելու արտաքին հենակետ ծառայելը, ինչպես նաև գրագետ բարեփոխումների ծրագիրը և տնտեսական կառավարումն իրոք տվեցին իրենց արդյունքը՝ ապահովելով Թուրքիայի երկարաժամկետ և տպավորիչ տնտեսական աճը վերջին տասնամյակում: Սակայն, միևնույն ժամանակ հենց այս ֆինանսական ու առևտրային համապարփակ ինտեգրման պատճառով էլ Թուրքիայի տնտեսությունը երբեմն բավականին խոցելի է դառնում, ինչն արտահայտվեց նաև 2008թ. վերջին սկսված գլոբալ գործընթացների ընթացքում:

Թուրքիան երեք խոշոր տնտեսական ճգնաժամերի ականատես է՝ սկսած 1994թ.: Իսկ 2001 թվականի ֆինանսական անկումն

ամենացավոտ տնտեսական վայրէջքներից էր Թուրքիայի ողջ պատմության ընթացքում: Չնայած աճի միջին տեմպերը պատմականորեն մնում էին բավարար մակարդակի վրա, քաղաքական ցնցումները, արտաքին հարաբերություններում ունեցած խնդիրները, պոպուլիստական ներքին քաղաքականությունն ու 1999 ավերիչ երկրաշարժը երկրի ինդուստրիալ հատվածի կենտրոնում զգալիորեն նպաստեցին այդ ճգնաժամի խորացմանը:

Այս ամենով հանդերձ, 2001թ. անկումից հետո Թուրքիայի տնտեսությունը շատ արագ թակոխեց բարձր աճի և կառուցվածքային բարեփոխումների ժամանակաշրջան: 2002թ. սկսված և ընդհուպ մինչև համաշխարհային ճգնաժամը Թուրքիան գրանցում էր տնտեսական աճի բարձր ցուցանիշներ վերջին 7 տարիների ընթացքում: Այդ տարիներին Թուրքիայի ՀՆԱ-ի աճի տարեկան տեմպը կազմել է միջինում 6%, պետական պարտքը նվազել էր ՀՆԱ-ի 74%-ից (2002) մինչև 42% (2007):

Գծապատկեր 14

Թուրքիայի իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպերը 1988-2010թթ.[44]



Դրա արդյունքում, 2001թ.-ից սկսած՝ Թուրքիան տարեկան աճի տեմպերով առաջինն էր OECD երկրների մեջ: Տարբերությունը

[44] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ:

անցյալից այն էր, որ 2001թ. սկսած՝ Թուրքիան սկսել էր իրականացնել ամենատպավորիչ ու սպասված կառուցվածքային փոփոխությունները, որոնք ընդունվեցին նաև միջազգային հանրության կողմից. ԵՄ-ն համաձայնվեց սկսել լիիրավ անդամակցության վերաբերյալ բանակցություններ Թուրքիայի հետ, իսկ ԱՄՀ-ը Թուրքիան հռչակեց հաջողության պատմություն (success story):

Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ մարտահրավեր նետեց շատ տնտեսությունների մակրոտնտեսական և ֆինանսական կայունությանը, իր բացասական ազդեցությունն ունեցավ ֆինանսական հաստատությունների, արտաքին շուկաներում պահանջարկի ծավալների վրա՝ հանգեցնելով բոլոր ոլորտներում համաշխարհային տնտեսական ակտիվության զգալի նվազման: Թուրքիայի տնտեսությունը ևս զգալի հարված կրեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի արդյունքում: Համաձայն Թուրքիայի ֆինանսների նախարարության տվյալների՝ միայն 2009թ. առաջին կիսամյակին բյուջեի դեֆիցիտն աճել է 23.3 մլրդ թուրքական լիրով (15 մլրդ դոլար), ինչը 13 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

2008 ՀՆԱ-ի աճի տեմպը կազմեց ընդամենը 0,7%: Տարիներ շարունակ գրանցվող տնտեսական աճը հակառակ ուղղություն ստացավ 2009թ. առաջին քառորդում՝ կազմելով –13.8%: Գործազրկության մակարդակը 2009թ. ապրիլ-հունիս ամիսներին հասավ 13.6%-ի, ինչն ավելի բարձր էր, քան 2001թ. ճգնաժամի ժամանակ: Այս ընթացքում յուրաքանչյուր 4-րդ երիտասարդը գործազուրկ էր: Կառավարությունը արձագանքեց այս անկմանը՝ համատեղելով դրամավարկային քաղաքականության մեղմումը և արտարժույթի իրացվելիության ու ֆինանսական սեկտորում վստահության կառուցման քայլերով, զբաղվածության բարձրացմանն ուղղված որոշ միջոցներով և հարկերի ժամանակավոր կրճատումով[45]:

Այդուհանդերձ, The Economist պարբերականը նշում է, որ Թուրքիային շատ ավելի լավ հաջողվեց դիմակայել ֆինանսական ալեկոծումներին, քան դա արեցին մյուս արագ աճող տնտեսու-

[45] Թուրքիայի Հանրապետության էջ, Համաշխարհային բանկ (www.worldbank.org.tr):

թյունները: Շնորհիվ խիստ կարգավորման՝ Թուրքական բանկերից և ոչ մեկը չտուժեց[46]: Սա նաև հնարավոր դարձավ ապահովել այն պատճառով, որ ի տարբերություն արևմտյան բանկերի՝ թուրքական բանկերում շատ ավելի փոքր մաս էին կազմում վտանգավոր ակտիվները և շատ ավելի սահմանափակ էին հիփոթեքային գործարքները:

2009-ին Թուրքիայի կառավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց՝ նվազեցնելու ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը տնտեսության վրա, այդ թվում՝ որոշ հարկատեսակների ժամանակավոր կրճատում: Սրա արդյունքում նրանց հաջողվեց անգամ այդ պայմաններում աճ ապահովել երկարաժամկետ օգտագործման սպառողական ապրանքների շուկայում՝ 73.2%, թեև մեքենաշինության ոլորտը շարունակեց անկում ապրել:

Ֆիսկալ զսպվածությունն ու խիստ հարկաբյուջետային քաղաքականությունը նախկինի պես մնում են Թուրքիայի տնտեսական քաղաքականության առանցքային հենասյուները՝ բերելով գնաճի մակարդակի նվազման և տնտեսական աճի բարձր տեմպերի:

Բացի վստահ մակրոտնտեսական քաղաքականությունից, Թուրքիան իրականացնում է համապարփակ կառուցվածքային բարեփոխումներ, և այդ գործում երկիրը հասել է զգալի հաջողությունների՝ հիմնականում կառուցվածքային և կազմակերպչական վերափոխումների արագության շնորհիվ: Թուրքիայի նվաճումները հատկապես նկատելի են ֆինանսական սեկտորի վերակազմավորման հարցում, ինչպես նաև հանրային կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման և գործարար միջավայրի բարեփոխման ոլորտներում:

Իրականացվող կառուցվածքային բարեփոխումներն ուղղված են՝

- երկրի տնտեսության մեջ մասնավոր սեկտորի դերի մեծացմանը,
- ֆինանսական սեկտորի արդյունավետության և կայունության բարձրացմանը,
- սոցիալական ապահովման համար ամուր հիմքերի ստեղծմանը:

Շնորհիվ այս բավական սթափ կառուցվածքային բարեփո-

[46] “Turkish economy. Overheating”, The Economist, May 5, 2011.

խումների և հաջողված մակրոտնտեսական քաղաքականության՝ Թուրքիան դարձել է աշխարհի ամենաարագ զարգացող երկրներից մեկը: Եթե ՀՆԱ-ի աճի միջին տեմպերը 1998-2001թթ. կազմում էին 0.2%, 2002-2010 թվականներին հասան 5.1%-ի:

ՀՆԱ-ի աճի տեմպերը Թուրքիայում վերջին 10 տարիների ընթացքում զգալիորեն բարձր են եղել Եվրոպայի համապատասխան միջին ցուցանիշից՝ բացառությամբ 1999, 2001 և 2009թթ. անկումների, որոնք էլ, ի պատիվ իրեն, Թուրքիան կարողացել է հաղթահարել զարմանալի արագությամբ (գծապատկեր 15 և 16):

Գծապատկեր 15

Թուրքիայի իրական ՀՆԱ-ի աճի տեմպը 1998-2010թթ. (ազգային արժույթ)[47]



Այս աճն արտահայտվում է նաև կյանքի որակի ցուցանիշների բարելավմամբ: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2002թ. 3492 դոլարից 2010թ. աճել է մինչև 10.079 դոլար:

[47] "World Economic Outlook Database", Արժույթի միջազգային հիմնադրամ, 2010թ.:

Գծապատկեր 16

Թուրքիայի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2002-2010թթ. (ընթացիկ գներ)[48]



Այս ամենի արդյունքում Թուրքիայի տնտեսությունն այսօր իր մեծությամբ գերազանցում է եվրոպական այնպիսի զարգացած երկրների, ինչպիսիք են Լեհաստանը, Ավստրիան, Դանիան, Հունաստանը, Պորտուգալիան և այլն: Ավելին, բացի բացարձակ ցուցանիշներից, Թուրքիան գերազանցում է եվրոպական երկրները նաև իր տնտեսական աճի տեմպերով (գծապատկերներ 17 և 18):

[48] Նույն տեղում:

Գծապատկեր 17

Թուրքիայի տնտեսության համեմատական ցուցանիշները. անվանական ՀՆԱ , 2010 [49]



Գծապատկեր 18

Թուրքիայի իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը 2002-2010թթ.[50]



[49] "Թուրքիայի մակրոտնտեսական ցուցանիշները", Թուրքիայի վարչապետին կից ներդրումների խրախուսման և ներգրավման գործակալություն (ISPAT), 2010թ. (www.invest.gov.tr)

[50] Նույն տեղում:

Երկարաժամկետ քաղաքականության տեսանկյունից Թուրքիան բավական խոստումնալից նախադրյալներ ունի: Թուրքիայի բնակչության աճի տեմպը կազմում է միջինում 1.6%, ինչը նշանակում է, որ Թուրքիան գտնվում է իր դեմոգրաֆիական ոսկեդարի շեմին (ինչպես դա եղավ Արևելյան Ասիայում 1980-ականներին), երբ աշխատունակ բնակչությունը իր թվով գերազանցում է երեխաների և թոշակառուների թիվը՝ լուրջ հիմքեր ապահովելով տնտեսական աճի արագացման համար: 2010թ. դրությամբ Թուրքիայի բնակչության կեսը մինչև 29 տարեկան երիտասարդներ են[51]: Սա որոշ դեպքերում դիտվում է անգամ որպես պանացեա՝ բարելավելու Թուրքիայի և անգամ Եվրամիության մրցունակության հիմքերը:

Վերջին 6 տարիների ընթացքում տնտեսական աճի շարժիչ ուժն է եղել արտադրական գործոնների համախառն արտադրողականության աճը՝ առաջարկի կողմից, և մասնավոր սեկտորի ներդրումները՝ պահանջարկի կողմից: Գրանցվող տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է մասնավոր սեկտորի ներդրումներով և դրան զուգորդող արտահանման բարձր ցուցանիշներով: Աճող արտադրողականությունը և համեմատաբար ցածր աշխատավարձերը մեծ հնարավորություններ են ստեղծում Թուրքիայում իրականացվող ներդրումների համար: Աշխատանքի արտադրողականությունը չափվում է անհատական արդյունքի հիման վրա (իրական ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով), և այս ցուցանիշն աճում է ռեկորդային տեմպերով վերջին 6 տարվա ընթացքում (գծապատկեր 19):

[51] Թուրքիայի արտաքին առևտրի և գործարարության պորտալ (www.turkishtradechicago.org):

Գծապատկեր 19

Աշխատանքի արտադրողականության աճը Թուրքիայում 2002-2008թթ. (միջին տարեկան ցուցանիշ)[52]



ՀՆԱ-ի կառուցվածքը ևս զգալի փոփոխություններ է կրել վերջին տասնամյակում: Եթե 1998թ. գյուղատնտեսությունը դեռ կազմում էր երկրի տարեկան ՀՆԱ-ի մոտ 18%-ը, ապա այսօր այն կրճատվել է ուղիղ կիսով չափ՝ չհասնելով անգամ 10%-ի: Ծառայությունների ոլորտը, ի տարբերություն նախորդի, զգալի աճ է արձանագրել՝ 1998թ. համեմատ աճելով մոտ 17%-ային կետով: 2010թ. տվյալներով ծառայությունների ոլորտին բաժին էր ընկնում թուրքական ՀՆԱ-ի մոտ 2/3-ը: Ինչ վերաբերում է արդյունաբերական ոլորտին, ապա այստեղ փոփոխություններն այնքան ակնառու չեն, ինչպես նախորդ երկու դեպքերում. որոշակի փոփոխություններով հանդերձ՝ արդյունաբերական ոլորտի մասնաբաժինը տնտեսության մեջ կազմում է մոտավորապես ՀՆԱ-ի 1/4-ը (գծապատկեր 20):

[52] «Թուրքիայի մակրոտնտեսական ցուցանիշները», Թուրքիայի վարչապետին կից ներդրումների խրախուսման և ներգրավման գործակալություն (ISPAT), 2010թ. (www.invest.gov.tr):

Գծապատկեր 20

Թուրքիայի տնտեսության կառուցվածքը 1998 և 2010թթ.[53]



Վերջին տարիներին Թուրքիայի արդյունաբերական ոլորտը զգալի առաջընթաց է ապրել՝ շնորհիվ լիբերալ տնտեսական քաղաքականության, հարուստ բնական ռեսուրսների, երիտասարդ ու որակավորված աշխատուժի, ծավալուն ներքին շուկայի և արտահանման համար նպաստավոր աշխարհագրական դիրքի: 2007թ. արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալները հասան 86.9 մլրդ դոլարի՝ կազմելով երկրի ընդհանուր արտահանման 81.1%-ը, որի մեջ մոտ 32%-ը կազմում էին մեքենաներն ու մեքենասարքավորումները: Այս ցուցանիշները Թուրքիայի մեքենաշինության ոլորտը դարձնում են երկրի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը, իսկ Թուրքիայի համար ապահովում են պատվավոր 15-րդ տեղը ավտոարդյունաբերող երկրների շարքում[54]: Ներկայումս երկրում գործում են մեքենաշինական ավելի քան 15 ընկերություններ, իսկ 2007թ. ճյուղի հզորությունը կազմել են 1.311.105 միավոր տարբեր տեսակի ավտոտրանսպորտային միջոցները[55]:

---

[53] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ:

[54] «Թուրքիայի տնտեսությունն ըստ ճյուղերի՝ մեքենաշինություն», Թուրքիայի վարչապետին կից ներդրումների խրախուսման և ներգրավման գործակալություն (ISPAT), 2010թ (www.invest.gov.tr):

[55] Sinan Yuzal, “Automotive and Autoparts Industries in Turkey”, Export Promotion Center of Turkey, 2007, էջ 3:

Վերջին տարիներին զգալի տեղաշարժեր են նկատվել տեխնոլոգիաների, նախագծման էլեկտրոնիկայի ոլորտներում: Կապի միջոցները, օֆիսային սարքավորումները, տարբեր սարքերն ու կենցաղային տեխնիկան կարևորագույն տեղ են գտել երկրի արտահանման կառուցվածքում: Թուրքական արդյունաբերական արտադրանքի իրացման կարևորագույն շուկաներն են ԵՄ երկրները և հարևան տարածաշրջանները:

Երկրի տնտեսության մեջ կարևորագույն դերակատարում ունեն տեքստիլ արտադրությունը և պատրաստի հագուստի ոլորտը, որ կազմում են արտահանման 21.3%-ը: Թուրքիան պատրաստի հագուստի արտահանման ծավալներով 5-րդ երկիրն է աշխարհում: Բացի այդ, վերջին տարիներին Թուրքիան դարձել է Եվրոպայի առաջատարը կաշվե իրերի արտադրության ծավալներով:

Թուրքիան 7-րդ տեղում է աշխարհում բամբակի իր արտադրությամբ: 2007թ. երկրից արտահանված ձեռագործ գորգերի ու կարպետների արժեքը կազմում էր 96 միլիոն դոլար, իսկ մեքենայագործ գորգերինը՝ 896 մլն:

Թուրքիան 11-րդ երկիրն է աշխարհում պողպատի արտադրությամբ՝ 25.7 տոննա տարեկան: Արտահանման մեջ կարևոր տեղ են զբաղեցնում կաուչուկից ապրանքները, մշակված մարմարը, կերամիկա և ապակե իրերը: Հատկապես մարմարի դեպքում Թուրքիան հարուստ պաշարներ ունի, ինչպես նաև վերջինիս մշակման ինքնատիպ տեխնոլոգիաներ: Ապակե իրերի արտադրությունը ևս առավել կարևոր և ավանդաբար զարգացած ոլորտներից է: Այս արտադրանքի զգալի մասն արտահանվում է ԵՄ՝ 2007թ. կազմելով 828 մլն դոլար: Կերամիկական ապրանքների գծով ևս Թուրքիան մեծ հաջողություններ ունի, իսկ սանիտարական կերամիկայի արտահանման ծավալներով այն գրավում է 5-րդ տեղն աշխարհում:

Այս շարքում պետք է նաև նշել ոսկերչության մասին: Թուրքիան զարգացած ավանդույթներ ունի: Թուրքիան աշխարհի 5 առաջատարների շարքում է ոսկե իրերի արտադրության գծով, իսկ 2007թ. ոսկյա զարդերի արտահանումն այս երկրից հասել է 1.5 մլրդ դոլարի, իսկ ընդհանուր ոսկերչական իրերի արտադրանքը՝ 400 տոննայի:

Թուրքական տնտեսությունն ունի զարգացած և դինամիկ աճող քիմիական արդյունաբերություն, այդ թվում կարևոր տեղ են

զբաղեցնում նավթաքիմիական և դեղագործական արտադրանքը, պարարտանյութերը, լվացող միջոցները, սոդաները, ներկերը: 2007թ. քիմիական արտադրանքի արտահանումը կազմում էր 4.7 մլրդ դոլար՝ ապահովելով ընդհանուր արտահանման 4.4%-ը:

Թուրքիայի գյուղատնտեսությունը մի ոլորտ է, որ ապահովում է բնակչության զբաղվածության զգալի մասը և զգալի մասնաբաժին ունի ՀՆԱ-ի, արտահանման ծավալների և դրան հարող արտադրության ոլորտների մեջ: Թեև վերջին տարիներին երկրի սրընթաց ինդուստրիալ զարգացման արդյունքում գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ կառուցվածքում նվազել է՝ արդյունաբերության և ծառայությունների ոլորտների համեմատությամբ:

Գծապատկեր 21

Թուրքիայում վարելահողերի մասնաբաժինը երկրի ընդհանուր տարածքից, 1990-2006թթ.[56]



Թուրքիան գյուղատնտեսական արտադրանքի խոշորագույն արտադրող ու մատակարար է Արևելյան Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրների համար: 2009թ. գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը հասել է 10 մլրդ դոլարի, ինչը կազմում է ընդհանուր արտահանման 9.1%-ը:

[56] World Development Indicators, Համաշխարհային բանկ, 2011թ.:

Բուսական ծագման ապրանքները կազմում են երկրի գյուղատնտեսական արտադրանքի հիմքը և ներկայացված են մրգերի ու բանջարեղենի լայն տեսականիով, հատիկավորների ու ընդեղենի կուլտուրաներով, չրերով, ընկույզի տեսակներով, արդյունաբերական բույսերով և կենդանական կերերի տեսակներով:

Կլիմայական պայմանների բազմազանությունը հնարավորություն է տալիս Թուրքիային զբաղվել մրգերի ու բանջարեղենի բոլոր տեսակների մշակմամբ, ինչի հետևանքով տվյալ խումբը կարևորագույն մաս է կազմում բուսական արտադրանքի մեջ: Մրգերի ու բանջարեղենի ընդհանուր քանակը հասնում է տարեկան մինչև 45 մլն տոննայի:

Թուրքիան աշխարհի ամենամեծ մատակարարներից է ընդեղենի շուկայում (ոսպ, լոբի, ոլոռ և այլն) և կարևորագույն դեր ունի այս կուլտուրաների համաշխարհային առևտրի մեջ: Հատիկավոր կուլտուրաներից ամենահիմնականը ցորենն է: 1980-ականների սկզբին նկատվում էր այս տեսակի արտադրության որոշակի անկում, սակայն վերջին տարիներին, շնորհիվ ոռոգման ու պարարտացման ժամանակակից եղանակների, արտադրվող ցորենի ծավալները կրկին աճ են գրանցել:

Ծխախոտը ևս կարևորագույն տեղ է զբաղեցնում գյուղատնտեսական արտադրանքի արտահանման կազմում: Թուրքիան «օրիենտալ» տեսակի ծխախոտի աշխարհի խոշորագույն արտադրողն է: Չրերի և տարաբնույթ ընկույզների համաշխարհային շուկայում ևս Թուրքիան կարևորագույն տեղ է զբաղեցնում:

Բացի այդ, Թուրքիան հայտնի է ձկնեղենի և ծովամթերքների իր հարստությամբ, և այս ոլորտը հիմնականում զարգանում է արտահանման ուղղությամբ՝ հաշվի առնելով այս շուկայի մեծ պոտենցիալը: Ներկայումս Թուրքիան ձկնեղենի խոշոր մատակարարն է ԵՄ, ԱՊՀ, արևելյան մի շարք երկրների, ինչպես նաև ԱՄՆ-ի համար:

1980-ական թվականների տնտեսական վերելքը խթան հանդիսացավ սննդամթերքի արտադրության ոլորտում: Սա հիմք դրեց մի շարք նոր արտադրատեսակների ստեղծմանն ու զարգացմանը՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաներ և փաթեթավորման առաջատար համակարգեր: Այսպես, սառեցված մրգերի ու բանջարեղենի արտադրությունը այսօր կարևորագույն ճյուղ է երկրի

արտահանման կազմում: Չորացված բանջարեղենը ևս բավական խոստումնալից ոլորտ է համարվում՝ ներգրավելով խոշոր ներդրումներ: Հյութերի արտադրությունը, տոմատի վերամշակումը արդեն տասնամյակների փորձ ունեն այս երկրում: Թուրքիան տարածաշրջանում կաթի և կաթնամթերքի կարևորագույն արտադրող է, ինչպես նաև ունի չափազանց զարգացած մսամթերքի արտադրության և թռչնաբուծական ճյուղեր՝ հաշվի առնելով ֆերմային տնտեսությունների թիվն ու չափերը:

Թուրքիան միջազգային շուկաներում կարևոր տեղ է զբաղեցնում բուսական յուղերի, ինչպես նաև մարգարինի իր արտադրությամբ: Այս երկրին է պատկանում Միջերկրական ծովի ամենաերկար ափը, ինչի շնորհիվ Թուրքիան միջերկրածովյան ավազանի երկրների շարքում ձիթապտղի արտադրության առաջատարներից է:

Քաղցրավենիքի արտադրության մեջ կարևորագույն տեղը զբաղեցնում են ավանդական արևելյան տեսակները՝ հալվան և լոխումը, թեև առաջարկվող տեսականին չափազանց լայն է ու բազմազան: Ինչպես նաև կարևորագույն ոլորտներ են մակարոնային արտադրանքը, թխվածքաբլիթները և այլն:

Թուրքիայում տարեցտարի աճում է օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմային տնտեսությունների թիվը: Երկիրն այսօր արտադրում և արտահանում է ավելի քան 200 տեսակ օրգանական մթերք, այդ թվում՝ չամիչ, ծիրանաչիր, չորացված թուզ, պնդուկ և այլն:

Միջազգային առևտրի զարգացման և գլոբալացման նոր կանոնների տարածման հետ մեկտեղ՝ պահանջարկը թելադրում է էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվնաս արտադրանքի թողարկման անհրաժեշտությունը: Առևտրի ժամանակակից պահանջները բավարարելու համար (օրինակ՝ ԵՄ խստագույն ստանդարտները), գյուղատնտեսական և սննդի արտադրանքի թուրքական արտադրողների և արտահանողների թվում գնալով ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր, ձգտելով ցույց տալ իրենց անվտանգությունը և բաց արտադրական պրոցեսները, արտոնագրում են անցնում՝ համաձայն ISO 9000, ISO 22000, ISO 14000, BRC, IFC և GLOBALGAP ստանդարտների:

Այս ամենով հանդերձ, նման խոշոր և միջազգային պրոցեսներին մեծապես ինտեգրված տնտեսություն ունենալը, սակայն, նաև

կարող է բավական լուրջ խնդիրներ առաջացնել երկրի համար: Այսպես, անգամ իրականացվող այդքան հետևողական տնտեսական քաղաքականության պարագայում երկար տարիներ Թուրքիայի համար կարևորագույն օրհասական խնդիր էր չափազանց բարձր ինֆլյացիան: Սա ունի բնականաբար ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թուրքիայի բնակչության շրջանում շատ ցածր է կուտակման հակումը. յուրաքանչյուր 100 եվրոյից 80.5-ը ծախսվում է: Համեմատելու համար՝ Լյուքսեմբուրգում՝ Եվրոպայի ամենահարուստ երկրում, մեկ շնչի հաշվով՝ համանման ցուցանիշը կազմում է ընդամենը 56.3 եվրո 100-ից: Բայց մասնագետները նշում են միևնույն ժամանակ, որ եթե հարուստ երկրներում այս ցուցանիշը անկման միտում ունի, ապա Թուրքիայում աճող է[57]:

Գծապատկեր 22

Գնաճի միջին մակարդակը Թուրքիայում 1983-2010թթ. [58]



Եվ պայմաններում, տնտեսության վերջին ամենաակնառու նվաճումներից մեկը անկասկած հանդիսացավ այդ գնաճի տեմպերի նվազումն ու կայուն աճի մթնոլորտը՝ անկախ վառելիքաէներգետիկ ռեսուրսների գների զգալի աճից: Ինֆլյացիայի տարեկան տեմպերը

[57] Regnum տեղեկատվական գործակալություն, 21 օգոստոսի, 2006թ.:
[58] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ:

նվազել են 2002թ.-ից առաջ գրանցված համարյա 70%-ից մինչև 6.4% 2010թ.:

Ֆիսկալ դիսցիպլինան ևս նախկինի պես մնում է Թուրքիայի մակրոտնտեսական նվաճումների անկյունաքարերից մեկը:

Շնորհիվ ռացիոնալ ֆիսկալ քաղաքականության՝ Թուրքիային հաջողվեց նվազեցնել իր պարտավորությունները և դառնալ ՏՀԶԿ լավագույն անդամ երկրներից մեկը պետական պարտքի նվազեցման տեմպերով:

Պետական պարտքը, սկսած 2004 թվականից, բավարարում է Մաաստրիխտի 60%-անոց չափանիշը:

Գծապատկեր 23

Թուրքիայի պետական պարտքը 2001-2010թթ.[59]



2005 թվականից սկսած՝ Թուրքիան ապահովում է բյուջեի դեֆիցիտի վերաբերյալ Մաաստրիխտի չափանիշներին՝ 3%: Բացառություն կազմեց միայն ճգնաժամային 2009թ.:

[59] «Թուրքիայի մակրոտնտեսական ցուցանիշները», Թուրքիայի վարչապետին կից ներդրումների խրախուսման և ներգրավման գործակալություն (ISPAT), 2010թ (www.invest.gov.tr):

Գծապատկեր 24

Թուրքիայի բյուջեի դեֆիցիտը 2002-2010թթ. [60]



2008թ. Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառությունը հասավ պատմական բացարձակ մաքսիմումի. արտահանումն աճեց 23%-ով՝ կազմելով 132 մլրդ դոլար, իսկ ներմուծումն աճեց 19%-ով՝ հասնելով 202 միլիարդի: 2009թ. ճգնաժամային տարում ունենալով զգալի անկում՝ 2010թ. Թուրքիան կրկին կարողացավ ապահովել արտահանման 12% աճ:

2009 թվականին ընթացիկ հաշվի դեֆիցիտը կազմում էր ՀՆԱ-ի 2.3%-ը, ինչը 3.4 կետով ցածր էր 2008թ. համապատասխան ցուցանիշից: Իսկ 2010թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին այդ ցուցանիշը հասավ 48.6 մլրդ դոլար ցուցանիշի, ինչը 247%-ով գերազանցում էր նախորդ տարվա համանման ժամանակահատվածինը[61]: 2007 թվականից ընթացիկ հաշվի դեֆիցիտը ֆինանսավորվում էր հիմնականում ի հաշիվ բարձր արտահանման ցուցանիշների, մասնավորեցումից ստացվող եկամուտների և օտարերկրյա ուղիղ ներդրումների: ՕՈՒՆ-երի հոսքը առավելագույնի էր հասել 2007թ.՝ կազմելով 22 մլրդ դոլար: 2009թ. ծանր տարվա արդյունքներով այդ թիվը չհասավ անգամ 9 մլրդի:

---

[60] Նույն տեղում:

[61] «Turkey, Country Partnership Strategy, 2011-2012», ECO Trade and Development Bank, 2011.

Գծապատկեր 25

ՕՈՒՆ ներհոսքը Թուրքիա 2002-2009թթ. [62]



2003թ.-ից Թուրքիայում գործում է ՕՈՒՆ-երի մասին օրենք, որում, միջազգային նորմերին համապատասխան ներդրումային միջավայր ապահովելու դրույթների հետ մեկտեղ, սահմանված է օտարերկրյա ներդրողի իրավունքների ու պարտականությունների դաշտը, վերացված են նվազագույն պահանջները օտարերկրյա կապիտալի նկատմամբ (ինչը նախկինում կազմում էր 50.000 դոլար) և առավել մեծ հնարավորություններ է ընձեռում ՕՈՒՆ-երի ներգրավման համար:

Շնորհիվ հենց այդ նոր օրենսդրության, շուկայավարման զարգացմանը և հեշտացմանն ուղղված պետական ջանքերի, ինչպես նաև տնտեսական ցուցանիշների զգալի աճի՝ վերջին տարիներին անհամեմատ ավելացել է դեպի երկիր օտարերկրյա ուղիղ ներդրումների հոսքը: 2003-2005թթ. ՕՈՒՆ-երի գումարային չափը կազմում էր 14.7 մլրդ դոլար, մինչդեռ միայն 2006թ. արդեն անհամեմատելի աճ էր գրանցել՝ կազմելով 20.2 մլրդ: 2010թ. տվյալներով Թուրքիայում գործում է օտարերկրյա կապիտալով 23.672 ընկերություն, միայն 2009-ին բացվել են 2987 արտասահմանյան ընկերությունների ներկայացուցչություններ, իսկ ավելի քան 600 թուրքական

[62] Թուրքիայի Հանրապետության Կենտրոնական բանկ:

ձեռնարկություն օտարերկրյա կապիտալ ներդրումների հոսքեր է ունեցել[63]: Այս ընկերությունները հիմնականում ներգրավված են անշարժ գույքի, մանրամեծածախ առևտրի, շինարարության, քիմիական արդյունաբերության տեքստիլ արտադրանքի, մեքենաների և սարքավորումների արտադրության ոլորտներում:

Վերը նշված խնդիրներից բացի, կան նաև առաջին հայացքից հակասական թվացող ցուցանիշներ: Ունենալով նման ազատական տնտեսություն և բաց համակարգ՝ Թուրքիան ընդամենը 67-րդն է աշխարհում իր տնտեսական ազատության աստիճանով՝ համաձայն Heritage Foundation-ի համանուն ցուցանիշի 2011թ. արդյունքների:

Գծապատկեր 26

Թուրքիայի տնտեսական ազատության ցուցանիշը, 2011թ.[64]



Վերջին տարվա ընթացքում երկիրը որոշակի վերելք է գրանցել այս համաթվի սահմաններում՝ բարելավելով մասնավորապես այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ներդրումային միջավայրը, կոռուպցիայի դեմ պայքարը և ֆիսկալ դաշտը: Թուրքիան եվրոպական տարածաշրջանի 43 երկրների թվում զբաղեցնում է 30-րդ տեղը, թեև, այնուամենայնիվ, այս ցուցանիշը բարձր է համաշխարհային միջինից:

---

[63] Թուրքիայի Հանրապետության Կենտրոնական բանկ:
[64] Տնտեսական ազատության համաթիվ, The Heritage Foundation, 2011:

Գծապատկեր 27

Թուրքիայի տնտեսական ազատության համեմատական ցուցանիշը, 2011թ.[65]



Նշվում է, որ Թուրքիայի ընդհանուր տնտեսական ազատությունը սահմանափակվում է ինստիտուցիոնալ հետամնացության պատճառով: Չնայած որ հարկային և վերահսկողական ոլորտներում կան որոշակի փոփոխություններ, վերջիններս դեռևս լուրջ խոչընդոտ են և դանդաղեցնում են ձեռնարկատիրական ակտիվության զարգացման դինամիկան: Պետությունը մինչ այժմ էլ իրավունք է վերապահում ամրագրելու որոշ գներ, ինչպես նաև խոշոր ընկերությունների սեփականատեր է: Սեփականատիրական իրավունքները հիմնականում պաշտպանված են, թեև արդարադատությունն այս երկրում մնում է չափից ավելի բյուրոկրատացված և դանդաղ:

Թուրքիայի համար մեծ խնդիր է նրա արտաքին պարտքը, որը մշտապես պետք է սպասարկել: Սակայն Թուրքական Հանրապետությունը հստակորեն կատարում է իր դեբիտորական պարտավորությունները: 200թ.4 տվյալներով Թուրքիայի արտաքին պարտքի չափը կազմում էր 131 մլրդ դոլար (ՀՆԱ-ի 65%, կամ մեկ շնչի հաշվով 1870դ): Վերջին տարիների ընթացքում այս ցուցանիշը զգալիորեն աճել է: Դա պայմանավորված է նրանով, որ կառավարությունը,

[65] Տնտեսական ազատության համաթիվ, The Heritage Foundation, 2011:

ցանկանալով ֆինանսավորել պետբյուջեի դեֆիցիտը ոչ ինֆլյացիոն միջոցներով, թողարկեց պետական արժեթղթեր և դիմեց արտաքին փոխառությունների: Պետական փոխառությունների համար վճարվող տոկոսագումարները կազմում են պետական ծախսերի 35-40%-ը: Նման քաղաքականությունը բերեց նրան, որ 2006թ. վերջին Թուրքիայի արտաքին պարտքը կազմում էր 207.8 մլրդ դոլար: 2007թ. բարձրանալով ևս 9%-ով, այն արդեն կազմում էր 226.4 մլրդի:

Արտաքին պարտքի ձևավորման հիմնական աղբյուր են մասնավոր փոխառությունները՝ ի հաշիվ պետական արժեթղթերի վաճառքի: Արևմտյան բանկերը շահագրգռված են Թուրքիայի վերելքի պահպանմամբ, քանի որ վերջինիս պարտավորությունները նրանց նկատմամբ գերազանցում է 40 մլրդը:

1958թ.-ից սկսած՝ ԱՄՀ-ը 18 անգամ ծրագրեր է մշակել Թուրքիայի համար, ընդ որում վերջին 3 անգամը՝ ընդամենը 2 տարվա ընթացքում: Արդյունքում, Թուրքիան այսօր ԱՄՀ խոշորագույն պարտապանն է՝ ունենալով մոտ 19 մլրդի պարտավորություն:

Բացի այդ, Թուրքիայի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը թերևս տարածաշրջանային անհամաչափ զարգացումն է, որ շարունակում է մնալ բավական զգալի ու անփոփոխ՝ չնայած վերջին տարիների զգալի տնտեսական նվաճումներին: Թուրքիան իրականում մեծ խնդիրներ ունի այս ոլորտում: Տարածաշրջանային զարգացման անհամաչափության ցուցանիշներով երկիրը զգալիորեն զիջում է ԵՄ15 երկրներին՝ իրենից հետ թողնելով անգամ նորանդամ երկրներին: Ինչպես ԵՄ երկրներից շատերում ևս այս իրողությունը մեծ փոփոխություններ չի կրել վերջին տարիներին:

Ընդ որում անհամաչափությունը ունի սուր արտահայտված վեկտորային բնույթ՝ ձգվելով արևմուտքից դեպի արևելք: «Արտոնյալ» շրջանների (որտեղ մեկ շնչին ընկնող միջին եկամուտը բարձր է երկրի միջինի 75%-ից) թվում են Մարմարան, Աեգեանը, Միջերկրածովյան և Կենտրոնական Անատոլիան, իսկ այնպիսի շրջաններ, ինչպիսիք են Արևելյան Անատոլիան, Հարավարևելյան Անատոլիան և սևծովյան հատվածը, դասակարգվում են որպես հետամնաց[66]:

---

[66] “Turkey: Country Economic Memorandum. Sustaining high growth, Selected Issues”, Volume I Main Report, Poverty Reduction and Economic Management Unit Europe and Central Asia Region, Համաշխարհային բանկ, 10 ապրիլի, 2008, էջ 29:

Այս փաստը անհանգստության առիթ է 3 հիմնական պատճառներով.

- տարածաշրջանային զարգացման անհամաչափություններն արտահայտվում են նախ և առաջ տնային տնտեսությունների եկամուտների բաշխման անհամաչափությամբ, ինչի արդյունքում առկա է աղքատության նկատելի կոնցենտրացիա երկրի արևելյան մասում:
- Արևելյան շրջաններում տնտեսական զարգացման բացակայությունը խթանում է միգրացիան դեպի արևմտյան մասում գտնվող մեծ քաղաքները՝ այդպիսով նպաստելով ավելորդ ուրբանիզացիային ու կուտակմանը:
- Արևելյան շրջաններում տնտեսական աճի բացակայությունը կարող է շեղումներ մտցնել ներդրումային կապիտալի տեղաբաշխման հարցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արևելքն իր մեջ թաքցնում է դեռ չբացահայտված ներդրումային հնարավորություններ, ինչը կարող է զգալի օգուտներ բերել ոչ միայն այս հատվածներին, այլև ամբողջ Թուրքիային՝ դառնալով կարևոր գործոն եկամուտների հավասարեցման գործընթացում:

Ընդհանուր առմամբ, ողջ 1980-2000թթ. ժամանակահատվածում չի նկատվում եկամուտների հավասարեցման որևէ զգալի վկայություն: Չնայած առանձին գավառների միջև տարբերությունը որոշակիորեն նվազել է, սակայն հետամնաց և զարգացած տարածաշրջանների միջև անհավասարության ընդհանուր ցուցանիշն անգամ աճել է[67]: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս միտումը շարունակվում է ազգային տնտեսության աճի հետ մեկտեղ. որքան մեծ է տնտեսական աճը, այնքան ավելի է խորանում տարածաշրջանային անհամասեռությունը երկրի տարբեր շրջաններում:

Կան նաև բավական լուրջ մարտահրավերներ, որ թուրքական պետությունն ու տնտեսությունը դեռ պետք է դիմակայեն ու հաղթահարեն՝ ապահովելու համար երկրի երկարաժամկետ կայուն

[67] “Turkey: Country Economic Memorandum. Sustaining high growth, Selected Issues”, Volume I Main Report, Poverty Reduction and Economic Management Unit Europe and Central Asia Region, Համաշխարհային բանկ, 10 ապրիլի, 2008, էջ 30:

աճն ու ձեռքբերված հաջողությունների շարունակականությունը: Այսպես, հետճգնաժամային ապաքինման քաղաքականությունը և ծրագրերը պետք է ներառեն ներքին շուկայում սպառողական պահանջարկի խթանման քայլեր, սոցիալական միջոցներ՝ ուղղված հասարակության այն խավերին, որոնք առավել շատ են տուժել տնտեսական անկման հետևանքով, ավտոմատ հարկաբյուջետային կայունացուցիչների պահանջարկի ստեղծման էֆեկտ, ներմիջնաժամկետ ֆիսկալ ծրագրի հրապարակում, ինչի շրջանակներում կարևորագույն պայման է այն, որ շուկան կարողանա ճիշտ հասկանալ ու արձագանքել այդ համակարգի շրջանակներում[68]:

Երկարաժամկետ մարտահրավերներից են տնտեսական աճի վերականգնումն ու շարունակականությունը: Պետական գնումների մեջ պետք է ավելացնել առավել նպատակային ու արդյունավետ ուղղությունները՝ ի հաշիվ ծախսերի նվազեցման: Եկամուտների մասով տնտեսությունը իրական հնարավորություններ ունի բարելավելու առկա իրավիճակը՝ ի հաշիվ ստվերային տնտեսության և հարկահավաքման մեխանիզմների բարելավման: Բիզնես միջավայրին վերաբերող բարեփոխումները, մասնավորապես՝ ՕՈՒՆ-երի և արտահանման ուղղությամբ, կարող է օգնել ֆինանսապես ապահովված աճի խթանմանը, իսկ աշխատանքի շուկայի ճկունությանն ուղղված քայլերը տնտեսական աճը կվերածեն կոնկրետ աշխատատեղերի ստեղծման:

Առավել երկարաժամկետ բարեփոխումների թվում պետք է ընդգրկվեն էներգետիկ արդյունավետության և այլընտրանքային էներգիայի աղբյուրների ուղղությամբ ներդրումները, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու Թուրքիայի կախվածությունը նավթի ու գազի ներմուծումից և հետևաբար՝ մեղմելու տնտեսության զգայունությունը նավթի գների տատանումներից:

Բազմիցս փաստվել է, որ Թուրքիայի զարգացման օրակարգը գնալով ավելի ու ավելի պետք է կենտրոնանա կայուն աճի, եկամուտների հավասարաչափ բաշխման, միջազգային մրցունակության բարձրացման վրա, եթե պետությունը ձգտում է եվրոպական չափանիշների: Ուստի հետագա աճի նախապատվությունները պետք է ուղղորդված լինեն դեպի մրցունակության, մարդկային զարգացման,

[68] Նույն տեղում, էջ 30:

բարձրակարգ հանրային ծառայությունների մատուցման և էներգետիկ անվտանգության վրա՝ չմոռանալով սակայն, որ այս հիմնական նպատակների իրագործման ճանապարհին կարևորագույն նախապայմաններից ու միջոցներից են տարածաշրջանում խաղաղ համակեցությունն ու հարևանների հետ փոխշահավետ ու երկարաժամկետ հարաբերությունների կառուցումը:

2.2. Թուրքիայի արտաքին առևտրի վիճակի և կառուցվածքի վերլուծությունը

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի արտաքին առևտրի ծավալը 2002-2008թթ. ընթացքում ավելացել է մոտ 5 անգամ՝ 67 մլրդ դոլարից հասնելով մինչև 334 մլրդ դոլարի: Սակայն 2009թ. ճգնաժամի հետևանքով էապես տուժեց նաև արտաքին առևտրային շրջանառության ցուցանիշը՝ գրանցելով 27.2% անկում, իսկ արդեն 2010թ. գրանցվեց աճ գրեթե նույն չափով՝ 23.2%: Այնուամենայնիվ 2010թ. արտաքին առևտրի ծավալի ցուցանիշը դեռ հետ է մնում 2008թ. համապատասխան ցուցանիշից 10.3%-ով:

Ստորև ներկայացված աղյուսակը ավելի ամփոփ պատկերացում է տալիս Թուրքիայի արտաքին առևտրի զարգացումների մասին: Այսպես, տվյալների վերլուծությունից պարզվում է, որ Թուրքիայի թե՛ արտահանումը և թե՛ ներմուծումը 2002-2008թթ. ցուցաբերել են աճի միտում, սակայն արտաքին առևտրի հաշվեկշիռը շարունակաբար դրսևորում է բացասական արժեք: Ընդ որում 2008թ. 2002թ.-ի համեմատությամբ արտաքին առևտրի հաշվեկշռի պակասուրդն ավելացել է ավելի քան չորս անգամ, իսկ արտաքին առևտրային շրջանառությունը նույն ժամանակահատվածում ավելացել է 3.8 անգամ: Եվ չնայած 2008թ., բազիսային տարվա համեմատությամբ, արտահանման ծավալները ավելացել են 360%-ով, այնուամենայնիվ ՀՆԱ-ի կազմում արտահանման տեսակարար կշիռը ավելացել է ընդամենը 2.2%-ով:

Աղյուսակ 16

Թուրքիայի արտաքին առևտուրը 2002-2010թթ. (մլն դոլար)[69]

Տարիներ	Արտահանում	Ներմուծում	Արտաքին առևտրի ծավալ	Արտաքին առևտրի հաշվեկշիռ	Արտահանում/ Ներմուծում (%)	Արտահանում/ ՀՆԱ (%)	Ներմուծում/ ՀՆԱ (%)
2002	36 059	51 554	67 613	-15 495	69.9	15.6	22.4
2003	47 253	69 340	116 593	-22 087	68.1	15.5	22.7
2004	63 167	97 540	160 707	-34 373	64.8	16.2	25.0
2005	73 476	116 774	190 251	-43 298	62.9	15.3	24.3
2006	85 535	139 576	225 111	-54 041	61.3	16.2	26.5
2007	107 272	170 063	277 334	-62 791	63.1	16.5	26.2
2008	132 027	201 964	333 991	-69 936	65.3	17.8	27.2
2009	102 143	140 928	243 071	-38 786	72.4	16.5	22.8
2010	113 976	185 535	299 511	-71 559	61.4	15.4	25.2

Միևնույն ժամանակ ճգնաժամային 2009թ. զգալի անկում է նկատվում թե՛ արտահանման և թե՛ ներմուծման գծով: Բայց քանի որ ներմուծումը, արտահանման համեմատ, ընկել է ավելի մեծ տեմպերով, դա թույլ է տվել գրանցել արտաքին առևտրի հաշվեկշռի վիճակի բարելավում՝ 44.7%-ով: 2010թ. նկատվում է արտաքին առևտրի ծավալների աշխուժացում, ինչի արդյունքում արտաքին առևտրի ծավալը, նախորդ տարվա համեմատ, աճել է 23.2%-ով: Սակայն այս աճը պայմանավորված է ավելի շատ ներմուծման ծավալների աճով՝ 31.6%, որը ավելի է վատթարացրել առանց այն էլ բացասական մնացորդ ունեցող արտաքին առևտրային հաշվեկշռի վիճակը՝ 32 770 մլն դոլարով:

Թուրքիայի արտաքին առևտրի աճի տեմպերի դրական միտումները ավելի ակնհայտ են դառնում, երբ դրանք համեմատում ենք ՀՆԱ-ի աճի տեմպերի հետ (գծապատկեր 28): Այսպես, եթե համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպերը 2000-2007թթ. միջինը կազմել են 2.5%, ապա առևտրինը՝ 4.5%: Եվ միայն 2008-2009թթ. է, որ համաշխարհային ճգնաժամի ազդեցությամբ, առևտրի աճի տեմպերը հետ են մնացել ՀՆԱ աճի տեմպերից: Սակայն Թուրքիայում թե՛ նախորդ և թե՛ ճգնաժամի տարիներին արտաքին առևտրի աճի տեմպերը

[69] Turkey`s Statistical Yearbook 2008, Turkish Statistical Institute, Ankara 2008, pages 253-260.
Turkey`s Statistical Yearbook 2010, Turkish Statistical Institute, Ankara 2010, page 289.

առաջ են անցնում ՀՆԱ-ի աճի տեմպերից. 2004-2010թթ. (բացառությամբ 2009թ.) ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպերը կազմել են մոտ 14%, իսկ առևտրինը՝ 18%:

Գծապատկեր 28

Թուրքիայի արտաքին ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի դինամիկան 2004-2010թթ. (մլն դոլար)



Անդրադառնալով հիմնական առևտրային գործընկերներին՝ հարկ ենք համարում նշել, որ Թուրքիայի խոշորագույն գործընկեր ավանդաբար համարվում է Գերմանիան: Սակայն եթե արտահանման գործընկերների շարքում Գերմանիան կարողանում է տասնամյակներ շարունակ պահպանել իր առաջատարի դիրքը, ապա վերջին տարիներին ներմուծման առումով առաջին գործընկերը դարձել է Ռուսաստանը: Սա խոսում է այն մասին, որ Թուրքիայի արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը կրել է էական փոփոխություններ՝ ընդլայնելով արտահանման և ներմուծման աշխարհագրական բաշխվածությունը: Արտահանման աշխարհագրական կառուցվածքում ամենաէական փոփոխությունը Մերձավոր Արևելքի երկրների դերի շեշտակի կրճատումն է և Եվրոպական միության երկրների դերի բարձրացումը (աղյուսակ 17):

Մերձավոր Արևելքի երկրների բաժնի կրճատումը առավել ակնհայտ է դառնում, երբ վերլուծում ենք նաև 1980-ական թթ. տվյալները: Այսպես, 1985թ. Թուրքիայի անմիջական հարևաններ Իրանին ու Իրաքին բաժին էր ընկնում արտահանման 24.7%-ը,

1990թ.՝ 7.4%-ը, իսկ 2000թ. դրանց բաժինը չէր գերազանցում 1%-ը: Սակայն, սկսած 2001թ.՝ դրանց բաժինը ավելանալով 2008թ. կազմեց 4.5%: Ասիական և Աֆրիկայի երկրներից Թուրքիայի հիմնական գործընկերներն են Իրանը, Իրաքը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Եգիպտոսը, իսկ վերջին մի քանի տարիների ընթացքում նաև Արաբական էմիրությունները: Սակայն եթե 1990-ականներին այս երկրներին բաժին էր ընկնում արտահանման 10.4%-ը, ապա 2008թ. արդեն 14%-ը: Այս աճը հատկապես պայմանավորված է Արաբական էմիրությունների հետ առևտրի ծավալների ավելացմամբ:

Աղյուսակ 17

Թուրքիայի արտահանման առաջին 10 գործընկերները (%-ով՝ ընդհանուրում)[70]

Երկիրը	1990	Երկիրը	2000	Երկիրը	2008	Երկիրը	2010
Գերմանիա	23.5	Գերմանիա	18.8	Գերմանիա	9.8	Գերմանիա	10.1
Իտալիա	8.5	ԱՄՆ	11.2	Մեծ Բրիտանիա	6.2	Մեծ Բրիտանիա	6.4
ԱՄՆ	7.4	Մեծ Բրիտանիա	7.4	Արաբական էմիրություններ	6.0	Իտալիա	5.7
Մեծ Բրիտանիա	5.7	Իտալիա	6.4	Իտալիա	5.9	Ֆրանսիա	5.3
Ֆրանսիա	5.7	Ֆրանսիա	6.0	Ֆրանսիա	5.0	Իրաք	5.3
ԽՍՀՄ	4.1	Նիդեռլանդներ	3.2	Ռուսաստան	4.9	Ռուսաստան	4.1
Իրան	3.8	Իսպանիա	2.5	ԱՄՆ	3.3	ԱՄՆ	3.3
Նիդեռլանդներ	3.3	Բելգիա-Լյուքսեմբուրգ	2.3	Իսպանիա	3.1	Իսպանիա	3.1
Սաուդյան Արաբիա	2.6	Ռուսաստան	2.3	Իրաք	3.0	Արաբական էմիրություններ	2.9
Բելգիա-Լյուքսեմբուրգ	2.4	Իսրայել	2.3	Ռումինիա	3.0	Իրան	2.7
Ընդամենը	*67.0*		*62.4*		*50.2*		*51.2*

Ինչ վերաբերում է Եվրամիության երկրների հետ առևտրին, ապա այստեղ տեղ է գտել տրամագծորեն հակառակ երևույթ: Այսպես, եթե 1990թ. Թուրքիայի 15 առաջատար արտահանման գործընկեր երկրներից միայն վեցն էին ԵՄ երկրներ, ապա 2010թ. դրանց թիվը հասել է 9-ի (սա կարելի է բացատրել ԵՄ-Թուրքիա ազատ առևտրային

[70] Statistical Indicators 1923-2008, Turkish Statistical Institute, Ankara 2008, pp. 491-498. Turkey`s Statistical Yearbook 2010, Turkish Statistical Institute, Ankara 2010, page 298.

համաձայնագրի և մաքսային միության համաձայնագրի կնքմամբ): Սակայն աշխարհագրական կառուցվածքի ընդլայնման հետ մեկտեղ նկատվում է եվրոպական երկրների հետ առևտրի ծավալների անկում: Միայն դեպի Գերմանիա արտահանման տեսակարար կշիռը 2008թ., 2000թ. համեմատ, կրճատվել է երկու անգամ, իսկ 2010թ. ավելացել է ընդամենը 0.3%-ով: Եթե 1990թ. աղյուսակում ներկայացված ԵՄ երկրներին բաժին էր ընկնում Թուրքիայի արտահանման՝ 49.1%-ը, ապա 2008թ.՝ 33%-ը, իսկ 2010թ.՝ 30.6%-ը: Ընդհանուր առմամբ ԵՄ 27 երկրների տեսակարար կշիռը Թուրքիայի արտահանման մեջ 2010թ. կազմել է 46.2%, 2004թ. 57.9%-ի համեմատ[71]:

Արտահանման կառուցվածքում, ԵՄ երկրներին համանման, վերջին տարիներին իր դիրքերը կորցրել է նաև ԱՄՆ-ը: Եթե 1990թ. այն արտահանման 3-րդ գործընկերն է՝ 7.4% ցուցանիշով, ապա 2008թ. միայն 6-րդն է՝ 3.3% ցուցանիշով, իսկ 2010թ., պահպանելով նույն տեսակարար կշիռը, հայտնվել է 7-րդ հորիզոնականում: Սա կարելի է բացատրել նրանով, որ ԱՄՆ-ի շուկան վերջին տարիներին հեղեղել են չինական ապրանքները, որոնք թեև որակով զիջում են թուրքական ապրանքներին, բայց ունեն գնային առավելություն:

Դատելով աղյուսակի տվյալներից՝ կարելի է պնդել, որ ռուսական շուկայում թուրքական ապրանքներն ունեն բավականին մեծ պահանջարկ, քանի որ արտահանումը դեպի Ռուսաստան հաստատուն աճում է: Եթե 2000թ. Ռուսաստանը Թուրքիայի 9-րդ արտահանման գործընկերն էր, ապա 2008թ. և 2010թ. 6-րդն է՝ 4.9% և 4.1% ցուցանիշով (այս ցուցանիշով Ռուսաստանը գրեթե հավասարվել է Ֆրանսիային, որը Թուրքիայի արտահանման գործընկերների շարքում վերջին 20 տարիների ընթացքում ունի կայուն դիրք): Նույն միտումը նկատվում է նաև ներմուծման կառուցվածքում (աղյուսակ 18):

Թուրքիայի արտահանման և ներմուծման աշխարհագրական կառուցվածքներում տեղի ունեցած փոփոխությունները վերջին 20 տարիների ընթացքում նույնական են: Ներմուծման կառուցվածքի ամենամեծ փոփոխությունն այն է, որ 2008թ.-ից սկսած՝ ներմուծ-

[71] Turkey`s Statistical Yearbook 2005, Turkish Statistical Institute, Ankara 2005, p. 264 և Turkey`s Statistical Yearbook 2010, Turkish Statistical Institute, Ankara 2010, p. 285:

ման առաջատարը դարձել է Ռուսաստանը: 2000թ. համեմատ, վերջինիս ներմուծման տեսակարար կշիռը ավելացել է ավելի քան երկու անգամ, այն դեպքում, երբ 2000թ. ներմուծման առաջատար Գերմանիայի բաժինը 2010թ. կրճատվել է 8.7%-ով: Նախկին ԽՍՀՄ երկրներից ներմուծման մեջ իր կայուն դիրքերն է գրավում նաև Ուկրաինան, որի բաժինը վերջին 10 տարիների ընթացքում կրկնապատկվել է:

Արտահանմանը համանման, ներմուծման գործընկերների շարքում Իրանը և Իրաքը 1990թ. ունենալով 6.8% տեսակարար կշիռ, 2000թ. կորցրին իրենց դիրքերը մինչև 2%: Սակայն 2008թ. տվյալները ցույց են տալիս, որ Թուրքիան վերականգնում է իր ավանդական կապերը, քանի որ Իրանն արդեն ներմուծման գործընկերների շարքում գրավում է 7-րդ հորիզոնականը՝ 4.1% ցուցանիշով: Սակայն 2010թ. ներմուծման առաջատար 10 երկրների շարքում Մերձավոր Արևելքի երկրներից ընդգրկված է միայն Իրանը՝ 4.1% ցուցանիշով:

Աղյուսակ 18

Թուրքիայի ներմուծման առաջատար 10 գործընկերները (%-ով՝ ընդհանուրում)[72]

Երկիրը	1990	Երկիրը	2000	Երկիրը	2008	Երկիրը	2010
Գերմանիա	15.5	Գերմանիա	13.2	Ռուսաստան	15.5	Ռուսաստան	11.6
ԱՄՆ	10.1	Իտալիա	8.0	Գերմանիա	9.3	Գերմանիա	9.5
Իտալիա	7.6	ԱՄՆ	7.2	Չինաստան	7.8	Չինաստան	9.3
Ֆրանսիա	5.9	Ռուսաստան	7.2	ԱՄՆ	5.9	ԱՄՆ	6.6
ԽՍՀՄ	5.5	Ֆրանսիա	6.5	Իտալիա	5.5	Իտալիա	5.5
Ճապոնիա	5.0	Մեծ Բրիտանիա	5.0	Ֆրանսիա	4.5	Ֆրանսիա	4.4
Իրաք	4.6	Իսպանիա	3.1	Իրան	4.1	Իրան	4.1
Մեծ Բրիտանիա	4.5	Բելգիա-Լյուքսեմբուրգ	3.0	Ուկրաինա	3.0	Իսպանիա	2.6
Սաուդյան Արաբիա	3.2	Ճապոնիա	2.9	Շվեյցարիա	2.8	Հարավային Կորեա	2.6
Նիդեռլանդներ	2.5	Նիդեռլանդներ	2.9	Մեծ Բրիտանիա	2.6	Մեծ Բրիտանիա	2.5
Ընդամենը	*64.4*		*59.0*		*61.0*		*41.3*

[72] Statistical Indicators 1923-2008, Turkish Statistical Institute, Ankara 2008, pp. 499-506.

Ինչ վերաբերում է ԵՄ երկրներից ներմուծմանը, ապա այստեղ ևս առկա է նվազման միտում: 2000թ. աղյուսակում ընդգրկված ԵՄ երկրներին բաժին է ընկնում ներմուծման 36%-ը, 2008թ.՝ 21.9%-ը, իսկ 2010թ.՝ 24.5%-ը: Իսկ ընդհանուր առմամբ ԵՄ 27 երկրներին 2010թ. բաժին էր ընկնում համախառն ներմուծման 38.9%-ը 2004թ. 49.3%-ի համեմատությամբ:

Հարկ ենք համարում գնահատել նաև Թուրքիայի տեղը և դերը համաշխարհային առևտրում և մասնավորապես Մերձավոր Արևելքի տարածաշրջանում: Այսպես, համաշխարհային համախառն ապրանքաշրջանառության մեջ Թուրքիայի բաժինը 2010թ. կազմել է մոտ 1%, այն դեպքում, երբ Մերձավոր Արևելքի երկրներին բաժին է ընկնում համաշխարհային ապրանքաշրջանառության 5.7%-ը: Այնուամենայնիվ, եթե գնահատենք Մերձավոր Արևելքի երկրների արտահանման և ներմուծման աճի տեմպերը, ապա դրանք ճգնաժամի հետևանքով 2008թ. նվազել են, մասնավորապես, եթե արտահանումը 2007թ. 2006թ. համեմատությամբ աճել էր 4%, ապա 2008թ. 2007թ. համեմատությամբ աճը կազմել է 3%, իսկ ներմուծումը նախորդ ժամանակահատվածի 14% աճի փոխարեն՝ 10%: 2009թ. համաշխարհային արտահանման մեջ առաջատար 50 երկրների շարքում Մերձավոր Արևելքի երկրներից Սաուդյան Արաբիան և Արաբական Միացյալ էմիրությունները գրավում են համապատասխանաբար 18-րդ և 19-րդ տեղերը, ունենալով 1.5% և 1.4% տեսակարար կշիռ: Իսկ Թուրքիայի արտահանման տեսակարար կշիռը ընդամենը 0.8% է, որից հետ չի մնում նաև Իրանը՝ 0.6% ցուցանիշով: Համաշխարհային ներմուծման մեջ Թուրքիան 23-րդն է՝ 1.1% տեսակարար կշռով, այն դեպքում, երբ ԱՄԷ-ն 24-րդն է՝ 1.1% ցուցանիշով: Համախառն ապրանքաշրջանառության առումով ևս Թուրքիան այս տարածաշրջանում զբաղեցնում է առաջատար դիրք, քանի որ նրան բաժին է ընկնում այդ երկրների համախառն ապրանքաշրջանառության 20.5%-ը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ Մերձավոր Արևելքի երկրներից համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ շոշափելի դերակատարություն ունեն միայն Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, Թուրքիան և Իրանը (գծապատկեր 29)[73]: Եվ եթե այս չորս

[73] International Trade Statistics 2010, WTO 2010, Washington DC 2010, pp. 13-15.

երկրների շարքում Թուրքիան երրորդն է՝ առաջ անցնելով միայն Իրանից, ապա մյուս երկրների համախառն ապրանքաշրջանառությանը Թուրքիայի ապրանքաշրջանառությունը գերազանցում է 3%-ով: Սակայն ծառայությունների արտահանման առումով Թուրքիան, ի տարբերություն Մերձավոր Արևելքի մյուս երկրների, ունի ավելի ծանրակշիռ դիրք. 2009թ. երկրից ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 33 մլրդ դոլար, որը ծառայությունների համաշխարհային արտահանման 1%-ն է, իսկ Մերձավոր Արևելքի երկրների կողմից արտահանված ծառայությունների 36.1%-ը:

Միանգամայն այլ պատկեր է ձևավորվում, երբ վերլուծում ենք Թուրքիայի դերը մեր տարածաշրջանում, այսինքն՝ ՀՀ և հարևան երկրների արտաքին առևտրում: Այստեղ Թուրքիան ունի միանշանակ առաջատարի դեր՝ գերազանցելով երկրորդ առաջատարի՝ Իրանի ապրանքաշրջանառությունը մոտ 2 անգամ (գծապատկեր 30):

Գծապատկերից երևում է, որ Թուրքիային բաժին է ընկնում ՀՀ և հարևան երկրների համախառն ապրանքաշրջանառության գրեթե 60%-ը, այն դեպքում, երբ Հայաստանը այդ երկրների շարքում վերջին տեղում է մոտ 1% տեսակարար կշռով:

Այսպիսով, վերլուծությունները ցույց տվեցին, որ Թուրքիան ոչ միայն տարածաշրջանում, այլև համաշխարհային քաղաքական և տնտեսական արդի զարգացումներում ունի իր կայուն և բավականաչափ ազդեցիկ տեղը: Այն հարուստ է բնական ռեսուրսներով և ունի չափազանց մեծ հետաքրքրություն ներկայացնող աշխարհագրական դիրք: Թուրքիայի ազդեցիկ լինելու ապացույցն է նաև հայկական սփյուռքի ջանքերի ձախողումը՝ ուղղված համաշխարհային հանրության և աշխարհի հզոր տերությունների կողմից հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելուն:

Գծապատկեր 29

Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, Թուրքիայի և Իրանի ապրանքաշրջանառության տեսակարար կշիռները Մերձավոր Արևելքի երկրների համախառն ապրանքաշրջանառության մեջ 2009թ. (%-ով)[74]



Գծապատկեր 30

Տարածաշրջանի երկրների ապրանքաշրջանառության տեսակարար կշիռները այդ երկրների համախառն ապրանքաշրջանառության մեջ 2009թ. (%-ով)



Մյուս կողմից էլ բացահայտվեց մեր տարածաշրջանի տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների հետաքրքիր յուրահատկությունը: Սա եզակի դեպքերից մեկն է, երբ տարածաշրջանի հինգ երկրները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Իրան և Թուրքիա) բավական մեծ շփում ունեն արտաքին աշխարհի հետ, սակայն հենց տարածաշրջանի ներսում շփման

[74] International Trade Statistics 2010, WTO 2010, Washington DC 2010, pp. 13-15.

եզրերը գրեթե աննշան են կամ ընդհանրապես բացակայում են: Սա անշուշտ պայմանավորված է մի շարք քաղաքական հակամարտություններով, փակ սահմանների առկայությամբ, սակայն Թուրքիայի տնտեսական ներուժի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ներտարածաշրջանային առևտրատնտեսական հարաբերությունները զարգացման մեծ պոտենցիալ ունեն այդ բարդությունների վերացման դեպքում:

Թուրքիայի արտաքին առևտուրը թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կտրվածքով սրընթաց աճ և դիտարժան փոփոխություններ է արձանագրել վերջին տարիներին: 1980-ական թվականներին իրականացվող ազատականացման գործընթացից անմիջապես հետո Թուրքիայի տնտեսությունը սկսեց սրընթաց վերելք ապրել: Նկատելիորեն աճեց արտաքին առևտրի ծավալը թե՛ ներմուծման և թե՛ արտահանման կտրվածքով: Վերջինիս հարցում գրանցվեցին նաև զգալի կառուցվածքային փոփոխություններ. նախկինում գերակշռող գյուղատնտեսական արտադրանքին ավելի մեծ չափով փոխարինելու եկան արդյունաբերական ոլորտի ապրանքները:

1995թ. Թուրքիան Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հիմնադիր անդամ է: Դրանից հետո վերջնականապես ձևակերպվեց նաև Եվրամիության հետ կնքվելիք համաձայնագիրը, ինչը թույլ տվեց 1996թ. հունվարի 1-ից երկիրն ընդգրկել ԵՄ-ի հետ մաքսային միության մեջ:

Այսօր Թուրքիայի տնտեսությունն առանձնանում է իր բաց և ազատական բնույթով, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանն իր լիարժեք ինտեգրման մակարդակով: Համաձայն 2008թ. World Trade Indicators համաշխարհային ցուցանիշների, որ հրապարակվում է Համաշխարհային բանկի կողմից, Թուրքիան զբաղեցնում է 5-րդ տեղը ամենամեղմ առևտրային քաղաքականություն ունեցող երկրների շարքում: Իսկ ԵՄ-ի հետ հռչակած մաքսային գոտին և Ուրուգվայի ռաունդի կետերը կարելի է համարել Թուրքիայի արտաքին քաղաքականության կողմնորոշման հիմնական որոշիչ գործոնները: Մաքսային գոտին Թուրքիայի տնտեսությունը կապեց միասնական եվրոպական շուկային՝ երկրի տնտեսության վրա տարածելով ԵՄ-ի առևտրի և մրցակցության վերաբերյալ ընդունված կոնվենցիաներից շատերը: Արդյունքում, 2008թ. վերջի

դրությամբ Թուրքիայի արտահանումն ու ներմուծումը գրանցեցին բացարձակ պատմական ռեկորդ. արտահանումն աճեց 23%-ով՝ հասնելով 132 մլրդ դոլարի, իսկ ներմուծումը՝ 19%-ով՝ կազմելով 202 մլրդ: Արտաքին ապրանքաշրջանառությունը հասավ 333 մլրդ դոլարի՝ 2007 թվականի համանման ցուցանիշի նկատմամբ գրանցելով 20% աճ: Ի լրումն՝ արտահանում-ներմուծում հարաբերակցությունը աճեց 65.4%-ով՝ արտաքին առևտրի դեֆիցիտը հասցնելով 69.9 մլրդի: 2009թ. ճգնաժամային տարում ունենալով զգալի անկում՝ 2010թ. Թուրքիան կրկին կարողացավ ապահովել արտահանման 12% աճ՝ հասնելով 114 մլրդի: Միևնույն ժամանակ զգալի դիվերսիֆիկացիայի ենթարկվեց արտահանման ապրանքային կազմը:

Գծապատկեր 31

Թուրքիայում գործող տարիֆային արգելքների համեմատական ցուցանիշներ (արժեքային ծավալում ունեցած տեսակարար կշիռներով հաշվարկված) TTRI[75]



Որպես 1980 թվականից իրականացվող արտահանման ուղղվածությամբ զարգացման մոդելի քաղաքականության արդյունք՝ արտահանումը Թուրքիայի համար առանցքային կարևորություն է ներկայացնում թե՛ իր քանակական, թե՛ որակական հատկանիշներով:

[75] «Թուրքիայի տնտեսական իրավիճակը», Թուրքիայի վարչապետին կից ներդրումների խրախուսման և ներգրավման գործակալություն (ISPAT), 2010թ. (www.invest.gov.tr):

Շուկայի մասնաբաժինների վերաբաշխման հարցում ամենամեծ փոփոխությունները սկսվեցին 1980 թվականին և շարունակվեցին մինչև 1990-ականների կեսերը:

Եթե նախկինում արտահանման հիմնական հոդվածներն էին այնպիսի աշխատատար ոլորտներ, ինչպիսիք են տեքստիլն ու հագուստը, սև մետաղները և սննդամթերքը, ապա 1996 թվականին ԵՄ-ի հետ մաքսային միության ձևավորման արդյունքում Թուրքիայի արտահանումը թևակոխեց տրանսֆորմացիոն գործընթացների մի լիովին նոր փուլ: Վերջին տարիների ձեռքբերումները և՛ արտադրության, և՛ արտահանման զգալի աճ են մատնանշում մեքենաշինության և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որտեղ արդեն իսկ պահանջարկ ունեն էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումները: Բացի այդ, նկատվում է նաև արդյունաբերական արտադրանքի շուկայական մասնաբաժնի աճ արտահանման ընդհանուր կազմում:

Աղյուսակ 19

Թուրքիայի արտահանումն ըստ ճյուղերի (մլն ԱՄՆ դոլար)[76]

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	2121	2542	3329	3481	3725	3937	4347	4941
Ձկնաբուծություն	81	103	140	131	158	240	189	156
Հանքարդյունահանում	469	649	810	1146	1661	2155	1683	2677
Արտադրություն	44 378	59 579	68 813	80 246	101 082	125 188	95 449	105 518
Այլ	204	294	384	531	646	507	474	63
Ընդհանուր արտահանում	47 253	63 167	73 476	85 535	107 272	132 027	102 142	113 929

Արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինը ընդհանուր արտահանման մեջ 2010թ. կազմել է 92.6%՝գրանցելով $10 մլն աճ նախորդ տարվա նկատմամբ: Մյուս կողմից, նվազել են ավանդաբար գերիշխող գյուղատնտեսական արտադրանքի ծավալները, 2008-ին նվազելով մինչև 3%, 2010թ. նորից կազմել է 4.3% ընդհանուր արտահանման ծավալներում: Ինչ վերաբերում է հանքարդյունահանման ոլորտներին, ապա 2010թ. այստեղ արձանագրվել է

[76] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ:

59% աճ նախորդ տարվա նկատմամբ՝ ապահովելով ընդհանուր արտահանման 2.3%-ը:

Աղյուսակ 20

Թուրքիայի արտահանման հիմնական 10 հոդվածները (2008թ.)[77]

	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից, դրանց մասեր և սարքավորումներ	3304	5272	8289	9566	11886	15904	18327
Սև մետաղներ	2270	2969	5360	4973	6273	8372	14946
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	2142	2993	4131	5246	6517	8781	10258
Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	2916	3542	4880	5526	6328	7423	7970
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայի կամ ձեռքի գործվածքից	4443	5733	6259	6590	6938	8022	7828
Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք և այլն	692	980	1429	2641	3567	5148	7531
Իրեր սև մետաղներից	1244	1391	2227	2731	3336	4130	5742
Բնական կամ արհեստական մարգարիտ, Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	641	810	1064	1326	1824	2624	5383
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ,բացի մեքենայի կամ ձեռքի գործվածքից	3254	3814	4537	4862	4711	5445	5327
Պլաստմասսա և դրանից իրեր	635	864	1240	1627	2214	2822	3563
Ընդամենը՝ ըստ առաջին տաս հոդվածների	21541	28369	39415	45089	53595	68671	86876
Ընդհանուր արտահանում	36059	47253	63167	73476	85535	107272	132002
Կշիռը ընդհանուր արտահանման մեջ (%)	60%	60%	62%	61%	63%	64%	66%

Ապրանքային խմբերի կազմով արտահանման հիմնական հոդվածները բաժին են ընկնում տրանսպորտային միջոցներին, երկաթի և պողպատի արտահանմանը, մեքենասարքավորումներին, էլեկտրական մեքենաներին և սարքավորումներին, հագուստեղենին և տեքստիլին, բնական վառելիքին և յուղերին:

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման կազմում Թուրքիայի հիմնական հոդվածներն են մրգերն ու բանջարեղենը,

[77] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ:

բուսական յուղերը, ձիթապտղի ձեթը, մակարոնեղենը, շաքարավազը, քաղցրավենիքը, շոկոլադն ու կակաոն, ձկնաբուծական ապրանքները, համեմունքները, կաթնամթերքը, ծխախոտը:

2008թ. ներմուծումն աճել է 18.7%-ով, ինչը պայմանավորված է կայուն ներքին պահանջարկով, վառելիքի բարձր գներով, թուրքական լիրայի ամուր դիրքերով և աճող արտահանման ծավալներով, քանի որ վերջինս մեծապես կախված է արտադրության ներմուծված գործոններից:

Աղյուսակ 21

Թուրքիայի ներմուծման հիմնական հոդվածները (2008թ.)[78]

	2006	2007	2008
Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք և այլն	28859.098	33883.135	48281.2
Սև մետաղներ	11525.251	16182.359	23157.9
Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	18998.763	22570.359	22539.3
Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	10881.383	13295.419	13892.2
Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից, դրանց մասեր և սարքավորումներ	11408.441	12397.295	12789.6
Պլաստմասսա և դրանից իրեր	6918.411	8688.044	9385.52
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	4406	5906	5654
Օրգանական քիմիական միացություններ	3642.18	3995.871	4421.33
Դեղագործական մթերք	3035.614	3523.655	4360.55
Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ	2722.905	3012.104	3444.91
Պղինձ և իրեր դրանից	2469.276	3152.313	3275.97
Թուղթ և ստվարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր	2043.051	2469.551	2605.21
Ալյումին և իրեր դրանից	1797.133	2353.479	2543.7
Բամբակ	2090.189	2829.539	2331.906
Իրեր սև մետաղներից	1488.786	1836.715	2227.428
Այլ ապրանքներ	27290.081	33966.788	41050.22
Ընդամենը	139576.174	170062.715	201960.8

Գյուղատնտեսության և ձկնաբուծության մասնաբաժինը ներմուծման ընդհանուր ծավալներում 2008թ. կազմել է 3.2%, հանքար-

[78] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ:

դյունաբերական արտադրանքին բաժին է ընկել ներմուծման 17.6%-ը: 2008թ. պատրաստի արդյունաբերական ապրանքների խումբը ամենամեծն է եղել Թուրքիայի ներմուծման կազմում՝ 74.4%, ինչը կազմում է 150.2 մլրդ դոլար: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը աճել է 12.1%-ով:

Բացի արդյունաբերական ապրանքներից, ներմուծման հիմնական հոդվածներն են եղել բնական վառելիքն ու նավթը, երկաթը և պողպատը, մեքենաներն ու մեքենասարքավորումները, էլեկտրական սարքավորումները, տրանսպորտային միջոցները, պլաստիկե արտադրանքը, մարգարիտները և այլ թանկարժեք քարեր, օրգանական քիմիան և դեղագործական ապրանքները:

Թուրքիայում գործող ներմուծման ռեժիմը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ներմուծման ազատականացումը լիովին իրականացվում է համաձայն ԵՄ-ի հետ ունեցած Մաքսային միության պայմանների, Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի հետ արդեն կայացած փոխհարաբերությունների և ԱՄՀ-ի առջև ունեցած պարտավորությունների: Թուրքիան հատուկ ուշադրության տակ է պահում մաքսադրույքների իջեցման հարցում տրված իր խոստումները, ինչը նպատակ ունի արագացնելու ադապտացումը միասնական մաքսային տարիֆին:

Սկսած 1980-ական թվականներից՝ ներմուծման ոլորտում երկրի որդեգրած ռազմավարության հիմնական խնդիրներն են.

- Հովանավորչական քաղաքականության նվազեցում՝ համաձայն GATT նոր կանոնների:
- Բյուրոկրատական գործընթացների կրճատում:
- Հումքի և ոչ պատրաստի արտադրանքի մատակարարման ապահովում՝ ընդունելի գներով և որակի որոշակի ստանդարտների պահպանմամբ:

1995թ.-ից Թուրքիան անդամակցում է ԱՄՀ-ին: Առևտրի տարածաշրջանային և միջազգային նորմերին ինտեգրվելու երկրի որդեգրած կուրսն իր արտացոլումն է գտնում մի շարք միջազգային կազմակերպություններում Թուրքիայի ստանձնած անդամակցության մեջ, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության կազմակերպությունում, Առևտրի և զարգացման ՄԱԿ-ի կոնֆերանսում (UNCTAD),

Սևծովյան տնտեսական համագործակցության մեջ, Համաշխարհային մաքսային կազմակերպությունում, Միջազգային առևտրային պալատում, D-8-ում և այլն:

Թուրքիայի ջանքերը ազատ առևտրի գոտիներ հիմնադրելու հարցում թվագրվում են Թուրքիայի Հանրապետության առաջին իսկ տարիներից սկսած: Այդ տարիներին անգամ մշակվել են որոշակի օրենքներ այս ուղղությամբ, սակայն դրանք կիրառելի չեն եղել՝ ելնելով ժամանակի հասկանալի առանձնահատկություններից:

1980թ. հունվարի 24-ին ընդունված որոշման (ինչն ամրագրում էր ներմուծման փոխարինման քաղաքականության որդեգրումը) և տնտեսության ազատականացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկման վերաբերյալ քննարկումների աճին զուգընթաց՝ ազատ առևտրի գոտիներ ստեղծելու նպատակը կրկին մտավ օրակարգ:

1985թ. ընդունվեց օրենք «Ազատ տնտեսական գոտիների մասին»: Նրա նպատակն էր խթանել արտահանվող ապրանքների թողարկման ծավալների աճը և ներդրումների մեծությունը, օտարերկրյա կապիտալի և տեխնոլոգիաների ներհոսքը, ինչպես նաև առևտրի զարգացումն ու միջազգային ֆինանսավորման հնարավորությունների օգտագործումը:

2006թ. ազատ առևտրի գոտիներում իրականացվող առևտրի ծավալները կազմում էին 23.8, իսկ 2007-ին՝ 24.6 մլրդ դոլար (3.4% աճ): Ազատ տնտեսական գոտիներում կարելի է իրականացնել տարաբնույթ գործունեություն արտադրության, պահեստավորման, փաթեթավորման, առևտրի, բանկային ծառայությունների և ապահովագրության ոլորտներում: Ընդհանուր առմամբ Թուրքիան ունի 19 ազատ առևտրի գոտիներ:

Միաժամանակ նշենք, որ վերջին 10 տարիներին տուրիզմից և արտահանումից ստացվող եկամուտները ռեկորդային աճ են գրանցել:

Թուրքիան աշխարհի 7-րդ ամենացանկալի տուրիստական ուղղությունն է եղել, իսկ տնտեսության այս ոլորտի եկամուտներով զբաղեցնում է 9-րդ տեղն աշխարհում[79]: Տուրիզմի ոլորտն աճել է

[79] “Turkey, Country Partnership Strategy, 2011-2012”, ECO Trade and Development Bank, 2011.

մոտ 12.5%-ով նախորդ երեք տարիների ընթացքում՝ 2010թ. գրանցելով մոտ 28.6 միլիոն այցելու, ինչը 3,2%-ով ավելի է, քան 2009թ. համանման ցուցանիշից: Զբոսաշրջությունից ստացվող եկամուտները թեև մի փոքր նվազել են նախորդ տարվա համեմատ, այնուհանդերձ զգալի են՝ 2010-ին կազմելով 20.9 մլրդ դոլար:

Գծապատկեր 32

Թուրքիայի՝ տուրիզմից և արտահանումից ստացվող եկամուտների համեմատականը, մլրդ ԱՄՆ դոլար[80]



[80] Թուրքիայի Հանրապետության վիճակագրության ինստիտուտ

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

3.1. Հայաստանի և Թուրքիայի միջև ապրանքների առևտրի ուսումնասիրությունը

Ինչ վերաբերում է հայ-թուրքական առևտրային կապերին, ապա ըստ Հայաստանի Հանրապետության առաջին վիճակագրական տարեգրքի (1993-1994թթ.) Հայաստանից Թուրքիա 1993թ. արտահանվել էր 286,5 հազ. դոլարի, իսկ 1994թ.՝ 201 հազ. դոլարի արտադրանք: Ներմուծումը Թուրքիայից 1993թ. կազմեց 45,8 հազ. դոլար, այսինքն՝ 1993թ. Թուրքիայի հետ Հայաստանը ուներ դրական սալդո՝ 240,7 հազ. դոլար, իսկ 1994թ. արդեն արձանագրվում է 345,4 հազ. դոլարի բացասական սալդո:

Ցավոք 1993-1994թթ. կտրվածքով այդ երկրների միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի վերաբերյալ պաշտոնական տեղեկությունները բացակայում են:

Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին առևտրի վերաբերյալ ամփոփ պատկերացում է տալիս մեր կողմից կազմված և հաշվարկված աղյուսակ 22-ը:

Ինչպես նկատելի է, Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին ապրանքաշրջանառությունը 1995-2000թթ. ավելացել է ավելի քան 8 անգամ, ընդ որում արտահանումը նվազել է 41,2%, իսկ ներմուծումը ավելացել է գրեթե 16 անգամ: Այսպիսի փաստերը վկայում են ըստ էության անկառավարվող և պատահական բնույթ ունեցող երկու պետությունների միջև արտաքին առևտրային համակարգի մասին:

Սկսած 1995թ. այդ երկրների միջև ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառությունը գերազանցել է 5 մլն դոլարը: Իսկ

վերջին 5 տարիներին երկու երկրների միջև արտաքին ապրանքաշրջանառությունը ավելացել է, սակայն դա կատարվել է, ցավոք, միայն ներմուծման հաշվին: 2000թ. Թուրքիայից ներմուծման ապրանքների ծավալը կազմել է ամբողջ հանրապետության ներմուծման 4,5%-ը, բացասական առևտրային սալդոն այդ երկրի հետ հավասարվել է 38,9 մլն դոլարի:

1997թ. արձանագրվել է ահռելի բացասական սալդո, որը տատանվում է -31,2 մլն դոլարից մինչև -53,8 մլն դոլար: 2000թ. Հայաստանի և Թուրքիայի բացասական սալդոն կազմում է ամբողջ հանրապետության առևտրային հաշվեկշռի սալդոյի 6,6%-ը: Այն դեպքում, երբ Թուրքիայի հետ հանրապետության ապրանքաշրջանառությունը այդ նույն թվականին կազմել է Հայաստանի ամբողջ արտաքին ապրանքաշրջանառության 3,5%-ը: Հետազոտվող ժամանակաշրջանում ամենամեծ արտահանման մասշտաբներ արձանագրվել է 1997թ. (7,1 մլն դոլար), իսկ Թուրքիայից ամենազգալի ներմուծումը դիտվել է 1998թ.՝ 56,8 մլն դոլար: Բացի այդ, հանրապետության ներմուծման ծավալների ոչ նորմալ աճը որոշ չափով գտնվում էր Թուրքիայից ներմուծման ծավալների ավելացման ազդեցության տակ: Այսպես, 1997-2000թթ. Թուրքիայից ներմուծված ապրանքների ծավալը կազմել է ամբողջ հանրապետության ներմուծման ծավալի 4,3-6,3%-ը: Այսպիսով, ուսումնասիրված ժամանակաշրջանում Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական հարաբերություններում գրանցված է առևտրային հաշվեկշռի զգալի բացասական սալդո (տատանում 31,2-53,8 մլն դոլար), արտահանման ծավալը տատանվել է ընդամենը 1,1-7,1 մլն դոլարի շրջանակներում, այն դեպքում, երբ ներմուծումը վերջին 4 տարիներին տատանվել է 38,4-56,8 մլն դոլարի սահմաններում:

Աղյուսակ 22

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը Թուրքիայի հետ (1993-2010թթ. մլն դոլար, ա-արտահանում, ն-ներմուծում)

		Հայաստան ընդամենը	Այդ թվում՝ Թուրքիա	Թուրքիայի տեսակարար կշիռը %-ով	Թուրքիայի հետ առևտրում սալդո (+;-)	Հայաստանի և Թուրքիայի արտաքին ապրանքաշրջա-նառությունը
1993	ա	156,2	0,287	0,2	+0,241	0,333
	ն	254,2	0,046	0,0		
1994	ա	215,5	0,201	0,1	-0,345	0,747
	ն	393,8	0,546	0,1		
1995	ա	263,4	2,598	1,0	+0,008	5,188
	ն	668,5	2,590	0,4		
1996	ա	290,3	6,031	2,1	-0,224	12,286
	ն	861,5	6,255	0,7		
1997	ա	232,5	7,153	3,1	-31,2	45,5
	ն	893,4	38,4	4,3		
1998	ա	223,4	2,986	1,3	-53,8	59,8
	ն	895,7	56,8	6,3		
1999	ա	233,5	1,129	0,5	-39,1	41,3
	ն	801,7	40,2	5,0		
2000	ա	297,5	1,528	0,5	-39,0	42
	ն	885,1	40,5	4,5		
2001	ա	874,3	1,130	0,3	-32,7	34,9
	ն	342,8	33,8	9,9		
2002	ա	507,2	0,898	0,2	-37,1	38,9
	ն	991,1	38,0	4,0		
2003	ա	685,6	1,1550	0,2	-35,5	37,9
	ն	1279,5	36,78	2,9		
2004	ա	950,4	2,021	0,3	-37,8	41,8
	ն	1767,9	39,8	2,9		
2005	ա	973,9	2,473	0,3	-58,7	63,7
	ն	1801,7	61,2	3,4		
2006	ա	1004,0	2,165	0,2	-86,4	90,8
	ն	2194,4	88,6	4,0		
2007	ա	1152,3	3,033	0,3	-122,4	128,4
	ն	3268,8	125,4	3,8		
2008	ա	1057,2	1,851	0,2	-219,7	223,5
	ն	4426,1	221,6	5,0		
2009	ա	710,2	1,198	0,2	-157,0	159,4
	ն	3321,1	158,2	4,8		
2010	ա	1011,4	1,230	0,1	-187,1	189,5
	ն	3782,9	188,3	5,0		

Գծապատկեր 33

Թուրքիայի հետ ՀՀ առևտրային սալդոն և ներմուծումը



Վերը նշված բոլոր փաստերին բացատրություն տալու նպատակով անհրաժեշտ է ավելի հանգամանորեն ուսումնասիրել Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը:

1995թ. արձանագրվել է չնչին դրական սալդո՝ +0,008 (տե՛ս աղյուսակ 22): Այդ տարի Հայաստանից արտահանվել է միայն 5 ապրանքախումբ՝ կաշի և կաշվե հումք, պղինձ և դրանից իրեր, ալյումին և դրանից իրեր, միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր, էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր, որոնց ընդհանուր գումարը գերազանցել է 18 անվանախումբ ունեցող ներմուծման ծավալին:

Ամենամեծ գումարով ներմուծումը բաժին է ընկնում վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր ապրանքային խմբին՝ 1,4 մլն դոլար, որը կազմում է նշված տարում Թուրքիայից ընդհանուր ներմուծված ապրանքների 54,5%-ը:

1996թ. սկսած Թուրքիայի հետ առևտրային հաշվեկշիռը դառնում է բացասական, որը այդ տարի դեռ փոքր էր՝ -0,2233 մլն դոլար: Ընդ որում, արտահանման մեջ պահպանվում է 1995թ. արտահանված 5 ապրանքախմբերից առաջին 4-ին, ավելանում են

ևս 4-ը: Դրանք են՝ գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք, գործեր և այլ տեքստիլ ծածկոցներ, սև մետաղներ, սև մետաղներից իրեր:

Իսկ ներմուծման մեջ բացի վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր ապրանքախմբից, զգալի տեղ սկսեցին զբաղեցնել ալրաղացային ձավարեղենային արտադրանքը, ածիկ, օսլա, ինսուլին և այլ ապրանքախմբեր՝ ավելի քան 1,7 մլն դոլարի: Այս երկու ապրանքային խմբերը 1996թ. կազմեցին Թուրքիայից ներմուծված ապրանքների գումարի 1/2-ը: Ընդ որում, 1996թ. ներմուծման ծավալները 1995թ. համեմատ ավելացան 2,4 անգամ:

1997թ. ավելացան և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները, սակայն ոչ հավասարաչափ: Այսպես, 1995թ. համեմատությամբ հանրապետությունից Թուրքիա արտահանվող ապրանքների բաժինը ավելացավ 2,7, իսկ ներմուծումը Թուրքիայից Հայաստան մեծացավ գրեթե 15 անգամ: Ներմուծման այդպիսի մեծ ծավալները բացատրվում է Թուրքիայից Հայաստան այնպիսի ապրանքատեսակների զգալի մուտքով, ինչպիսիք են՝ կակաո և դրանից պատրաստված մթերք (4,6 մլն դոլար), ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ (4,2 մլն դոլար), ալրաղացային ձավարեղենային արտադրանք, ածիկ, օսլա, ինսուլին և այլն (3,3 մլն դոլար), էլեկտրոնային մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր (2,5 մլն դոլար), ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք, ալյուրից հրուշակեղեն (2,2 մլն դոլար), թուղթ և ստվարաթուղթ, թղթից իրեր (2,2 մլն դոլար), կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք և կենդանական ծագման ապրանքներ (1,8 մլն դոլար), ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք (1,6 մլն դոլար) և, վերջապես, գործեր և այլ տեքստիլ ծածկոցներ (1,1 մլն դոլար): Իսկ Հայաստանից Թուրքիա արտահանման համեմատաբար ոչ շատ մեծ չափերի ավելացմանը արտահանվող ապրանքախմբերի անվանացանկը 1997թ. զգալիորեն ընդլայնվեց՝ կազմելով 30 ապրանքախումբ:

1998թ. Թուրքիայի հետ ապրանքաշրջանառությունը հասավ իր գագաթնակետին, կազմելով 59,8 մլն դոլար: Դա տեղի ունեցավ

ներմուծման ծավալների ավելացման հաշվին, որը կազմեց տվյալ տարվա ամբողջ արտաքին ապրանքաշրջանառության 95%-ը: Նախորդ տարվա համեմատ կաթի և կաթնամթերքի, թռչնի ձվի, բնական մեղրի և այլ կենդանի ծագման սննդամթերքի և այլ կենդանական ծագման ապրանքների ներմուծումը ավելացավ գրեթե 2 անգամ, կենդանի կենդանիներինը՝ 7, հացահատիկինը՝ 9, կենդանական և բուսական ծագման յուղերի և ճարպերի, սննդային ճարպերի, մեղրամոմի՝ 2,4, ծխախոտի և ծխախոտի արդյունաբերական փոխարինողների՝ ավելի քան 5, գրքերի, լրագրերի, տպագրական արտադրանքի՝ ավելի քան 8, սև մետաղների՝ 11,5, պղնձի և դրանից իրեր՝ գրեթե 5, ալյումինի և դրանից իրեր՝ 2, վերգետնյա տրանսպորտի միջոցների և մասերի՝ 2,4 անգամ: 1998թ. արտահանման ապրանքախմբերի անվանացանկը 30-ից 1997թ. նվազեց մինչև 18: Արտահանման ամենամեծ բաժինը ընկնում էր կաշվի և կաշվե հումքի, պղնձի և դրանից իրեր, ալյումինի և դրանից իրեր ապրանքախմբերի վրա: Միաժամանակ առաջին երկու ապրանքախմբերի արտահանումը նախորդ տարվա համեմատ նվազեց 2 անգամ և կազմեց 60%, իսկ Թուրքիայի ընդհանուր արտահանման ծավալը Հայաստանից 1998թ. 1997թ. համեմատ պակասեց 2,4 անգամ:

1999թ. շարունակվում էր նախորդ տարիներում ձևավորված ներմուծման զգալի գերազանցման միտումը արտահանման ծավալների նկատմամբ: Նույն տարում Թուրքիայի հետ առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն կազմեց մոտ 39 մլն դոլար: Եվ չնայած դրան, որ 1999թ. նախորդ տարվա համեմատ նվազել է ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառությունը, ներմուծման ծավալները, սակայն վերջինի բաժինը ամբողջ ապրանքաշրջանառության մեջ 1998թ. համեմատ բարձրացավ մինչև 97%: Եթե 1995թ. Թուրքիայից ներմուծվում էր 18 ապրանքախումբ, ապա 1999թ.՝ 78: 1999թ. ներմուծման տեսականու մեջ մեծ տեսակարար կշիռ ունեին՝ ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողները (6,3 մլն դոլար), թուղթը և ստվարաթուղթը, թղթից իրերը (3,2 մլն դոլար), ներկանյութերը, պիգմենտները և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք (2,5 մլն դոլար) և սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր (2,3 մլն դոլար): Միայն այս 4 ապրանքախումբը կազմեցին ամբողջ ներմուծման ավելի քան 1/3 մասը:

Ինչ վերաբերում է Հայաստանից Թուրքիա արտահանմանը, ապա 1999թ. արտահանվում էր 17 ապրանքախումբ, սակայն ընդհանուր առմամբ այդ տարի գրանցվեց հետազոտվող ժամանակաշրջանում ամենափոքր ծավալի արտահանումը՝ ընդամենը 1,1 մլն դոլար: Արտահանման մեջ ամենամեծ բաժինը կազմեց կաշվի և կաշվե հումքի արտահանումը՝ ընդամենը 437,6 հազ. դոլար:

2000թ. Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարը 1999թ. համեմատ գրեթե չի փոխվել, իսկ անվանացանկը՝ 1999թ. 78-ից ավելացել է 2000թ.՝ մինչև 80: Ամենամեծ գումարի ներմուծում գրանցվել է թուղթ և ստվարաթուղթ, թղթից իրեր (4,7 մլն դոլար), ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք (3,1 մլն դոլար) և սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր (2,6 մլն դոլար):

Պետք է նշել, որ 1998-2000թթ. Հայաստան ներմուծվող ապրանքատեսակներում Թուրքիային ամենամեծ բաժինը կազմում էին ներկանյութերը, ներկերը, լաքերը՝ 2000թ. տվյալ ապրանքախմբի ներմուծման 46,8%-ը: Իսկ սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր ապրանքախմբից 2000թ. Թուրքիայից ներմուծվել էր 39,4% (նույնպես ամենաբարձր ցուցանիշն է) 1998թ. 6,1%-ի համեմատ, ըստ երկրների՝ Թուրքիայի վրա է ընկնում ամենամեծ բաժինը նաև Հայաստան ներմուծվող թուղթ և ստվարաթուղթ, թղթից իրեր (2000թ.՝ 25,4%), կակաո և դրանից մթերքներ (2000թ.՝ 19,3%) ապրանքախմբերով: Բացի այդ, աճում է պլաստմասսայից իրերի բաժինը, եթե 1998թ. Թուրքիայից այդ ապրանքախմբի ներմուծումը կազմում էր 6,6%, ապա 2000թ.՝ 14,9%: Նույնը վերաբերում է եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ ապրանքախմբին, որտեղ Թուրքիայի բաժինը տվյալ խմբի ամբողջ ներմուծման մեջ 2000թ. կազմեց 10,3%, այն դեպքում, երբ 1998թ.՝ ընդամենը 4%: Իսկ օճառ, լվացող միջոցներ, մոմեր և այլ ապրանքախմբում 1998թ. 2,2%-ից այն հասավ 2000թ.՝ 11,7%, փայտ և փայտից պատրաստած իրերինը՝ համապատասխանաբար 4,7 և 9%, սև մետաղներինը՝ 2,2 և 23%, արտադրատեսակներ սև մետաղներից Թուրքիայի տեսակարար կշիռը տվյալ ապրանքախմբում 1998թ.՝ 4,9%-ից 2000թ. հասավ մինչև 13,2%: Միաժամանակ, օրինակ, Թուրքիայից ներմուծվող ծխախոտի բաժինը Հայաստան ներմուծվող ծխախոտի

ընդհանուր գումարում զգալի նվազում է 1998թ.՝ 42,8% 2000թ.՝ մինչև 3,6%, քանի որ այն Հայաստան ավելի շատ ներմուծվում է Պանամայից (2000թ.՝ 52,9%): Դրական է նաև կաթնամթերքի, թռչնի ձվի, բնական մեղրի Թուրքիայից ներմուծման բաժնի նվազումը: Դա վերաբերում է նաև ալրաղացածավարային արտադրանքին, որի բաժինը 1998թ.՝ 10% նվազեց 2000թ.՝ մինչև 0,8%:

Ինչ վերաբերում է 2000թ. Հայաստանից Թուրքիա արտահանվող ապրանքներին, ապա դրանց գումարային արժեքը 1999թ. համեմատ ավելացել է 35%-ով: Ընդ որում, արտահանվել է 11 ապրանքախումբ, որոնցից ամենամեծ բաժինը կազմել է կաշի և կաշվե հումքը (1,4 մլն դոլար):

2001թ.՝Հայաստանից Թուրքիա արտահանվող 14 ապրանքախմբերից ամենամեծ բաժինը ինչպես և 2000թ. կազմում էր կաշի և կաշվե հումքը: Իսկ ներմուծման մեջ պահպանվել է նախորդ տարիների միտումները: Ընդ որում, ամենամեծ բաժինը կազմում էին սև մետաղները, թուղթը և ստվարաթուղթը, իրեր թղթից, պլաստմասսան և իրեր դրանից, սննդարդյունաբերության մնացորդները, պատրաստի անասնակերը, կերամիկական իրերը, տրիկոտաժը:

2002թ. Հայաստանից Թուրքիա արտահանվել է շուրջ 420 հազ. դոլարի կաշի և կաշվե հումք և 910,6 հազ. դոլարի վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր, վերջինս հանդիսանում է դրական երևույթ Հայաստանից Թուրքիա արտահանման գործընթացում: Իսկ ներմուծման մեջ ամենամեծ գումարը կազմել են սև մետաղները (3,4 մլն դոլարի), թուղթը (2,9 մլն դոլարի), սննդարդյունաբերության մնացորդների, պատրաստի անասնակերը (2,5 մլն դոլարի) և միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր ապրանքախումբը (2,4 մլն դոլար):

2003թ. 2002թ. համեմատ 1,5 անգամ ավելացել է կաշվի և կաշվե հումքի արտահանումը, իսկ ներմուծման մեջ ավելացել է սև մետաղների ներկրումը (26%-ով) և միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր ապրանքախումբը (38%-ով): 2004թ. հիմնականում պահպանվել են նախորդ տարիների միտումները, բացառություն է կազմում պլաստմասսե իրերի զգալի ներմուծումը (3,5 մլն դոլարի):

2005-2009թթ. ընթացքում կատարվել են որոշակի փոփոխու-

թյուններ հայ-թուրքական առևտրային հարաբերությունների ապրանքային կառուցվածքում: Այսպես, 2005թ. կաշի և կաշվե հումքի բաժինը Հայաստանից Թուրքիա արտահանվող ամբողջ ապրանքների ծավալում արժեքային արտահայտությամբ կազմել է ավելի քան 60%: Այդ նույն թվականին ներմուծման մեջ ամենամեծ բաժինը կազմել է պլաստմասսա և դրանից իրեր ապրանքախումբը՝ 6,4 մլն դոլար, այսինքն՝ 83% ավելին, քան 2004թ.:

2006-2007թթ. կաշվի և կաշվե հումքի արտահանումը կազմեց ավելի քան 2 մլն դոլար, իսկ պլաստմասսե իրերի ներմուծումը 14,4 մլն դոլար 2006թ. և 17,1 մլն դոլար 2007թ.: 2007թ. զգալիորեն ավելացել է սև մետաղների և դրանցից պատրաստված իրերի ներմուծումը, ինչպես նաև փայտի և փայտյա իրերի, մեքենաների ու սարքավորումների, ալյումինե իրերի, ներկերի, լաքերի, մաքրիչ միջոցների, թղթի և այլն:

2008-2009թթ., կապված միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, հանրապետությունում արձանագրվել է արտաքին առևտրային ակտիվության ընդհանուր առմամբ նվազում և հայ-թուրքական առևտրում մասնավորապես, հատկապես Հայաստանից Թուրքիա արտահանման համակարգում: 2008թ. միայն կաշվի արտահանումը կազմել է հանրապետությունից Թուրքիա արտահանման ամբողջ արժեքային ծավալի 83%-ը: Իսկ ներմուծման մեջ զգալիորեն աճել է հանքային վառելանյութերի, նավթի և նավթամթերքի ներմուծումը՝ կազմելով 40,5 մլն դոլար, ինչպես նաև պլաստմասսե իրերի ներկրումը՝ 33,7 մլն դոլար: Շարունակել է զգալի մաս կազմել փայտի և փայտյա իրերի և սև մետաղների ներմուծումը: 2009թ. յուրահատկությունը կայանում է նրանում, որ կաշվի արտահանումը իր առաջնային դիրքը զիջել է ալյումինի և դրանից իրեր ապրանքախմբին:

Այսպիսով, ամբողջ ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում Հայաստանից Թուրքիա հիմնականում արտահանվել են՝ կաշի և կաշվե հումք, պղինձ և դրանից իրեր, ալյումին և դրանից իրեր, սև մետաղներ, փայտ և փայտից իրեր, փայտածուխ, գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք:

Ելնելով իրականացված փաստագրական նյութերի վերլուծությունից՝ անհնարաստ է ժխտել երկու երկրների միջև ապրանքա-

շրջանառության գոյությունը, և այս պայմաններում սահմանի փակ լինելու հանգամանքը ևս որոշակիորեն պայմանական բնույթ է ստանում այլևս: Իրականում փակ սահմանը պարզապես ստիպում է փոխել առևտրային հոսքերի ճանապարհները: Դրանք հիմնականում իրականացվում են Վրաստանի և Իրանի տարածքով: Անուղղակի առևտուրը, թեև մեծացնում են ծախքերը, աճի միտում ունի: Ընդ որում տարեցտարի աճում է Թուրքիայից Հայաստան ապրանքների հենց ներմուծումը: 2009 թվականի կտրուկ անկումից հետո 2010-ին Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը դարձյալ սկսել է ակտիվանալ: Եվ չնայած հայ-թուրքական սահմանն այդպես էլ չբացվեց, այնուհանդերձ դա կարծես չի խանգարել, որ այս տարի դարձյալ ակտիվանա երկու երկրների առևտրաշրջանառությունը: 2009թ. մեծածավալ անկումից հետո 2010թ. Հայաստանի և Թուրքիայի միջև առևտուրը կարծես վերադարձավ մինչճգնաժամային մակարդակին: Ավելացել է ինչպես ներմուծումը, այնպես էլ արտահանումը: Բայց, դրանով հանդերձ, արտահանման և ներմուծման ծավալները շարունակում են հեռու մնալ համադրելի լինելուց: Թուրքիայից Հայաստան ներկրվող ապրանքների քանակը մոտ 150 անգամ գերազանցում է արտահանման ծավալը: Ընդ որում, այս հարաբերակցությունը գնալով խորանում է:

Այս զարգացումները պայմանավորված են առաջին հերթին տնտեսական աշխուժությամբ: Այս հանգամանքն էլ, ըստ էության, նպաստել է թուրքական ներմուծման աշխուժացմանը: Օրինակ՝ զգալի աշխուժություն է նկատվում շինարարության ոլորտում: Հայաստանը Թուրքիայից ներկրում է ինչպես տարբեր տեսակի սննդամթերք, թեթև արդյունաբերական ապրանքներ, այնպես էլ մեծ քանակությամբ շինանյութ: Այնպես որ, ներմուծման ավելացման հարցում, ըստ էության, ազդել է առաջին հերթին այս հանգամանքը: Որքան էլ վերջին տարիներին Հայաստանում ակտիվացել է շինանյութերի արտադրությունը, այնուհանդերձ այս ոլորտում մեծ ծավալ են կազմում թուրքական շինանյութերը. դրանք բազմազան են՝ սկսած սալիկներից ու հախճապակե այլ ապրանքներից, մինչև շինարարության մեջ օգտագործվող տարբեր խառնուրդներն ու նյութերը:

Ներմուծման ավելացման հարցում ազդել է նաև թուրքական թեթև արդյունաբերական ապրանքների ներկրման ծավալների աճը:

Իհարկե, այս ոլորտում թուրքական ապրանքների համար հայաստանյան շուկայում լուրջ մրցակից է չինական արտադրանքը, որի ներկրումը շարունակում է արագորեն ավելանալ:

Թուրքիայի ներմուծման մեջ նավթի և նավթամթերքի, պլաստմասսե և փայտե իրերի, տրիկոտաժի, սև մետաղների, էլեկտրական մեքենաների և սարքավորումների, կողքին մեծ տեսակարար կշիռ ունեն ալյումինը, ներկանյութը, սարքավորումներն ու մեխանիկական մասերը:

Թուրքիայի գործարար շրջանակները, ինչպես նաև հարևան երկրի արևելյան շրջանների քաղաքային իշխանությունները շահագրգիռ են համագործակցելու հայաստանյան գործընկերների հետ, Հայաստանից առանձին ապրանքներ, այդ թվում՝ ցեմենտ, հանքանյութ և ձկնեղեն չմիջնորդավորված արտահանելու նպատակով[81]: Կան տեղեկություններ, որ Երևանն ու Անկարան բանակցություններ են վարում Հայաստանից Թուրքիա ցեմենտի և ալյուրի արտահանման ուղղությամբ[82]: Վերջերս խոսակցություններ կան նաև հանքանյութի և ձկնեղենի չմիջնորդավորված առևտրի վերաբերյալ, ինչպես նաև սպասվում է, որ Հայաստանը Թուրքիային պետք է մատակարարի 1.5 մլրդ կվ/ժ էլեկտրաէներգիա:

Հատկանշական է նաև այն փաստը, որ հայկական ապրանքների և ծառայությունների՝ Թուրքիա արտահանման մասին ներկայիս խոսակցությունները հիմնականում վերաբերում են այնպիսի ապրանքատեսակների, որոնց վրա չի երևալու «արտադրված է Հայաստանում» պիտակը՝ էլեկտրաէներգիա, ալյուր, ցեմենտ, որոնցից կարտադրվեն արդեն թուրքական պիտակով ապրանքներ: Պատահական է արդյոք այս ընտրությունը, թե որոշակի գործոնների արդյունք, մինչև վերջ հստակ չէ:

Թուրքիա արտահանելու պոտենցիալ հնարավորություններ ունեն հայկական արդյունաբերության այնպիսի գիգանտներ (ցավոք՝ նախկին), ինչպիսիք են Նաիրիտը և Վանաձորի քիմկոմբինատը: Չնայած դրան, թեև մի քանի անգամ փորձ է արվել վերականգնել

---

[81] «Հակամարտությունների ազդեցությունը առևտրի և ապրանքաշրջանառության վրա», Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, մայիս, 2010:

[82] «Հայաստանից Թուրքիա կարող է արտահանվել ցեմենտ և ալյուր», «Կապիտալ, բիզնես» օրաթերթ, 20 սեպտեմբերի, 2008 (www.cdaily.am):

այս ընկերությունները, այսօր էլ դրանք չեն աշխատում իրենց ողջ ներուժով: Օրինակ՝ Վանաձորի քիմկոմբինատը տարիներ առաջ յուրացրել է գյուղատնտեսության համար պարարտանյութերի արտադրությունը, սակայն գործը այդպես էլ փորձարկումներից հեռու չգնաց: Մինչդեռ մասնագետների կարծիքով իրական նախադրյալներ կային դեպի Թուրքիա այս ապրանքների մասսայական արտահանման համար:

Վիճակագրությունը փաստում է, որ թեև տնտեսական փոխգործունեության փաստը անհերքելի է, սակայն այս ամենով հանդերձ Հայաստանի հանդեպ Թուրքիայի ներկա քաղաքականությունը խիստ ասիմետրիկ է. այսօր էլ, ինչպես նախկինում, փակ սահմանի պայմաններում թուրքական շուկան հայաստանյան ապրանքների համար շարունակում է մնալ, ըստ էության, անհասանելի: Հակառակ դրան, նույնը չի կարելի ասել թուրքական ապրանքների դեպքում: Պատճառը, սակայն, ոչ այնքան դրանց որակը կամ մրցակցային առավելություններն են, որքան կիրառվող սահմանափակումները: Չնայած գնահատվող լուրջ ներուժին, Թուրքիան մաքսային քաղաքականության միջոցով շարունակում է խոչընդոտել հայկական ապրանքների մուտքը իր շուկա: Մի բան, որ չի գործում հայկական շուկայի դեպքում: Պատճառն այն է, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոնակարգերը մի երկրի դեպքում գործում են, մյուսի դեպքում՝ ոչ, չնայած երկուսն էլ նույն կազմակերպության անդամ են:

Իրականում, արտահանումների ու ներմուծումների այսքան ակնհայտ անջրպետը միայն Հայաստանի արտահանման փոքր ներուժով չէ պայմանավորված: Փորձենք համեմատել երկու երկրներում ներմուծումների վրա ազդող կարգավորման պայմանները: Նախ պետք է նշել, որ Հայաստանի և Թուրքիայի ներմուծումների վրա ազդող միջոցառումները ամբողջությամբ կարգավորվում են ԱՀԿ-ի շրջանակներում՝ բանակցությունների արդյունքում ստանձնած անհատական պարտավորությունների և ԱՀԿ ընդհանուր կանոնների միջոցով: Հիմնական միջոցները մաքսատուրքերն են՝ արտահայտված սակագնային դրույքաչափերով: Երկու երկրների միջև մաքսատուրքերի հարաբերական կարևորությունը գնահատելու համար պետք է դիտարկել համապատասխան ցուցանիշները (աղյուսակ 23):

Աղյուսակ 23

Հայաստանի և Թուրքիայի մաքսային սակագնային դրույքաչափերի կառուցվածքը[83]

	Հայաստան		Թուրքիա	
Սակագների ամրագրում, %	100		50,4	
Սակագներ	**ամրագրված**	**գործող**	**ամրագրված**	**գործող**
պարզ միջին %				
բոլոր ապրանքներ	8,5	2,9	28,3	10
գյուղատնտեսական	14,7	6,9	60,1	46,7
արդյունաբերական	7,5	2,3	16,9	4,8
ոչ արժեքային %	0	0,4	0,1	1,9
մաքսատուրքերից ազատված, %				
գյուղատնտեսական		28,1		19,3
արդյունաբերական		78		34,9

Թուրքիա ներմուծված ապրանքները կարող են ենթակա լինել տարբեր վճարների՝ մաքսային տուրքեր, վճարներ և ներքին հարկեր (ակցիզային հարկեր, ավելացված արժեքի հարկ և դրամանիշային տուրք): Եվրոպական համայնքների (ԵՀ) հետ մաքսային միության մեջ իր մասնակցության արդյունքում՝ Թուրքիայի՝ երրորդ երկրներից ներմուծված բոլոր արդյունաբերական բաղադրիչների մաքսատուրքերը հիմնված են ԵՀ-ի ընդհանուր արտաքին տուրքերի վրա: Ամրագրված բարձր դրույքաչափերը Թուրքիային բավարար տեղ են թողնում մաքսատուրքերի բարձրացման համար: Ավելին, ոչ արժեքային դրույքաչափերի կիրառումը չի ապահովում արժեքային դրույքաչափերով կատարած ԱՀԿ ամրագրման Թուրքիայի պարտավորությունների կատարումը:

Փոխարենը՝ Հայաստանն ունի միջազգային չափանիշներով բավական ազատական ներմուծման քաղաքականություն: Մասնավորապես՝ ամրագրված են բոլոր ապրանքների մաքսային սակագների առավելագույն չափերը: Շատ ցածր են ներմուծումների նկատմամբ կիրառվող վճարները: Մաքսային սակագների ենթակա ապրանքներից առավելագույնը գանձվում է 10% ներմուծման տուրք: Բոլոր

[83] «Հայաստանի և Թուրքիայի միջև ճանապարհների վերաբացման առևտրատնտեսական հիմնախնդիրները» ՀՅԴ բյուրո, Երևան, հունիս, 2009, էջ 32:

ապրանքների մաքսային ամրագրված սակագների պարզ միջինը կազմում է մոտ 8.5%[84]:

Երկու երկրների մաքսային սակագնային պատկերների համադրումից պարզ է դառնում, որ Հայաստանի ներմուծումները անհամեմատ ավելի ազատականացված են և կանխատեսելի: Թուրքիայի հետ առևտրային գործընկերության բանակցությունների խնդիրը պետք է լինի մասնավորապես այս անհավասարության հարթեցումը:

Ստեղծված իրավիճակում հասկանալի է դառնում, որ երկու երկրների միջև առկա առևտրային հոսքերի վերաբերյալ տվյալները հեռու են ճշգրիտ լինելուց. վիճակագրական տվյալները գրեթե բացակայում են: Տվյալները հիմնականում հավաքվում են առանձին խոսակցությունների և գնահատականների հիման վրա, ինչի պատճառով էլ փակ սահմանը շրջանցելու ուղիները հասկանալու համար ուսումնասիրողները շատ ավելի հաճախ հիմնվում են ոչ թե վիճակագրության, այլ առանձին իրավիճակների ուսումնասիրության վրա (case studies)[85]:

Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ առևտրաշրջանառությունը, բնականաբար, տպավորիչ չէ: Այդուհանդերձ, տվյալ պարագայում պաշտոնական վիճակագրության վրա հիմնվելն առնվազն միամտություն կլինի: Փոխարենը, որոշ փորձագիտական գնահատականներ ցույց են տալիս, որ առևտրաշրջանառության իրական ծավալներն առնվազն կրկնակի անգամ գերազանցում են պաշտոնապես հայտարարվածին: Համաձայն ՀՀ Առևտրային պալատի ներկայացուցիչների վերջերս արված հայտարարության՝ 2009թ. Հայաստանի և Թուրքիայի առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 300 մլն դոլար: Ընդ որում, այդ առևտրաշրջանառությունում մոտավորապես 2-3 միլիոնն է, որը Հայաստանն է արտահանում Թուրքիա[86]:

Հայաստան-Թուրքիա ապրանքաշրջանառության ծավալների մասին գնահատականներ են փորձում տալ երկու երկրների արտգործնախարարությունները: Եվ, եթե հայկական պաշտոնական

---

[84] Նույն տեղում, էջ 32:

[85] Burcu Gltekin, “The Stakes of the Opening of Turkish- Armenian Border, The cross-border contacts between Armenia and Turkey”, Centro Argentino de Estudios Internacionales, էջ 11. (www.caei.com.ar).

[86] Ռուբեն Մելոյան, Հայաստան-Թուրքիա առևտրաշրջանառությունը միակողմանի է, Ազատություն ռադիոկայան, 5 փետրվարի, 2010:

մարմինների հաշվարկով այդ մեծությունը հասնում է մինչև 250 միլիոնի, ապա թուրքական կողմը մոտարկում է այն տարեկան ընդամենը 70-150 մլն դոլարի սահմաններում[87]:

Ավելին, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նշում է՝ ավելի քան 56 ձեռնարկություններ են գրանցված Հայաստանում, որ գործում են հայ-թուրքական համատեղ կապիտալով: Չնայած՝ թուրքական կապիտալը երբեմն գրանցվում է երրորդ ազգի ներկայացուցչի անվան տակ[88]:

Համաշխարհային բանկն, իր հերթին 2010թ. արձանագրել է մոտավորապես 200 մլն դոլար գումարի առևտրաշրջանառության առկայության մասին՝ փաստելով, որ պաշտոնական վիճակագրությունը գերագնահատված է[89]:

Համաձայն Երևանում ԱՄՆ դեսպանատան հրապարակած տվյալների՝ Թուրքիան Հայաստանի 7-րդ առևտրային գործընկերն է[90]: Իսկ որոշ հայ փորձագետների հաշվարկների համաձայն էլ, Հայաստանի և Թուրքիայի միջև իրական շրջանառությունը հասնում է Հայաստանի ապրանքաշրջանառության ողջ ծավալի շուրջ 25%-ին:

Հայաստան-Թուրքիա ապրանքաշրջանառության ծավալներին են անդրադառնում անգամ ադրբեջանցիները. մասնավորապես նշվում է, որ հայ-թուրքական սահմանի բացումը տնտեսապես չի կարող լուրջ խնդիր առաջացնել Ադրբեջանի համար, քանի որ այսօր էլ միայն Վրաստանի տարածքով իրականացվող առևտրաշրջանառությունը հասնում է 185 մլն դոլարի, իսկ 2008 թվականին միայն 11.000 թուրքական բեռնատար մեքենաներ են հատել Հայաստանի սահմանը՝ ներկրելով ամենատարբեր ապրանքներ[91]:

---

[87] “Doing Business in Armenia and Turkey”, The Center of Socio-Economic Research and Analysis, CSERA, հունիս, 2008, էջ 92.

[88] Տեղեկություններ ՀՀ-ում օտարերկրյա առևտրային իրավաբանական անձանց, այդ թվում՝ ձեռնարկությունների վերաբերյալ (ըստ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների), 01 հունվարի. 2010, www.armstat.am:

[89] «Հայաստանի հետ առևտրի ծավալների աճը զարմացրել է թուրք գործարարին», 4 փետրվար, 2010, www.armar.am:

[90] Th Burcu Gülteki, “The Stakes of the Opening of Turkish- Armenian Border The cross-border contacts between Armenia and Turkey”, Centro Argentino de Estudios Internacionales, p. 11 (www.caei.com.ar).

[91] “Armenia-Turkey trade”, The Messenger Online, 6 մարտի, 2009 (www.messenger.com.ge).

Երբեմն ինֆորմացիայի կարևոր աղբյուր են դառնում անգամ Երևան-Ստամբուլ ուղևորափոխադրումներ կատարող ընկերությունները: Դեռևս 2001 թվականին իրականացված մի հետազոտության արդյունքների համաձայն՝ 1 ավտոբուսի ուղևորները մոտավորապես 100.000 դոլարի առևտուր են անում Թուրքիայում: Իսկ միայն այս ուղևորափոխադրումների ընթացքում իրականացվող առևտուրը գնահատվում է տարեկան 40 միլիոն դոլարի սահմաններում: 2001թ. գործում էին ուղևորափոխադրումներ իրականացնող 4 հիմնական ընկերություններ (ընդ որում ներկայումս շուկայում առկա հիմնական մենաշնորհային ընկերությունները բացառապես թուրքական են, քանի որ Հայաստանում գրանցված ավտոբուսներին չի թույլատրվում մուտք գործել Թուրքիայի տարածք), որոնցից յուրաքանչյուրը շաբաթական 2 ուղերթ է իրականացնում Երևան-Ստամբուլ քաղաքների միջև: Համաձայն դիտարկումների՝ յուրաքանչյուր ավտոբուսին կցված է լինում բեռնատար թրեյլեր, որը համարյա դատարկ վիճակում հասնելով Ստամբուլ, հետդարձին կշռում է ավելի քան 15 տոննա[92]:

Չնայած այս բոլոր գնահատականներին՝ թուրքական կողմը, սակայն, իրեն հատուկ մարտավարությամբ, կասկածի տակ է դնում երկու երկրների միջև առևտրաշրջանառության նման ծավալների մասին հայտարարությունները: Այսպես, հայ-թուրքական գործարար հարաբերությունների զարգացման խորհրդի համանախագահ Քահան Սոյակն իր զարմանքն է հայտնել 300 մլն դոլար առևտրի մասին տեղեկության վերաբերյալ՝ դա համարելով «զարմանալի հաջողություն»: Փոխարենը պաշտոնյան նշել է, որ իրենց ունեցած տեղեկություններով՝ երկու երկրների առևտրաշրջանառության ծավալներն ավելի համեստ են և չեն գերազանցում 150 մլն դոլարը[93]:

Թուրքական կողմը փորձում է ժխտել երկու երկրների միջև իրականացվող առևտրի իրական ծավալների մասին տեղեկությունները մի պարզ պատճառով. թուրքական պետության կողմից չի թույլատրվում, որ Հայաստանից ինչ-որ ապրանք բերվի Թուրքիա: Ավելին, Թուրքիայի վիճակագրական աղյուսակներում Հայաստանն

---

[92] Burcu Gülteki, “The Stakes of the Opening of Turkish- Armenian Border The cross-border contacts between Armenia and Turkey”, Centro Argentino de Estudios Internacionales, p. 17 (www.caei.com.ar).

[93] “Turkey-Armenia trade volume reaches $300 mln” 2.02.2010, www.worldbulletin.net.

ընդհանրապես չի նշվում առևտրային գործընկերների շարքում:

Դեռևս 2002 թվականին, երբ Հայաստանին սահմանամերձ թուրքական նահանգների շուրջ չորս տասնյակ գործարարներ այցելեցին Հայաստան, լավատեղյակ աղբյուրների վկայությամբ, թուրք գործարարները մինչև Հայաստան գալը իրենց կառավարությանը խնդրել են բացել Հայաստանի հետ սահմանային անցակետը ու հերթական մերժումն են ստացել: Կառավարությունում ունեցած հանդիպումների ժամանակ այդ երկրի պաշտոնական շրջանակները, մեղմ ասած, չեն խրախուսել՝ թեկուզ առևտրի նկատառումներով՝ բազմամարդ խմբի այցը հարևան երկիր:

Այդ հանդիպման ընթացքում բազմիցս նշվում էր, որ հայ-թուրքական տնտեսական հանձնախմբի գնահատումներով, երկու երկրների միջև արվող գործարքների մոտավորապես 70%-ը կատարվում է հայ և թուրք գործարարների միջև անմիջականորեն, մնացած 30%-ը միջնորդավորված առևտուրն է[94]:

Որոշ գնահատումներով՝ երկու հարևան երկրների միջև կատարվող «թաքնված» առևտուրն ավելի մեծ ծավալներ ունի, քանզի պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում Թուրքիայից Հայաստան մտնող մաքսանենգ ապրանքը: Մինչդեռ, թուրքական կողմի գնահատումներով, անհամեմատ ավելի մեծ քանակի թուրքական ապրանքներ են վաճառվում Հայաստանում: Բանն այն է, որ երբ ապրանքները Թուրքիայից գալիս են, իրենց փաստաթղթերում Հայաստանը որպես վերջնակետ չի նշված: Դրանք գալիս են Վրաստան և այնտեղ վերաձևակերպվում: Դրա համար շատ հաճախ այդ տարբերությունը վիճակագրական տվյալների մեջ լինում է: Այսպես, Թուրքիայից Հայաստան մտնող ապրանքներից շատերը գրանցվում են Վրաստանի կամ, երբեմն էլ, Ռուսաստանի տակ: Նմանապես, Թուրքիան սովորաբար չի նշվում որպես արտադրման երկիր. փոխարենը գործարքը կատարվում է ֆիկտիվ ընկերությունների միջոցով, որոնք հաճախ գրանցված են Շվեյցարիայում[95]:

---

[94] Ատոմ Մարգարյան, Թուրք գործարարներն ուզում են բաց տեսնել հայ-թուրքական սահմանը, 19 օգոստոսի, 2002, Ազատություն ռադիոկայան, Երևան:

[95] Burcu Gülteki, “The Stakes of the Opening of Turkish- Armenian Border The cross-border contacts between Armenia and Turkey”, Centro Argentino de Estudios Internacionales, p. 11 (www.caei.com.ar).

Այսպիսով, փակ սահմանները հաճախ անհրաժեշտություն են առաջացնում երկարացնել ճանապարհները՝ զգալիորեն մեծացնելով հեռավորությունները և դրանով իսկ բարձրացնելով տրանսպորտային ծախքերը: Օրինակ՝ Երևանից Իգդիր հեռավորությունը տասնապատկվում է փակ սահմանի պատճառով, քանի որ ճանապարհն անցնում է Վրաստանի տարածքով, իսկ Գյումրիից Կարս հասնելու համար պահանջվու է 14-ժամյա ճանապարհ՝ չնայած այդ քաղաքների միջև առկա ընդամենը 20 կմ հեռավորության: Վերը նշված թուրք գործարարների՝ Հայաստան կատարած այցի ժամանակ Իգդիրի առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Թայյար Օրալը նշել էր, որ մինչդեռ այսօր ամբողջ աշխարհում հարևան պետությունները բարեկամանում են, լավ հարաբերություններ են հաստատում, իրենք, թողնելով 25 րոպեանոց ճանապարհը, Հայաստան են եկել 25 ժամում՝ այլ երկրի տարածքով[96]:

Այսօր Վրաստանը հանդիսանում է միակ կապուղին Հայաստանի և արտաքին աշխարհի միջև (Իրանի տարածքով այլ երկրների հետ իրականացվող առևտրի ծավալների Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության մեջ շատ փոքր են)[97]:

Ճանապարհների մեծամասնությունը՝ ներառյալ ցամաքային և ծովային տրանսպորտը, կապում են Հայաստանը իր հիմնական առևտրային գործընկերների հետ միմիայն Վրաստանի միջոցով: Իր մենաշնորհային դիրքի պատճառով Վրաստանը հայաստանյան արտահանողներից և ներմուծողներից պաշտոնապես և ոչ պաշտոնապես մեծ գումարներ է գանձում: Իսկ բարձր առևտրային ծախքերը, իրենց հերթին, խոչընդոտ են հանդիսանում Հայաստանի արտաքին առևտրի համար: Միևնույն ժամանակ նրանք կանխորոշում են առևտրի կառուցվածքը, քանի որ ներմուծողներն ու արտահանողները ստիպված են առևտուր անել բարձր արժեք/կշիռ հարաբերակցություն ունեցող արտադրանքով: Հեռավորությունը, տոպոլոգիան, ենթակառուցվածքների վիճակը և մոնոպոլիստական

---

[96] Ատոմ Մարգարյան, Թուրք գործարարներն ուզում են բաց տեսնել հայ-թուրքական սահմանը:

[97] «Հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար. ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ», AEPLAC, 2007:

շուկաները լուրջ դժվարություն են ներկայացնում Հայաստանի համար համաշխարհային շուկաներ մուտք գործելու հարցում: Համաձայն 2007 AEPLAC-ի կողմից իրականացված հետազոտության տվյալների՝ տրանսպորտային ծախքերը կազմում են ներմուծվող և արտահանվող ապրանքների անվանական արժեքի 20-25%-ը: Սա աշխարհի մասշտաբով ամենաբարձր ցուցանիշներից է, որ Հայաստանին մեկ մակարդակի վրա է դնում Մոնղոլիայի հետ միասին, որի հեռավորությունը մոտակա ափից, սակայն, 10 անգամ ավելի հեռու է, քան Հայաստանինը[98]:

Առևտրի համար խոչընդոտները միայն ու միայն փակ սահմաններով չեն պայմանավորված: Դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, օրինակ, անհնար է դարձնում գործարարներին որոշակի աջակցություն տրամադրելու հնարավորությունը առևտրային վեճերի դեպքում: Ավելին, քանի դեռ բացակայում են հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունները, անիմաստ է խոսել երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի լեգալացման մասին:

Քանի որ պաշտոնապես Հայաստանի հանդեպ էմբարգո չի կիրառվում, իրավական տեսանկյունից ոչինչ չի խանգարում հայ և թուրք ընկերություններին չմիջնորդավորված առևտուր իրականացնելու համար կամ, օրինակ, հայ գործարարներին՝ ներդրումներ կատարել Թուրքիայում: Այդ ամենով հանդերձ, Հայաստանը նշված չէ Թուրքիայի առևտրային գործընկերների շարքում, իսկ եվրասիական տարածաշրջանում ակտիվ տնտեսական գործունեություն ծավալող խոշոր թուրքական ընկերությունները խուսափում են մուտք գործել հայկական շուկա՝ չցանկանալով արժանանալ քաղաքական հավանության: ԵՄ առևտրի դրույթները ևս չեն տարածվում Հայաստանի վրա՝ չնայած Թուրքիա-ԵՄ մաքսային միության գոյությանը: ԵՄ ընդունելի առևտրային գործընկերներից Հայաստանը միակն է (Մյանմարի հետ միասին), որ դուրս է մնում Թուրքիայի օրենսդրությամբ ամրագրված Նախընտրությունների միասնական համակարգի ընձեռած արտոնություններից: (European Commission, 2006a):

---

[98] «Հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար. ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ», AEPLAC, 2007:

Այս ամենով հանդերձ չի կարելի չնշել, որ 1993 թվականից ի վեր չեն եղել համագործակցության փորձեր երկու երկրների տարբեր խմբերի միջև: Օրինակ՝ Հայ-թուրքական գործարարության զարգացման խորհուրդը (TABDC), որը ձևավորվեց 1997 թվականին՝ իրեն հռչակելով «առաջին և միակ պաշտոնական կապող օղակը երկու երկրների պետական ու հանրային հատվածների միջև»[99]: TABDC-ն փորձում է ազդել Հայաստանի և Թուրքիայի վարած քաղաքականությունների վրա՝ կենտրոնանալով երկու երկրների միջև տնտեսական ու առևտրային կապերի ստեղծման ու բարելավման վրա, ինչից, վստահաբար, կօգտվեն երկուսն էլ[100]:

Ավելին, 2009թ. սեպտեմբերին Ստամբուլում իր ներկայացուցչությունն է բացել Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը, որը, դեռևս հայկական միակ հասարակական կազմակերպությունն է այս երկրում: Ընդ որում այն ոչ միայն գործում է, այլև սերտ համագործակցություն ունի Թուրքիայի Արդյունաբերողների միության հետ: Ներկայացուցչության առաջին խնդիրն է ուսումնասիրել այսօրվա տնտեսության մեջ առկա արտահանման ներուժ ունեցող ապրանքները, որոնք կարող են մոտ ապագայում մրցունակ լինել թուրքական շուկայում: Եվ իրոք, ինչպես նշում է կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանը. «Ապրանքաշրջանառությունը Թուրքիայի հետ միակողմանի է, մենք ունենք միայն թուրքական ապրանքների և ծառայությունների ներկրում, որոնք զգալի ծավալների են հասնում և չունենք պաշտոնական ոչ մի արտահանման փորձ. Թուրքիայի կողմից էմբարգոն պահպանվել է առ այսօր, և հայկական ծագում ունեցող ապրանք չենք կարող այդ շուկա մտցնել»[101]: Կազմակերպության նպատակներից է նաև Հայաստանից Թուրքիա ապրանքների արտահանում իրականացնելու կոնկրետ կազմակերպումը այն թուրքական ընկերությունների համար, որոնք հայկական ապրանքների կարիքն ունեն՝ կիսաֆաբրիկատներ, հումք և այլն, որովհետև Թուրքիայի տարածքով տրան-

---

[99] Հայ-թուրքական գործարարության զարգացման խորհուրդ (www.tabdc.org):

[100] Rachel Goshgarian "Breaking the Stalemate: Turkish-Armenian Relations in the 21st Century", Turkish Policy Quarterly.

[101] «Հայաստանը կկարողանա Թուրքիա ապրանք արտահանել», 28 ապրիլի, 2010, www.panorama.am:

զիտ բեռների տեղափոխումը վերջին 3 տարում թույլատրվում է: Երրորդ հանգամանքը վերաբերում է նրան, որ թե՛ Թուրքիայում ներկայացնեն Հայաստանի տնտեսության ռեալ պատկերն ու ներուժը, թե՛ Հայաստանում՝ Թուրքիայինը:

Այսպիսով, իհարկե, Հայաստանի և Թուրքիայի տնտեսությունները տարբերվում են իրենց չափերով և ներուժով, ներկայումս առկա առևտրային հարաբերությունները խիստ ասիմետրիկ են, սակայն այդ բոլոր տարբերություններով հանդերձ, նրանք զգալի նմանություններ ունեն: Տարբեր հետազոտություններում հաշվարկվող արտահանման և ներմուծման նմանությունների համաթիվը ցույց է տալիս, որ առևտուրը ազատականացվի, այն չի առաջացրել առևտրի շեղման էֆեկտ, մինչդեռ առևտրի ստեղծման էֆեկտը տեղի կունենա և կբերի իր դրական ազդեցությունը:

Տեխնիկապես արդյունաբերական ապրանքների համար կա անգամ ներծյուղային առևտրի հնարավորություն Հայաստանի և Թուրքիայի միջև, եթե հայ արտադրողները սկսեն օգտվել մասշտաբի էֆեկտի ազդեցությունից: Ավելին, մասշտաբի էֆեկտի ձեռքբերման հարցում լուրջ աղբյուր կարող են հանդիսանալ ներդրումները հայ-թուրքական համատեղ ձեռնարկություններում[102]:

Այս ամենով հանդերձ, մինչև սահմանի բացումը ևս շատ քայլեր կան իրականացնելու: Եթե Հայաստանը և Թուրքիան իրոք ուզում են օգուտներ քաղել առևտրային ներուժից, երկու երկրները պետք է նախ և առաջ ձեռնարկեն քայլեր, որոնք վեր են զուտ առևտրային հարաբերություններից, բայց որոնք փոխարենը կնպաստեն երկու տնտեսությունների մոտեցմանը, ներդաշնակեցմանը: Դա ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են էներգետիկայի ոլորտում էլեկտրաէներգիայի արտահանման համար փոխկապակցված համակարգի ներդնումը, շրջակա միջավայրի պահպանման համար համատեղ ջանքերի իրականացումը, պատմական հուշարձանների պահպանման ծրագրի իրականացումը[103]: Համատեղ ջանքերն այս

[102] Sema Kalaycıoğlu,Kalayc?oglu “Exploring Complementarities Between Turkey And Armenia For Regional Cooperation: Potentials And Challenges”, Işık University, Istanbul, p. 11.
[103] Նույն տեղում, էջ 12:

և այլ ուղղություններով ամուր հիմք կդառնան հետագա հարաբերությունների համար և սկիզբ կդնեն առողջ փոխգործունեության և ազատական առևտրի ժամանակաշրջանին:

3.2. Հայաստանի և Թուրքիայի ծառայությունների ոլորտների զարգացումները սահմանի բացման պարագայում

Հայ-թուրքական սահմանի բացման հնարավոր ազդեցությունը երկու երկրների ծառայությունների ոլորտների վրա բացահայտելու համար հանգամանորեն վերլուծենք երկու երկրների ծառայությունների ոլորտները:

Ֆինանսական ծառայությունների ոլորտի տեսանկյունից Հայաստանի ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 91%-ը: Բանկային համակարգը բաղկացած է 22 առևտրային բանկերից (380 մասնաճյուղերով):

Հայաստանի ֆինանսական շուկայի մյուս մասնակիցներից են.

- 25 վարկային կազմակերպություններ՝ 48 մասնաճյուղերով,
- 11 ապահովագրական ընկերություններ և 5 ապահովագրական միջնորդներ (բրոքերներ),
- արժեթղթերի շուկայի մասնակիցները՝ 10 ներդրումային ընկերություններ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան և ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ-ն,
- 67 գրավատներ,
- արտարժույթի առք ու վաճառք իրականացնող 289 փոխանակման կետեր (ներառյալ՝ մասնաճյուղերը),
- արժութային դիլերի գործունեությամբ զբաղվող 2 իրավաբանական անձ,
- դրամական փոխանցումներ իրականացնող 11 ընկերություն,
- վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնող 7 կազմակերպություն:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այստեղ գործում են 46 բանկ, որից 33-ը՝ առևտրային, 13-ը՝ զարգացման և ներդրումային:

Առևտրային բանկերից 3-ը պետական են, 11-ը՝ մասնավոր, 18-ը՝ արտասահմանյան, իսկ 1-ն էլ ներառված է Թուրքիայի ավանդների երաշխավորման ֆոնդի կազմում: Փաստորեն, բանկային ոլորտում առաջատար են առևտրային բանկերը, որոնց պատկանում է ողջ բանկային ակտիվների 96%-ը: Իսկ առևտրային բանկերի մեջ էլ առաջատար են մասնավոր բանկերը, որոնք տնօրինում են ողջ բանկային ակտիվների 50%-ը, դրանց հաջորդում են օտարերկրյա բանկերը, որոնց էլ բաժին է ընկնում ակտիվների 16%-ը: Համաձայն թուրքական օրենսդրության՝ յուրաքանչյուր բանկ Թուրքիայում պետք է ձևակերպվի որպես բաժնետիրական ընկերություն և ունենա 30 մլն նոր թուրքական լիրա կապիտալ: Արտասահմանյան բանկերը կարող են գործունեություն իրականացնել Թուրքիայում՝ ստեղծելով մասնաճյուղեր, ներկայացուցչություններ կամ համատեղ կազմակերպություններ՝ արդեն ստեղծված կամ ստեղծման ընթացքում գտնվող բանկերի հետ: Արտասահմանյան բանկի առաջին մասնաճյուղի հիմնադրման համար անհրաժեշտ է ԿՎԲԳ-ի հաստատումը: Բացառապես օֆշորային բանկային գործունեությամբ զբաղվելու նպատակով որևէ բանկի հիմնադրումը թույլատրվում է ԿՎԲԳ-ի խորհրդի որոշմամբ: Բանկային ծառայությունների միջսահմանային տրամադրումը իրավաբանորեն սահմանափակված չէ:

Ստամբուլի բորսան արժեթղթերի միակ շուկան է Թուրքիայում: Բորսան պետական հաստատություն է, որի կազմում գործում են 104 բրոքերային կառույցներ և 40 բանկեր: Բորսայում գրանցված են 322 կազմակերպություն, որից 100-ը ներառված են Բորսայի National-100 ինդեքսում:

Թուրքիայում կա 46 ապահովագրական կազմակերպություն, որոնցից 35-ը գործում էին ոչ կյանքի ապահովագրության, 10-ը՝ կյանքի ապահովագրության և կենսաթոշակային, և 1-ը՝ միայն կենսաթոշակային ոլորտներում: Շուկայում գործում է նաև 1 վերաապահովագրական կազմակերպություն:

Երկու երկրների բանկային ոլորտի համեմատության համար դիտարկենք ոլորտի մի քանի ցուցանիշներ: Ըստ աղյուսակ 24-ի՝ հայկական բանկերի ակտիվների ֆինանսավորումը Թուրքիայի ու աշխարհում նույն ցուցանիշի համեմատությամբ հարաբերականորեն ավելի շատ է կատարվում սեփական կապիտալի հաշվին, ինչը

վկայում է պարտքով ֆինանսավորման տարբերակների և/կամ ավանդների ներգրավման ավելի ցածր մակարդակի մասին: Միևնույն ժամանակ ավելի շատ են լիկվիդային պահուստները, ինչը կարող է վկայել հարաբերականորեն ավելի ցածր արդյունավետության մասին (աղյուսակ 24): Մյուս կողմից՝ չգործող վարկերի ցածր մակարդակը խոսում է ռիսկերի արդյունավետ կառավարման մասին (աղյուսակ 24):

Աղյուսակ 24

Բանկային ցուցանիշների համեմատությունը Հայաստանում և Թուրքիայում

		2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Բանկային կապիտալի հարաբերությունը ակտիվների վրա, %	Հայաստան	18.40	18.10	17.80	21.50	22.90	23.90	23.0	21.0	21.8
	Թուրքիա	11.50	13.70	14.40	12.90	11.30	13.0	11.8	13.3	13.4
	Համաշխարհային միջինը	8.90	8.80	8.70	8.60	8.90	8.8	8.9	9.4	-
Բանկային լիկվիդային պահուստների հարաբերությունը ակտիվների վրա, %	Հայաստան	11.49	11.37	11.88	19.80	21.48	17.82	-	-	-
	Թուրքիա	11.79	10.95	9.25	10.98	9.42	9.29	-	-	-
	Համաշխարհային միջինը	9.46	9.60	10.46	10.10	10.40	9.83	-	-	-
Բանկային չգործող վարկերի հարաբերությունը համախառն վարկերի վրա, %	Հայաստան	9.9	5.4	2.1	1.9	2.5	2.8	4.4	4.8	5.0
	Թուրքիա	12.7	8.9	5.0	3.9	3.2	3.6	3.8	5.6	4.9
	Համաշխարհային միջինը	8.0	6.6	5.1	4.15	3.0	2.7	3.1	4.2	-

Համեմատության համար նշենք նաև, որ ակտիվների՝ ROA, և կապիտալի՝ ROE շահութաբերությունները 2007թ. Հայաստանում եղել են համապատասխանաբար 3.4 և 15, իսկ Թուրքիայում համապատասխանաբար՝ 2.6 և 19: Ընդ որում՝ միջազգայնորեն ընդունված է բանկերի շահութաբերությունը համարել միջինից բարձր, եթե ROA>1.5 և ROE>15: Հետևաբար, կարող ենք պնդել, որ բանկային ոլորտում 2 երկրներում էլ շահութաբերությունը գտնվում է ավելի քան բավարար վիճակում:

Ինչ վերաբերում է երկրներում վարկավորման և ավանդի տոկոսադրույքներին, ապա վիճակը հետևյալն է.

Աղյուսակ 25

Վարկավորման և ավանդադրման տոկոսադրույքը Հայաստանում և Թուրքիայում

		2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Հայաստան	Ավանդի տոկոսադրույք	9.60	6.87	4.90	5.81	5.84	6.3	6.6	8.7
	Վարկի տոկոսադրույք	21.14	20.83	18.63	17.98	16.53	17.6	17.0	18.8
	Ավանդի և վարկի տոկոսների տարբերություն	11.54	13.95	13.74	12.17	10.69	11.3	10.4	10.1
Թուրքիա	Ավանդի տոկոսադրույք	50.49	37.68	24.26	20.40	21.65	22.6	22.9	17.6
	Վարկի տոկոսադրույք	-	-	-	-	-	-	-	-
	Ավանդի և վարկի տոկոսների տարբերություն	-	-	-	-	-	-	-	-

Հայաստանում վարկավորման և ավանդների տոկոսադրույքների միջև զգալի տարբերություն կա, որը ներկայումս նվազման միտում ունի: Այդ տարբերության պատճառներից կարող են լինել բանկերի միջև մրցակցության պակասը, տնտեսությունում վարկային ռեսուրսների նկատմամբ ցածր պահանջարկը և այլն: Թուրքիայում ավանդային բարձր տոկոսադրույքը բացատրվում է ոչ այնքան ռիսկայնության բարձր մակարդակով, որքան ազգային խնայողությունների խիստ ցածր մակարդակով:

Աղյուսակ 26-ը ցույց է տալիս 2 երկրների բանկային համակարգի կողմից տրված ներքին վարկերի պատկերը: Հատկանշական է, որ թե՛ մասնավոր հատվածին տրամադրած, թե՛ համախառն վարկերի կշիռը ՀՆԱ-ում կրկնակի մեծ է Թուրքիայում, ինչը վկայում է տվյալ երկրում վարկերի առավել հասանելիության, ինչպես նաև վարկավորման առավել ձեռնտու տարբերակների մասին: Սա կարող է սահմանի բացման պարագայում լուրջ խնդիրներ առաջացնել հայկական բանկերի համար:

Աղյուսակ 26

Տրված ներքին վարկեր (ՀՆԱ-ի նկատմամբ %)

		2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Բանկային հատվածի կողմից տրված ներքին վարկեր, ՀՆԱ-ի %	Հայաստան	7.38	5.56	6.68	8.79	8.06	12.17	17.0	20.3	26.1
	Թուրքիա	48.81	44.02	42.57	43.88	45.77	49.3	52.5	63.0	69.2
Մասնավոր հատվածին տրված վարկեր, ՀՆԱ-ի %	Հայաստան	6.78	5.68	6.99	8.05	8.83	13.62	17.8	23.6	26.8
	Թուրքիա	15.24	15.15	17.83	21.58	25.94	29.5	32.6	36.5	43.9

Ինչ վերաբերում է արժեթղթերի շուկային, ապա պետք է նշել, որ երկու երկրներում էլ այս շուկան միջազգային մակարդակից թույլ է զարգացած (աղյուսակ 27): Այդուհանդերձ, կարող ենք պնդել, որ Թուրքիայում արժեթղթերի շուկան շատ ավելի զարգացած է քան Հայաստանում: Աղյուսակ 27-ի տվյալները փաստում են, որ հայկական բորսայում գրանցված ընկերությունների շուկայական կապիտալիզացիայի մակարդակը չի հասնում նույնիսկ ՀՆԱ-ի 2%-ին, ինչը վկայում է գործնականում գրեթե գոյություն չունեցող շուկայի մասին:

Աղյուսակ 27

Բորսայում գրանցված ընկերությունների շուկայական կապիտալիզացիան (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հայաստան	0.43	0.97	0.51	0.87	0.9	1.1	1.5	1.6	0.3
Թուրքիա	14.59	22.45	25.01	33.38	30.6	44.3	16.1	36.7	41.7
Համաշխարհային միջինը	72.0	87.0	92.0	96.7	110.1	118.8	58.8	85.4	90.4

Միջազգային կապիտալի շուկաների միջոցով ֆինանսավորման վիճակագրությունը ևս ուրախալի իրավիճակ չի ներկայացնում: Հայաստանի այս ցուցանիշը գրեթե զրոյական է, ուստիև կարող ենք ասել, որ Հայաստանը գրեթե չի մասնակցում կապիտալի միջազգային շուկաներում տեղի ունեցող գործընթացներին: Եթե դա դիտարկենք վերջին տարիների լույսի ներքո, ապա կարող ենք ասել, որ դրա արդյունքում ֆինանսատնտեսական ճգնաժամը առավել ուշ սկսեց դրսևորվել Հայաստանում, քան միջազգային ֆինանսական

շուկայում ակտիվ մասնակցություն ունեցող երկրներում: Սակայն հարկ է գիտակցել, որ միջազգային ֆինանսական շուկային մասնակցությունը ունի շատ ավելի դրական կողմեր, քան բացասական, հատկապես Հայաստանի նման փոքր երկրների համար, որոնք մշտապես ունեն ֆինանսական ռեսուրսների պակաս:

Այժմ, նկարագրված իրավիճակից ելնելով՝ փորձենք իրականացնել 2 երկրի ֆինանսական ոլորտների SWOT վերլուծություն.

ՀՀ ֆինանսական շուկայի SWOT վերլուծություն՝

<u>Ուժեղ կողմեր</u>

- կապիտալի բավարար մակարդակ
- լիկվիդայնության բարձր մակարդակ
- բարձրորակ աշխատուժի առկայություն
- բարձր շահութաբերություն

<u>Թույլ կողմեր</u>

- դասակարգված վարկերի առկայություն
- ակտիվների և պարտավորությունների միջև բացասական ճեղքվածք ժամկետային խմբերում
- ծրագրային ապահովվածության թերություններ
- շահութաբերության ոչ բարձր մակարդակ
- ապահովագրական համակարգի թույլ զարգացվածություն

<u>Հնարավորություններ</u>

- միջազգային շուկաներում տոկոսադրույքի ցածր մակարդակ, հետևաբար և միջազգային կառույցներից էժան միջոցներ ներգրավելու հնարավորություն
- բանկային և ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ
- ավանդների աճ
- ավանդների երաշխավորման գումարի մեծացում

<u>Վտանգներ</u>

- համաշխարհային ֆինանսական շուկայում անբարենպաստ զարգացումներ
- բարձր վարկային ռիսկ
- ֆինանսական օրենսդրության անկատարություն

Թուրքիայի ֆինանսական շուկայի SWOT վերլուծություն՝

Ուժեղ կողմեր

- ֆինանսական կազմակերպությունների մասնաճյուղերի մեծ ցանց
- կապիտալի բարձր մակարդակ
- լիկվիդայնության բարձր մակարդակ
- բարձրորակ աշխատուժի առկայություն
- հուսալի իրավական համակարգի առկայություն
- բարձր շահութաբերություն

Թույլ կողմեր

- կարճաժամկետ կապիտալի հոսքերից կախվածություն
- ակտիվների և պարտավորությունների միջև ճեղքվածքի առկայություն ժամկետային խմբերում
- ապահովագրական համակարգի թույլ զարգացվածություն

Հնարավորություններ

- ավանդների նկատմամբ վարկերի հարաբերակցության աճ
- 3 պետական բանկերի մասնավորեցում
- արտադրությանն աջակցող ֆինանսական միջոցների ներդրում

Վտանգներ

- դասակարգված վարկերի աճ
- կարճաժամկետ ավանդների աճ
- լիզինգային գործարքներում ԱԱՀ-ի աճ 1-ից մինչև 18%:

Փաստորեն, վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի ֆինանսական շուկայի ավելի քան 90%-ը ներկայացնող մասը՝ բանկային համակարգը, ունի արդյունավետության բարձրացման լուրջ հիմնախնդիրներ: Իհարկե, դրանցից որոշները բխում են ողջ երկրի տնտեսությունում տիրող իրավիճակից: Սակայն այդ խնդիրների մի մասը կարող են լուծվել շուկայում հզոր և արդյունավետ կերպով գործող մրցակիցների առկայության դեպքում: Ուստի հայ-թուրքական սահմանի բացման պարագայում կոնկրետ բանկային համակարգում շուկայից կարող են դուրս մղվել առավել թույլ բանկերը, իսկ առավել ուժեղները ստիպված կլինեն արդյունավետության բարձրացման ավելի ակտիվ մեխանիզմներ կիրառել՝ թուրքական բանկերի մրցակցությանը դիմակայելու համար: Նշված

փոփոխությունների արդյունքում միանշանակ կշահեն սպառողները, քանզի շուկայում մրցակցության մեծացման արդյունքում տեղի կունենա վարկային ռեսուրսների էժանացում, հետևաբար նաև՝ դրա հասանելիության բարձրացում բնակչության լայն զանգվածների համար:

Թեպետ Հայաստանի շուկայում թուրքական մրցակիցների ներկայությունը ինքնին կարող է նպաստել մրցակցության բարելավմանը, սակայն պետք է նաև միջոցառումներ ձեռնարկել՝ տեղական բանկերի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս կարողանան մրցունակ գտնվել թուրքական բանկերի նկատմամբ:

Ապահովագրական համակարգի և արժեթղթերի շուկաների թույլ զարգացվածությունը Հայաստանում ինքնին բացասական երևույթ է, ուստի եթե սահմանի բացման պարագայում տեղի ունենա թուրքական առավել զարգացած ապահովագրական ընկերությունների մուտք հայկական շուկա, դա կարելի է դիտարկել դրական տեսանկյունից այն առումով, որ տվյալ ոլորտում առավել զարգացած երկրի փորձը կներդրվի հայկական շուկայում ու կնպաստի դրա հետագա զարգացմանը: Սակայն, բնականաբար, երևույթը բացասական կլինի այն առումով, որ հայկական ընկերությունները գուցեև դուրս մղվեն շուկայից: Ուստի անհրաժեշտ է ապահովագրական համակարգի զարգացմանն ուղղված պետական ակտիվ քաղաքականություն նման իրավիճակից խուսափելու համար:

Այնուամենայնիվ հայ-թուրքական սահմանի վերաբացումը և տարածաշրջանում կայուն տնտեսական զարգացման համար լավ հնարավորությունների ստեղծումը կարող է մեծապես նպաստել Հայաստանում ներդրումների աճին և, հետևաբար, արժեթղթերի շուկայի զարգացմանը: Անհրաժեշտ է քայլեր իրականացնել՝ արժեթղթերի շուկայի զարգացման համար համապատասխան ենթակառուցվածքներ և բարենպաստ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Նպատակահարմար ենք գտնում իրականացնել նաև Հայաստանի և Թուրքիայի կապի և տրանսպորտի ոլորտների համեմատական վերլուծություն:

Վերջին տարիներին Թուրքիայի հեռահաղորդակցության ոլորտը՝ հատկապես բջջային հեռախոսակապի շուկան, շարունակ աճել է:

Բջջային հեռախոսակապի բաժանորդների թիվը արդեն անցնում է 53 մլն-ից, ինտերնետային կապ օգտագործողների թիվը՝ 26 մլն-ից: Սպասարկման մեջ առկա է ավելի քան 18.8 մլն քաղաքային հեռախոսակապի գիծ:

Օրենսդրությամբ ապահովվում է նշանակալի շուկայական հզորություն ունեցող օպերատորների ենթակառուցվածքներին բոլոր օպերատորների համար ոչ խտրական և թափանցիկ մուտք: Հեռահաղորդակցության գերատեսչությունն ունի նաև վեճերի լուծման մանրամասն ընթացակարգ:

Թուրքիան ունի ինտերնետային կապի զարգացած միջավայր: Ինտերնետային ծառայությունները բավականին էժան են, իսկ ենթակառուցվածքներն ունեն մեծ կարողություններ: Այս փաստը կարող է դիտվել որպես ապագա խթան՝ Հայաստանում ինտերնետային ցանցի զարգացման, այդ ծառայությունների գների կտրուկ իջեցման և ինտերնետային կապի մատչելիության և որակի բարձրացման համար:

Հայաստանում ևս վերջին տարիներին հեռահաղորդակցության ոլորտը առաջընթաց է արձանագրում, շուկա են մուտք գործում ինտերնետ ծառայության և կապի նոր օպերատորներ: Հայաստանում համակարգչային ծառայությունների ոլորտը մեծ մասամբ մասնավորեցված է: Չնայած դրան՝ ոլորտում գործող կազմակերպությունների արդյունավետությունը բավականին ցածր է, ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ Հայաստանում դեռևս բավականին ցածր է համակարգիչների և ինտերնետի օգտագործման աստիճանը: Նշված խնդիրն առավել արդիական է հատկապես գյուղական բնակավայրերում, ինչի պատճառ կարող է հանդիսանալ ինտերնետ ծառայությունների զգալիորեն թանկ լինելը: Տվյալները վկայում են, որ Հայաստանում ինտերնետ ծառայությունները մոտ 4 անգամ ավելի թանկ են, քան Թուրքիայում: Հեռախոսակապի ապահովման բնագավառում երկու երկրների գնային քաղաքականությունը գրեթե նույնն է: Ներկայումս Հայաստանում գոյություն ունեն տվյալների հաղորդման և ինտերնետային ծառայությունների հասանելիության 73 օպերատորներ: Չնայած դրան զարգացումն այստեղ ունի բավականին դանդաղ ընթացք:

Հատկանշական է, որ վերջին տարիներին Հայաստանում ՏՏ ոլորտը հայտարարվել է որպես ռազմավարական ոլորտ և ակտիվ կերպով զարգանում է, ուստիև այդ քաղաքականության արդյունքում համակարգչային ծառայությունների արտահանումը երկրից տարեցտարի ավելանում է: Ավելին՝ Հայաստանից համակարգչային ծառայությունների արտահանման մասնաբաժինը ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ գերազանցում է դրա ներմուծմանը, ինչը վկայում է Հայաստանում այդ ծառայությունների առկա ներուժի մասին: Միևնույն ժամանակ Թուրքիայի դեպքում հակառակ պատկերն է. համակարգչային ծառայությունները ներմուծվում են ավելի մեծ չափով, քան դրանք արտահանվում են (աղյուսակ 28): Ուստի Թուրքիան կարող է գրավիչ շուկա լինել Հայաստանից համակարգչային ծառայությունների արտահանման համար:

Աղյուսակ 28

Համակարգչային, հաղորդակցության ծառայությունների արտահանման և ներմուծման մասնաբաժինները ծառայությունների արտահանման և ներմուծման մեջ

		2002	2003	2004	2005	2006
Արտահանման մասնաբաժինը	Հայաստան	23.75	22.38	20.78	18.74	17.62
	Թուրքիա	17.57	11.28	13.16	10.30	10.91
Ներմուծման մասնաբաժինը	Հայաստան	9.92	10.92	9.72	8.35	8.48
	Թուրքիա	13.04	13.06	12.16	12.78	17.01

Ի մի բերելով վերոնշյալ վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ Թուրքիայում ինտերնետային ծառայությունները թե՛ որակական, թե՛ գնային առումով գերազանցում են Հայաստանի շուկայի համանման ծառայություններին: Հետևաբար՝ սահմանի բացումը հնարավորություն կտա առավել էժան և որակյալ ինտերնետային ծառայությունների ներմուծում, ինչն էլ կնպաստի ՏՏ ոլորտի էլ ավելի զարգացմանը: Միևնույն ժամանակ՝ սահմանի բացման պարագայում Հայաստանը ձեռք կբերի ՏՏ ոլորտի համար նոր սպառման շուկա՝ ի դեմս Թուրքիայի:

Ինչ վերաբերում է տրանսպորտային ծառայություններին և բեռնափոխադրմանը, ապա պետք է նշել, որ գտնվելով ԽՍՀՄ կազմում՝ Հայաստանն անարգել մուտք ուներ Կովկասի՝ նախկին

ԽՍՀՄ-ի կազմում գտնվող այլ տարածքներ: Դեպի Թուրքիա և Իրան տանող ճանապարհներն ավելի թույլ զարգացած էին: Անկախության նվաճումից հետո տրանսպորտի ակտիվ օգտագործման վրա հիմնվող մատակարարման ցանցը կազմալուծվեց: Սահմանային տարածայնությունները և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ուժեղացրին տնտեսական անկման ազդեցությունը, որն էլ բերեց դեպի Թուրքիա ու Ադրբեջան տանող բոլոր ճանապարհների փակմանը, ներառյալ.

- Ադրբեջանի/Նախիջևանի միջով դեպի Իրան տանող հիմնական ճանապարհային/երկաթուղային կապը,
- Երևանից Ադրբեջանի տարածքով դեպի Թբիլիսի ու Ռուսաստան տանող հիմնական մայրուղին,
- դեպի Թուրքիա տանող Գյումրի–Կարս երկաթգիծը,
- դեպի Թուրքիա տանող Երևան-Կարակալա ավտոճանապարհը:

Ներկայումս միջազգային կապերը սահմանափակված են դեպի Վրաստան և սևծովյան նավահանգիստներ / Թուրքիա տանող Երևան–Գյումրի–Բավրա–Ախալքալաք–Բաթումի և Երևան–Վանաձոր–Բագրատաշեն–Թբիլիսի–Փոթի ավտոճանապարհներով և Այրում / Սադախլո երկաթուղով, ինչպես նաև Մեղրիի միջով դեպի Իրան տանող ավտոճանապարհով:

Ներկայումս առկա բաց սահմանները հետևյալն են.

- Վրաստանի հետ՝ Բավրա (Վրաստանի տարածքում գտնվող ճանապարհահատվածը շատ վատ վիճակում է, սակայն Վրաստանի կառավարության հետ պետք է համաձայնության գալ այն վերանորոգելու մասին), Ջորամուտ, Բագրատաշեն
- Իրանի հետ՝ Ագարակ/Մեղրի:

Ուղևորատար ծառայությունների տեսանկյունից նշենք, որ ներկայումս Երևան–Ստամբուլ գծով ծառայությունները մատուցվում են թուրքական կազմակերպությունների կողմից: Այս ծառայությունները մատուցվում են Հայաստանի օրենսդրության խախտմամբ, քանի որ մրցակցային տենդերների կազմակերպումն անհնար է Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով:

Բեռնափոխադրումները Վրաստանի միջով հիմնականում իրա-

կանացվում են դեպի Ռուսաստան և այլ ԱՊՀ երկրներ, ինչպես նաև դեպի Եվրոպա (ծովով) և Թուրքիա: Իրանի միջով անցնող փոխադրումների նպատակակետը Միջին և Մերձավոր Արևելքն է, արաբական և այլ երկրները: Միջազգային ճանապարհային փոխադրումների (ՏԻՐ) համակարգում աշխատող թուրքական բեռնատարներն ունեն Վրաստանից մուտք գործելու թույլտվություն, սակայն հայկական բեռնատարները Թուրքիա մտնելու թույլտվություն չունեն: Երևանի Կարմիր Բլուր կայարանում կա բեռնարկղերի վերաբեռնման ինտերմոդալ բեռնահամալիր:

Ներկայումս պլանավորվում է Երևանի կամ Գյումրիի մոտ մեծ և արդյունավետ աշխատող ինտերմոդալ բեռնահամալիրի ստեղծում, որը բոլոր փոխադրողներին, բեռնափոխադրողներին և բեռնափոխադրող ընկերություններին կընձեռի նոր հնարավորություններ՝ բարելավելով առևտրային հոսքերը և գործարար միջավայրը: Թուրքիայի հետ սահմանի վերաբացման դեպքում բեռնափոխադրման նոր հնարավորություններ կստեղծվեն դեպի Թուրքիա, Եվրոպա և ավելի հեռու ուղևորվող բեռների համար, քանի որ սևծովյան նավահանգիստների փոխարեն կօգտագործվեն Միջերկրականի նավահանգիստները:

Միջերկրականի նավահանգիստներում մրցակցությունն ավելի մեծ է, հետևաբար՝ սակագներն ավելի ցածր են, և ծառայություններն ավելի հաճախակի են իրականացվում: Թուրքական երկաթգծերի անվածիրի լայնությունը համապատասխանում է եվրոպական ստանդարտներին, և հետևաբար բեռնարկղերի մեծ մասը կարելի է ավտոճանապարհներով փոխադրել Գյումրի, որտեղից էլ՝ ուղղակիորեն բեռնել թուրքական գնացքների վրա: Սահմանից և դեպի սահման երկաթուղով փոխադրվող բեռնարկղերը կլինեն հիմնականում նրանք, որոնք կգերազանցեն ճանապարհային թույլատրելի առավելագույն զանգվածի սահմանները, օրինակ՝ պղնձի խտանյութը:

Եթե Թուրքիայի հետ սահմանը բացվի, դեպի ոչ ԱՊՀ երկրներ միջազգային փոխադրումները, նույնիսկ դեպի Արևելյան Ասիա կատարվողները, կանցնեն Թուրքիայի նավահանգիստներով, որոնք ավելի մոտ են հիմնական համաշխարհային փոխադրման ուղիներին: Սևծովյան նավահանգիստների համեմատությամբ սա ավելի էժան ուղի է՝ մրցակցության ավելի բարձր աստիճանի և ավելի մեծ

նավերով հագեցած լինելու պատճառով: Հաշվի առնելով դեպի իրանական նավահանգիստներ տանող ավելի երկար երկաթուղին և նոր գծի կառուցման ծախսածածկումը՝ ծախսերի կրճատումը շատ փոքր կլինի, եթե, իհարկե, լինի: Այնուամենայնիվ, հնարավոր է մի քանի օր ժամանակ խնայել:

Ներկայումս երկաթգծերի միջոցով Հայաստանի կողմից փոխադրվող բեռների ծավալները խիստ ցածր են՝ համեմատած Թուրքիայի հետ (աղյուսակ 29): Սա հիմնականում պայմանավորված է Հայաստանի ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքով և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների բացակայությամբ: Խիստ ցածր է նաև ուղևորափոխադրումների մակարդակը (աղյուսակ 29): Նշված ցուցանիշները վկայում են նաև Հայաստանում երկաթգծերով փոխադրումների իրականացման արդյունավետության ցածր մակարդակի մասին:

Աղյուսակ 29

Երկաթուղային փոխադրումներ

		2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Բեռնափոխադրումներ, մլն տ/կմ	Հայաստան	451.8	529.2	678.2	654.1	354	-	-	-
	Թուրքիա	7169	8615	9334	9078	9544	9680	10104	9681
Ուղևորափոխադրումներ, մլն մարդ/կմ	Հայաստան	48.40	41.15	30.02	26.61	-	-	27	-
	Թուրքիա	5204	5878	5163	5036	5277	5553	5097	5374

Ճանապարհային տրանսպորտի ոլորտում ևս Հայաստանի ցուցանիշները խիստ ցածր են Թուրքիայի նույն ցուցանիշներից, ինչը պայմանավորված է նույն խնդիրներով, որոնք առկա են նաև երկաթուղային տրանսպորտի բնագավառում:

Դիտարկենք սահմանի բացման ազդեցությունը տրանսպորտային ծառայությունների տեսանկյունից: Փաստորեն, 1993 թվականից առ այսօր Հայաստանը ցամաքային ճանապարհով արտաքին աշխարհ է դուրս գալիս չորս սահմանադռներով, այն է՝ Բավրայի, Գոգավանի և Բագրատաշենի անցակետերը վրացական հատվածում և Ագարակի կամուրջը՝ իրանական հատվածում: Ու թեև, մինչ օրս Իրանն ու Վրաստանն ապահովել են Հայաստանի ելքն արտաքին աշխարհ, այստեղ ևս կան որոշակի խոչընդոտող հանգամանքներ ի

դեմս ռուս-վրացական լարված հարաբերությունների (2006թ. հունիսից Ռուսաստանը փակել է Վրաստանին հարող Վերին Լարս-Կազբեկի սահմանային անցակետը) և Իրանի՝ միջազգային հանրության հետ ունեցած հակասությունների, որոնք անուղղակիորեն հարվածում են նաև Հայաստանին:

Առաջին հանգամանքը, որի վրա պետք է ուշադրություն դարձնել, դա արտահանման և ներմուծման ծախսերի կառուցվածքում տրանսպորտային ծախսերի բարձր տեսակարար կշիռն է: Այսպես, ըստ Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC)՝ հայ-թուրքական սահմանի բացման դեպքում կարելի է ակնկալել տրանսպորտային ծախսերի նվազում, ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանը կգերադասի Թուրքիայի ճանապարհները, այլև վրացական տրանսպորտային ընկերությունները ստիպված կլինեն մրցակցության պայմաններում իջեցնել իրենց ծառայությունների սակագները: AEPLAC-ի կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ արտահանման և ներմուծման ծախսերի կառուցվածքում տրանսպորտային ծախսերի տեսակարար կշիռը կազմում է ապրանքի ինքնարժեքի 20-25%-ը: Մասնավորապես կարճ ժամկետում (1 տարի) հայ-թուրքական սահմանի բացման արդյունքում ակնկալվում է տրանսպորտային ծախսերի տնտեսում՝ դրանք նվազեցնելով 4.1%-ով: Դա կհանգեցնի ներմուծման 4.7% և արտահանման 5.9% աճի: Միջին ժամկետում (մինչև հինգ տարի) Թուրքիա արտահանման ծավալները 2003թ. համեմատությամբ կմեծանան մոտ 17.4 անգամ, իսկ Թուրքիայից ներմուծման ծավալները՝ մոտ 2.3 անգամ[104]:

Համաշխարհային բանկի մասնագետները, հաշվարկելով ավտոմայրուղիով թուրքական ապրանքների Հայաստան ներմուծման տրանսպորտային ծախսերի նվազեցման հնարավորությունը, գտնում են, որ խնայողությունը կկազմի 0.9-1.2 միլիոն դոլարին համարժեք գումար: Ի լրումն գումարային արտահայտության՝ Պոլյակովը շեշտում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև ուղիղ կապի առկայությունը կմեծացնի ապրանքաշրջանառության հնարավորու-

[104] «Հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար»: Ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ, AEPLAC, 2005թ., էջ 31:

թյունները, կանխատեսելիությունը և վստահությունը: Եվս 1.8-2.0 միլիոն դոլարին համարժեք գումարի խնայողություն է կանխատեսվում թուրքական ծովային ուղուց օգտվելու դեպքում: Հարկ է նշել, որ այս ուսումնասիրությունը հիմնվել է 1997-1999 թվականների տվյալների վրա, և Հայաստանից Թուրքիա արտահանման հնարավորությունը չի դիտարկվել, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ տարիներին Հայաստանի թե՛ ներմուծման, թե՛ արտահանման ծավալները բավական ցածր էին[105]:

Համաշխարհային բանկի մեկ այլ փորձագետ նշում է, որ հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում մեկ 20 տոննա կշռող բեռնարկղի տրանսպորտային ծախսը (Փոթի-Երևան) կնվազի 30-50%-ով կամ 450-750 դոլարին համարժեք գումարով[106]: Փաստորեն, փակ սահմանի շնորհիվ Վրաստանը ունի Հայաստան գնացող և եկող բեռների վերգետնյա տեղափոխման մենաշնորհ: Մինչդեռ, սահմանի բացումից հետո, թուրքական երկաթուղու և թուրքական սևծովյան նավահանգիստների կողմից սպասվում է ուժեղ մրցակցություն Հայաստանի արտահանումը և ներմուծումը սպասարկելու համար: Այսպիսով, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացումը կարող է փոքրացնել Վրաստանով անցնող հայկական տարանցիկ բեռնափոխադրության ծավալները, բայց քիչ հավանական է, որ այն կարող է սպառնալ Վրաստանի կարևոր դերին՝ Ադրբեջանի և Սև ծովից դեպի արևելք գտնվող վայրերի միջև տարանցիկ կապ ապահովելու հարցում: Ճանապարհային փոխադրման ծախսերի նվազեցման հիմնական հնարավորություններից է նաև Հայ-վրացական համատեղ ծրագրի ստեղծումը, որը նպատակաուղղված կլինի պայքարելու տարանցիկ փոխադրումների ժամանակ ապօրինի վճարների դեմ, որոնք կազմում են ցամաքային փոխադրման ծախսերի 22-25%-ը[107]:

Հայ-թուրքական սահմանի վերաբացվելու դեպքում փոխադրման ծախսերը կկրճատվեն Միջերկրական ծովի նավահանգիստներ

---

[105] Changing Trade Patterns after conflict resolution in the South Caucasus, Evgeny Polyakov, The World Bank, 2001, April, p. 33.

[106] From Disintegration to Reintegration, Eastern Europe and the Former Soviet Union in International Trade, Harry G. Broadman, The World Bank 2006, p. 237.

[107] Georgia. An Integrated Trade Development Srategy. Report No 27264-GE. The World Bank. November 2003, p. 31.

մուտք գործելու միջոցով: Դրա հետևանքով ցամաքային ծախսերը կնվազեն մոտ 1/3-ով, իսկ ծովային սակագները կհավասարվեն Միջերկրական ծովի միջին ծովային սակագներին: Ավելին, Միջերկրական ծովի նավահանգիստները ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քան սևծովյան նավահանգիստները: Խնդիրը կայանում է նրանում, որ սևծովյան նավահանգիստները հնարավորություն չունեն սպասարկելու օվկիանոսային կոնտեյներատարներ: Սահմանի բացումը Վրաստանին կստիպի իջեցնել բեռնափոխադրման ծառայությունների գները, Հայաստանը կստանա նաև Միջերկրական ծովի նավահանգիստները օգտագործելու հնարավորություն[108]: Սահմանի վերաբացման տնտեսական հետևանքները կլինեն շատ մեծ Հայաստանի և Ադրբեջանի համար, և կարող են նվազեցնել Հայաստանի արտահանման փոխադրման ծախսերը մոտ կեսով:

Բացի այդ, թուրքական ապրանքները Ստամբուլից 20 տոննա տարողությամբ բեռնատար ավտոմեքենայով Թուրքիա-Վրաստան-Հայաստան ճանապարհով բերելու արժեքը կազմում է 3000-3500 դոլար, որից 300-400 դոլարը բաժին է ընկնում Վրաստանի տարածքով բերելուն: Բեռնափոխադրումը տևում է յոթ օր, որից երկու օրն անցնում է Վրաստանի ճանապարհով: Հետևաբար հայ-թուրքական սահմանի բացման դեպքում բեռնափոխադրման գինը կնվազի մոտավորապես 10%-ով (1 տոննայի բեռնափոխադրման արժեքը կնվազի 15 դոլարով), ինչպես նաև կխնայվի երկու օր:

Եթե Հայաստանն իր բեռնափոխադրումների համար իրավունք ստանա օգտվելու թուրքական նավահանգիստներից, ապա Վրաստանը կկորցնի իր տարանցիկ եկամուտների մի մասը: Կորուստները զգալի կլինեն բեռնարկղային փոխադրումների գծով, քանզի խմբակային բեռների գերակշիռ մասը կշարունակի փոխադրվել վրացական երկաթուղային և ծովային ուղիներով, հատկապես, որ թուրքական երկաթուղիներն իրենց տեխնիկական թերբեռնվածության պատճառով պիտանի չեն մեծածավալ բեռնափոխադրումների համար: Վրաստանի տարանցիկ եկամուտների ենթադրյալ կորուստները կկազմեն 5,6-7,4 միլիոն դոլար կամ վերջինիս վճարային

[108] «Հայ-Թուրքական սահմանի վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար», AEPLAC,2005, էջ 7:

հաշվեկշռի բեռնային ծառայությունների գծով ավելցուկի 16-21%-ը: Եվ որպես հետևանք՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ավտոճանապարհային բեռնափոխադրումների արժեքը կիսով չափ կնվազի: Թուրքիայից Հայաստան ներմուծումների գծով տրանսպորտային խնայողությունները կկազմեն 0,6-1,2 միլիոն դոլար՝ կախված առևտրի ծավալներից: Իսկ ահա Հայաստանից Թուրքիա կատարվելիք արտահանումների գծով տրանսպորտային խնայողությունները չնչին կլինեն, քանի դեռ արտահանման ծավալներն աննշան են:

Հայ-թուրքական սահմանի վերաբացումը միանշանակ ունի տրանսպորտային կարևոր նշանակություն: Այն այլընտրանքային ելք է դեպի երրորդ երկրներ, արտաքին աշխարհ, և այս առումով կվերանա վրացական ճանապարհի «մենաշնորհը», որը նաև բավականին թանկ է: Այսպես, ԱՄՆ-ից Փոթի կամ Բաթումի բեռների տեղափոխումը նույն գինն ունի, ինչ Փոթիից կամ Բաթումիից մինչև ՀՀ Այրում երկաթուղային կայարան: Տրանսպորտային ծախսերի նվազման հետ կապված չիրագործված ավելցուկը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչքան է կազմում թուրքական ապրանքները Վրաստանի ճանապարհով Հայաստան ներմուծելու հավելյալ ծախսը: Պաշտոնապես գնային քաղաքականությունը չի վերանայվել, և այն ենթակա է փոփոխման միայն վառելանյութերի գների բարձրացման ազդեցությամբ: Սակայն վրացական կողմը վերացրել է տարանցիկ հայտարարագիրը, որը մեկ շարժական միավորի համար 100-150 դոլարին համարժեք գումար էր կազմում: Հաջորդ քայլով վրացական իշխանությունները չեղյալ հայտարարեցին նաև ճանապարհային հարկը, որն էլ ավելի նշանակալից գումար էր կազմում՝ 300 դոլար: Այս ամենին հարկ է ավելացնել, որ իսպառ վերացել են կաշառակերության դեպքերը ճանապարհային ոստիկանության և այլ պետական մարմինների կողմից, որոնք գումարային առումով կազմում էին տրանսպորտային ծախսերի առնվազն 10-15%-ը: Ակնհայտ է նաև այն, որ Գյումրի-Կարս երկաթուղու գործարկման դեպքում ՀՀ արտահանվող-ներկրվող բեռներն առավել նպատակահարմար կլինի տեղափոխել Թուրքիայի Միջերկրական ծովի նավահանգիստներից, որովհետև այստեղ առկա են օվկիանոսային խոշոր կոնտեյներներ՝ ի տարբերություն Սև ծովի, որտեղ տեխնիկապես դա անհնար է: Իսկ մեկ միավոր պայմանա-

կան բեռի տեղափոխման դեպքում տարբերությունը կկազմի 6-7 անգամ: Այսպես, Փոթիից ֆրանսիական Մարսել նավահանգիստ մեկ կոնտեյների տեղափոխման ծախսը կազմում է 750-800 դոլար, թուրքական միջերկրածովյան նավահանգստից՝150-180 դոլար: Եթե Հայաստանն իր բեռնափոխադրումների համար իրավունք ստանա օգտվելու թուրքական նավահանգիստներից, ապա Վրաստանը կկորցնի իր տարանցիկ եկամուտների մի մասը: Կորուստները զգալի կլինեն բեռնարկղային փոխադրումների գծով, քանզի խմբակային բեռների գերակշիռ մասը կշարունակի փոխադրվել վրացական երկաթուղային և ծովային ուղիներով, հատկապես, որ թուրքական երկաթուղիներն իրենց տեխնիկական թերբեռնվածության պատճառով պիտանի չեն մեծածավալ բեռնափոխադրումների համար: Վրաստանի տարանցիկ եկամուտների ենթադրյալ կորուստները կկազմեն 5,6-7,4 միլիոն դոլար կամ վերջինիս վճարային հաշվեկշռի բեռնային ծառայությունների գծով ավելցուկի 16-21%-ը: Եվ որպես հետևանք՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ավտոճանապարհային բեռնափոխադրումների արժեքը կիսով չափ կնվազի: Թուրքիայից Հայաստան ներմուծումների գծով տրանսպորտային խնայողությունները կկազմեն 0,6-1,2 միլիոն դոլար[109]՝ կախված առևտրի ծավալներից: Իսկ ահա Հայաստանից Թուրքիա կատարվելիք արտահանումների գծով տրանսպորտային խնայողությունները չնչին կլինեն, քանի դեռ արտահանման ծավալներն աննշան են:

Փաստորեն, վերլուծությունը ցույց է տալիս, որ բեռնափոխադրումների ոլորտը Հայաստանի ծառայություններից միակ ոլորտն է, որի վրա հայ-թուրքական սահմանի բացումը կազդի հենց կարճաժամկետ ժամանակահատվածում: Սահմանի վերաբացման արդյունքում էապես կնվազեն ՀՀ-ից արտահանվող և ՀՀ ներկրվող բեռների տեղափոխման ծախսերը: Տարբեր հաշվարկներով այն կկազմի 30-40%: Բացի այդ, Հայաստանը կարող է էական դերակատարում ունենալ տարածաշրջանում երկաթուղային բեռնափոխադրումների տեսանկյունից, սակայն դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է վերացնել ոլորտում առկա խնդիրները՝ շարժակազմի

[109] Evgeny Polyakov “Changing Trade Patterns after Conflict Resolution in the South Caucasus”, 44 pages, World Bank, Poverty Reduction and Economic Management Sector Unit, April 2001.

և երկաթգծի ոչ բարվոք վիճակ, սպասարկման որակ և այլն:

Անդրադառնալով **զբոսաշրջության** ոլորտին՝ նշենք, որ 2009թ. տնտեսական ճգնաժամը Հայաստանում 2.5 անգամ ավելի խորն է, քան Թուրքիայում (2009թ. առաջին 8 ամիսներին Հայաստանում տնտեսական անկումը կազմել է 18.4%, իսկ Թուրքիայում՝ 7%), Թուրքիայի տնտեսությունն անհամեմատ ավելի բարվոք վիճակում է և շատ ավելի լավ է կառավարվում, պետք է ենթադրել, որ Հայաստանի վիճակն էլ ավելի է վատթարացել: Ցավալին այն է, որ ծառայությունների տեսակարար կշիռը Հայաստանում (38%) ավելի ցածր է, քան Թուրքիայում (51%): Չնայած թվում էր, թե գոնե այստեղ մենք համեմատական առավելություն ունենք: Օրինակ՝ 7 մլն-ոց սփյուռքի առկայությունը: Այդուհանդերձ, յուրաքանչյուր տարի Հայաստան է ժամանում 0.5 մլն զբոսաշրջիկ, իսկ Թուրքիա՝ 27 մլն: Ընդ որում՝ վերջին տարիներին մոտ 50 հազ. ՀՀ քաղաքացիներ այցելում են Թուրքիա, իսկ Թուրքիայից հանդիպակաց հոսքը գրեթե բացակայում է, միայն 2006թ. Թուրքիայից զբոսաշրջիկների առաջին խումբը այցելեց Հայաստան՝ 59 հոգի, իսկ հետագա տարիներին այդ թիվը մի փոքր ավելացել է՝ 2008թ. կազմելով 540 հոգի: Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի տվյալներով 2002-2009թթ. Թուրքիա այցելած Հայաստանի քաղաքացիների թիվը սկսել է աճել (2009թ. փետրվարին Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարությունը զբոսաշրջության նպատակով Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիներին ներառել է արտոնություններ ունեցող զբոսաշրջիկների շարքում):

Չի բացառվում, որ սահմանի բացման պարագայում Թուրքիայից Հայաստան զբոսաշրջիկների հոսքը մեծանա: Թուրքիայում բնակչության մի զգալի մասը այս կամ այն կերպ կապված է հայկական մշակույթի հետ, սակայն այդ մասին բարձրաձայնելը այնտեղ ընդունված չէ: Այնտեղ մոտ 60 հազար հայեր են ապրում, բացի այդ՝ մի զգալի հատված բռնի մահմեդականացված հայերի սերունդներն են, որոնք իրենց ծագումի մասին բարձրաձայն չեն խոսում, բայց, հավանաբար, կցանկանան գալ Հայաստան, և թուրքերի մի զգալի մասն էլ հայ դայակներ են ունեցել, այսինք՝ ծանոթ են հայկական մշակույթին, և այս հատվածը ևս կցանկանա այցելել Հայաստան:

Աղյուսակ 30

Հայաստան-Թուրքիա զբոսաշրջության տվյալները, մարդ/տարի[110]

	Հայաստանից Թուրքիա մեկնած զբոսաշրջիկներ	Թուրքիայից Հայաստան ժամանած զբոսաշրջիկներ
2000	17 549	0
2001	7 080	0
2002	17 572	0
2003	23 118	0
2004	33 097	0
2005	36 648	0
2006	41 692	59
2007	53 142	251
2008	63 855	540
2009	64 982	68
2010	69 323	0

Ընդհանուր առմամբ, տնտեսության կառուցվածքով Հայաստանը Թուրքիայից ետ է մնում 20, իսկ համաշխարհային միջինից՝ 30 տարով: Այնպես որ, հայ-թուրքական սահմանը բացելու դեպքում սկզբնական շրջանում վճարման հաշվեկշռի բացասական մնացորդը կավելանա. սպասվում է, որ 1-2 տարում Թուրքիա այցելող հայերի թիվը (ինչպես բուն Հայաստանից, այնպես էլ սփյուռքից) կավելանա 18-20 անգամ և կանցնի 1 մլն-ի սահմանը: Այդ նույն շրջանում թուրքերի այցելությունները Հայաստան մի քանի տասնյակ հազարից չեն անցնի և բացառապես կապված կլինեն ձեռնարկատիրական գործունեության հետ: Ի թիվս այլ հանգամանքների սա բացատրվում է նաև նրանով, որ Հայաստանի զբոսաշրջության ոլորտը՝ համեմատած Թուրքիայի հետ, մրցունակ չէ:

Թուրքիան ապրանքների և ծառայությունների արտահանումը խրախուսելու համար 1987թ. հիմնել է էքսիմբանկը: էքսիմբանկն աջակցում է արտահանողներին, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրողներին և արտասահմանյան ներդրողներին կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արտահանման վարկավորման ծրագրերի միջոցով: Թուրքիան լայնամասշտաբ

[110] Թուրքիայի վիճակագրական ինստիտուտ, http://www.turkstat.gov.tr/:

ծրագրեր է իրականացնում փոքր և միջին բիզնեսի աջակցության համար, խրախուսում է ներդրումներն առավել թույլ զարգացած շրջաններում: Միայն մեկ օրինակ՝ եթե տուրիստական ուղղվածություն ունեցող ընկերությունը ներդրում է կատարում մեկ շնչի հաշվով $1500 կամ ցածր ՀՆԱ կամ էլ սոցիալ-տնտեսական զարգացման բացասական ինդեքս ունեցող մարզերում, ապա պետությունը էլեկտրաէներգիայի 20-50%-ի չափով աջակցություն է ցուցաբերում այդ ընկերությանը:

Մինչդեռ Հայաստանում նմանատիպ աջակցությունը գրեթե բացակայում է, ինչն էլ բերում է ՀՀ տուրիզմի ոլորտի անմրցունակության: Անհրաժեշտ է վերանայել պետական աջակցության ամբողջ համակարգը, որը ուղղված կլինի հայկական ձեռնարկությունների արդյունավետության և մրցունակության բարձրացմանը:

Իհարկե, հայ-թուրքական սահմանի բացումը խոստանում է նաև Հայաստանում ակտիվացնել զբոսաշրջությունը՝ ավելացնելով թե՛ երկիր այցելող, թե՛ երկրից մեկնող զբոսաշրջիկների թիվը: Ոլորտի մասնագետները և՛ Հայաստանում, և՛ Թուրքիայում սահմանի բացման դեպքում ակնկալում են ոլորտի զարգացում:

Բազմաթիվ մասնագետների գնահատականներով՝ երկրում զբոսաշրջության զարգացմանը խանգարում է ցամաքային ճանապարհների սակավությունը:

Վրաստանով ու Իրանով անցնող Հայաստան բերող ցամաքային ճանապարհներով եկողները շատ չեն, իսկ օդային ճանապարհով գալիս գինը բարձրանում է: Ներկայումս Թուրքիայի արևելյան շրջաններ և հետագայում Հայաստան շրջագայության մեկնող զբոսաշրջիկները՝ սահմանը փակ լինելու պատճառով ստիպված են հանգստից 3-4 օր անցկացնել նաև Վրաստանում: Սահմանի բացումը էական ազդեցություն է ունենալու Հայաստանում զբոսաշրջության զարգացման վրա:

Վերջին մի քանի տարիներին Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը պարբերաբար ավելացել է: Պաշտոնական տվյալներով՝ արտասահմանյան զբոսաշրջությունը 2000-2009 թվականներին ավելացել է 12.7 անգամ: Եթե 2000-ին Հայաստան է այցելել 45 000 զբոսաշրջիկ, ապա 2009-ին նրանց թիվը հասել է 575000-ի:

Անգամ տնտեսական ճգնաժամի պայմաններում 2009թ. 2008-ի համեմատությամբ ավելացել է երկիր այցելած զբոսաշրջիկների թիվը, 2008թ.՝ 558000: Մինչ սահմանը կբացվի, հայ և թուրք գործարարները համագործակցում են ոչ պետական մակարդակով: Մայիսի 14-ին Երևանում տեղի ունեցավ CTS 2010 (Caucasus Travel Show) ամենամյա 10-րդ Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը, որին մասնակցում են թվով 87 ընկերություններ, այդ թվում՝ 13 ընկերություններ Թուրքիայից, 6 ընկերություններ Վրաստանից, 2 ընկերություն Թունիսից, 1 ընկերություն Լեռնային Ղարաբաղից և 65 ընկերություններ Հայաստանի տարբեր մարզերից ու Երևանից:

Կատարված հարցումները ցույց են տալիս, որ հայ-թուրքական սահմանի բացման դեպքում Հայաստանում զբոսաշրջության զարգացման դրական զարգացումների են սպասում նաև տուրոպերատորներն ու այցելություններ կազմակերպող ընկերությունները: Առաջին հերթին ակնկալվում է զբոսաշրջիկների այցելությունների ավելացում Արևմտյան Հայաստան:

Անգամ փակ սահմանի պարագայում հայկական տուրոպերատորները թուրքական ընկերությունների հետ համատեղ տուրեր են կազմակերպում, սակայն սահմանի բացվելու դեպքում այս գործընթացները կակտիվանան:

Հատկապես Հայաստան այցելող սփյուռքահայերի համար ավելի դյուրին կլինի զբոսաշրջային այցելություններ կազմակերպել Արևմտյան Հայաստան:

Այժմ Արևմտյան Հայաստան զբոսաշրջային այցելություններ է կազմակերպում «Նարեկավանք» ընկերությունը: Սահմանի բացման պարագայում նրան կմիանան նաև այլ նոր ընկերություններ: Այդ ընկերությունների կարիքը կլինի, քանի որ շատ մարդիկ կան, ովքեր երազել են, որ սահմանը բացվի, քանի որ Վրաստանի տարածքով չեն գնացել Արևմտյան Հայաստան՝ պատճառաբանելով, որ ճանապարհը վատ է ու երկար:

Փորձենք Հայաստանի և Թուրքիայի զբոսաշրջության ոլորտների SWOT վերլուծություն իրականացնել՝ պարզելու համար համեմատական առավելություններն ու թերությունները:

Հայաստանի զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծություն.

Ուժեղ կողմեր

- գրավիչ բնության և պատմամշակութային հարուստ ժառանգության առկայություն
- երկրի փոքր լինելու հանգամանքը թույլ է տալիս կարճ ժամանակում շատ տեսարժան վայրեր այցելել
- ջերմ և հյուրընկալ ժողովուրդ
- մեծ սփյուռքի առկայություն
- էլեկտրոնային վիզայի հնարավորություն

Թույլ կողմեր

- երկիրը ճանաչված չէ միջազգային հանրության կողմից
- բարձր գնային քաղաքականություն
- սպասարկման ցածր որակ հատկապես ՀՀ մարզերում. հանրային զուգարանների, բարձր սպասարկման մակարդակ ունեցող սննդի օբյեկտների բացակայություն
- ճանապարհների ոչ բարվոք վիճակ
- սպասարկման որակի վերահսկման ստանդարտների գրեթե բացակայություն
- երկրի բրենդի բացակայություն

Հնարավորություններ

- եվրոպական շուկաներից միջին հեռավորություն
- սփյուռքի չօգտագործված ներուժի առկայություն

Վտանգներ

- մրցակից երկրներում տեսարժան վայրերի զարգացվածության բարձր մակարդակ
- սփյուռքի շուկաներից մեծ կախվածություն
- անտառահատումների և լեռնահանքային արդյունաբերության արդյունքում էկոհամակարգի և շրջակա միջավայրի վնասում
- հարևան երկրների հետ քաղաքական կոնֆլիկտի առկայություն:

Թուրքիայի զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծություն.

Ուժեղ կողմեր

- գրավիչ բնություն և ծովափ, ինչպես նաև պատմական ու ճարտարապետական յուրօրինակ հուշարձանների առկայություն

- սպասարկման ոլորտում նոու-հաուների ներդրում
- բարձրորակ և լավ վերապատրաստված աշխատանքային ռեսուրսներ
- պետական տարբեր ծրագրերով ոլորտին աջակցության տրամադրում

Թույլ կողմեր

- միջինում գները ավելի ցածր են, քան հարևան երկրներում համապատասխան ծառայություններինը, և առկա է կոշտ գնային քաղաքականություն ոլորտի ձեռնարկությունների միջև, ինչի արդյունքում էլ ոլորտի շահութաբերությունը պոտենցիալից շատ ավելի ցածր է լինում
- ոլորտի առավել մանր ձեռնարկությունները հաճախ են իրականացնում չգրանցված գործարքներ և խուսափում հարկերից

Հնարավորություններ

- ոլորտում չօգտագործված ներուժը հսկայական է ոչ միայն ծովափնյա զբոսաշրջության առումով, այլև ձմեռային սպորտի տեսակների, գոլֆի, նավավարության և այլ տեսակների առումով
- երիտասարդ և բանիմաց կադրերի առկայություն
- 2010թ. Ստամբուլը համարվեց Եվրոպայի մշակության մայրաքաղաք

Վտանգներ

- թուրքական լիրայի արժևորման միտումը
- ալկոհոլի օգտագործման համար հատուկ բարձր հարկի առկայությունը
- բնակության վայրի ամենօրյա ծախսի վրա 3% հարկի կիրառումը

Փաստորեն, Թուրքիայի զբոսաշրջությունը մտահոգիչ է գնային ու որակական հարաբերական առավելությունների առումով, ինչը կարող է վնասել Հայաստանի զբոսաշրջության հատվածին ու դրան սպասարկող ծառայությունների ճյուղերին: Զբոսաշրջիկների արտահոսքը, զուգակցվելով արտարժույթի արտահոսքի հետ, կարող է նաև լրացուցիչ ճնշում ստեղծել վճարային հաշվեկշռի վրա:

Թուրքիայի կառավարությունը խթաններ է շնորհում զբոսա-

շրջային ներդրումների համար, զբոսաշրջության համար տրամադրում է ենթակառուցվածքային ու հասարակական ծառայություններ, սահմանում է զբոսաշրջային բարձր ներուժ ունեցող գոտիները, որոշումներով հրապարակում է ընտրված զբոսաշրջային կենտրոնները կամ տարածքները, մշակում և հաստատում է հողօգտագործման պլանները, անց է կացնում շրջակա միջավայրի վերահսկողություններ, գովազդում է երկիրը արտասահմանում, կատարում է հետազոտություններ, կազմում է վիճակագրություն և կազմակերպում մասնագիտական վերապատրաստում: Հայաստանում նման ակտիվ միջոցառումները դեռևս այնքան էլ տարածված չեն, իսկ առկա միջոցառումներն էլ դեռ չեն տալիս անհրաժեշտ արդյունք:

Հետևաբար՝ առկա գնային և որակական խնդիրների ներկա իրավիճակի պահպանումը սահմանի բացման պարագայում կարող է նպաստել ոլորտի լուրջ կորուստների: Ուստի անհրաժեշտ է խիստ միջոցառումներ ձեռնարկել Հայաստանում զբոսաշրջության ոլորտի և առհասարակ սպասարկման ոլորտի որակի բարելավման ուղղությամբ. ճանապարհային բարվոք վիճակի ապահովում, սպասարկման որակի վերահսկման ստանդարտների ներդրում և վերահսկում, հանրային զուգարանների ցանցի ընդլայնում, պատմամշակութային արժեքների ներկայացման մակարդակի բարձրացում, երկրի բրենդի կառուցում և միջազգային լայն հասարակությանը Հայաստանի մասին իրազեկում:

ԳԼՈՒԽ 4

ԹՈՒՐՔԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ (ԵՄ) ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

4.1. Թուրքիայի և ՀՀ տնտեսությունների համեմատականները ԵՄ ինտեգրման համատեքստում

Սկսած 1980-ական թվականներից համաշխարհային գլոբալացման գործընթացների շրջանակներում Թուրքիան կյանքի է կոչում բացության և տնտեսական աճի ռազմավարությունը՝ հենված արտահանման ներուժի աճի վրա: 1980թ. հունվարին ներդրված է կառուցվածքային վերակառուցման ծրագիրը, որով վերացվեց արժութային փոխարժեքի ֆիքսված ռեժիմը և անցում կատարվեց արժույթի ազատ փոխարկելիությանը: Աստիճանաբար վերացվեցին ներմուծման վրա դրված պաշտպանական տաբեր միջոցները: Միևնույն ժամանակ, զգալի կերպով հեշտացվեց ներդրման գործընթացը և արտարժութային միջոցների փոխանցումները: Ներմուծման ոլորտում սահմանափակումների վերացմանը զուգընթաց Թուրքիայի տնտեսությունում և արտաքին առևտրում տպավորիչ փոփոխություններ տեղի ունեցան, որոնց մեջ առավել կարևորներից է այն, որ օտարերկրյա ներդրումների ներհոսքի կտրուկ աճ նկատվեց:

Այս բոլոր հաջողությունների հետ մեկտեղ արդեն մի քանի տասնամյակ շարունակվում է Եվրամիությանը Թուրքիայի անդամակցման խնդիրը չլուծված մնալ: Շարունակվում է բանակցությունների գործընթացը, իրականացվում են հանդիպումներ, խորհրդատվություններ, իսկ Թուրքիայում շարունակվում է բարեփոխումներ իրականացվել և տնտեսության և քաղաքականության ոլորտներում, չնայած որ ԵՄ-ի կողմից միշտ էլ գտնվում են մերժման նոր պատճառներ: Եվ թվում է արդեն, որ այս գործընթացը ավարտ չի

ունենա[111]: Հարկ է նշել, որ դեռևս 1996թ. ԵՄ-ի հետ Թուրքիան ստեղծեց Մաքսային միություն, որի շրջանակներում նշանակալիորեն իջեցվեցին ներմուծման մաքսադրույքները, ապահովվեց արդյունաբերական ապրանքների ազատ շրջանառություն ԵՄ երկրների և Թուրքիայի միջև, իսկ երրորդ երկրներից ներմուծված ապրանքների համար կիրառվում է միասնական մաքսային դրույքաչափեր: Իսկ արդեն 1999թ. դեկտեմբերի 10-11 Հելսինկիում տեղի ունեցած Եվրամիության նստաշրջանի ժամանակ Թուրքիան ճանաչվեց որպես ԵՄ անդամակցման լիիրավ անդամի թեկնածու, իսկ արդեն 2004թ., դեկտեմբերի 16-17-ին տեղի ունեցավ ամենանշանակալի շրջադարձային իրադարձությունը Թուրքիա-Եվրամիություն ավելի քան 40 տարվա հարաբերությունների պատմության մեջ. որոշում ընդունվեց 2005թ. հոկտեմբերի 3-ից բանակցություններ տանել Թուրքիայի հետ, որպես լիիրավ անդամի[112]: Սակայն, եվրոպացի քաղաքական գործիչները հետքայլի հնարավորություն են թողել իրենց համար և Թուրքիայի հետ բանակցությունների գործընթացին վերջնաժամկետ չեն սահմանել: Թուրքիան այս ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել իր տնտեսության կառուցվածքը, ստանդարտները և իրավական բազան համապատասխանեցնել ԵՄ պահանջներին, որի վառ օրինակ է այն, որ ԵՄ ներկայացվող պահանջներին ներդաշնակեցվել են Արտոնագրային օրենքը և սեփականաշնորհման և շուկայական կարգավորման օրենսդրության դրույթները: Ինչ վերաբերում Հայաստանին, ապա վերջինիս ամբողջական և լիիրավ ինտեգրումը ԵՄ տնտեսությանը բարդ և դժվարին գործընթաց է, որի իրականացումը, նույնիսկ քաղաքական կամքի դրսևորման դեպքում, կարող է տասնամյակներ տևել: Համագործակցությունը պետք է կայանա ՀՀ-ի համար բարեփոխումների և շուկայական տնտեսությանը առավել ճիշտ և գրագետ անցնելու ճանապարհով, և այն բոլոր բացթողումներն ու սխալները, որոնք արվեցին անկախացումից հետո, փորձի բացակայության և իրավիճակի նախատիպը չունենալու պատճա-

---

[111] Мария Савельева “Экономика Турции и ее соответствие критериям ЕС” http://www.eip.ru/main/view3773.

[112] “Турция, 2008г. Центр по развитию экспорта” стр. 3, http://www.tcp.gov.tr/english/pubs/turkey_rusca.pdf.

ռով, պետք է ուղղվեն և այլևս չկրկնվեն, որի համար անհրաժեշտ են՝ ազատականացված տնտեսություն, քաղաքական և տնտեսական կայուն պայմաններ, շուկայական սկզբունքներ ունեցող մաքսային և հարկային օրենսդրություն, ինչպես նաև փոխշահավետ տնտեսական պայմաններ՝ ինչպես առանձին ձեռնարկությունների, այնպես էլ ընդհանուր մակրո մակարդակով: Եվրոպական հարևանության ծրագրում տնտեսական գործոնի հստակ շեշտադրումը ապահով են դարձնում ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունների խորացումը, իսկ ինտեգրացիոն տեսակետից Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցությունը կարևոր էր Եվրոպական Միության հետ հարաբերությունների առավել զարգացման համար: Ինչպես ապացուցեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների փորձը «Ճանապարհը դեպի Եվրոպական միություն անցնում է Եվրոպայի խորհրդով»: Սա նաև հաստատվում է Եվրոպական Միության Եվրոպական հարևանության Գործողությունների ծրագրի կետերով, որտեղ կարևոր տեղ է հատկացված Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարմանը[113]:

Արդեն համագործակցային հիմքի վրա խարսխված նոր հարաբերությունները կանոնակարգվեցին 1996թ. ստորագրված և 1999թ. ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության համաձայնագրով (Partnership and Cooperation Agreement), որը Եվրամիություն-ՀՀ փոխհարաբերությունների միակ առանցքային փաստաթուղթն էր մինչ Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում: Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը կնքվել է մի կողմից Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից Եվրոպական Համագործակցությունների ու դրանց անդամ պետությունների միջև և ստորագրվել է 1996թ. ապրիլի 22-ին, Լյուքսեմբուրգում, Եվրամիության շրջանակներում Հարավկովկասյան երեք պետությունների ղեկավարների հանդիպման ընթացքում: 1997թ. դեկտեմբերի 1-ից գործում էր Առևտրի և առևտրային հարցերի վերաբերյալ ժամա-

[113] See ENP Armenia Action plan at ENP Action Plans and Country Reports of European Comission's Portal http://ec.europa.eu/world/enp/documents_en.htm#2.

նակավոր համաձայնագիրը (Interim Agreement), որը մինչև 1999թ. Գործընկերության և համագործակցության համաձայնագրի ուժի մեջ մտնելը, Հայաստանի և Եվրոպական Միության հարաբերությունները կանոնակարգող հիմնական փաստաթուղթն էր:

2000-2006թթ. Գործընկերության և համագործակցության համաձայնագրին զուգահեռ և ավելի նեղ մասշտաբով Tacis ծրագրերի իրավական կարգավորումն ու հիմնավորումը հիմնված է երկրի ռազմավարական փաստաթղթի վրա, որի հիման վրա մշակվում է Ինդիկատիվ ծրագիրը, իսկ Ինդիկատիվ ծրագրի հիման վրա՝ Գործողությունների ծրագիրը:

Երկրի ռազմավարական փաստաթուղթը Եվրոպական հանձնաժողովի կողմից Հայաստանին տրամադրվող օժանդակության ռազմավարական շարադրանքն է: Այն նախանշում է Եվրոպական Հանձնաժողովի համագործակցության նպատակները, ուրվագծում է քաղաքականությունը և իրականացման գերակա բնագավառները՝ հիմնվելով քաղաքականության օրակարգի, քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի հիմնավոր վերլուծությունների վրա: Փաստորեն, երկրի ռազմավարական փաստաթուղթը նպաստում է համագործակցության առավել հաջողված ծրագրավորման գործընթացին, բարելավում է դոնորների համակարգումը և միմյանց գործողությունները լրացնելու հնարավորությունները, ինչպես նաև ներդաշնակեցնում է արտաքին աջակցության քաղաքականությունը և Եվրամիություն/Եվրոպական հանձնաժողովի այլ քաղաքականությունները:

Երկրի ռազմավարական փաստաթուղթը բաղկացած է վեց բաժիններից.

1) Եվրամիություն/Եվրոպական հանձնաժողովի քաղաքականության խնդիրները,
2) Հայաստանի քաղաքականության օրակարգը,
3) Երկրում տիրող իրավիճակի վերլուծությունը,
4) Անցյալ, ընթացիկ և ծրագրված համագործակցության խնդիրների ամփոփումը,
5) Եվրամիություն/Եվրոպական հանձնաժողովի միջամտության ռազմավարությունը,
6) Tacis-ի Ազգային ինդիկատիվ ծրագիրը (ԻԾ):

Ներկայումս ՀՀ կառավարությունը Եվրոպական հանձնաժողովի կողմից և Tacis ծրագրի շրջանակներում իրականացվող AEPLAC ծրագրի միջոցով փորձում է կատարել գլոբալ իրավական դաշտի բարեփոխումներ, մասնավորապես ողջ հայկական օրենսդրական դաշտը համապատասխանեցնել և զարգացնել եվրոպական օրենսդրական դաշտին համահունչ. այլ խոսքերով, AEPLAC-ը մեր օրենսդրությունը համահարթեցնում է եվրոպական ընդհանուր օրենսդրությանը՝ acquis communataire-ին: Այս ամենի արդյունքում մշակվեց գլոբալ բարեփոխումների աննախադեպ և հսկայական ջանքեր պահանջող մի ծրագիր, որն արտացոլեց այս ամենի գործնական պատկերը. ծրագիրը ստեղծվեց և հաստատվեց ՀՀ կառավարության կողմից 2006թ. մարտի 23-ին և կոչվեց Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագիր: Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագիրն իր մեջ արտացոլում է այն կոնկրետ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են օրենսդրական բարեփոխումների համար: Ազգային ծրագրում մանրամասն ներկայացվում են ՀՀ այն օրենքներն ու իրավական ակտերը, որոնք միանշանակ բարեփոխումների կարիք ունեն, միաժամանակ զուգահեռաբար ներկայացվում են եվրոպական այն օրենքներն ու կոնվենցիաները, որոնք գործում են Եվրամիությունում ու ներկայացվում են հնարավոր համահարթեցման եզրերը:

2003թ. մարտի 11-ին Եվրոպական հանձնաժողովը հաստատեց հաջորդ տասնամյակի համար հարաբերությունների նոր շրջանակ[114] ԱՊՀ երկրների (Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) և Միջերկրական ծովի հարավային տարածաշրջանի երկրների (Ալժիր, Թունիս, Եգիպտոս, Լիբանան, Պաղեստին, Իսրայել, Հորդանան, Մարոկկո, Լիբիա) հետ, որոնք ներկայումս չունեն անդամակցության հեռանկար, սակայն ունեն ընդհանուր սահմաններ Եվրամիության հետ: Եվրոպական հարևանության քաղաքականությունը, ըստ էության, չի նախատեսում

[114] European Commission. “Communication on Wider Europe Neighbourhood: A New Framework for Relations with Our Eastern and Southern Neighbours”, COM (2003) 104 final.

աջակցության տրամադրման անկյունաքարային փոփոխություններ, այլ ենթադրում է առավել նպատակաուղղված ու արդյունավետ աջակցության միջոցով ստեղծված իրավիճակի, առկա կարողությունների և հնարավոր բարեփոխումների առավել կատարյալ համադրում: Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում երկկողմ համագործակցության ոլորտները համարյա անսահմանափակ են: Այս ոլորտներում իրականացվելիք համագործակցությունն ու Եվրամիության կողմից տրամադրվող աջակցությունը, միանշանակ մեծ դեր կխաղան տնտեսության և մասնավորապես վերոնշյալ ոլորտներում էական բարեփոխումների իրականացման գործընթացներում: Սակայն վերոնշյալ ոլորտներում իրականացվող համագործակցության համար էական նշանակություն ունեն կոնկրետ երկրների հետ հարաբերությունները, ինչպես նաև տվյալ երկրի տնտեսական իրադրությունը: 2004թ. որոշում կայացվեց Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ նաև ընդգրկել Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին, քանի որ վերջիններս ունեն ընդհանուր ցամաքային կամ ծովային սահման Եվրամիության անդամ երկրներ Բուլղարիայի, Ռումինիայի և թեկնածու երկիր Թուրքիայի հետ: Ինչպես նշում է Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների և Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդները. «Մենք հավատացած ենք, որ մեր նվաճած կայունությունն ու բարգավաճումը կարող ենք և ուզում ենք կիսել մեր հարևանների հետ: Գոյություն ունեն շատ կոնկրետ եղանակներ, որոնք համատեղ աշխատանքի շնորհիվ մեզ թույլ կտան օգնել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի նման երկրներին նույն արտոնություններն առաջարկել իրենց բնակչությանը: Ահա թե ինչու ենք Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ներառել նաև Հարավային Կովկասը»[115]:

Հետևելով պաշտոնական հայտարարություններին կարող ենք ասել, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցման գործընթացի հետաձգման գլխավոր պատճառներն են մարդու իրավունքների ոտնահարումը և տնտեսական հետամնացությունը: Բայց մի կողմ թողնելով մարդու

[115] Ա. Գրիգորյան, Հայաստանը Եվրամիության նոր հարևանն է: http://www.armworld.am/detail.php?paperid=1061&pageid=36801&lang=

իրավունքները, փորձենք անդրադառնալ տնտեսական բնույթի հիմնախնդիրներին: Եվրոպացիները գտնում են, որ Թուրքիան բավարար մակարդակով զարգացած չէ նույնիսկ համեմատած Բուլղարիայի և Ռումինիայի հետ, որոնք նորանդամ երկրների շարքին գտնվելով դեռևս շատ տնտեսական բնագավառներում անելիքներ ունեն: Արդյո՞ք դա այդպես է, թե՞ ուղղակի եվրոպացիները երկակի ստանդարտներով են կողմնորոշվում, պետք է դեռ պարզել:

Հիշեցնենք, որ ինչպես Թուրքիայի (կամ Հայաստանի, չնայած որ վերջինս անդամակցության թեկնածու չի հանդիսանում) անդամակցման, այնպես էլ մնացած բոլոր թեկնածու երկրների համար անհրաժեշտ է լրիվ համապատասխանություն կոպենհագենյան չափանիշներին, որոնց մեջ հիմնական տնտեսական բովանդակություն ունեն միայն երկուսը՝ դրանցից առաջինն է գործող շուկայական տնտեսության առկայությունը և երկրորդը՝ միության շրջանակներում շուկայական ուժերի հետ համագործակցության և մրցակցության ընդունակությունը: Իրականացվող բարեփոխումների արդյունքները գնահատում, առաջընթացը վերլուծում, ինչպես նաև հայտնաբերում է իրականացվող վերափոխումներում առկա հիմնախնդիրները և թերացումները Եվրահանձնաժողովը, որն իր հերթին հրատարակում է տարեկան զեկույց, ոչ միայն Թուրքիայի, այլ յուրաքանչյուր երկրի մասով: Եթե ուսումնասիրենք 2005թ. զեկույցը Թուրքիայի վերաբերյալ և այն համեմատենք այլ երկրների ցուցանիշների հետ, հատկապես զեկույցի առաջին մասում ներառված տնտեսական վիճակի մասին տվյալները, կկարողանանք ոչ միայն գնահատել Թուրքիայի ներկայիս տնտեսական վիճակը, այլ նաև պատկերացում կազմել ինտեգրման գործընթացներում առկա հաջողությունների և առաջընթացի մասին: Թուրքիայի ցուցանիշների կողքին կներկայացնենք նաև ՀՀ համապատասխան ցուցանիշները, այդպիսով առավել լավ պատկերացնելով ՀՀ ապագա կարգավիճակը ինչպես ԵՄ համագործակցության զարգացման համատեքստում, այնպես էլ որպես Թուրքիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնել փորձող գործընկերոջ:

Եվրաինտեգրման գործընթացների շրջանակներում հիմնականում ուշադրություն է դարձվում մի շարք մակրոտնտեսական

ցուցանիշների վրա, որոնց առումով Թուրքիան նշանակալիորեն զիջում է եվրոպական միջին մակարդակին: Միևնույն ժամանակ հնարավոր չէ չնկատել, որ Թուրքիայի տնտեսությունը անընդհատ աճում է, և այդ աճը տեսանելի է կոնկրետ թվերի մեջ: Եվրահանձնաժողովը հաստատել է, որ Թուրքիայի տնտեսական ներուժը զարգանում է ֆինանսական համակարգի կայունությամբ և խիստ արժութային քաղաքականությամբ: 2004թ. կեսերին մակրոտնտեսական ցուցանիշները դրական արդյունք ունեցան հերթական կառուցվածքային վերափոխումների և արդյունավետ հարկային և ֆինանսական քաղաքականության արդյունքում: Մասնավորապես, եթե 2003թ. ՀՆԱ հավելաճը կազմել էր 5.27%, ապա 2004թ. այն կազմել էր 9.36%, 2005թ.՝ 8.4%, 2006թ.՝ 6.9%, 2007թ. 4.6%, 2008թ.՝ 3.75%[116], ապա 2009թ. այն կազմել է -6.5% (հիմնական գներով և ազգային արժույթի փոխարժեքով հաշվարկած[117]): 2010թ. վիճակը բավականին լավացել է, և տարեկան 8.2% հավելաճի տեմպով /հիմնական գներով և ազգային արժույթի փոխարժեքով հաշվարկած/ Թուրքիան 18-րդն է համաշխարհային մակարդակով, որի միջին ցուցանիշը կազմել է 4.08%: Ի դեպ 2011թ. համար Թուրքիայում կանխատեսվում է 4.6% տնտեսական աճ[118]: Մինչև 2009թ. ՀՀ-ն տնտեսական աճի տեմպերով ոչ միայն հետ չի մնացել Թուրքիայից, այլ գերազանցել է վերջինիս: Այսպես՝ 2003թ. ՀՆԱ հավելաճը կազմել էր 14%, ապա 2004թ. այն կազմել էր 10.5%, 2005թ.՝ 13.9%, 2006թ.՝ 13.2%, 2007թ.՝ 13.8%[119], 2008թ.՝ 6.8%, ապա 2009թ. այն կազմել է -14.4%[120]: 2010թ. տնտեսական աճի տեմպով (2.1%) Հայաստանը մոտ 4 անգամ զիջում է Թուրքիային, ինչը ցույց է տալիս նաև, որ մեր երկրների միջև տնտեսական փոխկապվածությունը գրեթե բացակայում է:

Նվաճված արդյունքները բավականին տպավորիչ են այլ երկրների ցուցանիշների կողքին, մասնավորապես ԱՄՆ ՀՆԱ-ն 2004թ.

---

[116] 2003-2008 տվյալները ըստ http://datafinder.worldbank.org/gdp-growth-annual կայքի:

[117] http://www.economywatch.com/economic-statistics/Turkey/GDP_Growth_Constant_Prices_National_Currency/

[118] http://www.economywatch.com/economic-statistics/Turkey/GDP_Growth_Constant_Prices_National_Currency/

[119] «Հայաստանի Հանրապետությունը թվերով», 2008, ԱՎԾ, էջ 19:

[120] http://armstat.am/am/?nid=126&id=01001&year=2009&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

աճել է 4.2%[121], ՌԴ-ն՝ 7.2%, Մեծ Բրիտանիան՝ 3.1%, Գերմանիան՝ 1.6%, Չինաստանը՝ 10.1%, իսկ 2008թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 0.0%, 5.2%, 0.5%, 1%, 9.6%[122], 2009թ.՝ -2.6%, -7.9%, -4.9%, -4.7%[123], 9.1%[124], 2010թ.՝ 2.7%[125], 3.8%, 1.6%, 3.6%, 10.3[126]: Դատելով վերջինից, կարելի է ասել, որ Թուրքիայի տնտեսությունը շատ դինամիկ զարգացում ունի, այնուհանդերձ վերջին ժամանակներում տեմպերը աստիճանաբար նվազում են: Դա տեղի է ունենում կանխատեսումներին համաձայն, այն պատճառով, որ ճգնաժամից խուսափելու ձգտումը չափից ավելի մեծ է:

Ընդհանուր առմամբ Եվրահանձնաժողովը գտնում է, որ 2004թ. Թուրքիայում առաջընթաց նկատվել է տնտեսության զարգացման գործում: Աստիճանաբար Թուրքիան մոտենում է ԵՄ-ին այնպիսի ցուցանիշների առումով, ինչպիսիք են բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն[127]: Եթե համեմատենք բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշները, ապա կտեսնենք, որ Թուրքիան հետ է մնում գրեթե բոլոր եվրոպական երկրներից, և առաջին հերթին բնակչության համեմատաբար մեծ թվաքանակի հաշվին: Այսպես, 2008թ. գնողունակության համարժեքով հաշվարկված բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշը /11.900 դոլար[128]/ կազմել է ԵՄ միջին մակարդակի 46%-ը, այն դեպքում, որ Բուլղարիայում կազմել է 41%, Ռումինիայում՝ 47%, Լեհաստանում՝ 56%, Լատվիայում՝ 57%, Լիտվայում՝ 62%, Հունգարիայում՝ 64%, Էստոնիայում՝ 67%, Սլովակիայում՝ 72%, Խորվաթիայում՝ 63%, Մակեդոնիայում՝ 33%[129]: Չնայած 2010թ. գնողունակության համարժեքով հաշվարկված

---

[121] Eurostatistics - Data for short-term economic analysis - No 2/2006 http://epp.eurostat.cec.eu.int/cache/ITY_OFFPUB/KS-CZ-05-004/EN/KS-CZ-05-004-EN.PDF

[122] 2008 տվյալները ըստ http://datafinder.worldbank.org/gdp-growth-annual, http://www.chinability.com/GDP.htm կայքերի http://www.destatis.de/jetspeed/portal/cms/Sites/destatis/Internet/EN/Content/Statistics/VolkswirtschaftlicheGesamtrechnungen/Inlandsprodukt/Tabellen/Content75/Gesamtwirtschaft,templateId=renderPrint.psml

[124] http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG

[125] http://www.indexmundi.com/united_states/gdp_real_growth_rate.html

[126] http://www.indexmundi.com/china/gdp_real_growth_rate.html

[127] Доклад Еврокомиссии по Турции за 2005 г. (Turkey progress report 2005).

[128] http://www.indexmundi.com/g/g.aspx?c=tu&v=67

[129] http://www.rosbalt.ru/2009/12/16/697766.html

բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշը Թուրքիայում աճել է և դարձել 12,300 դոլար[130], այնուհանդերձ ԵՄ միջին ցուցանիշը ևս աճել է և կազմել 32,700 դոլար[131], այսինքն կազմել է ԵՄ միջին մակարդակի ընդամենը 38%-ը: Չնայած ՀՀ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն (գնողունակության համարժեքով), 2001 թվականի համեմատ (շուրջ 3000 դոլար) բավականին մեծ աճ է ունեցել 2008թ.՝ 6300 դոլար, իսկ 2010թ.՝ 5700 դոլար[132], այնուհանդերձ մոտ 2.5 անգամ փոքր է Թուրքիայի ցուցանիշից, իսկ ԵՄ չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից անհամեմատելի մակարդակի վրա է:

Ճգնաժամային իրավիճակների առաջացման դեմ են ուղղված Թուրքիայում գնաճի ճնշման նպատակ ունեցող գործողությունները, որի ցուցանիշները դրա արդյունքում կտրուկ նվազեցին 21.3%-ից (2003թ.) հասնելով 8.6% (2004թ.), 7.7% (2005թ.), որն ի դեպ վերջին 30 տարվա կտրվածքով ամենացածր ցուցանիշն է եղել/ և միայն 2008թ. կտրուկ աճեց՝ 10%[133]: 2009թ. գնաճի մակարդակը կրճատվել է՝ կազմելով 6.3%, իսկ 2010թ. համեմատաբար աճել է (8.7%[134]): Պետք է նշել, որ գնաճի բարձր տեմպերը եղել են թուրքական տնտեսության հիմնական խնդիրներից մեկը: Ակնհայտ է, որ արագ զարգացող երկրների համար հատկանշական պետք է լինի գնաճի բարձր տեմպերը, իսկ վերջինիս իջեցումը կբերի նաև զարգացման տեմպերի դանդաղեցմանը: Չնայած գնաճի տեմպերի նվազեցմանը այն դեռևս բավականին բարձր է միջին եվրոպական մակարդակի համեմատությամբ, և կարող է համադրվել միայն Լատվիայի, Հունգարիայի և Սլովակիայի տնտեսություններում առկա գնաճի տեմպերի հետ: ՀՀ գնաճի տեմպերը 2004թ. կազմել են 7%, 2005.՝ 0.6%, 2006թ.՝ 2.9%, 2007թ.՝ 4.4%, 2008թ.՝ 9%, 2009թ.՝ 3.7[135]%, 2010թ.՝ 6.9%[136] : 2009 թվականի չորրորդ եռամսյակում արձանագրված գնաճը մեծամասամբ պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ

---

[130] http://www.indexmundi.com/g/g.aspx?c=tu&v=67
[131] http://www.indexmundi.com/european_union/gdp_per_capita_(ppp).html
[132] http://www.indexmundi.com/g/g.aspx?c=am&v=67
[133] Сергей Гриняев, Экономика Турции в условиях глобального экономического кризиса(Аналитический доклад) http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=2107
[134] http://www.indexmundi.com/turkey/inflation_rate_(consumer_prices).html
[135] http://www.cba.am/CBA_SITE/publications/general_monetary_programm.html
[136] http://www.indexmundi.com/armenia/inflation_rate_(consumer_prices).html

ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.8% աճով (նպաստումը գնաճին՝ 3.1%-ային կետ), ինչն էլ, իր հերթին, հիմնականում պայմանավորվել է «Միրգ» և «Բանջարեղեն ու կարտոֆիլ» ապրանքախմբերի գների համապատասխանաբար 35.9% (նպաստումը գնաճին՝ 0.9%-ային կետ) և 44.2% (նպաստումը գնաճին՝ 2.1%-ային կետ) սեզոնային աճով: Ընդ որում, «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գների աճը գերազանցապես 4 ապրանքատեսակների՝ լոլիկի, վարունգի, կանաչ պղպեղի և սմբուկի գների աճի հետևանք էր (նպաստումը գնաճին՝ 4.2%-ային կետ): Միաժամանակ, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների աճը կազմել է համապատասխանաբար 3.0 և 0.7%, որոնց ընդհանուր նպաստումը եռամսյակի գնաճին կազմել է ընդամենը 0.7%-ային կետ: Մակրոտնտեսական գործոններով պայմանավորված գնաճային ճնշումների ազդեցությունն արտահայտվել է նաև բնականոն գնաճի վարքագծում: Հատկանշական է, սակայն, որ բնականոն գնաճը 2009թ. չորրորդ եռամսյակում կազմել է ընդամենը 1.7%1, որի պարագայում 12-ամսյա բնականոն գնաճը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 1.5%-ային կետով՝ կազմելով 5.25%:

Եվ եթե հաշվի առնենք, որ ԵՄ երկրների համար գնաճի միջին մակարդակի տեմպը կազմում է 2.1% (2004թ.) և 3.5 (2008թ.)[137], 1.4% (2009թ.)[138], 1.8% (2010թ.[139]), ապա պարզ է դառնում, որ ԵՄ-ին անդամակցելու պարագայում Թուրքիայում ավելի կմեծանա գնաճը, այդպիսով առավել մեծ ջանքեր պահանջելով վիճակը ուղղելու և այն իջեցնելու համար: Իսկ եթե անդամակցումը մոտակա ժամանակներս իրականություն չդառնա, ապա այդ մակարդակը կարող է կայուն զարգացում ապահովել Թուրքիայի համար: 2004թ. թուրքական լիրան արժեզրկվել էր եվրոյի նկատմամբ 5%-ով, բայց, չնայած վերջինիս 2005թ. առաջին կեսում այն ամրացրել է իր դիրքերը 8%-ով: Միևնույն ժամանակ վերաֆինանսավորման դրույքը կրճատվել է 8%-ով՝ արտացոլելով քաղաքական կայունությունը և կապիտալի

[137] http://www.indexmundi.com/european_union/inflation_rate_(consumer_prices).html
[138] http://mybusinesstyle.blogspot.com/2010/01/inflyatsiya-v-rf-v-2009-godu-prevysila.html
[139] http://www.indexmundi.com/european_union/inflation_rate_(consumer_prices).html

կուտակմանը արագ գնացող գործընթացը երկրի ներսում:

ԵՄ ինտեգրման գործընթացների հետ մեկտեղ Թուրքիան ոչ պակաս սերտ հարաբերություններ է հաստատում այլ երկրների հետ, որոնց մեջ որպես առևտրային առաջնային գործընկերներ հիմնականում հանդես են գալիս Մերձավոր Արևելքի երկրները և այլ զարգացող երկրներ:

Թուրքիայի առջև կանգնած խնդրի լուծման համար նրան անհրաժեշտ են հսկայական ներդրումներ իրականացնել: Եթե 2004թ. ներդրումների ծավալը (2885 մլն դոլար) շատ փոքր է եղել, կազմելով ՀՆԱ-ի ընդամենը 0.8%-ը, ապա 2010թ. այն արդեն կազմել է մոտ 84 մլրդ. դոլար[140], ՀՆԱ-ի (1.038 տրլն դոլար) մոտ 8%-ը: Օտարերկրյա ներդրողների մեջ աշխարհագրական կառուցվածքում հիմնական գործընկերներ էին հանդիսանում ԵՄ երկրները, սակայն 2004թ. ընդլայնումից հետո վերջիններս իրենց ներդրումները սկսեցին կատարել հիմնականում նոր անդամ երկրներ: Սակայն 2006թ. ԵՄ երկրներին է բաժին ընկել Թուրքիայում կատարված ՕՈՒՆ-երի մեծ 82%-ը[141]: Իսկ 2009թ. առաջին կիսամյակի տվյալներով ներդրող ձեռնարկությունների թիվը կազմել է 22505, որոնցից 54.7%-ը ԵՄ երկրներից են[142]: Այս պայմաններում Թուրքիան պետք է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկի ԵՄ-ից օտարերկրյա ներդրումների ներգրավման համար, ինչն իր հերթին կարևորում է այնպիսի գործոնների առկայությունը այս երկրում, ինչպիսիք են՝ կայունությունը, ցածր հարկերը, ազատ մրցակցություն, ազատ տնտեսական գոտիների ստեղծում, որոնք ներդրողներ ներգրավելով զարգացման նոր որակ կհաղորդեն արտադրությանը:

Անդրադառնալով ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի ներհոսքին կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ-ի նշանակալի աճ սկսել է գրանցվել սկսած 2006թ.: 2008թ. ՕՈՒՆ-ի ծավալը 2005թ. մակարդակի հետ համեմատած աճել է գրեթե չորս անգամ՝ 2008թ. կազմելով 925.3 մլն դոլար: 2009 և 2010թթ. ՕՈՒՆ-երի ծավալներն աստիճանաբար

---

[140] http://www.indexmundi.com/turkey/stock_of_direct_foreign_investment_at_home.html
[141] http://www.easttime.ru/analitic/2/6/839.html
[142] Сергей Гриняев, Экономика Турции в условиях глобального экономического кризиса (Аналитический доклад) http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=2107

կրճատվել են՝ կազմելով 906.2 մլն դոլար և 693.4 մլն դոլար համապատասխանաբար[143]: Ներհոսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքում ԵՄ երկրների դերն այնքան էլ մեծ չէ: Հանրապետություն ներհոսող ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքի վերաբերյալ ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար դիտարկենք մաքուր պաշարները 2007թ. վերջին: Այսպես, մաքուր պաշարներով առաջին տեղում է Ռուսաստանը (ավելի քան 1 մլրդ. դոլար), երկրորդ տեղում՝ Գերմանիան (184.9 մլն դոլար), երրորդ տեղում՝ Ֆրանսիան (182 մլն դոլար), չորրորդ տեղում՝ ԱՄՆ (180 մլն դոլար) և վերջապես հինգերորդ տեղում է Կանադան (125.6 մլն դոլար)[144]: Այսինքն, եթե դիտարկենք առաջին հնգյակին, ապա ՕՈՒՆ-ի ծավալով ԵՄ երկրներից այդտեղ առանձնանում են միայն Գերմանիան և Ֆրանսիան:

Ինչ վերաբերում է զբաղվածության ոլորտին, ապա Եվրահանձնաժողովը գտնում է, որ աշխատանքի շուկան դարձել է առավել ճկուն, չնայած որ դեռևս որոշակի անհավասարակշռություն գոյություն ունի: Այն հատկանշական է նրանով, որ գործազուրկների մեջ մեծ թիվ են կազմում առավել կրթված աշխատողները, երիտասարդները և կանայք: Ճգնաժամի արդյունքում վերջին երկու տարիներին գործազրկության մակարդակը կտրուկ աճեց, որը կապված էր այն հանգամանքի հետ, որ Թուրքիայի տնտեսության շատ ճյուղերում լուրջ կորուստներ եղան: Գործազրկության մակարդակը 2003-ից մինչև 2008թ. առաջին եռամսյակը պահպանվող 10% սահմանագծից կտրուկ սկսեց աճել, հասնելով 16.1%-ի /2008թ. վերջին/ և կրկին նվազելով մինչև 13.6% /2009թ. կեսին[145]/ (տե՛ս գծապատկեր 34-ը): 2010թ. գործազրկության մակարդակը 3%-ային կետով նվազել է՝ կազմելով 10.5%[146]:

---

[143] http://armstat.am/file/article/sv_02_11a_420.pdf

[144] Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008:

[145] Сергей Гриняев , Экономика Турции в условиях глобального экономического кризиса (Аналитический доклад) http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=2107http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=2107

[146] http://en.wikipedia.org/wiki/Economy_of_Turkey#cite_note-IMF-WEO-April-2011-2

Գծապատկեր 34

Գործազրկության մակարդակը Թուրքիայում 2003-2010թթ.



Այնպես որ այս խնդրի լուծման համար ևս անհրաժեշտ են զգալի ներդրումներ՝ նոր աշխատատեղերով վերջիններիս ապահովելու համար: Այս խնդիրը անհանգստացնող է ԵՄ երկրների համար այն պարզ պատճառով, որ թուրքական աշխատուժը մեծ թափով գրավում է Եվրոպան: Աշխատուժի արտադրողականության ցուցանիշով Թուրքիան գտնվում է գրեթե նույն մակարդակի վրա, ինչպես էստոնիան, Լատվիան, Լիտվան և գերազանցում է Բուլղարիային և Ռումինիային[147]:

ՀՀ-ում նույնպես շատ բարձր է գործազրկության մակարդակը: Գործազրկության մակարդակը 2004-ից մինչև 2008թ. պահպանվել է 27-32% սահմաններում: Մասնավորապես, եթե նայում ենք այդ ցուցանիշին հաշվարկված Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանության, ապա պատկերը հետևյալն է՝ 2004թ. կազմել է 31.6%, 2005թ.՝ 31.2%, 2006թ.՝ 27.8%, 2007թ.՝ 28.6%, 2008թ.՝ 16.4%[148], 2009թ.՝ 18.7%, 2010թ.՝ 19.4%[149]:

---

[147] http://epp.eurostat.cec.eu.int

[148] Սկսած 2008թ. ցուցանիշը համադրելի չէ նախորդ տարիների ցուցանիշների հետ: 2008թ. գործազուրկների թվաքանակը ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկվում է Եվրամիության երկրների կողմից կիրառվող ԱՄԿ ստանդարտ սահմանման համաձայն: Վերջինս մասնակիորեն տարբերվում է 2001-2007թթ. կիրառված մեթոդաբանությունից, որի հիմքում ընկած էր ԱՄԿ կողմից առաջարկված գործազրկության ընդլայնված սահմանումը՝ անցումային փուլում գտնվող երկրներում կիրառելու համար (ըստ երկրի հայեցողության):

Չնայած բացահայտ առաջընթացին, Եվրահանձնաժողովը առաջ է քաշել մի շարք չլուծված հիմնախնդիրներ թուրքական տնտեսության մեջ: Առաջին հերթին դրանք վերաբերում են բանկային հատվածին, հարկագանձման համակարգին, ինչպես նաև երկարաժամկետ վերափոխումներին, որոնք ներկայումս շատ հեռու են ավարտից[150]:

Այսպես, բանկային նոր օրենսդրությունը պարզվեց, որ անարդյունավետ է, իսկ խոշոր բանկերի սեփականաշնորհումը չբերեց ոչ մի արդյունքի: Ինչ վերաբերում է հարկագանձմանը, ապա 2005թ. հունիսին կառավարությունը նոր օրենք ընդունեց հարկերի վերաբերյալ: Վերակառուցվեց հարկային գերատեսչությունը, և իջեցվեցին հարկային դրույքաչափերը: Այս ամենի գլխավոր նպատակն էր սև շուկայի բաժնեմասի փոքրացումը, ներդրումային միջավայրի բարելավումը և բիզնեսի զարգացման խթանումը:

Բայց, չնայած բարձր նպատակների, ամենագլխավորը՝ հարկային դրույքաչափերը, հիմնականում իջեցվեցին միայն 2006թ.-ից: 2004թ. կորպորատիվ հարկը 33%-ից իջավ մինչև 30%, իսկ եկամտահարկը՝ 5%: Իսկ 2006թ. կորպորատիվ հարկը արդեն դարձավ 20%[151]: Հայաստանի Հանրապետությունում շահութահարկը ռեզիդենտների համար ունի ստանդարտ դրույքաչափ և հարկվում է 20% դրույքաչափով: «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1997 թվականի դեկտեմբերի 27-ին: Այն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական հարկատեսակներից միակն է, որն ունի տարբերակված դրույքաչափեր. մինչև 80.000 դրամ ամսական հարկվող եկամուտը հարկվում է 10% դրույքաչափով, 80.000 դրամը գերազանցող ամսական հարկվող եկամուտը՝ 8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի 20%-ով: Նշենք նաև, որ համախառն եկամտից կատարվում է անձնական նվազեցում եկամտի

---

149 http://armstat.am/am/?nid=126&id=08010&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

150 Доклад Еврокомиссии по Турции за 2005 г. (Turkey progress report 2005).

151 “Турция, 2008г. Центр по развитию экспорта” стр. 3, http://www.tcp.gov.tr/english/pubs/turkey_rusca.pdf

ստացման յուրաքանչյուր ամսվա 30.000 դրամի չափով[152]:

Բացի այդ, ըստ Եվրահանձնաժողովի, Թուրքիայում բիզնեսի զարգացման խոչընդոտներից է հանդիսանում ազատ մրցակցության բացակայությունը, ինչպես նաև խոշոր գործարանների և սպառողական ցանցերի ամբողջական սեփականաշնորհման անհնարինությունը[153]: Ամենից առաջ սա կապված է այն հանգամանքի հետ, որ պետությունը մեծ դեր էր խաղում տնտեսության մեջ: Պետության որոշիչ դերի առկայությունը գործարար ակտիվության զարգացման ուղղության ընտրության ժամանակ թուրքական մասնավոր բիզնեսի ամենաբնութագրական գիծը: Հետաքրքիր է, որ իրենք՝ գործարարները, չեն պնդում մասնավոր բիզնեսի գործերի մեջ պետության մասնակցության մասշտաբների կրճատման սկզբունքի իրագործումը, այլ ընդգծում են պետական իշխանության և բիզնեսի աշխարհի միջև ամուր համագործակցության անհրաժեշտությունը: ՀՀ-ում բիզնեսի զարգացման խոչընդոտներից է ազատ մրցակցության բացակայությունը, բայց ոչ թե կապված խոշոր գործարանների և սպառողական ցանցերի ամբողջական սեփականաշնորհման անհնարինության հետ, ինչպես Թուրքիայում, այլ ընդհակառակը՝ օլիգարխիկ տնտեսության պայմաններում արտադրական հզորությունների և տնտեսության համակենտրոնացումը մի քանի մասնավոր անձանց ձեռքում, լուրջ խոչընդոտ է դարձել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, հետևաբար նաև մրցակցային հավասար պայմաններով շուկայական տնտեսության ձևավորման ճանապարհին:

Ինչ վերաբերում է թուրքական տնտեսության մեջ պետության դրական մասնակցությանը, ապա պետք է ասել, որ հարկերի օգնությամբ նա փորձում է իջեցնել տարածաշրջանների զարգացման անհամաչափությունը, խթանելով հետամնաց շրջանները հարկային արտոնություններով: Անհամաչափության հիմնախնդիրը շատ արդիական է Թուրքիայի համար: Այսպես, ամենազարգացած շրջաններն են համարվում արևմտյան և մասնավորապես կենտրոնական մասերը Անատոլիայի, այնուհետև գալիս են խոշորագույն

---

[152] «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը, Պաշտոնական տեղեկագիր «ՓԲԸ», Երևան 2009թ., էջ 142-143:

[153] Доклад Еврокомиссии по Турции за 2005 г. (Turkey progress report 2005).

քաղաքները և առևտրաարդյունաբերական կենտրոնները /Ստամբուլ, Անկարա, Իզմիր/, մնացածները զգալիորեն զիջում են զարգացման մակարդակով[154]: Այս ամենը ծնում է սոցիալական անհավասարության և եկամուտների անհավասար բաշխման դեռևս անլուծելի խնդիր, որի հաղթահարման նպատակով հսկայական ֆինանսական ծախսեր և ներդրումներ են պահանջվում: Այսօր Թուրքիայի շատ շրջաններ կարելի է համարել ամբողջովին եվրոպականացված, այն դեպքում, որ շատերը դեռևս շատ հեռու են այդպիսին կոչվելուց, ինչը որպես հիմնախնդիր մեծ խոչընդոտ է ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին:

Տնտեսական վիճակի գնահատումից հետո Եվրահանձնաժողովը որպես չափանիշ դիտարկում է կոպենհագենյան չափանիշների հետ համապատասխանությունը՝ մասնավորապես գործող շուկայական տնտեսության առկայությունը և միության շրջանակներում շուկայական ուժերի հետ համագործակցության և մրցակցության ընդունակությունը: Ըստ Եվրահանձնաժողովի՝ գործող շուկայական տնտեսության առկայությունը որոշվում է գների և առևտրի ազատականացմամբ և այդ ոլորտում գործող օրենսդրության առկայությամբ[155]: Բացի այդ, մակրոտնտեսական կայունությունը և համաձայնեցված տնտեսական քաղաքականությունը շուկայական տնտեսության հասկացությանը համապատասխանելու գերազանց ցուցանիշներ են, իսկ զարգացած ֆինանսական հատվածը և տարաբնույթ շուկաներում մուտքի և ելքի ազատությունը բնութագրում են շուկայական տնտեսության արդյունավետությունը: Հենց այս բնութագրիչների առումով է, որ Եվրահանձնաժողովը թերություններ է գտնում թուրքական տնտեսության մեջ:

Մակրոտնտեսական ցուցանիշների, գնաճի, գործազրկության և այլ խնդիրների կողքին, անմիջականորեն շուկայական տնտեսության հետ առնչվող մնացած խնդիրների վերաբերյալ Եվրահանձնաժողովը գրում է հետևյալը.

- Ձեռնարկվել են միջոցառումներ ուղղված ֆինանսական թափան-

[154] “Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XX века журнал “Дипломатический вестник" май 2001г.
[155] Доклад Еврокомиссии по Турции за 2005 г. (Turkey progress report 2005).

ցիկության բարձրացմանը: Գործողության մեջ է դրվել համապատասխան օրենքը, և ստեղծվել են մի շարք համակարգող և վերահսկող մարմիններ ֆինանսների նախարարությանը կից: Գործնականում այն իրեն ցույց տվեց առավել թափանցիկ բյուջետային հսկողության ստեղծմամբ[156]: Այս ամենը մեծ փոփոխություններ մտցրեց Թուրքիայի տնտեսության մեջ, հատկապես այն առումով, որ դրական անդրադարձ ունեցավ նախկինում բավականին մեծ բաժին ունեցող ստվերային տնտեսության և վերին մակարդակներում առկա կոռուպցիայի վերացման գործընթացի մեջ: Ֆինանսական թափանցիկությունը բարելավեց ներդրումային կլիման, որը միևնույն ժամանակ կարևոր է ԵՄ-ի համար, որպես կայունության և կանխատեսելիության ցուցանիշ: Այնուհանդերձ շատ փորձագետների կարծիքով դժվար թե այս հիմնախնդրի վերացման եվրոպական մոտեցումը արդյունավետ լինի, քանի որ նոր բյուրոկրատական ձևավորումներով հնարավոր չէ պայքարել կոռուպցիայի դեմ:

- Բարելավվում է շուկայական ուժերի ազատ համագործակցության հնարավորությունը: Այս ձևակերպման տակ ենթադրվում է տնտեսության մեջ պետության միջամտության բացակայությունը և պետական հատվածի դերի իջեցումը: Այստեղ հաջողությունները ակնհայտ են, քանի որ պետական բանկերի արտոնությունները աստիճանաբար վերացվում են, ազգային ձեռնարկությունների բաժնեմասը կազմում է ՀՆԱ-ի 5%-ը, իսկ տնտեսության պետական հատվածում զբաղվածների թիվը կազմում է ընդհանուրի 2.5%-ը[157]: Պետության դերն այս երկրում պայմանավորված է ավանդույթի հետ, չնայած որ իշխանություններն անում են հնարավորը այն իջեցնելու համար: Պետք է ասել, որ զարգացած շատ երկրներում ևս այս երևույթը կա, և միանշանակ հնարավոր չէ պնդել վերջինիս դրական կամ բացասական դերի կամ ազդեցության վերաբերյալ: Պետության դերի թուլացումը

[156] Նույն տեղում:
[157] Доклад Еврокомиссии по Турции за 2005 г. (Turkey progress report 2005).

ձեռնտու է առաջին հերթին եվրոպական գործարարներին, և այս հարցում առաջընթացի ԵՄ պնդումները պայմանավորված են հենց իրենց՝ եվրոպացիների, շահերով: Համենայն դեպս, ընդունելի պետք է լինի այն սկզբունքը, որ պետական հատվածը պետք է ունենա որոշակի սահմանագիծ, և ամենագլխավորը, որ պետությունը պետք է ոչ թե միջամտի շուկայական գործընթացներին, այլ մասնակցություն ունենա՝ որպես հավասար գործընկեր:

- Գների ազատականացումն ամբողջ թափով չի իրականացվում: Միայն 2005թ. վերացվեց հսկողությունը վառելիքի գների վրա: Դեռևս ազատականացված չեն էլեկտրաէներգիայի և տրանսպորտի մի շարք ձևերի գները[158]: Ավելի շուտ, սա պայմանավորված է ներքին պայմանների հետ, քանի որ գների կտրուկ տատանումները կարող են բնակչության մոտ բողոքի ալիք բարձրացնել: Այդ իսկ պատճառով Եվրահանձնաժողովը, ըստ թուրք մասնագետների, իրավունք չունի արագ ազատականացում պահանջել, քանի որ այն միայն ժամանակի հարց է: Այստեղ էլ հենց երևում է պետության դերի դրական կողմը, քանի որ այն պահում է գները անհրաժեշտ մակարդակի վրա: Անհրաժեշտ է նկատել, որ Թուրքիան հարուստ չէ էներգետիկ ռեսուրսներով, այդ իսկ պատճառով ստիպված է դրանք (նավթ, գազ) ներմուծել:
- Իրականացվում է պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը, սակայն ոչ այնքան ակտիվ, որքան նախկինում, ինչին էլ ուշադրություն է դարձնում Եվրահանձնաժողովը[159]: Սեփականաշնորհումն այն միջոցառումներից է, որն ուղղված է տնտեսության մեջ պետական մասնակցության իջեցմանը և ուղղակիորեն կապված է այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են ազատ մրցակցություն և ազատ ձեռնարկատիրություն, մրցունակություն: Այնուհանդերձ պետական մենաշնորհը պետք է պահպանվի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը,

[158] Նույն տեղում:
[159] Доклад Еврокомиссии по Турции за 2005 г. (Turkey progress report 2005).

ազգային պաշտպանությունը և սոցիալական ապահովությունը:

- Ապրանքների և ծառայությունների շուկաներ մուտքի և ելքի արգելքները հանվել են աննշան չափով: Այս ոլորտում օրենսդրությունը ամբողջությամբ համապատասխանում է շուկայական տնտեսությանը, բայց չի իրագործվում: Փաստացի, նոր ձեռնարկությունների 1/3-ը սնանկացել են, որը շատ ավելի բարձր է քան 2003թ.[160]:

Թուրքական տնտեսությունը դուրս է եկել արդեն իր զարգացման սկզբնական փուլից, այդ իսկ պատճառով ապրանքների և ծառայությունների շուկաները մեծ մասով արդեն ձևավորվել են: Եվ բնական է, որ յուրաքանչյուր ճյուղում առաջացել են իրենց առանձնահատկությունները և դրանց պայմաններում իրենց տեղը ամրացրած ձեռնարկություններ: Միգուցե հենց դա է նոր ձեռնարկությունների համար տվյալ շուկաներ դուրս գալու դժվարություններ առաջացնում: Համենայն դեպս, այդ բոլոր խնդիրները աննշան են, քանի որ ամենագլխավորը՝ շուկայական տնտեսությունը Թուրքիայում ձևավորվել է, որին պետք չէ կասկածել: Իսկ դեռևս չլուծված թերությունների և թերացումների բացահայտմամբ և լուծմամբ, Թուրքիայի տնտեսությունը զարգացման նոր խթաններ կստեղծի:

Հետևյալ չափանիշն ուղղակիորեն դուրս է գալիս նախորդից, քանի որ միայն շուկայական տնտեսություն կառուցելու պարագայում է հնարավոր արդյունավետ կերպով դուրս գալ եվրոպական շուկաներ: Թուրքիայի համար, բացի շուկայական տնտեսության ստեղծման պահանջը, որն արդեն ձևավորված կարելի է համարել, Եվրահանձնաժողովին անհրաժեշտ են նաև այլ քայլեր՝ մասնավորապես տնտեսության կայունությունը, կանխատեսելիությունը, մարդկային և ֆինանսական կապիտալը, ինչպես նաև ԵՄ-ի հետ ինտեգրվածության բարձր մակարդակը: Այդ խնդիրների շրջանակներում Եվրահանձնաժողովը եկել է այն եզրահանգմանը, որ դեռևս կան չլուծված խնդիրներ: Բավականին մեծ ուշադրություն հատկացվեց սոցիալական հարցերին, կրթության և գործազրկության մակարդակների բարելավմանը երկրում: Եվ քանի որ այս երկու

[160] Նույն տեղում:

խնդիրները տնտեսության արտադրողականության բարձրացման կարևորագույն խթաններից են, պետությունը ակտիվորեն մասնակցում է գոյություն ունեցող խնդիրների լուծմանը: 2004թ., չնայած բյուջեի ռեսուրսների սահմանափակությանը, կրթության համար բավականին շատ միջոցներ է տրամադրվել: Այնուհանդերձ, չնայած կրթական մակարդակի բարձրացմանը, Թուրքիայում դեռևս մնում են գենդերային տարբերություններ կրթության հասանելիության առումով, և չնայած պետությունը մեծ ջանքեր է գործադրում բոլորի համար կրթությունը և՛ հասանելի, և՛ բարձրակարգ դարձնելու համար, այնուհանդերձ, բարձրագույն կրթությունը համեմատաբար քիչ հասանելի է աղջիկների, ինչպես նաև ֆինանսապես նվազ կարողություններ ունեցող անձանց համար: Առանձնահատուկ խնդիր է նաև այն, որ կրթությունը մեծ մասամբ չի բավարարում գործատուների պահանջները:

Վերը նշված գործընթացներում ՀՀ հաջողությունները հետևյալն են. 2005թ. ՀՀ նախկին առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից պաշտոնապես հայտ է ներկայացվել Եվրամիությանը՝ ստանալու շուկայական տնտեսության կարգավիճակ: Հայտ ներկայացնելու պահին Եվրոպական հանձնաժողովի կողմից շուկայական տնտեսության կարգավիճակ ստանալու համար սահմանված չափանիշները մասամբ բավարարված էին և կային անհրաժեշտ նախապայմաններ հետագա առաջընթացի համար: Այժմ գործընթացը բանակցային փուլում է, որի վերաբերյալ կանխատեսումներն անիմաստ են:

Վերոնշյալ չափանիշների առնչությամբ 2010թ. Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկի կողմից արվել են մի շարք գնահատումներ անցումային կարգավիճակի վերաբերյալ, որոնց ամփոփ նկարագիրը տրված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 31

ԵԶԲՎ անցումային կարգավիճակի գնահատականները 2010թ.[161]

	Չեռնարկատիրական ոլորտ			Էներգետիկա			Ենթակառուցվածք					Ֆինանսական հատված				
	Ազոռիբիզնես	Ընդհ. արդյունաբեր.	Ամշարժ գույք	Բնական ռեսուրսներ	Կենսունակ էներգիա	Էլեկտրաէներգ.	Հեռահաղորդակցություն	Ջուր և կեղտաջուր	Քաղաքային տրանսպորտ	Ճանապարհներ	Երկաթուղի	Բանկեր	Ապահով. և ֆին. այլ ծառ.	MSME ֆինանսներ	Սաամ. բաժն. կապ.	Կապիտալի շուկաներ
Խորվաթիա	3	3+	3+	4-	3-	3	4	3+	3+	3	3-	3+	3+	3-	3-	3
Էստոնիա	3+	4+	4+	4	3-	4	4	4	4-	2+	4	4-	3+	3	3-	3-
Հունգարիա	4	4-	4-	4	3	4-	4	4	3+	4-	4-	3+	4-	3	3	3+
Բուլղարիա	3	3+	3+	3+	3-	4-	4-	3	3+	3-	3+	3	3+	3-	3-	3
Սլովակիա	3+	4+	4	3+	3	4	4-	3+	3+ -	3-	3	4-	3+	3+	2+	3
Սլովենիա	4-	3+	4	3+	3+	3	3+	3+	3+	3	3	3+	3+	3	2+	3-
Ռումինիա	3-	3+	3+	4-	3+	4-	3+	3+	3+	3	4	3	3+	3-	2+	3
Թուրքիա	3-	3	3+	3+	3+	3+	3+	3	3+	2+	3-	3	3+	3-	2+	4-
Հայաստան	3-	3	3-	3-	3-	3+	3	3-	2+	3-	2+	2+	2	2+	1	2
Ադրբեջան	2+	2	2	2+	2	2+	2-	2-	2	2+	2+	2	2	2	1	2-
Վրաստան	3-	3-	3-	2	3-	3+	3-	2+	2+	2+	3	3-	2	2+	1	2-
Ռուսաստան	3-	3-	3-	2	2	3+	3+	3-	3	2+	3	3-	3-	2	2+	4-

Աղբյուրը. Transition Report, EBRD 2010

Ըստ վերոնշյալ գնահատականների, ընդհանուր առմամբ, Հայաստանը բավականին լավ դիրք է զբաղեցնում եվրոպական վերը նշված երկրների շարքում և միտում ունի հասնելու վերջիններիս ցուցանիշների սահմանին: Սակայն առկա են նաև որոշ թույլ կողմեր, մասնավորապես՝ արժեթղթերի շուկան, բանկային համակարգը, ենթակառուցվածքները և այլն: Համեմատությունների համար ընտրվել են եվրոպական այնպիսի երկրներ, որոնցից ոմանք արդեն ԵՄ անդամ են, և միայն Խորվաթիան դեռևս անդամակցության թեկնածու է: Թուրքիան վերը նշված ցուցանիշների մասով հիմնականում գերազանցում է ՀՀ-ին, բացառությամբ մի քանիսի, և բավականին մոտեցել է եվրոպական երկրների մակարդակին: Չենք կարող հերքել, որ Թուրքիան իր տնտեսության վիճակի բարելավ-

[161] Transition Report 2010 “Recovery and reform” EBRD, p. 8, www.ebrd.com/downloads/research/transition/tr10.pdf

ման նպատակով մեծ ջանքեր է գործադրել և բավականին մեծ հաջողությունների հասել, որոնց արդյունքում նրա տնտեսությունը զգալիորեն ավելի հզոր է քան ԵՄ նորանդամ շատ երկրներինը, օրինակ՝ Բուլղարիան, Ռումինիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, որը հաստատում է Թուրքիայի տնտեսության հսկայական ներուժ ունենալու հանգամանքը: Ուստի հետագայում Եվրահանձնաժողովի համար առավել դժվար կլինի նոր թերացումներ գտնել Թուրքիայի տնտեսության որակական և քանակական կառուցվածքում: Հարկ է նշել, որ Թուրքիան վերջին մեկ-երկու տարում այլևս չի ձգտում անվերապահորեն և արագացված տեմպերով կատարել եվրոպացիների պահանջները, այլ փորձում է զարգանալ սեփական տեմպերով՝ առանց արհեստական արագացնելու իրադարձությունները: Այդ պահանջները վերաբերում են հատկապես կոպենհագենյան երկրորդ տնտեսական պահանջներին, որոնց նույնիսկ եվրոպացիների կարծիքով հնարավոր է հասնել միջնաժամկետ ժամանակաշրջանում, կառուցվածքային վերափոխումների և կայունացնող քաղաքականության հետագա շարունակության պայմաններում: Արդյունքում, շատ թուրք մասնագետներ, և ոչ միայն, գալիս են այն եզրակացությանը, որ եթե խնդիրը միայն տնտեսական լիներ, ապա Թուրքիան վաղուց պետք է ԵՄ լիիրավ անդամ լիներ:

4.2. Հայ-թուրքական սահմանի վերաբացման սոցիալ-տնտեսական հետևանքները

Թուրքիայի հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական համագործակցությունը բախվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ: Դրան ամենից առաջ խոչընդոտում են ոչ թե տնտեսական, կամ կրոնական գործոնները, այլ ձևավորված բարդ ու առայժմ անլուծելի քաղաքական իրավիճակը: Սակայն որքան էլ քաղաքական հարաբերությունները այս երկրի հետ լարված լինեն, վաղ թե ուշ դրանք պետք է մղվեն ետին պլան՝ տնտեսական հարաբերությունների զարգացման ճանապարհով, քանի որ Թուրքիան հանդիսանում է Հայաստանի բնական հարևանը:

Թուրքիայի հետ այսօրվա հարաբերություններում Հայ Դատը

չպետք է դառնա շահարկման թեմա: Պետք է ընդմիշտ հիշել, որ պահանջատիրությունը ոչ միայն Հայաստանում ապրող հայ ժողովրդի, այլև սերունդների, ամբողջ աշխարհում սփռված հայ ժողովրդի համազգային խնդիրն է, որի լուծումը մնում է պատմությանն ու սերունդներին և այն էլ ոչ թե ուժի դիրքերից՝ առճակատմամբ, այլ պատմական տրամաբանական զարգացման ընթացքում դիվանագիտական ճանապարհով մարդկային առողջ բանականությամբ լուծելու համար[162]: Անվերապահորեն կողմնակից լինելով որևէ ազգի նկատմամբ հանցավոր գործողություններ իրականացնելու պարագայում համապատասխան քաղաքական գնահատականների հնչեցմանը, դրանից բխող բոլոր հետևություններով, այնուհանդերձ գտնում ենք, որ հարևան երկրի հետ տնտեսական համագործակցության հնարավոր ուղիների որոնումը և այդ համագործակցությունից ստացվող տնտեսական օգուտները Հայաստանի օգտին վերաբաշխելը կենսական անհրաժեշտություն է, «քանի որ երկու երկրներն էլ ունեն երկկողմ առևտրատնտեսական հետաքրքրություն ներկայացնող ռեսուրսներ, ոլորտներ և բնագավառներ»[163]:

Այդ ճանապարհով ընթանալու դեպքում կկարողանանք պահանջատեր գործընկերոջ կարգավիճակից վերաճել հզոր և ազգային արժանապատվությունը գնահատող պետության: Ուստի, այս պարագայում, չի կարելի նույնացնել տնտեսությունն ու քաղաքականությունը, ընդ որում այն մակարդակով, որ կտրականապես մերժվի նաև Թուրքիայի հետ երկաթուղային ճանապարհի՝ Հայաստանի համար հույժ կարևոր «տնտեսական երակի» վերաբացման հարցը: Եթե շարունակենք աչք փակել արդեն ձևավորված տնտեսական իրականության առջև, Հայաստանի տնտեսական զարգացումները կգնան դեպի փակուղի: Արդեն ձևավորված տնտեսական իրականությունն այն է, որ, այսպես կոչված, տնտեսական սուբյեկտները՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք, հայկական շուկան հեղեղել են թուրքական ապրանքներով: Հայաստանում վաճառվող ապրանքների՝ սննդամթերքի, հագուստի, կենցաղային օգտագործման ապրանքների, կաշվե իրերի, ավտոպահեստամասերի և այլ բազմատեսակ

---

[162] Խոջաբեկյան Վ.Ե., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան 1998, էջ 219:

[163] Թորոսյան Թ., Միջազգային տնտեսագիտություն, Երևան, ԱՌՏ, 2003, էջ 242:

ապրանքների հիմնական մասը ներմուծվում է Թուրքիայից: Բեռների գլխավոր բաժինը Հայաստան է մուտք գործում Վրաստանի և Իրանի տարածքներով, մյուս մասն էլ ինքնաթիռով: Ստացվում է այնպես, որ երկու ճանապարհներն էլ, վերջին հաշվով, տանում են ներկրվող ապրանքների թանկացմանը: Նույն ապրանքը հայ սպառողը ձեռք է բերում կրկնակի թանկ՝ վրաց սպառողի համեմատությամբ:

Թուրքիայի հետ առևտուրը ոչ պետական մակարդակով ընթացել ու ընթանում է բավականաչափ ակտիվ: Թուրքիան շահում է, իսկ ՀՀ-ն՝ ավելի շատ վճարում ներկրման չարդարացված ծախսերի պատճառով: Հետևաբար, արտաքին առևտրային ճիշտ քաղաքականության իրականացման գործում երկու երկրների միջև առևտրատնտեսական պայմանները, ձևերը և հնարավորությունները անհրաժեշտ է ամրագրել առևտրատնտեսական համապատասխան պայմանագրերի միջոցով:

Մինչև այսօր երկու երկրների միջև, պետական մակարդակով, գոյություն չունեն ո՛չ դիվանագիտական, ո՛չ առևտրային և ո՛չ էլ տնտեսական հարաբերություններ: 1993թ. Թուրքիան նույնիսկ ամբողջովին փակեց իր սահմանները ՀՀ առջև: Մեկ տարի անց օդային ճանապարհներն, այնուամենայնիվ, բացվեցին:

Թուրքիան Հայաստանի հետ հնարավոր երկխոսության համար ևս դնում է որոշ պայմաններ.

- հրաժարում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչումից և Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջատիրությունից,
- ղարաբաղյան կոնֆլիկտի լուծում:

Սակայն վերջին ժամանակներս թուրքական պաշտոնական անձանց հարցազրույցներում Ղարաբաղի հարցը չի հիշատակվում: Ըստ որոշ կանխատեսումների, Թուրքիայի հետ երկաթուղային գծի բացման արդյունքում Հայաստանը տարեկան կշահի 600 մլն-1 մլրդ դոլար[164]: Դա նաև ձեռնտու է Թուրքիային, քանի որ Ղարսի շրջանի տնտեսությունը, որն այժմ գտնվում է տնտեսական ծայրահեղ վատ վիճակում, և բնակչությունն այնտեղից զանգվածաբար տեղաշարժվում

[164] Igor Torbakov “Turkey and the Post Soviet Eurasia: Seeking a Regional Power Status” in Prospects for Democracy in Central Asia. Swedish Research Institute in Istanbul, 2005, p. 126.

է դեպի տնտեսապես ավելի զարգացած շրջաններ, կսկսի զարգանալ:

Անկախ երկու երկրների պաշտոնական շրջանակներում փոխադարձ մեղադրանքներից, արտաքին առևտրային հարաբերությունները մեր երկրների միջև զարգանում են, իսկ վերջին ժամանակներս բուռն քննարկման առարկա են դարձել հայ-թուրքական սահմանի վերաբերյալ հարցադրումները, մասնավորապես այն առումով, թե արդյոք ՀՀ արտադրական ճյուղերը կկարողանա՞ն դիմակայել թուրքական մրցակցությանը բաց սահմանի պայմաններում: Այս հարցին առավել հստակ պատասխանելու համար անհրաժեշտ է համեմատական վերլուծության միջոցով պարզել, թե սահմանի բացման արդյունքում արդյունաբերության ո՞ր ճյուղերը կշահեն, իսկ որոնք կկորցնեն: Դա հնարավոր է իրականացնել օգտագործելով ամերիկացի տնտեսագետ Բ. Բալասայի կողմից առաջարկվող Բացահայտ համեմատական առավելությունների (ԲՀԱ) մեթոդը: Այս ցուցանիշի հիմնական գաղափարը հանգում է նրան, որ եթե երկիրը տվյալ ապրանքից արտահանում է մեծ քանակությամբ, ապա տնօրինում է տվյալ ապրանքի արտադրության արդյունավետ եղանակների, ունի մասնագիտացման բարձր մակարդակ, հետևաբար և, արտադրության համեմատական առավելություններ:

Հայաստանի և Թուրքիայի արտադրական ճյուղերի ԲՀԱ-ն հաշվարկելու համար նախ պետք է հաշվարկել.

- յուրաքանչյուր n-րդ ճյուղի արտահանման ծավալը՝ En,
- յուրաքանչյուր n-րդ ճյուղի ներմուծման ծավալը՝ In,
- յուրաքանչյուր ճյուղի Բացահայտ համեմատական առավելությունը՝ ԲՀԱ

Այսպիսով՝

$$ԲՀԱ=(En- In)/(En+In)$$

Այս ցուցանիշը տատանվում է ±1-ի սահմաններում:

Եթե ճյուղի ԲՀԱ-ը հավասար է +1-ի, ապա.

1. ներմուծումը զրոյական է,
2. երկիրը արտադրում է տվյալ ապրանքը՝ լրիվ բավարարելով ներքին շուկայի պահանջարկը,
3. երկիրը ներքին պահանջարկը բավարարելուց հետո՝ արտահանում է տվյալ ապրանքը համաշխարհային շուկա,

4. երկիրը օժտված է տվյալ ապրանքի արտադրության համեմատական առավելություններով:

Եթե ճյուղի ԲՀԱ-ն հավասար է -1-ի, ապա.

1. երկիրը չունի տվյալ ապրանքի արտահանման լայն հնարավորություններ,
2. երկրում տվյալ ապրանքի պահանջարկը լրիվ կամ մասամբ բավարարվում է ներմուծման հաշվին:

Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ն ունի արտահանման այնպիսի ճյուղեր, որոնց ԲՀԱ-ն բարձր է, մինչդեռ Թուրքիայինը այդ ճյուղերում՝ ցածր է: Դա խոսում է այն մասին, որ ՀՀ-ն սահմանի բացման դեպքում կարող է արտահանել այս ճյուղերի արտադրանքը դեպի Թուրքիա: Ճյուղերը, որտեղ ՀՀ-ն ունի ընդգծված դրական ԲՀԱ, հետևյալն են.

ճյուղ 26՝ Հանքաքար, խարամ և մոխիր

ճյուղ 41՝ Կաշի և կաշվե հումք

ճյուղ 72՝ Սև մետաղներ

ճյուղ 74՝ Պղինձ և իրեր դրանից

ճյուղ 81՝ Այլ ոչ թանկարժեք մետաղներ

ճյուղ 88՝ Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ

ճյուղ 91՝ Ժամացույցներ և դրանց մասեր

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում փաստել, որ այն ճյուղերը, որտեղ Թուրքիան ունի ընդգծված դրական ԲՀԱ, իսկ ՀՀ-ն՝ բացասական, մի քանի անգամ ավելի շատ են:

Դրանք են՝

ճյուղ 2՝ Միս և մսից ենթամթերք

ճյուղ 7՝ Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղ

ճյուղ 8՝ Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատներ և այլ բոստանային մշակաբույսեր

ճյուղ 11՝ Ալրաղացային-ձավարեղենային արտադրանք, ածիկ, օսլա, ինսուլին և այլն

ճյուղ 14՝ Բուսական նյութեր

ճյուղ 16՝ Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք

ճյուղ 17՝ Շաքար և հրուշակեղեն շաքարից

ճյուղ 18՝ Կակաո և դրանից պատրաստված մթերք
ճյուղ 19՝ Ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք, ալյուրից
ճյուղ 20՝ Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք հրուշակեղեն
ճյուղ 21՝ Այլ տարբեր սննդամթերք
ճյուղ 24՝ Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ
ճյուղ 57՝ Գորգեր և այլ տեքստիլ հատակի ծածկոցներ
ճյուղ 58՝ Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ, գոբելեններ, հարդարման նյութեր և այլն
ճյուղ 60՝ Մեքենայով կամ ձեռքով գործած տրիկոտաժե կտավ
ճյուղ 61՝ Տրիկոտաժե հագուստ և հարակից իրեր
ճյուղ 62՝ Տեքստիլ հագուստ և հարակից իրեր
ճյուղ 68՝ Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ իրերից
ճյուղ 69՝ Կերամիկական իրեր
ճյուղ 70՝ Ապակի և ապակե իրեր
ճյուղ 73՝ Իրեր սև մետաղից
ճյուղ 94՝ Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր

Փաստորեն սահմանի բացման արդյունքում Թուրքիան հնարավորություն է ունենում այս ապրանքները ներմուծել ՀՀ: Սա կարելի է ՀՀ-ի համար համարել դրական, կամ ոչ ռիսկային միայն այն դեպքում, եթե ՀՀ-ն չունի այդ ապրանքների արտադրության հնարավորություններ և բացառապես ներմուծում է դրանք: Սակայն, եթե այդ ապրանքները արտադրվում են ՀՀ-ում, բայց ոչ այն քանակությամբ, որ ստեղծվեն արտահանման լայն հնարավորություններ, ապա Թուրքիայից ներմուծումը կարող է հանգեցնել հայկական արտադրողների մրցունակության անկմանը ՀՀ ազգային շուկայում, իսկ որոշ դեպքերում նաև՝ սնանկացմանը: Այդպիսի ռիսկային ոլորտներ կարելի է հատկապես համարել ծխախոտի, կահույքի արտադրությունը, գյուղատնտեսությունը, որտեղ ՀՀ-ն, ունի բացասական, իսկ Թուրքիան՝ դրական ԲՀԱ, սակայն ՀՀ-ն ունի նաև այդ ապրանքների բավականին արագ զարգացող արտադրություն: Սակայն այս պարագայում ևս կարելի է որսալ դրական կողմեր, մասնավորապես. սահմանի բացումը կտանի մրցակցության սրմանը,

ինչը դրական երևույթ է, քանի որ այն առողջ է պահում նորարարության շունչը, խթանում է տեխնիկական առաջընթացը և հանգեցնում գների նվազմանը:

Հարկ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Թուրքիայում ոչ մի ոլորտի ԲՀԱ հավասար չէ -1-ի, մինչդեռ ՀՀ-ում մոտ 9 ճյուղ կարելի է համարել բացառապես ներմուծվող: Որոշ ճյուղերի գծով և՛ ՀՀ-ն, և՛ Թուրքիան ունեն դրական ԲՀԱ, օրինակ՝ ոգելից և ոչ ոգելից ըմպելիքի առումով, սակայն ՀՀ ԲՀԱ-ն ավելի մեծ դրական թիվ է, քան Թուրքիայինը, ինչը փաստում է, որ ՀՀ-ն այս ապրանքի առումով ևս կունենա արտահանման հնարավորություններ:

Այնուամենայնիվ, նույնիսկ եթե երկու երկրներն էլ տվյալ ոլորտում ունեն բացասական ցուցանիշներ, սա դեռ չի նշանակում, որ այդ ապրանքները արտահանման ենթակա չեն: Իրացման նոր հնարավորությունների և շուկայի առկայությունը կարող է տանել երկրում արտադրական հնարավորությունների ընդլայնմանը և արտահանման խթանմանը: Իսկ փակ սահմանի պարագայում այս ներուժը կարելի է համարել կորսված:

ՀՀ-Թուրքիա առևտրի ռիսկայնության գնահատումը բավականին բարդ գործընթաց է: Որոշ տնտեսագետների կանխատեսմամբ էլեկտրաէներգիայի արտահանումը ՀՀ-ից դեպի հարավարևելյան Թուրքիա բավականին շահավետ կլինի մեր երկրի համար, համենայնդեպս մինչև Հարավարևելյան Անատոլիայի ծրագրի ավարտը: Մեր կողմից կատարված հաշվարկները ցույց տվեցին նաև, որ ՀՀ-ն կշահի նաև մետաղների, տեքստիլի, ծանրարդյունաբերական ապրանքների շուրջ առևտրի ծավալման ժամանակ: Օրինակ, «Սև մետաղներ» ապրանքախումբը դրական ԲՀԱ ունի ՀՀ-ում, իսկ «Իրեր սև մետաղից» ապրանքախումբը՝ Թուրքիայում: Այսինքն ՀՀ-ն կարող է սև մետաղը՝ հումքի տեսքով, արտահանել Թուրքիա և ներմուծել դրանից պատրաստված արտադրանք: Իհարկե այս պարագայում ՀՀ օգուտները մեծ չեն լինի, քանի որ հումքի արտահանումը չունի մեծ ավելացված արժեք, ի տարբերություն պատրաստի արտադրանքի, սակայն երկիրը չի կրի նաև կորուստներ:

Առավել ռիսկային կարելի է համարել ՀՀ մենաշնորհային ոլորտները՝ նավթամթերք և շաքար, որոնք առաջին հերթին

օգտվում են այն հանգամանքից, որ ՀՀ-ն ունի արտաքին շուկաներ դուրս գալու սահմանափակ հնարավորություններ: Այս պարագայում, հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Թուրքիան շաքարի արտահանման առումով ունի ընդգծված դրական ԲՀԱ: Այսօր, ցավոք, ՀՀ-ում հնարավոր չէ ստեղծել մրցակցային հավասար պայմաններ, իսկ սահմանի բացումը կարող է լուծել այդ խնդիրը:

Սահմանի բացման հնարավոր հետևանքների գնահատման համար կարելի է կիրառել նաև հրեա տնտեսագետներ Ա. Արնոնի, Ա. Սպիվակի և Զ. Վեյնբլաթթի կողմից առաջ քաշած մեթոդը (1996թ.), որը նրանք օգտագործել են Իսրայելի և հարևան արաբական երկրների միջև սահմանների բացման հետևանքները ուսումնասիրելիս: Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ նախ դասակարգվում է Հայաստանի արտահանման և ներմուծման սեկտորները՝ խոշորից մինչև փոքր, այնուհետև առանձնացվում են առաջին քսան ճյուղերը: Նույնը իրականացվում է նաև Թուրքիայի արտահանման և ներմուծման համար: Եթե ՀՀ արտահանման և Թուրքիայի ներմուծման դասակարգումներում կան ընդհանրություններ (աղյուսակ 32), ապա սահմանի բացման արդյունքում բարձր է հավանականությունը, որ ՀՀ-ն կարտահանի այդ ապրանքները Թուրքիա և կներմուծի այն ապրանքները, որոնք ընդհանրական կլինեն ՀՀ ներմուծման և Թուրքիայի արտահանման դասակարգման մեջ (աղյուսակ 33):

Մեթոդի հեղինակների պնդմամբ, եթե երկրների արտահանման և ներմուծման խոշոր քսան խմբերի մեջ 50% համընկում կա, ապա արտաքին առևտուրը փոխադարձ շահավետ է երկու երկրների համար էլ: Տվյալ դեպքում Թուրքիայի արտահանվող և ՀՀ ներմուծվող 20 ճյուղերի շարքում կա 9 համընկում: Սա բավականին լավ ցուցանիշ է, սակայն չի նշանակում, որ Թուրքիայի արտահանման ներուժը սահմանափակվում է միայն այս ճյուղերով:

ՀՀ-ից արտահանվող և Թուրքիա ներմուծվող ապրանքների դասակարգման մեջ կա ընդամենը 7 համընկում, այսինքն մոտ 30%-ի չափով: Սակայն հետաքրքիրն այն է, որ այս յոթ ճյուղերից որոշները առկա են նաև Թուրքիայի հնարավոր արտահանման մեջ: Սա խոսում է այն մասին, որ այս ճյուղերի գծով երկու երկրները ունեն ներճյուղային առևտրի հնարավորություններ:

Ներծյուղային առևտրի զարգացման առումով ՀՀ-ն ունի մի քանի հնարավոր սցենարներ: Առաջինի համաձայն ՀՀ-ն կարող է տարբերակված ապրանքներ առաջարկել առևտուրը խթանելու համար: Օրինակ, ԲՀԱ հաշվարկման ժամանակ մենք նկատեցինք, որ և՛ Թուրքիան, և՛ Հայաստանը ունեն խմիչքի արտահանման հնարավորություններ: Սակայն ՀՀ-ն կարող է դեպի Թուրքիա արտահանել խմիչքի այնպիսի տեսակներ, որոնք Թուրքիայում չեն արտադրվում, և դրանով դառնալ նախընտրելի թուրք սպառողի համար:

Աղյուսակ 32

Թուրքիայից հիմնական արտահանվող ծյուղերը՝ Te և ՀՀ հիմնական ներմուծվող ծյուղերը՝ Ai

#	Անվանումը	Թուրքիայի արտահանումը	ՀՀ ներմուծումը
87	Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր	Te	Ai
72	Սև մետաղներ	Te	Ai
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխ. մասեր	Te	Ai
85	էլեկտր. մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	Te	Ai
61	Տրիկոտաժե հագուստ և հարակից իրեր	Te	--
27	Վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	Te	Ai
73	Իրեր սև մետաղից	Te	Ai
71	Բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժ. մետաղներ	Te	Ai
62	Տեքստիլ հագուստ և հարակից իրեր	Te	--
39	Պլաստզանգված և դրանից իրեր	Te	Ai
8	Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատներ և այլ բոստանային մշակաբույսեր	Te	--
89	Նավեր, նավակներ և այլ լողացող միջոցներ	Te	--
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	Te	--
63	Այլ պատրաստի տեքստիլ իրեր, օգտագործած հագուստ և տեքստիլ իրեր	Te	--
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	Te	--
40	Կաուչուկ և ռետինե իրեր	Te	--
76	Ալյումին և իրեր դրանից	Te	Ai
52	Բամբակ	Te	--
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	Te	--
54	Քիմիական թելեր	Te	--

Աղյուսակ 33

ՀՀ հիմնական արտահանվող ճյուղերը՝ Ae և Թուրքիայի հիմնական ներմուծվող ճյուղերը՝ Ti

#	Անվանումը	ՀՀ արտահանումը	Թուրքիայի ներմուծումը
72	Սև մետաղներ		Ti
71	Բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժ. մետաղներ	Ae	Ti
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք և քացախ	Ae	--
26	Հանքաքար, խարամ և մոխիր	Ae	--
74	Պղինձ և իրեր դրանից	Ae	Ti
76	Ալյումին և իրեր դրանից	Ae	Ti
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	Ae	--
85	Էլեկտր. մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	Ae	Ti
62	Տեքստիլ հագուստ և հարակից իրեր	Ae	--
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ	Ae	--
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխ. մասեր	Ae	Ti
9	Սուրճ, թեյ և այլ համեմունքներ	Ae	--
40	Կաուչուկ և ռետինե իրեր	Ae	Ti
91	Ժամացույցներ և դրանց մասեր	Ae	--
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	Ae	--
70	Ապակի և ապակե իրեր	Ae	--
28	Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ	Ae	--
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	Ae	--
27	Վառելանյութեր, նավթ, և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	Ae	--
90	Սարքեր և ապարատներ օպտիկական, լուսանկարչ. չափիչ, բժշկական և վիրաբուժական, դրանց մասեր և հարմարանքներ	Ae	--

Ներճյուղային առևտրի զարգացման հաջորդ սցենարը կապված է ՀՀ աշխարհագրական դիրքի հետ: Ինչպես գիտենք, Թուրքիայում արդյունաբերական կենտրոններ կարելի է համարել միայն արևմտյան շրջանները, իսկ արևելյան շրջանները նախ պակաս զարգացած են, իսկ երկրորդ աշխարհագրորեն ավելի մոտ են գտնվում ՀՀ-ին: Ուստի, եթե նույնիսկ Թուրքիան ունի որևէ ապրանքի արտադրության բացարձակ առավելություն, իսկ Հայաստանը՝ համեմատական, միևնույն է տրանսպորտային ծախքերը հաշվի առնելով, թուրք սպառողին

ավելի շահավետ կլինի ներմուծել այդ ապրանքները հենց ՀՀ-ից:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ-թուրքական սահմանի բացման հետևանքները միանշանակ դրական կամ բացասական գնահատել հնարավոր չէ: Պարզ է, որ սահմանի բացումը ՀՀ որոշ արդյունաբերական ճյուղերի համար ռիսկային է, իսկ որոշների համար՝ շահավետ: Կարևորը այն է, որ շահող ճյուղերը փոխհատուցեն տուժողների կրած վնասները, ինչի արդյունքում երկիրը ընդհանուր առմամբ կշահի: Ուստի, մեր խնդիրը պետք է լինի սահմանի բացումից հետո գտնել այն ուղիները, որոնք թույլ կտան դրական հետևանքները հասցնել առավելագույնի, իսկ ռիսկերը՝ նվազագույնի: Այնուամենայնիվ, երկու երկրների միջև չմիջնորդավորված առևտրի ծավալման պարագայում որպես այդպիսին, գլոբալ ռիսկեր առկա չեն: Ավելին, որոշ կանխատեսումների համաձայն սահմանի բացման արդյունքում ՀՀ արտահանումը ավելի շատ կաճի, քան ներմուծումը (Տ. Ջրբաշյան), իսկ Համաշխարհային բանկի փորձագետները պնդում են, որ արտահանման ծավալները կկրկնապատկվեն, եթե ՀՀ-ն բաց անի սահմանները և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի հետ (Պոլյակով):

Փաստորեն հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների զարգացման դրական հետևանքները կարելի է ներկայացնել այսպես.

- Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունների կարգավորման առավելությունը կարող է լինել այն, որ Հայաստանը կունենան Միջերկրական ծով դուրս գալու ամենակարճ ճանապարհը, ինչպես նաև Թուրքիա և հատկապես նրա արևելյան շրջաններ որոշակի ապրանքատեսակներ արտահանելու հնարավորություն:
- Թուրքիայի հետ ընդհանուր սահմանի բացումը թույլ կտա շրջանցել տարանցիկ ճանապարհները և կտանի սպառողական շուկայում գների նվազմանը: Սահմանի բացումը կտանի նաև պայմանագրերի միջոցով երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության ամրագրմանը:
- Թուրքիայի հետ տնտեսական հարաբերություններ կառուցելիս պետք է հաշվի առնել նաև նրա հնարավորությունը գյուղատնտեսական, ինչպես նաև արդյունաբերական էժան ու որակով

ապրանքատեսակներ արտադրելու հարցում, քանի որ Թուրքիայի գյուղատնտեսական ապրանքները կողողեն Հայաստանի շուկան, արդյունքում ՀՀ գյուղատնտեսական շուկան կդառնա առավել խոցելի:

- Ներմուծված ապրանքները առավել էժան կլինեն, ինչը բխում է սպառողների շահերից:
- Կզարգանա տուրիզմը դեպի Արևմտյան Հայաստան:
- Հայաստանում կձևավորվի առողջ մրցակցային միջավայր:
- Կկրճատվեն արտաքին հակամարտությունների ռիսկերը, ինչը կհանգեցնի ՕՈՒՆ-երի ներհոսքին:

Վերջին տարիներին Հայաստանի և Թուրքիայի միջև փոխհարաբերությունների հաստատման համար, քաղաքական կամքի ձևավորման նախանշաններին զուգահեռ, նոր խթան է առաջացել հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցի քննարկման համար: Թեև անժխտելի է Հայաստանի տնտեսության համար սահմանի վերաբացման անհրաժեշտությունը, սակայն կան բազմաթիվ հիմնախնդիրներ՝ պայմանավորված երկու երկրների առևտրատնտեսական և ինստիտուցիոնալ տարբերություններով, որոնք քննարկման կարիք ունեն:

Երկու երկրներում էլ կան հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման և՛ կողմնակիցներ, և՛ ընդդիմադիրներ: Այդուհանդերձ պետք է նշել, որ երկու երկրներում էլ կողմ և դեմ արտահայտվողների թիվը գրեթե հավասար է: Հայերը, չգիտես ինչու, մտածում են, որ թուրքերը ցանկանում են բացել սահմանը, որպեսզի կարողանան ջախջախել Հայաստանի տնտեսությունը և թելադրել իրենց քաղաքական կամքը: Բնականաբար կա այս ամենի մեջ ճշմարտության հատիկ, բայց հակառակ կողմից մոտենալու դեպքում, միևնույն բանը մտածում են նաև թուրքերը. հայերը կհոսեն դեպի Թուրքիա, կսկսեն հյուրանոցներ ու տներ կառուցել Վանի ափերին և այլն:

Սահմանի վերաբացման տնտեսական օգուտների մասին վերջին տարիներին կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Դրանք բոլորն էլ, ըստ էության, փաստում են, որ սահմանի վերաբացումը դրական տնտեսական ազդեցություն կունենա երկու

երկրների և ընդհանրապես, տարածաշրջանի վրա: Խնդիրն այն է, թե ինչպես հաշվարկել այդ տնտեսական օգուտները, որ տեղի կունենան տարբեր երկրներում: Ե՛վ այդ մոտարկումների մեծությունը, և՛ գնահատականները կտրուկ տատանվում են տարբեր ուսումնասիրություններում: Սակայն, ակնհայտ է, որ կան մի շարք գործոններ, որոնք անկասկած դրական ազդեցություն կապահովեն Հայաստանի տնտեսության համար սահմանի վերաբացման դեպքում: Ավելին, համարվում է, որ Հայաստանի տնտեսությունը կստանա խիստ դրական իմպուլս, եթե նույնիսկ հայ-թուրքական սահմանը բացվի միայն հաղորդակցության համար՝ առանց վերացնելու հայկական ապրանքների ներմուծման էմբարգոն: Հայաստանը կազատվի «շրջափակված» մականունից, կստանա հնարավորություն արտահանելու և ներմուծելու խոշորածավալ բեռներ, կազատվի վրացական երկաթուղուց առկա միակողմանի կախվածությունից և այլն: Իսկ եթե հանվեն բոլոր տեսակի առևտրական արգելքները, ապա Հայաստանն, անշուշտ, կշահի՝ իր առջև ունենալով Թուրքիայի մեծածավալ շուկան, որտեղ սպառում կարող են գտնել նրա ներկա և ապագա բազմաթիվ արտադրատեսակներ և ծառայություններ՝ էլեկտրաէներգիա, քիմիական արտադրանք, շինանյութ, նույնիսկ սննդամթերք: Միաժամանակ, կարելի է ենթադրել թուրքական կապիտալի մեծ ներհոսք Հայաստան:

Դեռ 2001թ. արված մի հետազոտությունում (“Changing Trade Patterns after Conflict Resolution in South Caucasus”, Պոլյակով, 2001) ցույց է տրվում, որ Հայաստանից Թուրքիա արդյունաբերական ապրանքների արտահանման մեծությունը կարող է տատանվել 35.6-64.7 մլն դոլարի սահմաններում: Հաշվի առնելով որ հաշվարկները հիմնված են 1996-2002թթ. վիճակագրական տվյալների վրա, սա ավելի քան տպավորիչ է: Բնական ռեսուրսների ու էներգետիկայի ոլորտի արտահանումները սպասվում էր ավելացնել մինչև 230 մլն՝ հիմնականում շնորհիվ էլեկտրաէներգիայի ու շինարարական նյութերի: Բացի այդ, արտահանման այս աճը մուլտիպլիկատորի էֆեկտի շնորհիվ պետք է հանգեցներ ՀՆԱ 38% աճի:

Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) «Հայ-թուրքական սահմանի վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար» (Զրբաշյան և

այլք, 2005) ուսումնասիրությունը, փոխարենը, բավական կոնսերվատիվ է սահմանի վերաբացման տնտեսական ներուժի իր կանխատեսումների մեջ: Այստեղ նշվում է, որ սահմանի վերաբացման արդյունքում կարելի է ակնկալել տրանսպորտային ծախքերի նվազում, ընդ որում ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանը կկողմնորոշվի դեպի թուրքական ճանապարհային ուղիները, այլև քանի որ վրացական ընկերությունները ստիպված կլինեն նվազեցնել իրենց սակագները ուժեղացող մրցակցության պայմաններում: Ըստ AEPLAC-ի ստացած արդյունքների՝ ներմուծման և արտահանման կառուցվածքում տրանսպորտային ծախքերը կազմում են ապրանքի գնի 20-25%-ը: Սահմանի վերաբացման արդյունքում կարճաժամկետ հատվածում (1 տարի) կարելի կլինի ակնկալել տրանսպորտային ծախքերի 4.1% նվազում, ինչը կհանգեցնի արտահանումների 5.9% և ներմուծումների 4.7% աճի:

Կարճաժամկետ սցենարով ակնկալվում է նաև, որ առևտրի ծավալների աճը կհանգեցնի իրական ՀՆԱ-ի 0.67% աճի[165], ինչը կգերազանցի 16 մլրդ դրամը[166]: Իրական աշխատավարձի դրույքաչափը կաճի 0.28%-ով, ինչը, զբաղվածության 0.14% աճի հետ միասին, կնպաստի աշխատանք ունեցողների բարեկեցության բարելավմանը. կարճաժամկետում ընդհանուր իրական տնօրինվող եկամուտը Հայաստանում կաճի 0.55%-ով, իսկ մեկ շնչի հաշվով իրական տնօրինվող եկամուտը՝ 0.50%-ով:

Միջնաժամկետ հատվածում (1-5 տարի) Հայաստանից Թուրքիա արտահանման ծավալները կաճեն 17.4 անգամ (համեմատած

---

[165] Հաշվարկները վերցված են 2003թ. AEPLAC կողմից ներկայացված, հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար. ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ ուսումնասիրությունից: Հաշվարկները բերվում են Հաշվարկելի ընդհանուր հավասարակշռության (CGE) մոդելի հիման վրա, որն օգտագործվում է Հայաստանի տնտեսության վրա հայ-թուրքական սահմանների վերաբացման ընդհանուր տնտեսական ազդեցությունները գնահատելու համար՝ հիմնվելով արտահանման և ներմուծման ծավալների կանխատեսված փոփոխությունների վրա: Քանի որ 2003թ. հետո լուրջ բեկումնային փոփոխություններ չեն եղել երկրների տնտեսական զարգացման ուղղության և ինտենսիվության մեջ, սույն աշխատության շրջանակներում կարող ենք ենթադրել, որ ստացված արդյունքները կիրառելի են նաև այսօրեական կանխատեսումների համար՝ հնարավոր փոքր սխալի առկայությամբ:

[166] Անվանական հաշվարկները իրականացված են հեղինակի կողմից՝ վերջին 4 տարիների համապատասխան միջինացված ցուցանիշների հիման վրա:

2003թ. հետ), մինչդեռ Թուրքիայից կատարվող ներմուծումները՝ ընդամենը 2.3 անգամ: 5 տարվա ընթացքում Հայաստանի իրական ՀՆԱ-ն կարող է աճել 2.7%-ով (67 մլրդ դրամ)՝ բացառապես պայմանավորված սահմանների բացման արդյունքում տրանսպորտային ծախքերի նվազմամբ և առևտրի ծավալների փոփոխությամբ: Իրական աշխատավարձերը կբարձրանան 0.91%-ով, իսկ զբաղվածությունը կաճի 0.43%-ով(կամ 4,808 մարդով): Իրական ներդրումների աճը կլինի 0.59%, իսկ անձնական տնօրինվող եկամուտը կավելանա գրեթե 1.8%-ով: Պետական բյուջեն կունենա մոտ 12 մլրդ դրամ հավելյալ մուտք (կուտակային), ինչը իրական արտահայտությամբ կազմում է ներկայիս մակարդակի 2%-ը:

Մեկ այլ ուսումնասիրություն՝ “A Phased Strategy for Opening Armenia’s Western Border” (Բեյլոք և այլք), ցույց է տալիս, որ Թուրքիայից կատարվող ներմուծումները կկազմեն 50% ավելի, քան փակ սահմանի պարագայում է: Ի լրումն, սահմանի վերաբացման արդյունքում հեռավորությունների յուրաքանչյուր 10% նվազումը կհանգեցնի ներմուծումների լրացուցիչ 15.6% աճի: Արտահանումը կաճի 38%-ով, իսկ հեռավորության 10% նվազման դեպքում՝ լրացուցիչ 12.6% աճ: Այլ հետազոտություններ արտահանման աճը գնահատում են 14.10 գործակցով, իսկ ներմուծմանը՝ 2.6 (Բաղրամյան, 2007):

Բնականաբար սահմանի վերաբացման կոնկրետ հանգամանքները և պահը կարևոր որոշիչ գործոն կդառնան այս սցենարների իրականացման և առևտրաշրջանառության աճի կոնկրետ քանակների հարցում:

Եվ իրոք, համապարփակ պատկեր ստանալու համար ճիշտ կլինի հաշվարկել սահմանի բացման ազդեցությունը շատ տարբեր կողմերից, ինչպես նաև ժամանակային տարբեր կտրվածքների համար: Ակնհայտ է, որ կարճաժամկետ կտրվածքում լուրջ փոփոխությունների ակնկալիք չենք կարող ունենալ: Սահմանի բացումը ամենևին չի նշանակում, որ անմիջապես կսկսվի զանգվածային ապրանքաշրջանառություն: Առևտրային հարաբերությունները բավական իներցիոն պրոցես են, պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում վերաձևակերպումների, նոր առևտրային պայմանագրերի, շուկաների վերլուծությունների, ինչը հնարավոր չէ անել մեկ

տարվա ընթացքում: Այս դեպքում միակ փոփոխությունը, որ կարելի է ակնկալել, տրանսպորտային ծախքերի նվազումն է, ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանը կսկսի օգտագործել Թուրքիայի ճանապարհները, այլ որ Վրաստանի ճանապարհը կունենա այլընտրանք, և վրացական տրանսպորտային ընկերությունները ստիպված կլինեն մրցակցության առկայության պայմաններում իջեցնել իրենց ծառայությունների գները:

Միջնաժամկետ հատվածում Հայաստանը կհասցնի համապատասխան մեխանիզմներ ստեղծել Թուրքիայի տարածքով Եվրամիության շուկա ավելի ընդգրկուն ապրանքացուցակով դուրս գալու համար: Բավական հեռանկարային է նաև էլեկտրաէներգիայի արտահանումը Թուրքիայի արևելյան շրջաններ, սակայն այդ նախագիծը բավական ծախսատար է և կարող է իրականություն դառնալ միայն երեք-չորս տարվա ընթացքում: Թուրքիայի հետ Հայաստանի ներկայիս ապրանքաշրջանառության ծավալները որոշ չափով կաճեն, հաշվի առնելով այն փաստը, որ ապրանքաշրջանառությունը կիրականացվի առանց միջնորդների, ինչի արդյունքում թուրքական ապրանքի գները ներքին շուկայում էականորեն կնվազեն: Հնարավորություն կստեղծվի նաև հայաստանյան ապրանքների արտահանման համար: Սակայն միջին ժամկետում նույնպես լուրջ փոփոխությունների ակնկալիքներ պետք չէ ունենալ:

Երկարաժամկետ կտրվածքում ակնհայտ է, որ Հայաստանի և Թուրքիայի շուկաները դառնալու են փոխկապակցված: Հայկական արտադրողները ստիպված են լինելու մրցակցության մեջ մտնել թուրքական արտադրողների հետ: Մեր արտադրողների մոտ լուրջ մտավախություններ կան այս կապակցությամբ: Սակայն անհրաժեշտ է չվախենալ հնարավոր մրցակցությունից, քանի որ ցանկացած նմանատիպ ինտեգրացիան անվերապահորեն ենթադրում է մրցակցության աճ, իսկ մրցակցությունը, իր հերթին, նաև դրական իմաստով կարող է առողջարար դառնալ ամբողջ տնտեսության համար: Երկարաժամկետ հատվածում կարելի է ներկայացնել նաև սահմանի վերաբացման մի շարք միջնորդավորված օգուտներ (օրինակ՝ արտահանող ճյուղերին և օտարերկրյա ներդրողներին խթանող ակտիվ տնտեսական քաղաքականություն և ԵՄ-ին Թուրքիայի անդամակցություն), որոնց արդյունքում առևտրային ու մակրո-

տնտեսական փոփոխությունների սցենարները կարող են զգալիորեն բազմազան լինել:

Այս ամենով հանդերձ, բնական է, որ սահմանի վերաբացման տնտեսական օգուտները միակողմանի չեն: Չնայած առաջին հայացքից կարող է թվալ, որ հսկայական ներքին սպառման շուկա և դեպի արտաքին աշխարհ անարգել ելք ունեցող թուրքական տնտեսությունը չի կարող որևէ լուրջ ակնկալիք ունենալ այս գործարքից, սակայն առավել խորը ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թուրքիան պակաս կարևոր օգուտներ չի քաղում իր համար, քան Հայաստանը: Ըստ այդմ, կարելի է նշել առնվազն 3 օգուտներ, որ Թուրքիան կարող է ակնկալել սահմանի վերաբացումից:

Առաջին օգուտն այն է, որ այս գործընթացի բարեհաջող ավարտի դեպքում Թուրքիան մեծապես կբարելավի իր հեղինակությունը ԵՄ առջև և կմեծացնի իր հնարավորությունները անդամակցության գործընթացում կամ կկորզի այլ տնտեսական դիվիդենտներ: Բացի այդ, գնալով ուժեղանում է արտաքին ճնշումը Թուրքիայի վրա՝ ուղղված այս արգելքի վերացմանը. երկրի գործարար համայնքը և քաղաքական ընտրախավն արդեն գիտակցում են, որ սահմանի փակ վիճակը ոչ պակաս վնաս է հասցնում հենց իր՝ Թուրքիայի շահերին, իսկ Եվրամիության հետ բանակցությունների ակտիվացման դեպքում՝ վերջինս բնականաբար չի հանդուրժի փակ սահմանի առկայությունը Արևելյան գործընկերության ծրագրում ընդգրկված երկրի հետ:

Երկրորդ օգուտը Թուրքիայի համար վստահելի այլընտրանքային ուղու ձեռքբերումն է, ինչը հնարավորություն կտա հեշտությամբ իրականացնել էներգակիրների տեղափոխում Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա ճանապարհով: NABUCCO գազամուղը Հայաստանով անցկացնելու ծրագիրն, իրականում, բավական շահեկան է՝ հաշվի առնելով, որ մյուս երկու ուղիները անցնում են Վրաստանով և Իրանով. առաջինն անվստահելի է (հատկապես 2008թ. ռուս-վրացական հակամարտությունից հետո), երկրորդն անընդունելի է Արևմուտքի համար: Սա իրոք և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես մեծ հնարավորություն է բացում Թուրքիայի առջև՝ դարձնելով այն կարևորագույն տրանզիտային երկիր եվրոպական շուկաների համար: Իսկ այս

ծրագրի իրականանալու շանսերը շատ ավելի մեծ կլինեն, եթե Թուրքիան կարգավորի իր հարաբերությունները Հայաստանի հետ:

Երրորդ կարևորագույն տնտեսական օգուտը Թուրքիայի տեսանկյունից իր արևելյան տարածաշրջանների զարգացման հիմնահարցն է: Տնտեսական անջրպետը այս երկրի արևմտյան ու արևելյան պրովինցիաների միջև հսկայական է: Հայաստանի հետ առևտրային հարաբերությունների զարգացումը այս բնակավայրերի համար թերևս ավելի շահեկան կլինի, քան Հայաստանի համար: Ընդ որում այստեղ ապրող բնակչության թիվը մի քանի անգամ գերազանցում է Հայաստանի ազգաբնակչությունը, և նրանք կարող են դառնալ արևելք-արևմուտք կապող օղակը, իսկ սահմանային առևտուրը Հայաստանի հետ կարող է լուրջ գործոն դառնալ այս շրջանների տնտեսական զարգացման համար[167]: Այս շրջանների տնտեսական ցուցանիշներն էականորեն տարբերվում են Թուրքիայի միջին տնտեսական ցուցանիշներից: Հետևաբար ռեգիոնալ զարգացման տեսակետից Հայաստանը Թուրքիայի սահմանամերձ շրջանների նկատմամբ բավական առաջանցիկ տեղ է գրավում, քանի որ մեր ՀՆԱ-ի մեկ շնչին բաժին հասնող մասը մոտավորապես 3 անգամ գերազանցում է Թուրքիայի արևելյան շրջանների համապատասխան ցուցանիշը: Այս պատճառով սահմանամերձ առևտրի առկայությունը միանշանակ նպաստավոր է Հայաստանի համար՝ միաժամանակ նպաստավոր լինելով նաև մեր արևմտյան հարևանի համար, քանի որ այս պարագայում Թուրքիան առանց լրացուցիչ ներդրումների կկարողանա էապես բարձրացնել կյանքի մակարդակը և ՀՆԱ ցուցանիշն այդ ռեգիոնում:

Ավելին, Թուրքիան ունի ոչ միայն տնտեսական, այլև կոմունիկացիոն շահ սահմանի վերաբացումից: Կարս-Գյումրի երկաթգիծը խոշոր տրանսպորտային կապուղի է դառնում Թուրքիայի համար՝ կապելով նրան իր արևելյան հարևանների հետ, այդ թվում՝ Կենտրոնական Ասիայի երկրների և բարեկամական Ադրբեջանի հետ:

Հայ-թուրքական սահմանի վերաբացման հնարավոր տնտեսական օգուտները և վտանգները հասկանալու համար՝ փորձենք

[167] "The Economic And Social Consequences Of Reopening The Armenian Turkish Border: The Implications For The South Caucasus, Turkey, And Europe", James Bosbotinis, Irina Ghaplanyan.

առանձին-առանձին վերլուծել 2 երկրների տնտեսությունների հիմնական ոլորտները՝ հատուկ ուշադրություն դարձնելով երկու երկրների արտահանման կառուցվածքի վրա:

Տնտեսագիտության տեսությունը փաստում է, որ երբ երկու՝ մեծ և փոքր երկրներ սկսում են համագործակցել, նախապատվությունը տրվում է վերջինին, և այն ավելի շատ է շահում: Այս օրինաչափությունը կոչվում է «փոքր լինելու առավելություն»: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ չնայած սահմանի վերաբացումը ավելի շահավետ է Հայաստանի համար տնտեսական տեսանկյունից, Թուրքիան ավելի շատ կշահի՝ ելնելով քաղաքական բովանդակությունից:

Ամենակարևոր հարցերից մեկը Հայաստանի և Թուրքիայի միջև էներգետիկ ռեսուրսների առևտրի հնարավորությունն է: Սահմանի վերաբացման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանա Թուրքիային վաճառել իր էլեկտրաէներգիան, ինչի արտադրման հնարավորությունները գերազանցում են տեղական պահանջարկին: Սա լիովին իրատեսական ու հեռահար հնարավորություն է: Ավելին, ապագայում հնարավոր է ստեղծել համատեղ ձեռնարկություններ, որտեղ էլեկտրականությունը կմատակարարվի Հայաստանի, իսկ հումքը՝ Թուրքիայի կողմից:

Թուրքիան ունի էներգիայի անընդհատ աճող սպառման և ներմուծումների զգալի հավակնություններ: Դա երկրի աշխարհագրական դիրքի հետ մեկտեղ այն դարձնում է էներգակիրների միջազգային առևտրի հոսքերի կարևոր նպատակակետ կամ տարանցիկ տարածք: Սա ենթադրում է համապատասխան հետևություններ բոլոր հարևանների համար, որոնք կարող են լինել թե՛ պոտենցիալ մատակարար և թե՛ տարանցիկ տարածքի հարևան օղակ:

Այսպիսով, հայ-թուրքական սահմանի բացման արդյունքում Հայաստանի տնտեսության մեջ էական փոփոխություններ տեղի կունենան: Սակայն կարևորագույն ձեռքբերումների կողքին կլինեն նաև չափազանց վտանգավոր ռիսկի գործոններ, որոնց մանրազնին գնահատումը և չեզոքացումը միայն թույլ կտա հասնել ցանկալի արդյունքների:

Թուրքիայի հետ սահմանի վերաբացումը պետք է խթանի Հայաստանում օտարերկրյա ներդրումների ներգրավումը, քանի որ

թուրքական շուկայի մատչելիությունն ու աշխարհի հետ տարանցիկ նոր կապը օտարերկրյա ներդրողների համար ավելի գրավիչ կդարձնեն ապագա գործունեությունը Հայաստանում: Այս գործոնը առավելագույն ազդեցություն կունենա Հայաստանի և Թուրքիայի միջև հատկապես ազատ առևտրի հաստատման դեպքում: Ավելին, ճիշտ կազմակերպման և հետևողական մոտեցման դեպքում Թուրքիան ինքը կարող է գրավիչ գործընկեր դառնալ այս տեսանկյունից:

Բանն այն է, որ Թուրքիան հարաբերականորեն ավելի շատ է (մեկ շնչի հաշվով մոտ 3 անգամ) ներդրումներ կատարում լիկվիդային միջոցների (կապիտալի և ֆիքսված կապիտալի տարբերություն) մեջ, քան Հայաստանը: Դրանք հետագայում կարող են հոսել դեպի Հայաստան: Հայաստանում վերջին տարիներին ֆիքսված միջոցների մեջ ներդրումների շատ բարձր աճը եղել է տնտեսության զարգացմանը ոչ համընթաց: Դա պայմանավորված է շինարարության ու հանքարդյունաբերական ոլորտներում ներդրումներով և չի ենթադրում մասնավորապես գյուղատնտեսության կամ արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտներում հետագա զգալի առաջխաղացում:

Թուրքիան իր առանձին ոլորտներում պահպանում է օտարերկրյա սեփականության սահմանափակումներ (հեռարձակում՝ 25%, օդային ու ծովային տրանսպորտ՝ 49%) և որոշ ոլորտներում՝ հատուկ թույլտվությունների համակարգ: Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը մեկ շնչի հաշվով զգալիորեն զիջում է Թուրքիայի, Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի զարգացող երկրների խմբի այդ ցուցանիշին: Հայաստանում ներդրումների առնչությամբ պետք է առանձնացնել այն նկատառումները, որ Հայաստանի համար ապագա ներդրումային նախագծերում թուրքական միջոցների հնարավոր ներգրավման առնչությամբ անհրաժեշտ է ուղիներ փնտրել՝ դրա արդյունավետությունը բարձրացնելու համար, ինչն այդ նախագծերում պետք է արտահայտվի տեխնոլոգիայի փոխանցմամբ, աշխատատեղերի ստեղծմամբ և սոցիալ-տնտեսական այլ կարևոր հայեցակետերի ընդգրկմամբ: Այն նախագծերում, որտեղ Հայաստանի կառավարությունը կլինի բանակցային կողմ, սա պետք է ապահովվի առնչվող պարտավորեցնող մեխանիզմներով: Մյուս կողմից, պարտադիր պետք է դիտարկել

երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը սահմանափակելու հարցը: Թեև Հայաստանում ներդրումների մակարդակը պայմանավորված է զարգացման ընդհանուր խնդիրներով, սակայն տնտեսության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ է ավելի շատ և ոչ միայն հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների խրախուսումը: Հայաստանում ներդրողների համար անհրաժեշտ է գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքների արտադրության ճյուղերը գրավիչ դարձնել: Խթանների ավանդական տարբեր միջոցների (արտոնյալ հարկային, մաքսային, վարկային և այլն) մշակման ու կիրառման հետ մեկտեղ պետք է բարելավել ներդրումային միջավայրը, ներառյալ՝ ուժեղացնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունն ու մրցակցային միջավայրը, նվազեցնել կոռուպցիան և այլն:

Թուրքական հսկայական շուկան բնականաբար գրավիչ ազդակ է դեպի այդ երկիր հայկական ապրանքների արտահանումը զարգացնելու համար: Տեսականորեն սահմանի վերաբացման արդյունքում հայաստանյան արտադրողները անսահմանափակ իրացման շուկա են ձեռք բերում: Սակայն գործնականում կան շատ սահմանափակումներ անգամ փակ սահմանի վերացման պարագայում:

Թուրքիան պաշտպանում է տեղական արտադրողի շահերը բարձր մաքսավճարների և քվոտաների միջոցով ավելի, քան Հայաստանը: Հայաստանում շատ ներկրվող ապրանքատեսակների վրա չի գործում ներմուծման մաքսեր, իսկ առավելագույն դրույքաչափը 10% է, մինչդեռ Թուրքիայում միջին դրույքն է կազմում 10%, իսկ ապրանքերի 1/5 հարկվում է ավելի քան 10% մաքսադրույքով: Ամենապաշտպանված ոլորտներից մեկը գյուղատնտեսությունն է: Ի համեմատ Թուրքիայի՝ Հայաստանը շատ ավելի սակավ ներմուծման սահմանափակումներ է կիրառում: Սահմանի վերաբացման արդյունքում այս անհամապատասխանությունը անպայման զգացնել կտա իրեն:

Մյուս կողմից՝ մի երկիրը որպես մյուսի հիմնական արտահանումների պոտենցիալ շուկա դիտարկելիս Հայաստանի և Թուրքիայի 10 ամենախոշոր ներմուծումների և 10 ամենախոշոր արտահանումների վիճակագրության համեմատական վերլուծությունը

ցույց է տալիս, որ նախ՝ հիմնական ներմուծումների նկատմամբ գործող դրույքաչափերը երկու երկրների դեպքում էլ շատ բարձր չեն, և ընդհանուր առմամբ՝ Թուրքիայի դրույքաչափերը փոքր-ինչ ավելի բարձր են Հայաստանի դրույքաչափերից:

Իսկ եթե դիտարկենք մի երկիրը որպես մյուսի հիմնական արտահանումների պոտենցիալ շուկա, ապա Հայաստանի արտահանումները Թուրքիայում չեն բախվի շատ բարձր դրույքաչափերի՝ բացառությամբ խմիչքների ու սպիրտների: Ինչ վերաբերում է Թուրքիայի արտահանումներին, ապա պետք է նշել, որ արդեն կա բավականաչափ հաստատված առևտուր, և Թուրքիան այսօր էլ Հայաստանի հիմնական մատակարարների թվում է: Ընդհանուր առմամբ Թուրքիայի հիմնական արտահանումները Հայաստանում նույնպես չեն բախվի շատ բարձր դրույքաչափերի՝ բացառությամբ մանածագործվածքների ու հագուստեղենի և մրգերի ու ընկույզների:

Պետք է նշել, որ այս համեմատությունը չի ժխտում այն փաստը, որ Թուրքիայի դրույքաչափերը բոլոր ապրանքների նկատմամբ միջինով շատ ավելի բարձր են, քան Հայաստանի դրույքաչափերը: Ավելին՝ պետք է նորից ընդգծել, որ Թուրքիան իր հիմնական գործընկերոջ՝ ԵՄ-ի հետ ունի ազատ առևտրի ռեժիմ, ինչը զգալի խոչընդոտ է հայկական արտահանումների համար: Հետևաբար նշված երկկողմ համեմատությունը Թուրքիայի հետ առևտրի համար միայն նվազագույն հիմքեր է տալիս, քանի որ նույնիսկ դրույքաչափերի հավասար պայմանների դեպքում թուրքական արտահանողները հայկական շուկայում չեն բախվի այնպիսի արտոնյալ մրցակցության, որին կբախվեն հայկական արտահանողները թուրքական շուկայում՝ ի դեմս ԵՄ-ի արտահանողների: Արդյունքում Թուրքիայի հետ առնվազն արդյունաբերական ապրանքների ազատ առևտրի շուրջ բանակցումը Հայաստանի համար կլինի ճիշտ ռազմավարություն:

Ներկայումս թուրքական ապրանքները Հայաստան են ներմուծվում Վրաստանի սահմանով: Երբ սահմանը բացվի, թուրքական ապրանքները հնարավոր կլինի հասցնել Հայաստան անմիջապես Թուրքիայից, ուստի տրանսպորտային ծախքերը կնվազեն: Այս պարագայում հայ սպառողները կշահեն: Սակայն իրականում խնդիրն այն է, որ չկա ոչ մի երաշխիք, որ ներմուծողների շրջանում մրցակցություն կհաստատվի: Կա իրական վտանգ, որ մի քանի խոշոր

օլիգարխներ կարող են շարունակել վերահսկել ներմուծումների հիմնական մասը: Այս պարագայում մոնոպոլիստները հնարավորություն կունենան պահել գները բարձր՝ միևնույն ժամանակ օգտվելով նվազող տրանսպորտային ծախքերից, ինչի հետևանքով օգուտները կկենտրոնանան մի քանի ընտանիքների, այլ ոչ թե սպառողների լայն շրջանակի մոտ:

Հայաստանի արտադրողների շահերը հասկանալու համար, նրանց ևս կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. Առաջին խմբում էներգաարդյունաբերության և հումք արտադրող խոշոր ընկերություններն են (պղինձ): Հայաստանի արտահանման հիմնական մասը հիմնված է հումքի վրա: Այս խմբի վրա շատ քիչ կլինի սահմանի վերաբացման ազդեցությունը: Երկրորդ խումբը կարելի է կազմել միջին և մանր արտադրողներից, որոնք արտադրում են տեղական շուկայի համար, հիմնականում՝ գյուղատնտեսական և սննդի արդյունաբերության ոլորտները: Ենթադրվում է, որ թուրքական էժան արտադրանքը կարող է լուրջ վնաս հասցնել այս խմբի արտադրողներին, և նրանց մի մասը կարող է անգամ սնանկանալ: Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար սահմանված արտոնությունները ևս կարող են բավականին էժանացնել այդ կազմակերպությունների կողմից թողարկվող արտադրանքը, ինչը կարող է վտանգ ներկայացնել Հայաստանի համար՝ այդ գոտիներից դեպի Հայաստան էժան ապրանքների մեծ հոսքերի դեպքում: Թեև, մյուս կողմից, սա կարող է լավ հնարավորություն համարվել հայկական կապիտալի համար, քանի որ չկա որևէ սահմանափակում ազատ գոտիներում գործող կազմակերպություններում օտարերկրյա կապիտալի մասնակցության համար: Բացի դրանից՝ լավ հնարավորություն կարելի է համարել այդ գոտիներում արտադրվող ապրանքները, որոնք չեն արտադրվում Հայաստանում:

Թուրքական արտադրողների հիմնական առավելություններից մեկը կառավարության կողմից լուրջ աջակցությունն է: Ընդ որում թուրքական կառավարությունը աջակցում է իր արտադրողին 3 հիմնական ուղղություններով՝ պաշտպանելով տեղական արտադրությունը, սուբսիդավորելով տեղական արտադրությունը և խթանելով արտահանումը:

Թուրքիայի դրույքաչափերը բոլոր ապրանքների նկատմամբ

միջինով շատ ավելի բարձր են, քան Հայաստանի դրույքաչափերը: Կան բազմաթիվ հատուկ, խառը և փոփոխական մաքսատուրքեր: Գործող ոչ արժեքային սակագների բարդ համակարգը թափանցիկության պակասի պայմաններում կարող է ստեղծել անկանխատեսելիություն և, մասնավորապես, արժեքային համարժեքներով ստանձնած պարտավորությունների խախտման հնարավորություն տալ: Մյուս կողմից՝ գործող դրույքաչափերի պարզ միջինը գերազանցում է շատ գործընկեր երկրների նույնիսկ պարտավորություններով ամրագրված դրույքաչափերի միջին մակարդակը: Գործող դրույքաչափերի մեկ հինգերորդ մասը 10%-ից բարձր է, ինչը լրացուցիչ վկայում է սակագնային պաշտպանության ընդհանուր բարձր մակարդակի մասին:

Սակագների դրույքաչափերը խիստ տարբեր են՝ ըստ ոլորտների ու ըստ ապրանքների մշակման աստիճանի: Գյուղատնտեսությունը ստանում է ամենաբարձր պաշտպանությունը, ինչը մեծ մասամբ կարող է այդ շուկա չթողնել ցանկացած ներմուծողի: Մնացած ոլորտներում շուկայի մատչելիությունը կախված է ներգրավված ապրանքների մշակման աստիճանից: Այնտեղ, որտեղ ավելի շատ է կարևորվում տեղական արտադրությունը, պաշտպանությունը բարձր է՝ անկախ ապրանքների մշակման աստիճանից (հումքային, կիսավարտ, ավարտված): Արդյունքում մուտքի հնարավորությունը մեծ մասամբ կարող է սահմանափակվել մյուս ճյուղերով: Գործող ու ամրագրված դրույքաչափերի կառուցվածքից երևում է, որ գյուղատնտեսական ապրանքների սակագները ամբողջությամբ ամրագրվել են շատ բարձր մակարդակի վրա, իսկ ոչ գյուղատնտեսական ապրանքների ապագա անհրաժեշտ պաշտպանությունը «ապահովագրվել է» դրանց մեծ մասի սակագների չամրագրմամբ: Մյուս կողմից՝ այնտեղ, որտեղ կա ամրագրում, դա միջինով այնքան բարձր է, որ եթե գործող սակագների միջինը ըստ անհրաժեշտության հասցվի այդ մակարդակին, ապա ամրագրված ներքին ճյուղերը միջինով կստանան մոտ երեք անգամ ավելի բարձր պաշտպանություն:

Թուրքիան անկանխատեսելի գործընկեր է: Թուրքիայի մաքսատուրքերի առավելագույն դրույքաչափերի ամրագրման խիստ ցածր մակարդակը (բոլոր ապրանքների 50%) չի համապատասխանում բազմակողմ առևտրային համակարգի տարրական պահանջ-

ներին: Դա ստեղծում է անկանխատեսելիություն ու անորոշություն երկրի ներմուծման քաղաքականության առնչությամբ, քանի որ չամրագրված դրույքաչափերը կարող են կամայականորեն փոփոխվել: Ավելին՝ շուկաների մատչելիության ընթացիկ բանակցությունների համատեքստում (այն դեպքում, երբ արդեն իսկ 100% ամրագրում ունեցող երկրներից պահանջվում է նվազեցնել դրույքաչափերը) Թուրքիան կարող է դա փոխհատուցել միայն դրույքաչափերի ամրագրման ավելացմամբ:

Թուրքիայում գործում են բազմաթիվ պետական ծրագրեր ու պետական գործակալություններ, որ պետական աջակցություն ու սուբսիդիաներ են տրամադրում տեղական արտադրողին: Ֆերմերները աջակցություն են ստանում ցածր տոկոսադրույքով վարկերի, ինչպես նաև վառելիք ու պարարտանյութեր գնելու համար նախատեսված սուբսիդիաներով: Երբ որոշակի գյուղատնտեսական արտադրանքի գները կտրուկ ընկնում են, կառավարությունը սուբսիդավորում է այդ ապրանքները: Թուրքիան նվազեցնում է այն ներմուծվող ապրանքների մաքսադրույքները, որոնք որպես հումք են օգտագործվում Թուրքիայում արտադրվող ապրանքների համար: Բացի այդ Թուրքիան անհամեմատ ավելի շատ է ծախսում ուսումնասիրությունների ու զարգացման վրա, քան Հայաստանը, ինչը կարող է մեծ առավելություններ տալ նրան երկարաժամկետ հատվածում: Հայաստանի կառավարությունը չի կարող նմանատիպ սուբսիդավորում իրականացնել հայրենական արտադրողի նկատմամբ:

Թուրքական կառավարությունը արտահանման խթանմանն ուղղված իր ողջ քաղաքականությունը իրականացնում է Առևտրի խթանման կենտրոն անունը կրող պետական գործակալության միջոցով: Այս կենտրոնը իր նպատակներն իրականացնում է հետազոտությունների և զարգացման, առևտրին վերաբերող ինֆորմացիայի տրամադրման և հրատարակման, արտահանման ծրագրերի ղեկավարման և միջկառավարական հարաբերությունների շնորհիվ առևտրի խթանման միջոցով: Կառավարությունը խթանում է արտահանումը նաև հարկերի նվազեցման և սուբսիդիաների տրամադրման միջոցով: 16 ապրանքային խմբեր, ինչպիսիք են ձուն, մեղրը, ձկնաբուծական արտադրանքը և այլն, արտահանման սուբսիդիաներ են ստանում իրենց արժեքի 10-20%-ի չափով: Թուրքական կառավա-

ությունը խթանում է արտահանումը սուբսիդավորվող վարկերի միջոցով: 1987թ. կառավարության կողմից ստեղծվել է մի բանկ՝ Eksimbank-ը՝ աջակցելու և ֆինանսավորելու արտահանման սեկտորում աշխատող բիզնեսներին:

Այս ամենին գումարվում է նաև այն հանգամանքը, որ Թուրքիայի տնտեսությունում ստվերի խիստ բարձր մակարդակը կարող են բարձրացնել դեպի Հայաստան արտահանվող թուրքական ապրանքների մրցունակությունը, նաև զգալիորեն դժվարացնել ապագայում հայկական արտահանողների՝ թուրքական շուկայում արդյունավետ մրցակցելու հնարավորությունը: Բացի դրանից՝ սա հերթական անգամ կարևորում է սահմանի վրա Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքների նկատմամբ խիստ և արդյունավետ վերահսկողության անհրաժեշտությունը՝ մտավոր սեփականության իրավունքների խախտումների, տեխնիկական պահանջներին անհամապատասխանության և օրինական գործելակերպի այլ խախտումների վաղ բացահայտման համար:

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտություն է առաջանում բարձրացնել հակագնագցման համար պատասխանատու մարմնի, ինչպես նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարողությունները և վերջինիս ու Թուրքիայի մրցակցության պաշտպանության կառույցի միջև ստեղծել համագործակցության և տվյալների փոխանակման մեխանիզմ: Նախքան ՀՀ էկոնոմիկայի համապատասխան ստորաբաժանման կարողությունների հզորացումը, որպես խնդրի լուծման միջանկյալ տարբերակ կարող է դիտարկվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ համագործակցության ստեղծումը (օրինակ՝ մասնագետներից կազմված համատեղ հանձնաժողովի ձևավորումը):

Սահմանի վերաբացման արդյունքում հետաքրքիր զարգացումներ կարող են նկատվել արդյունաբերական ապրանքների առևտրի ոլորտում: Ավելին, լիովին իրատեսական է երկու երկրների արդյունաբերական որոշ ճյուղերի սերտաճում միևնույն արտադրական շղթայի տարբեր օղակների շուրջ:

Մասնավորապես, Թուրքիայի հանքարդյունաբերությունը, իր տարատեսակ արդյունահանվող հանքանյութերով և կայուն զար-

գացման միտումներով, մոտ հարևանությամբ կարող է դիտարկվել որպես լավ հնարավորություն: Հաշվի առնելով նաև նպատակադրված մրցունակության բարձրացման գնային ու որակական կողմը՝ ոլորտի արտադրանքը կարող է առկա արդյունաբերական տարբեր ճյուղերում անհրաժեշտ հումքի մատակարարման մոտ այլընտրանք հանդիսանալ: Ավելին՝ չմշակված տարատեսակ հումքային նյութերի առկայությունը կարող է հնարավորություն ստեղծել դրանք մշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի ստեղծման ու զարգացման համար: Հայաստանում հանքարդյունաբերությունն ունի սահմանափակ հնարավորություններ: Ավելին՝ հատվածի արդյունքը կախված է ներդրումների մակարդակից և համաշխարհային գներից: Սակայն հին ու նոր հանքանյութերի որոնումների ու արդյունահանման լրացուցիչ հնարավորություններ կան: Որոշ նեղ ճյուղերում մոտ հարևանությամբ հանքարդյունահանման առկայությունը կարող է հանքանյութերի մատակարարման կամ վերամշակման համատեղ նախագծերի իրականացման հնարավորություն տալ:

Թուրքիայի երկաթի և պողպատի կայացած արդյունաբերությունը մոտ հարևանությամբ կարող է դիտարկվել որպես արդյունավետ մատակարարման լավ հնարավորություն: Սակայն այն ունի ընթացիկ վերակառուցման ու արդիականացման և, հետևաբար, որակի խնդիրներ: Այս ուղղությամբ լրավճարների տրամադրումը նույնպես կարող է դիտվել որպես լավ առաջխաղացում, թեև այս ճյուղում արտահանող մրցակից երկրների համար այդ լրավճարների տրամադրման իրավական հիմքերը կարող են վիճահարույց լինել:

Ավանդականորեն ձևավորված ուղղություններից բացի, վերջին տարիներին Թուրքիայի արտահանումը ներառում է տարատեսակ էլեկտրական սարքավորումներ (ներառյալ ՏՏ ոլորտի) և քիմիական արդյունաբերական արտադրանք, ապրանքներ, որոնք Հայաստանը ներմուծում է շատ փոքր քանակներով: Սահմանի վերաբացման պարագայում թուրքական արտահանման ծավալները զգալիորեն կընդլայնվեն՝ ավելի ցածր գների շնորհիվ:

Փոխարերը Թուրքիայում վստահորեն իր շուկան կգտնի հայկական ալկոհոլային և ծխախոտային արտադրանքը, իսկ այնտեղից՝ դեպի եվրոպական շուկաներ: Այս «ներխուժումը» կարող է նպաստավոր շուկայական մթնոլորտ ստեղծել երկու երկրներում:

Թուրքիայի շինանյութի շուկան ևս բավականին զարգացած է և վստահաբար կկարողանա ընդլայնվել դեպի Հայաստան:

Էներգետիկայի բնագավառում կա ներուժ, և կուտակվում է զգալի կարողություն: Գտնվելով էներգակիրների միջազգային առևտրի հոսքի տարանցիկ գոտում՝ երկրի համար լավ հնարավորություն կա մասնագիտանալու հումքի վերամշակման ոլորտներում և հասնելու ինքնապահովման ու զարգացնելու արտահանումները: Իրանը, լինելով նավթային երկիր, չունի նավթի վերամշակման ու, մասնավորապես, բենզինի արտադրության բավարար կարողություններ և բենզին է ներմուծում: Ներմուծվող գազից արտահանվող էլեկտրաէներգիայի օրինակով հնարավոր կլինի ներմուծվող նավթից արտահանվող բենզին արտադրել՝ ընդլայնվող հարևան շուկաների համար:

Գյուղատնտեսությունը կարևորագույն դեր ունի Թուրքիայի արտահանման կառուցվածքում: Հայ-թուրքական սահմանի վերաբացման արդյունքում Հայաստանի նույն ոլորտը ևս կկողմնորոշվի դեպի արտահանում՝ շատ ավելի մեծ չափով: Այս արտահանումները, սակայն, լիովին այլ հարթության վրա կլինեն, եթե փորձենք համեմատել դրանք գնային տեսանկյունից՝ աշխատուժն ավելի էժան է Թուրքիայում, ուստի հայկական ապրանքները չեն կարող մրցունակ դիտվել այս համատեքստում: Մյուս կողմից, սահմանի փակ լինելու պատճառով Թուրքիայի սահմանամերձ շրջանները զբաղված են փոքր գյուղացիական տնտեսություններով և տեղական արհեստներով. այս առումով հայկական գյուղատնտեսական արտադրանքը առավելություն կունենա որակական տեսանկյունից:

Թեև անժխտելի է թուրքական գյուղատնտեսության ներուժը, գյուղատնտեսական հումքի ներմուծումների թուրքական այս պահանջարկի առնչությամբ պետք է դիտարկել հայկական ապագա արտահանումների հնարավորությունը:

Ավելին, թուրքական գյուղատնտեսությունն ունի ցածր արտադրողականություն, և Հայաստանի ու Թուրքիայի գյուղատնտեսական շուկաներում հայկական արտադրողները կարող են մրցունակություն ապահովել միայն անհամեմատ ավելի բարձր արտադրողականության ու արդյունավետության շնորհիվ:

Թուրքիան ունի անտառային տնտեսության զգալի ներուժ, ինչը ենթադրում է անտառային արտադրության շարունակվող զար-

գացում: Թուրքական անտառային արտադրությունը աշխարհագրական մոտ հեռավորության առումով կարող է ծառայել որպես բարենպաստ պայմաններով անտառային արտադրանքի ներկրման հնարավորություն: Սա նույնպես պետք է ներառել բանակցային քննարկման առարկաների թվում:

Թուրքիայի գյուղատնտեսական ոլորտի, ինչպես նաև ձկնարտադրության զգալի ներուժը ենթադրում է ապագայում ներքին արտադրության շարունակվող զարգացում: Սա կարող է ուղեկցվել ինչպես հնարավոր ներմուծումների՝ ներքին արտադրանքով փոխարինմամբ, այնպես էլ արտաքին շուկաների անընդհատ ընդլայնմամբ և արտահանման ծավալների աճով: Ի լրումն՝ Թուրքիայի ներքին գյուղատնտեսական արտադրողներն ընթացիկ բարեփոխումների արդյունքում ստանում են զգալի պաշտպանություն: Վերջինիս հետ առնչվող հիմնական խնդիրներն են. մի կողմից՝ պաշտպանությունը արտահայտվում է պաշտոնական ուղղակի ներքին զգալի աջակցությամբ, մյուս կողմից՝ նվազեցվում են միջամտական գնումները, որի արդյունքում ներքին շուկայում ձևավորվող ցածր գները կարող են նվազեցնել այդ շուկայի մատչելիությունը ներմուծումների համար և ավելացնել առնչվող ապրանքների մրցունակությունը հարևան շուկաներում:

Սակայն այս ամենով հանդերձ, Թուրքիայում ներքին գյուղատնտեսական արտադրանքի չհարկման արդյունքում այն ավելի բարենպաստ վիճակում է ներմուծումների համեմատությամբ: ԱԱՀ-ի չհարկման արդյունքում տեղի է ունենում միջազգային առևտրի հիմնարար սկզբունքի՝ ազգային վերաբերմունքի խախտում: Եկամտահարկի չհարկման արդյունքում ըստ էության ոլորտին տրամադրվում է համարժեք լրավճար, որը կարող է զգալիորեն գերազանցել ներքին աջակցության թույլատրվող չափը (10%):

Հայաստանում լրավճարների և ընդհանուր ծառայությունների ուղղություններով պետական աջակցությունը պետք է լինի նպատակային և արդյունավետ: Հայաստանի շուկայում գների ու ներմուծման ծավալների շարունակական վերահսկողություն պետք է կատարվի և, ըստ անհրաժեշտության, հակագնագցման, փոխհատուցման և պաշտպանության միջոցներ պետք է կիրառվեն:

Ոռոգման մեխանիզմը պետք է վերանայվի ամբողջությամբ:

Ջրօգտագործողին աջակցելուց բացի՝ պետք է միջոցները ուղղվեն ոռոգման մատակարարման արդյունավետության բարձրացմանն ու սակագների նվազեցմանը: Այս առումով ջրամատակարարողին աջակցելու հետ մեկտեղ պետք է նաև դիտարկվի ոլորտում մրցակցություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Հայաստանի համար վերը նշված բացահայտ ոչ բարենպաստ դիրքից լավագույն ելքը Թուրքիայի հետ արդյունաբերական ապրանքների մասով ազատ առևտրի համաձայնագիր կնքելն է (գյուղատնտեսական ապրանքների մասով բանակցությունները ավելի հեռու ապագայի խնդիրներ են): Օ-ական մաքսատուրքերի երկկողմ պարտավորությամբ Հայաստանը կապահովագրվի Թուրքիայի սակագնային դրույքաչափերի հնարավոր փոփոխություններից ու բազմակողմ բանակցությունների արդյունքում չհավասարակշռված լրացուցիչ պարտավորություններից և կստանա շուկայի հավասար մատչելիություն: Գյուղատնտեսական ապրանքների համար նշված համաձայնագրում պետք է ներառել գործող դրույքաչափերը ապագայում չբարձրացնելու երկկողմ պարտավորություն:

Թուրքիայի հետ հետագա առևտրային գործընկերությունը պետք է նաև դիտարկվի ԵՄ-ի հետ նրա պարտավորությունների և ԵՄ-ի հետ Հայաստանի ձեռք բերած համաձայնությունների համատեքստում: Եթե Հայաստանը վայելում է ԵՄ-ի՝ Արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP+) շրջանակներում ԵՄ-ի համապատասխան շուկաների արտոնյալ մատչելիություն, ապա սկզբունքորեն դա պետք է տարածվի նաև Թուրքիայի շուկաների վրա: Մինչ ազատ առևտրի համաձայնեցումը կամ որպես դրան այլընտրանք՝ Թուրքիայի հետ նոր ստեղծվող առևտրատնտեսական հարաբերությունների հանգամանքներում GSP+ արտոնյալ կարգավիճակ պետք է ձեռք բերվի միանգամից: Այլապես պետք է քննարկվի դրան որոշակի ժամանակահատվածում անցնելու տարբերակը: Հայաստանում պետք է նախաձեռնվեն Թուրքիայի հետ որևէ արտոնյալ առևտրի վերաբերյալ իրազեկության բարձրացման միջոցառումներ:

Իրոք, երկու երկրների սահմանամերձ որևիցե հատվածում, թեկուզ որոշակի ժամանակահատվածով միայն տնտեսական գոտու ստեղծումը կարևորագույն ազդակ կարող է հանդիսանալ հատուկ: Ենթադրվում է, որ նմանատիպ նախաձեռնությունը զգալիորեն

կնպաստի երկու հասարակություններում նպաստավոր մթնոլորտի ձիավորմանը:

Թուրքիայում կան ներդրումների խթանման բազմաթիվ ծրագրեր, որոնց զգալի մասը ուղղված է արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների զարգացմանը: Դրանցով տրամադրվող հնարավորություններից արդյունավետ կերպով օգտվելու դեպքում թուրքական կազմակերպությունները (հատկապես փոքր և միջին ձեռնարկությունները՝ ՓՄՁ-ները) կարող են զգալիորեն նվազեցնել իրենց գործառնական ծախսերը և, հետևաբար, ավելի մրցունակ գտնվել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում: Ավելին՝ ներդրումային մի շարք ծրագրեր ուղղված են տարածաշրջանային անհամաչափ զարգացումը հարթելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի արևելյան շրջանները իրենց զարգացման մակարդակով բավականին զիջում են արևմտյան շրջաններին, պետական աջակցության և արտոնությունների զգալի մասը կուղղվի նաև Հայաստանի հետ սահմանամերձ շրջաններին:

Թուրքիայի ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալությունն ունի թուրքական ՓՄՁ-ների և արտասահմանյան ընկերությունների համագործակցության տվյալների բազա: Այս առումով գործակալության և հայկական համապատասխան պետական կառավարման մարմնի միջև համագործակցությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանում գործող ՓՄՁ-ներին՝ դրանց համար ստեղծելով արտահանման հնարավորություններ:

Հայ-թուրքական սահմանի վերաբացումից անմիջապես հետո անհրաժեշտ է ստեղծել համագործակցության ծրագրեր Թուրքիայի ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալության և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջև: Այդ ծրագրերով պետք է նախատեսվի հայկական և թուրքական ՓՄՁ-ների տվյալների համատեղ բազայի ստեղծում, ինչը կարող է կարևոր հիմք հանդիսանալ երկրների ՓՄՁ-ների միջև համագործակցության խթանման և, հետևաբար, Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման համար:

- Թուրքիան որոշ ներմուծումների նկատմամբ տուրքերի և հարկերի նպատակային զիջումներ է կատարում, որոնք կարող են հանգեցնել ներմուծող ամբողջ ոլորտների արտադրական և/կամ արտահանման աջակցության: Հետևաբար այդ զիջում-

ները կարող են դիտարկվել որպես հատուկ լրավճարներ, որոնք բազմակողմ առևտրի շրջանակներում աջակցության արգելված միջոց են համարվում: Մասնավորապես Թուրքիայի ոչ բարենպաստ շրջաններում «Ներդրումների աջակցության ծրագիրը» կարող է ներդրումներ խթանել երկրի այնպիսի շրջաններում, որոնք նեղ մասնագիտացված են որոշակի ոլորտներում:

- Ամեն դեպքում հետաքրքրական է այդպիսի աջակցության փորձը: Հայաստանը նույնպես պետք է դիտարկի շրջանների զարգացման ծրագրերի շրջանակներում առանձին ճյուղերի աջակցելու հնարավորությունը և ընդհանուր առմամբ շրջանների զարգացման անհրաժեշտությունը:
- Թուրքիայի պետական գնումների համակարգը զարգացում է ապրում՝ դառնալով ավելի պարզ ու արդյունավետ: Կան մրցույթների օտարերկրյա մասնակիցների հստակորեն սահմանված իրավասություններ, թեև պահպանվել է ընթացքում դրանք փոփոխելու հնարավորություն և ընթացակարգերի թափանցիկություն: Համակարգի կանոններին առնչվող մտահոգություններից է մրցույթների տեղական մասնակիցներին տրվող գնային արտոնությունը, որի չափը (15%) կարող է ոչ բարենպաստ վիճակ ստեղծել մրցակիցների համար: Թուրքիայի մեծածավալ պետական հատվածի բազմատեսակ գնումների կարիքները կարող են մոտ հարևանությամբ դիտվել որպես լավ հնարավորություն:
- Թուրքիան ունի գործընկեր երկրների հետ փոխհամաձայնեցված առևտրի նշանակալի փորձ: Թուրքիայի զարգացման կայուն միտումներ գրանցող տարատեսակ տնտեսական ոլորտները մոտ հարևանությամբ կարող են ստեղծել փոխհամաձայնեցված առևտրի լայն հնարավորություններ. Կարելի է զարգացնել արտահանումների և ներմուծումների փոխշահավետ բազմաթիվ տարբերակներ՝ ելնելով նաև վճարային հաշվեկշռի ու արտարժույթի հետ կապված հնարավոր խնդիրներից: Ապագա զարգացումները կարող են ներառել ամբողջ արդյունաբերական ճյուղերի փոխկապակցված զարգացման

նախագծեր՝ փոխադարձ մատակարարումների, բարձր տեխնոլոգիական համատեղ ներուժի և ներդրումների ներգրավմամբ:

Տնտեսական օգուտների թվին կարելի է դասել և այն հանգամանքը, որ սահմանի վերաբացման արդյունքում մեր երկիրը վերջապես կկարողանա վերահսկել ներկայումս էլ փաստացի իրականացվող հայ-թուրքական ապրանքաշրջանառությունը: Ավելին, անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի նաև կարգավորել այդ հարաբերությունները և պաշտպանել հայ գործարարների շահերը: Հայ-թուրքական սահմանի վերաբացումից և երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Թուրքիայում հայկական դիվանագիտական ծառայությանը կից առևտրական ներկայացուցիչը կամ ներկայացուցչությունը կարող է մեծապես օգտակար լինել թե՛ հայկական արտահանողների, և թե՛ Հայաստանի պետական մարմինների գործունեության համար:

Ուստի հայ-թուրքական սահմանի վերաբացումից անմիջապես հետո անհրաժեշտ է Թուրքիայում հիմնադրել առևտրական ներկայացուցչություն, որի գործառույթներից պետք է լինեն հայկական տնտեսվարող սուբյեկտների, դրանց աջակցող կառույցների և Հայաստանի պետական մարմինների համար թուրքական տարբեր շուկաների, Թուրքիայում օրենսդրական փոփոխությունների և տնտեսական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը:

Արտահանման խթանման գործում մեծապես կարևորվում է Զարգացման հայկական գործակալության արդյունավետ աշխատանքը: Անհրաժեշտ է մշակել արտահանման խթանման ծրագրեր՝ մասնավորապես կապված արտահանման վարկավորման և ապահովագրության հետ, որի իրականացման համար պատասխանատու կլինի Զարգացման հայկական գործակալությունը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է բարելավել գործակալության աշխատանքների արդյունավետությունն ու թափանցիկությունը, հանրամատչելի դարձնել ԶՀԳ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:

Թեպետ հակամրցակցային համաձայնությունները Թուրքիայում արգելված են, Մրցակցության պաշտպանության մարմնի խորհուրդն իրավասու է մի շարք դեպքերում թույլատրել այդ համաձայնությունները, ինչը կարող է չարաշահումների առարկա հանդիսանալ և

վտանգավոր լինել հայ տնտեսվարող սուբյեկտների համար:

Այս առումով կարևոր է նաև գործարարության շրջաններում բարձրացնել շուկայի պաշտպանության այդ միջոցների ու դրանց առնչվող գործընթացների մասին իրազեկությունը, որպեսզի շուկայում ոչ ցանկալի զարգացումների դեպքում ապահովվի գործարարության արագ արձագանք:

Հայաստանը պետք է հետևողականորեն անհրաժեշտ բարձրության հասցնի իր համապատասխան մարմինների կարողությունները և առնչվող գործընթացների իրականացման մեխանիզմների արդյունավետությունը՝ կապված հակագնագցման, լրավճարների փոխհատուցման և պաշտպանական միջոցների հետ: Խիստ կարևորվում է պատասխանատու մարմինների կողմից իրականացվող անընդհատ վերահսկողությունն ու սեփական նախաձեռնությամբ պարբերական ստուգումները: Այս առնչությամբ անհրաժեշտ է նաև կազմակերպել մաքսային մարմնի հետ արդյունավետ և անընդհատ տեղեկատվական համագործակցություն:

Տնտեսապես հարաբերականորեն ավելի մեծ ներուժ ունեցող երկրի հետ ապագա գործընկերությունը շահավետ դարձնելու համար անհրաժեշտ է.

- Առևտրի առնվազն հավասար պայմանների հաստատում՝ շուկայի մատչելիության առնչությամբ: Թուրքիան ԵՄ-ին անդամակցության գործընթացի շրջանակներում ունի երրորդ երկրներին ԵՄ-ի կողմից տրամադրվող առևտրի նույն արտոնությունների տրամադրման պարտավորություն, ներառյալ՝ միակողմանի արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP+) ու ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում:
- Ներքին արտադրողների մրցունակության ու արդյունավետության բարձրացմանը և բավարար խրախուսմանը ուղղված ընդգրկուն ռազմավարության մշակում ու համապատասխան միջոցառումների իրականացում, ներառյալ՝ լիարժեք մրցակցային դաշտի ապահովում, ՓՄՁ-ների հետևողական զարգացում, հետազոտությունների ու զարգացման խրախուսում և պետական նպատակային աջակցություն,
- Ներքին արտադրողների պաշտպանությանը ուղղված օրենս-

դրության արդյունավետ կիրառում ու համապատասխան միջոցառումների իրականացում, ներառյալ՝ շուկայի պաշտպանության ԱՀԿ-ի այնպիսի կանոնների արդյունավետ կիրառումը, ինչպիսիք են հակագնագցման, լրավճարների փոխհատուցման և պաշտպանական միջոցների դրույթները:

Սահմանամերձ շրջաններում աշխատանքային միգրանտների հոսքերի կանոնակարգում: Թուրքիայի արևելյան շրջաններում (Կարս, Արդահան և այլն) բնակվում են մեծ թվով քուրդ բնակչություն և գործազրկության մակարդակն այստեղ էապես գերազանցում է Հայաստանի սահմանամերձ շրջանների համանման ցուցանիշը: Այդուհանդերձ երկու երկրներում էլ սահմանին հարող բնակավայրերում բնակչության եկամուտները էապես զիջում են իրենց երկրի միջին ցուցանիշներին: Երկու երկրներում էլ այս բնակավայրերի բնակչության հիմնական մասը շարժվում է դեպի քաղաքներ և խոշոր բնակավայրեր ավելի բարեկեցիկ կյանքի համար, և շատ հաճախ նրանք այլևս չեն վերադառնում: Խուսափելու համար Թուրքիայից Հայաստան աշխատուժի մեծ ներհոսքից՝ օգտակար կլինի երկկողմանի քվոտաների սահմանումը աշխատանքային միգրանտների վերաբերյալ:

Այսպիսով, «եթե»-ներն անթիվ են, իսկ ներկայումս ընթացող հայ-թուրքական զարգացումների շուրջ հնչող մտավախությունները բազում. ներկրվելիք ապրանքների որակի ու սննդի անվտանգության խնդիրներ, անշարժ գույքի շուկայում գնաճ ու վարկերի մատչելիության նվազում, օտարերկրյա ներդրումների օրենսդրական կարգավորման բացեր, սեփական արտահանողներին՝ ի շահ և հայ արտահանողներին՝ ի վնաս Թուրքիայի քաղաքականություն և այլն: Մինչ ոմանք համարում են, որ թուրքական առավել մրցունակ ապրանքները կողողեն մեր շուկան, իսկ հայաստանյան արտադրողները հեռանկարում չեն դիմանա տնտեսական մրցակցությանը ներկրման հետ մրցավազքում, մյուսները համարում են, որ մեր շուկան հագեցած է, և որևէ վտանգ չկա:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես վկայում է կատարված վերլուծությունը, Հայաստանից ապրանքների ներմուծումը գերազանցում է արտահանմանը, առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն ունի աճման միտում, արտահանումը ունի հիմնականում հումքային ուղղվածություն, արտաքին ապրանքաշրջանառության մեծ բաժինը ընկնում է հեռավոր արտասահմանյան երկրներին, արտաքին առևտուրը կենտրոնացված է որոշ խումբ երկրների վրա, ներմուծվում են ապրանքատեսակներ, որոնք կարելի է տեղում արտադրել: Հանրապետության համար կարևոր խնդիր է մնում արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորումը՝ արտահանումը խթանելով և ներմուծումը կրճատելով: Բացի այդ, դրան կնպաստի ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացումը, արտասահմանյան ներդրումների, ներգրավման, արտահանման ու ներմուծման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքների կատարելագործումը:

Արտաքին առևտրի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ՀՀ արտահանումը և ներմուծումը ունեն հետևյալ մարզային բաշխվածությունը. արտահանման և ներմուծման հիմնական մասը բաժին է ընկնում Երևանին, Սյունիքի և Կոտայքի մարզերին, իսկ սահմանի բացումից հետո զգալիորեն կակտիվանա նաև Շիրակի մարզի դերը արտաքին առևտրում, ինչպես նաև առավել մեծ չափերի կարող է հասնել պեռլիտի արդյունահանումն ու վերամշակումը, այսինքն զգալիորեն կմեծանա նաև Արագածոտնի մարզի ակտիվությունը, որտեղ էլ առկա են հիմնական հանքավայրերը:

Վերլուծելով միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ տնտեսությանը տրված գնահատականները՝ տնտեսական ազատության ցուցանիշ, մրցունակության ինդեքս և այլն, կարելի է պնդել, որ վերջիններիս կողմից ՀՀ տնտեսությունը գնահատվում է որպես «մեծամասամբ ազատ», այսինքն արտաքին տնտեսական

սահմանափակումները չափավոր և ընդունելի մակարդակում են ու հիմնականում ուշադրություն պետք է դարձվի ոչ թե սահմանափակումների վերացման, այլ ուրիշ՝ որևէ առավել օպտիմալ եղանակով (օրինակ՝ առևտրի դիվերսիֆիկացման) առևտրի բարելավման վրա:

Այդպիսին կարող է հանդիսանալ արտահանման խթանման քաղաքականություն: Դրա իրացման համար պետությունը պետք է սահմանի հարկային, վարկային և ապահովագրական արտոնություններ արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկությունների համար, կրճատի հանքահումքի արտահանումը՝ փոխարինելով այն պատրաստի արտադրանքի արտահանմամբ: Անհրաժեշտ է ճյուղային կտրվածքով ստեղծել արտահանման աջակցման հատուկ գործակալություններ, տարբեր երկրների շուկաներում իրականացնել միջազգային մարքեթինգային ուսումնասիրություններ: Մեծ նշանակություն կունենա միջազգային շուկաների վերաբերյալ տեղեկատվական ծառայությունների ստեղծումը:

ՀՀ արտահանման կառուցվածքում անհրաժեշտ է ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումից անցում կատարել դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտադրություն և արտահանում: Հայաստանը չունի մեծաքանակ ռեսուրսներ, ուստի հետագա կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ է տնտեսության զարգացումն ապահովել ռեսուրսների ոչ թե քանակական, այլ որակական ընդլայնման միջոցով, ինչն էլ հնարավոր է իրականացնել միայն առավել բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտադրությամբ:

Տնտեսական աճի վրա ներմուծման ազդեցությունը առավելապես դրական դարձնելու նպատակով անհրաժեշտ է մեծացնել ներմուծման կառուցվածքում արդյունաբերական նպատակներով օգտագործվող մեքենասարքավորումների և այն արդյունաբերական հումքի ներմուծումը, որը բնակլիմայական և այլ պատճառներով տեղում հնարավոր չէ արտադրել, կամ դրա արտադրությունը տնտեսապես անարդյունավետ է:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանից Թուրքիա հիմնականում արտահանվել են՝ կաշի և կաշվե հումք, պղինձ և դրանից իրեր, ալյումին և դրանից իրեր, սև մետաղներ, փայտ և փայտից իրեր, փայտածուխ, գրքեր, լրագրեր, տպագրական ար-

տադրանք: Թուրքիան և Հայաստանը իրականացնում են առևտրային կապեր, որոնք ըստ էության չեն կարգավորվում ու կառավարվում պետական մակարդակով: Դա առաջացնում է մի շարք բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներ՝ հատկապես Հայաստանի համար, որը գտնվում է շուկայական տնտեսության ձևավորման գործընթացում: Միաժամանակ, փաստերը վկայում են, որ քննարկվող երկրները ունեն երկկողմյա առևտրատնտեսական հետաքրքրություն ներկայացնող ռեսուրսներ, ոլորտներ և բնագավառներ:

Հիմնվելով Թուրքիայի՝ տարբեր երկրների հետ արտաքին առևտրային համակարգի ուսումնասիրության վրա, Հայաստանից արտահանվող անվանացանկն այդ երկրի հեռանկարում կարող է ընդլայնվել, մասնավորապես, մեքենաշինական արտադրանքի (մեքենաներ, սարքավորումներ, տրանսպորտի միջոցներ, մետաղներից իրեր և այլն) և քիմիական արդյունաբերության արտադրանքի (պլաստմասսե իրեր, օրգանական և անօրգանական քիմիական միացություններ, քիմիական ապրանքներ և այլն) արտահանման միջոցով, եթե իհարկե նշված երկու ոլորտների գոնե որոշ ենթաճյուղեր մոտ տարիներին վերակենդանացվեն և զարգացվեն՝ հաշվի առնելով Ռուսաստանի հետաքրքրությունը այդ ոլորտների նկատմամբ:

Ինչ վերաբերում է մի քանի տասնյակ ներմուծվող ապրանքախմբերի, ապա հնարավոր և նպատակահարմար է դրանք զգալիորեն կրճատել, քանի որ Հայաստանը ներկայումս ի վիճակի է իրեն ապահովել մի շարք արտադրատեսակների արտադրությամբ: Դրանք են մասնավորապես կաթնամթերքը, թռչնի ձուն, բնական մեղրը, բանջարեղենը, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքները, քացախը, մսամթերքները, հրուշակեղենը, կոշկեղենը և այլն: Մոտ հեռանկարում հանրապետության տնտեսության աշխուժացման հաշվին կարող է սահմանափակվել և այլ արտադրությունների ապրանքների ներմուծումը: Այս բոլորը կնպաստի Հայաստանի առևտրային հաշվեկշռի կարգավորմանը՝ ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացման ու ընդլայնման հաշվին, ներմուծման կրճատման և արտահանման անվանացանկի ու ծավալների ավելացման միջոցով:

Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական կապերի զարգացման գործում անհրաժեշտ է իրականացնել մի շարք տնտեսակազմակերպչական միջոցառումներ: Նախ, պետք է իրա-

կանացվի ճիշտ և կշռադատված մաքսային քաղաքականություն: Դա թույլ կտա խրախուսել անհրաժեշտ ապրանքների և ռեսուրսների արտահանումը/ներմուծումը և սահմանափակել կամ նույնիսկ ընդհանրապես դադարեցնել այլ ապրանքի և ռեսուրսների արտահանումը/ ներմուծումը: Առանցքային պետք է դիտվեն ներքին շուկայի պաշտպանվածության հարցերը, ներմուծմանը փոխարինող արտադրությունների ստեղծումը և զարգացումը: Մյուս կողմից, այն ապրանքները և ռեսուրսները, որոնց ներմուծումը Թուրքիայից տնտեսապես ավելի ձեռնտու է, միանշանակ պետք է խրախուսվի և աջակցվի պետականորեն: Որպես մաքսային կարգավորման լծակներ կարող են կիրառվել ինչպես սակագնային (մաքսատուրքեր), այնպես էլ ոչ սակագնային (քանակական սահմանափակումներ, արտոնագրեր և այլն) մեթոդները:

Արտաքին առևտրային ճիշտ քաղաքականության իրականացումը պահանջում է երկու երկրների միջև բոլոր առևտրատնտեսական պայմանները, ձևերը և հնարավորությունները ամրագրել համապատասխան առևտրատնտեսական պայմանագրերի միջոցով, ինչպես դա տեղի է ունենում Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-Իրան և այլ երկկողմյա տնտեսական համագործակցության դեպքերում:

Հայաստանի և Թուրքիայի գործարարների հանդիպումները անհրաժեշտ է կազմակերպել ավելի հաճախակի և պարբերաբար: Պետք է մշակվի հստակ տնտեսական համագործակցության ծրագիր երկու կողմերի գործարարների ակտիվ մասնակցությամբ: Անհրաժեշտ է ստեղծել երկու երկրների տնտեսությունների զարգացման, շուկաների և գների փոփոխման վերաբերյալ համապատասխան տեղեկատվական բազա: Պարբերաբար պետք է կազմակերպվեն ցուցահանդես-վաճառքներ, որոնք լիարժեք պատկերացում կտան ապրանքների անվանացանկի, որակի և գների մասին: Տնտեսական հարաբերությունների իրականացման գործընթացում անհրաժեշտ է նաև ծավալել միջազգային մարկետինգային և գովազդային գործունեություններ:

Բեռների ավտոմոբիլային և օդային փոխադրումների հետ զուգահեռ, երկու երկրների միջև պետք է վերաբացվի նաև նախկինում գործող երկաթգիծը և լայնորեն օգտագործվեն Սևծովյան փոխադրման ուղիները:

Ինչպես ցույց տվեց կատարված վերլուծությունը, ՀՆԱ աճի տեմպով Թուրքիան աշխարհի ամենաարագ զարգացող երկրներից մեկն է, սակայն 2009թ. սկզբներին Թուրքիայի տնտեսությանը հարված հասցրեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Թուրքիայի տնտեսության ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը թույլ տվեց բացահայտել դրա ամենաշահութաբեր ոլորտները: Դրանք են հատկապես զբոսաշրջությունը, որը վերջին 20 տարիների ընթացքում աննախադեպ զարգացում ապրեց և դարձավ տնտեսության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը, գյուղատնտեսությունը, բանկային համակարգը, շինարարությունը, էլեկտրոնիկան, տեքստիլ արտադրությունը, սննդարդյունաբերությունը, քիմիական արտադրությունը և այլն: Թուրքիան ունի նաև մեծ և զարգացող մեքենաշինական արդյունաբերություն: Սակայն ուսումնասիրությունը ակնհայտ դարձրեց նաև Թուրքիայի տնտեսության կախվածությունը հիմնական մեծ քաղաքների արդյունաբերությունից, որն ավելի կենտրոնացված է երկրի արևմտյան գավառներում:

Անդրադառնալով Թուրքիայի արտաքին առևտրին՝ հարկ ենք համարում փաստել, որ արտաքին առևտրի ընդհանուր ծավալը վերջին տասը տարիների ընթացքում արագ ավելացել է: Աճը գրանցվել է թե՛ արտահանման, և թե՛ ներմուծման առումով, սակայն արտաքին առևտրի հաշվեկշիռը շարունակաբար դրսևորում է բացասական արժեք: Մյուս կողմից, պարզվել է, որ արտաքին առևտրի աճը հավասարաչափ չէ բաշխված առաջատար առևտրային գործընկերների միջև:

Ինչպես ցույց տվեց կատարված ուսումնասիրությունը՝ Թուրքիայի խոշորագույն գործընկեր է Գերմանիան: Սակայն եթե արտահանման գործընկերների շարքում Գերմանիան կարողանում է տասնամյակներ շարունակ պահպանել իր առաջատարի դիրքը, ապա վերջին տարիներին ներմուծման առումով համար առաջին գործընկերը դարձել է Ռուսաստանը: Սա խոսում է այն մասին, որ Թուրքիայի արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը կրել է էական փոփոխություններ՝ ընդլայնելով արտահանման և ներմուծման աշխարհագրական բաշխվածությունը: Արտահանման աշխարհագրական կառուցվածքում ամենաէական փոփոխությունը Մերձա-

վոր Արևելքի երկրների դերի շեշտակի կրճատումն է, և Եվրոպական Միության երկրների դերի բարձրացումը:

Գնահատելով Թուրքիայի տեղը և դերը համաշխարհային առևտրում՝ կարող ենք փաստել, որ համաշխարհային համախառն ապրանքաշրջանառության, արտահանման և ներմուծման մեջ Թուրքիայի բաժինը մեծ չէ, սակայն Մերձավոր Արևելքի տարածաշրջանում զբաղեցնում է առաջատար դիրք: Ծառայությունների արտահանման առումով ևս Թուրքիան ունի բավականին ծանրակշիռ դիրք: Երբ վերլուծում ենք Թուրքիայի դերը մեր տարածաշրջանում, այսինքն ՀՀ և հարևան երկրների արտաքին առևտրում, ապա այստեղ Թուրքիան ունի միանշանակ առաջատարի դեր, գերազանցելով երկրորդ առաջատարի՝ Իրանի, ապրանքաշրջանառությունը մոտ 2 անգամ: Միևնույն ժամանակ, Թուրքիային բաժին է ընկնում ՀՀ և հարևան երկրների համախառն ապրանքաշրջանառության միջինի գրեթե 60%-ը, այն դեպքում, երբ Հայաստանը այդ երկրների շարքում վերջին տեղում է:

Հայաստանի և Թուրքիայի արտադրական ճյուղերի բացահայտ համեմատական առավելությունների հաշվարկման հիման վրա հնարավոր է եղել մատնանշել այն ճյուղերը, որոնց շուրջ երկու երկրների միջև կարելի է ծավալել փոխշահավետ առևտուր: Այսպես, Թուրքիան դրական ԲՀԱ-ի ցուցանիշ ունի արտահանվող 22 ճյուղերում, իսկ ՀՀ-ն ընդամենը՝ 7-ում: Սահմանի բացման արդյունքում Թուրքիան հնարավորություն է ունենում այս ապրանքները ներմուծել ՀՀ, իսկ ՀՀ-ն՝ արտահանել: Սա կարելի է համարել դրական ՀՀ-ի համար միայն այն դեպքում, եթե ՀՀ-ն չունի այդ ապրանքների արտադրության հնարավորություններ և բացառապես ներմուծում է դրանք: Սակայն, եթե այդ ապրանքները արտադրվում են ՀՀ-ում, բայց ոչ այն քանակությամբ, որ ստեղծվեն արտահանման լայն հնարավորություններ, ապա Թուրքիայից ներմուծումը կարող է հանգեցնել հայկական արտադրողների մրցունակության անկմանը ՀՀ ազգային շուկայում, իսկ որոշ դեպքերում նաև՝ սնանկացմանը: Այդպիսի ոլորտ կարելի է հատկապես համարել ծխախոտի արտադրությունը, որտեղ ՀՀ-ն ունի բացասական, իսկ Թուրքիան դրական ԲՀԱ, սակայն ՀՀ-ն ունի նաև ծխախոտի բավականին արագ զարգացող արտադրություն:

Հետազոտության ընթացքում տնտեսագետներ Ա. Արնոնի և Ա. Սպիվակի կողմից առաջ քաշած մեթոդիկայի օգտագործմամբ, մեր կողմից բացահայտվել են ՀՀ-ի և Թուրքիայի միջև ներճյուղային առևտրի հնարավորությունները: Այսպես, ՀՀ-ից արտահանվող և Թուրքիա ներմուծվող ապրանքների դասակարգման մեջ կա համընկում մոտ 30%-ի չափով: Սա խոսում է այն մասին, որ այս ճյուղերի գծով երկու երկրները ունեն ներճյուղային առևտրի հնարավորություններ: Ներճյուղային առևտրի զարգացման առումով կարելի է առաջարկել երկու տարբերակ. կապված դիֆերենցված ապրանքների արտահանման խթանման հետ. այն ճյուղերում, որտեղ երկու երկրներն էլ ունեն արտահանման հնարավորություններ կարելի է խթանել տարբեր արտադրատեսակների արտահանումը, և կապված ՀՀ աշխարհագրական դիրքի հետ. Թուրքիայում արդյունաբերական կենտրոններ կարելի է համարել միայն արևմտյան շրջանները, իսկ արևելյան շրջանները նախ պակաս զարգացած են, իսկ երկրորդ աշխարհագրորեն ավելի մոտ են գտնվում ՀՀ-ին:

ՀՀ և Թուրքիայի արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց տվեց, որ երկու երկրներն էլ ունեն արտահանման համեմատական առավելություններ, սակայն երկու երկրների միջև չմիջնորդավորված առևտրի հետևանքները միանշանակ դրական կամ բացասական գնահատել հնարավոր չէ: Պարզ է, որ դրա արդյունքում ՀՀ որոշ արդյունաբերական ճյուղեր կտուժեն, իսկ որոշները՝ կշահեն, բայց միևնույն ժամանակ շահող ճյուղերը կարող են փոխհատուցել տուժողների կրած վնասները, ինչի արդյունքում երկիրը ընդհանուր առմամբ կշահի:

Չնայած Թուրքիայի հետ սահմանի բացման հարցը դեռևս ձգձգվում է, այնուամենայնիվ այս երկրի հետ առևտրային հարաբերությունները շարունակում են զարգանալ, որի արդյունքում կորցնում է հայ սպառողը: Ուստի Թուրքիայի հետ առևտրային հարաբերությունների կանոնակարգման, առևտրի (հատկապես արտահանման) ապրանքային կառուցվածքի դիվերսիֆիկացման և ՀՀ համեմատական առավելությունները լիարժեք օգտագործելու նպատակով, առաջարկում ենք ստեղծել «Հայ-թուրքական արտաքին առևտրային միջկառավարական ժամանակավոր խորհուրդ», որը կհամակարգի արտաքին առևտրի գործընթացները՝ դրանք կա-

ռուցելով փոխլրացման, մասնագիտացման խորացման հիմքի վրա:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Թուրքիայում արդյունաբերական ոլորտների արտադրողականությունը շատ ավելի բարձր է, քան Հայաստանում: Սակայն որոշ ապրանքների գծով Հայաստանը կարող է մրցակցել թուրքական ապրանքների հետ, քանի որ ՀՀ-ում աշխատավարձերը ավելի ցածր են: Ուստի ՀՀ տնտեսական նպատակը պետք է լինի աշխատավարձերի բարձրացման հետ համատեղ բարձրացնել արտադրողականությունը՝ որոշ ոլորտներում ավելի մեծ ներդրումներ կատարելու ճանապարհով (կրթություն, կոմունիկացիաներ, ֆինանսական ինստիտուտներ և այլն):

Հայաստան-Թուրքիա տնտեսական հարաբերությունների խորացման առումով կարևոր դեր կարող է խաղալ ակտիվ մասնակցությունը Սևծովյան տնտեսական համագործակցությանը, քանի որ Թուրքիան հանդիսանում է վերջինիս հիմնադիր անդամ: Ավելին, քանի որ ՍԾՏՀ-ն ունի նաև Հետազոտությունների միջազգային կենտրոն, որի ֆունդամենտալ գիտական մշակումները և կիրառական հետազոտությունների արդյունքները կարող են ներդրվել նաև արտադրության մեջ, ուստի դա հզոր լծակ կդառնա ՀՀ գիտատեխնիկական ներուժի արագ և արդյունավետ զարգացման համար:

Ուշադրություն դարձնելով Թուրքիայի մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ակնհայտ է դառնում, որ վերջինիս տնտեսությունն անընդհատ աճում է, իսկ տնտեսական պոտենցիալը զարգանում է ֆինանսական համակարգի կայունության և խիստ արժութային քաղաքականության պայմաններում: Չնայած, 2008թ. տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ Թուրքիայի տնտեսության վրա, սակայն արդեն 2010թ. վիճակը բավականին լավացել էր. հիմնական գներով և ազգային արժույթի փոխարժեքով հաշվարկած Թուրքիան ՀՆԱ հավելաճի տարեկան տեմպով 18-րդ էր համաշխարհային մակարդակով: Ի դեպ 2011թ. համար Թուրքիայում կանխատեսվում է 4.6% տնտեսական աճ: Այն հանգամանքը, որ մինչ ճգնաժամը ՀՀ-ն տնտեսական աճի տեմպերով գտնվել է Թուրքիայի հետ նույն մակարդակի վրա, սակայն ճգնաժամի հաղթահարման ընթացքում Թուրքիան ակնհայտ գերազանցում է ՀՀ-ն, ցույց է տալիս ոչ միայն Թուրքիայի տնտեսության

առողջ վիճակը, այլ նաև այն, որ մեր երկրների միջև տնտեսական փոխկապվածությունը գրեթե բացակայում է:

Փորձը ցույց է տալիս, որ զարգացող երկրների համար հատկանշական է գնաճի բարձր տեմպերը, և այս առումով թուրքական և հայկական տնտեսությունների համար ևս այն եղել է տնտեսական հիմնական խնդիրներից մեկը: Չնայած գնաճի տեմպերի նվազեցմանն այն դեռևս բավականին բարձր է միջին եվրոպական մակարդակի համեմատությամբ և կարող է համադրվել միայն Լատվիայի, Հունգարիայի և Սլովակիայի տնտեսություններում առկա գնաճի տեմպերի հետ: Եթե հաշվի առնենք, որ ԵՄ երկրների համար գնաճի միջին մակարդակի տեմպը վերջին տարիներին տատանվում է 1.5-2%, ապա պարզ է դառնում, որ վերջինիս Թուրքիայի շուտափույթ անդամակցման պարագայում ավելի կմեծանա գնաճը, այդպիսով առավել մեծ ջանքեր պահանջելով վիճակը ուղղելու և այն իջեցնելու համար: Իսկ եթե անդամակցումը մոտակա ժամանակներս իրականություն չդառնա, և այդ ընթացքում Թուրքիան կարողանա հաղթահարել գնաճի բարձր մակարդակը, ապա այդ առավել ցածր մակարդակով ԵՄ անդամակցումը կարող է կայուն զարգացում ապահովել Թուրքիայի համար:

ԵՄ անդամակցման գործընթացի արդյունքում, Թուրքիայի օտարերկրյա ներդրողների աշխարհագրական կառուցվածքում զգալի բաժին է ընկնում ԵՄ երկրներին, և չնայած 2004թ. հետո, ներդրումների ծավալներն առավել շատ կողմնորոշվեցին դեպի ԵՄ նորանդամ երկրներ, սակայն ԵՄ հին անդամների բաժինը Թուրքիայում կատարված ՕՈՒՆ-երում դեռևս զգալի տեսակարար կշիռ է կազմում: Ի տարբերություն Թուրքիայի, ՀՀ-ում կատարված ՕՈՒՆ-ի աշխարհագրական կառուցվածքում ԵՄ երկրների դերն այնքան էլ մեծ չէ և անհամեմատելի է Թուրքիայում առկա իրավիճակի հետ: Այս պայմաններում Թուրքիան և Հայաստանը պետք է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկեն ԵՄ-ից օտարերկրյա ներդրումների ներգրավման համար, ինչն իր հերթին կարևորում է այնպիսի գործոնների առկայությունը այս երկրներում, ինչպիսիք են՝ կայունությունը, ցածր հարկերը, ազատ մրցակցություն, ազատ տնտես³կան գոտիների ստեղծում, որոնք ներդրողներ ներգրավելով զարգացման նոր որակ կհաղորդեն արտադրությանը:

Թուրքիայում բիզնեսի զարգացման խոչընդոտներից է ազատ մրցակցության բացակայությունը, ինչպես նաև խոշոր գործարանների և սպառողական ցանցերի ամբողջական սեփականաշնորհման անհնարինությունը: Թուրքական մասնավոր բիզնեսի ամենաբնութագրական գիծը պետության որոշիչ դերի առկայությունն է գործարար ակտիվության զարգացման ուղղության ընտրության ժամանակ: ՀՀ-ում ևս բիզնեսի զարգացման խոչընդոտներից է ազատ մրցակցության բացակայությունը, բայց ոչ թե կապված խոշոր գործարանների ամբողջական սեփականաշնորհման անհնարինության հետ այլ կապված օլիգարխիկ տնտեսության պայմաններում արտադրական հզորությունների և տնտեսության համակենտրոնացման հետ: Երկու դեպքերն էլ հակասում են ԵՄ երկրներում արմատավորված ձեռնարկատիրության սկզբունքներին, և չնայած խնդիրները տարբեր են, այնուհանդերձ նպատակի միասնական լինելը կարող է հիմք հանդիսանալ այս ոլորտում համագործակցության եզրեր գտնելու տեսանկյունից:

Թուրքիան ԵՄ երկրներին փոքր-ինչ մոտենում է բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշների առումով, սակայն շարունակում է հետ մնալ գրեթե բոլոր եվրոպական երկրներից, ինչը պայմանավորված է Թուրքիայի բնակչության համեմատաբար մեծ թվաքանակով: ՀՀ-ում այս ցուցանիշը մոտ 2.5 անգամ զիջում է Թուրքիային, իսկ ԵՄ չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից անհամեմատելի ցածր մակարդակի վրա է:

Վերջին երկու տարիների ճգնաժամի արդյունքում ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում գործազրկության մակարդակը կտրուկ աճեց, որը կապված էր այն հանգամանքի հետ, որ այս երկրների տնտեսության շատ ճյուղերում լուրջ կորուստներ եղան: Այս խնդիրն անհանգստացնող է ԵՄ երկրների համար այն պարզ պատճառով, որ թուրքական աշխատուժը մեծ թափով գրավում է Եվրոպան: Խնդրի լուծման համար անհրաժեշտ են զգալի ներդրումներ՝ նոր աշխատատեղեր ստեղծելու համար:

Եվրաինտեգրման գործընթացների տեսանկյունից ուշագրավ է ԵՄ երկրների հետ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ՀՀ արտաքին առևտրի վիճակի ուսումնասիրությունը: Հետազոտությունը ցույց տվեց, որ Թուրքիան ակնհայտ բարելավել է իր ցուցանիշները,

սակայն դա բավարար չէ ինտեգրման բարձր մակարդակ ապահովելու համար: ԵՄ անդամակցման գործընթացում ԿԱԵ երկրները իրենց արտաքին առևտրի ինտեգրման աստիճանը հասցրել էին 60% և ավելին, որը, մեր կարծիքով, կարելի է համարել շեմային գործակից ինտեգրման մակարդակը որոշելու համար: Այս տեսանկյունից, 2005թ. Թուրքիան ակնհայտ մոտեցել է այդ մակարդակին՝ մոտ 55%, այն դեպքում, երբ նույն տարում ՀՀ-ն ունեցել է 2000-2010թթ. համար ամենաբարձր՝ 38.3% ցուցանիշը:

Չենք կարող հերքել, որ ի տարբերություն ՀՀ-ի, Թուրքիան իր տնտեսության վիճակի բարելավման նպատակով առավել մեծ ջանքեր է գործադրել, և բավականին մեծ հաջողությունների հասել, որոնց արդյունքում նրա տնտեսությունը զգալիորեն ավելի հզոր է քան ԵՄ նորանդամ շատ երկրներինը, օրինակ՝ Բուլղարիան, Ռումինիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, որը հաստատում է Թուրքիայի տնտեսության հսկայական ներուժ ունենալու հանգամանքը: Ուստի հետագայում Եվրահանձնաժողովի համար առավել դժվար կլինի նոր թերացումներ գտնել Թուրքիայի տնտեսության որակական և քանակական կառուցվածքում: Հարկ է նշել, որ Թուրքիան վերջին մեկ-երկու տարում այլևս չի ձգտում անվերապահորեն և արագացված տեմպերով կատարել եվրոպացիների պահանջները, այլ փորձում է զարգանալ սեփական տեմպերով՝ առանց արհեստականորեն արագացնելու իրադարձությունները: Այդ պահանջները վերաբերում են հատկապես կոպենհագենյան երկրորդ տնտեսական պահանջներին, որոնց նույնիսկ եվրոպացիների կարծիքով հնարավոր է հասնել միջնաժամկետ ժամանակաշրջանում, կառուցվածքային վերափոխումների և կայունացնող քաղաքականության հետագա շարունակության պայմաններում: Արդյունքում, շատ թուրք մասնագետներ գալիս են այն եզրակացությանը, որ եթե խնդիրը միայն տնտեսական լիներ, ապա Թուրքիան վաղուց պետք է ԵՄ լիիրավ անդամ լիներ:

Եթե նախկինում Թուրքիայի արտահանման հիմնական հոդվածներն էին տեքստիլն ու հագուստը, սև մետաղները և սննդամթերքը, ապա ԵՄ հետ մաքսային միության ձևավորման արդյունքում և՛ արտադրության, և՛ արտահանման զգալի աճ են գրանցել մեքենաշինության և բարձր տեխնոլոգիաների ոլորտները: Թուրքիայի

ներմուծման մեջ, նավթի և նավթամթերքի, պլաստմասե և փայտե իրերի, տրիկոտաժի, սև մետաղների, էլեկտրական մեքենաների և սարքավորումների, կողքին, մեծ տեսակարար կշիռ ունեն ալյումինը, ներկանյութը, սարքավորումներն ու մեխանիկական մասերը: Հայաստանից ներմուծում իրականացնելու առումով հետաքրքրություն են ներկայացնում մասնավորապես այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են հանքանյութը, ձկնեղենը և այլն:

Կան լուրեր, որ Երևանն ու Անկարան բանակցություններ են վարում Հայաստանից Թուրքիա ցեմենտի և ալյուրի արտահանման ուղղությամբ, ինչպես նաև սպասվում է, որ Հայաստանը Թուրքիային պետք է մատակարարի 1.5 մլրդ կվ/ժ էլեկտրաէներգիա: Տեխնիկապես արդյունաբերական ապրանքների համար կա անգամ ներծյուղային առևտրի հնարավորություն Հայաստանի և Թուրքիայի միջև, եթե հայ արտադրողները սկսեն օգտվել մասշտաբի էֆեկտի ազդեցությունից: Մասշտաբի էֆեկտի ձեռքբերման հարցում լուրջ աղբյուր կարող են հանդիսանալ ներդրումները հայ-թուրքական համատեղ ձեռնարկություններում: Ավելին արտահանման և ներմուծման նմանությունների համաթիվը ցույց է տալիս, որ առևտրի ազատականացումը չի կարող առաջացնել առևտրի շեղման էֆեկտ, մինչդեռ առևտրի ստեղծման էֆեկտը տեղի կունենա սահմանի բացման արդյունքում՝ բերելով իր դրական ազդեցությունը: Սակայն, մինչև սահմանի բացումը դեռ շատ քայլեր կան իրականացնելու: Եթե Հայաստանը և Թուրքիան իրոք ուզում են օգուտներ քաղել առևտրային ներուժից, պետք է նախ ձեռնարկեն քայլեր, որոնք վեր են զուտ առևտրային հարաբերություններից, բայց որոնք կնպաստեն երկու տնտեսությունների մերձեցմանը, ներդաշնակեցմանը: Դա ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են էներգետիկայի ոլորտում էլեկտրաէներգիայի արտահանման համար փոխկապակցված համակարգի ներդնումը, շրջակա միջավայրի պահպանման համար համատեղ ջանքերի իրականացումը, պատմական հուշարձանների պահպանման ծրագրի իրականացումը և այլն: Այս պարագայում ՀՀ տնտեսական օգուտները և վնասները մեծապես պայմանավորված կլինեն ՀՀ տնտեսության հետագա զարգացման տեմպերով և մինչև սահմանի բացումը որոշ ապրանքների գծով մրցակցային առավելության առկայությամբ: Իսկ դա հնարավոր է

միայն ՀՀ տնտեսական ներուժի ճիշտ գնահատման և մրցակցային առավելություններ ունեցող ճյուղերի զարգացման շնորհիվ:

Չնայած հայ-թուրքական սահմանի փակումը և բոլոր տեսակի կապերի սառեցումը անհաղթահարելի խոչընդոտ դարձան երկու երկրների միջև առևտրային հարաբերությունների զարգացման համար, այդուհանդերձ, դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում առևտրականներն ու ձեռներեցները եկան ստանձնելու երկու երկրների միջև միակ միջնորդական օղակի դերը, իսկ նրանց կողմից իրականացվող գործարքները ժամանակի ընթացքում էլ ավելի կատարելագործվեցին և այսօր ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ:

Կարելի է փաստել, որ սահմանի փակ լինելու հանգամանքը որոշակիորեն պայմանական բնույթ է կրում, և իրականում փակ սահմանը պարզապես ստիպում է փոխել առևտրային հոսքերի ճանապարհները, որոնք հիմնականում իրականացվում են Վրաստանի և Իրանի տարածքով (ընդ որում, Իրանի տարածքով այլ երկրների հետ իրականացվող առևտրի ծավալները Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության մեջ շատ փոքր են): Անուղղակի առևտուրը, թեև մեծացնում է ծախքերը, միևնույն է շարունակում է աճել:

Օգտվելով իր մենաշնորհային դիրքից Վրաստանը պաշտոնապես և ոչ պաշտոնապես մեծ գումարներ է գանձում հայաստանյան արտահանողներից և ներմուծողներից: Իսկ բարձր առևտրային ծախքերը, իրենց հերթին, խոչընդոտում են Հայաստանի արտաքին առևտրի զարգացումը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տրանսպորտային ծախքերը կազմում են Հայաստանի ներմուծման և արտահանման անվանական արժեքի մոտ 1/4-ը: Սա աշխարհի մասշտաբով ամենաբարձր ցուցանիշներից է, որը Հայաստանին և Մոնղոլիային դնում է միևնույն մակարդակի վրա (Մոնղոլիայի հեռավորությունը մոտակա ափից, սակայն, 10 անգամ գերազանցում Հայաստանին): Ուստի Հայաստանի համար ներկայումս կարևորագույն խնդիր է վերանայել Վրաստանի հետ ունեցած առևտրային համագործակցության մասին պայմանավորվածությունները՝ նպատակադրելով մեղմել տրանսպորտային ծախքերի կործանիչ բնույթը հայրենական ապրանքների մրցունա-

կության հարցում: Ավելին, անհրաժեշտ է նոր ուղիներ մշակել Իրանի հետ ունեցած ճանապարհներն ավելի արդյունավետ օգտագործելու ուղղությամբ: Ինչպես նաև մեկ անգամ ևս կառավարության կողմից անհրաժեշտ է հստակեցնել այն ոլորտները, որոնք ապահովում են մեծ արժեք/կշիռ հարաբերակցություն՝ ֆինանսավորելով և աջակցելով այդ ոլորտների կայացմանն ու արտահանման հնարավորությունների գործարկմանը:

Թեև տնտեսության մասշտաբներով Հայաստանը զգալիորեն զիջում է Թուրքիային, սակայն անհավասար առևտրի պատճառներից մեկն այսօր ոչ միայն տնտեսության մրցունակությունն է, այլև այն խիստ ասիմետրիկ առևտրային քաղաքականությունը, որ Թուրքիան ներկայումս իրականացնում է Հայաստանի հանդեպ: Չնայած գնահատվող լուրջ ներուժին, այնուհանդերձ Թուրքիան մաքսային քաղաքականության միջոցով շարունակում է խոչընդոտել հայկական ապրանքների մուտքը իր շուկա: Մի բան, որ չի գործում հայկական շուկայի դեպքում: Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոնակարգերը մի երկրի դեպքում գործում են, մյուսի դեպքում՝ ոչ, չնայած երկուսն էլ նույն կազմակերպության անդամ են: Այդուհանդերձ, Թուրքիան լինելով եվրոպական մաքսային միության անդամ երրորդ երկրներից ներմուծված բոլոր արդյունաբերական բաղադրիչների մաքսատուրքերը սահմանում է եվրոպական համայնքի ընդհանուր արտաքին տուրքերի հիման վրա, որոնք Թուրքիային բավարար տեղ են թողնում մաքսատուրքերի բարձրացման համար: Փոխարենը՝ Հայաստանն ունի միջազգային չափանիշներով բավական ազատական ներմուծման քաղաքականություն: Բոլոր ապրանքների մաքսային ամրագրված սակագների պարզ միջինը կազմում է մոտ 8.5%:

Այսպիսով, երկու երկրների մաքսային սակագնային պատկերների համադրումից պարզ է դառնում, որ Հայաստանի ներմուծման քաղաքականությունը անհամեմատ ավելի ազատականացված է և կանխատեսելի: Թուրքիայի հետ առևտրային գործընկերության բանակցությունների խնդիրը պետք է լինի մասնավորապես այս անհավասարության հարթեցումը: Այդ գործընթացը պետք է լինի թե՛ ԱՀԿ շրջանակներում հարցի կարգավորման և թե՛ ԵՄ հետ հետագա ինտեգրման միջոցով, ինչը հնարավորություն կտա Հայաստանին

ևս կիրառել իր տնտեսության համար առավել բարենպաստ պայմաններ կամ չեզոքացնել Թուրքիայի կողմից իրականացվող ոչ մաքսային սահմանափակումների ուղղակի ազդեցությունը: Ավելին, Հայաստանը կարող է կարգավորել այս առումով ունեցած խնդիրները՝ կիրառելով ներմուծման հստակ մշակված ոչ մաքսային լծակներ և սահմանափակումներ:

Առևտրի համար խոչընդոտները միայն փակ սահմաններով չեն պայմանավորված: Դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը անհնար է դարձնում գործարարներին որոշակի աջակցություն տրամադրելու հնարավորությունը առևտրային վեճերի դեպքում: Ավելին, քանի դեռ չկան դիվանագիտական հարաբերություններ, անիմաստ է խոսել երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերի լեգալացման մասին: Բացի այդ, հատկանշական է, որ հայկական ապրանքների և ծառայությունների Թուրքիա արտահանման մասին ներկայիս խոսակցությունները հիմնականում վերաբերում են այնպիսի ապրանքատեսակների, որոնց վրա չի երևալու «Արտադրված է Հայաստանում» պիտակը՝ էլեկտրաէներգիա, ալյուր, ցեմենտ, որոնցից արդեն իսկ կարտադրվեն թուրքական պիտակով ապրանքներ: Այս պարագայում Թուրքիա արտահանելու հստակ պոտենցիալ հնարավորություններ ունեն հայկական արդյունաբերության այնպիսի գիգանտներ (ցավոք՝ նախկին), ինչպիսիք են Նաիրիտը և Վանաձորի քիմկոմբինատը: Սակայն խնդիրն էլ ավելի է սրանում այն պատճառով, որ առանձին վերցրած հայ գործարարի համար բավական դժվար է ճիշտ կողմնորոշվել և արդյունավետ որոշումներ կայացնել տարբեր ոլորտների արտահանման ներուժի վերաբերյալ: Ուստի կառավարությունը ոչ միայն պետք է հստակ քայլեր ձեռնարկի արտահանման ներուժի հնարավորությունը օգտագործելու համար, այլև հստակ մեխանիզմներ մշակի գործարարների շրջանում ինֆորմացիոն պակասը լրացնելու ուղղությամբ: Սա հնարավորություն կտա յուրացնել պահանջարկ վայելող ժամանակակից ուղղություններ և լուրջ նախադրյալներ կստեղծի դեպի Թուրքիա այս ապրանքների զանգվածային արտահանման համար: Այս պարագայում օգտակար կարող է լինել այն, որ Թուրքիայի գործարար շրջանակները, ինչպես նաև երկրի արևելյան շրջանների քաղաքային իշխանությունները շահագրգիռ են համագործակցելու

հայաստանյան գործընկերների հետ: Ուստի համատեղ մարքետինգային հետազոտությունների իրականացումը, արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպումը, երկու երկրների գործարարների միջև հանդիպումները, համապատասխան տեղեկատվության փոխադարձ տրամադրումը և այլն կարող են լուրջ որակական փոփոխություններ մտցնել Հայաստան-Թուրքիա փոխադարձ առևտրաշրջանառության մեջ: Այս տեսանկյունից չափազանց մեծ նշանակություն կարող է ձեռք բերել 2009թ. սեպտեմբերից Ստամբուլում գործող Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցչությունը, որը սերտ համագործակցություն ունի Թուրքիայի համանման միության հետ և նպատակ ունի ծառայել որպես կապող օղակ թուրք և հայ գործարարների միջև և կոորդինացնել փոխադարձ կապերի զարգացումը:

Հայաստանի և Թուրքիայի ծառայությունների ոլորտի վերլուծության արդյունքում կարող ենք սահմանի բացման ազդեցությունը տվյալ ոլորտի վրա գնահատել մեծամասամբ դրական, թեպետ հնարավոր են որոշակի կորուստներ՝ կապված ՀՀ ֆիրմաների մրցունակության հետ:

Վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի ֆինանսական շուկայի ավելի քան 90%-ը զբաղեցնող բանկային համակարգը, ունի արդյունավետության բարձրացման լուրջ խնդիրներ: Իհարկե, դրանցից որոշները բխում են երկրի տնտեսական իրավիճակից: Սակայն այդ խնդիրների մի մասը կարող են լուծվել շուկայում հզոր և արդյունավետ կերպով գործող մրցակիցների առկայության դեպքում: Ուստի հայ-թուրքական սահմանի բացման պարագայում կոնկրետ բանկային համակարգում շուկայից կարող են դուրս մղվել առավել թույլ բանկերը, իսկ առավել ուժեղները ստիպված կլինեն արդյունավետության բարձրացման ավելի ակտիվ մեխանիզմներ կիրառել՝ թուրքական բանկերի մրցակցությանը դիմակայելու համար: Նշված փոփոխությունների արդյունքում միանշանակ կշահեն սպառողները, քանզի շուկայում մրցակցության մեծացման արդյունքում տեղի կունենա բանկային տոկոսադրույքների իջեցում, հետևաբար նաև՝ վարկային ռեսուրսների հասանելիության բարձրացում բնակչության լայն զանգվածների համար: Թեպետ Հայաստանի շուկայում թուրքական մրցակիցների ներկայությունը ինքնին կարող է նպաստել

մրցակցության բարելավմանը, սակայն պետք է նաև միջոցառումներ ձեռնարկել՝ տեղական բանկերի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս կարողանան մրցակցել թուրքական բանկերի հետ:

Ապահովագրական համակարգի և արժեթղթերի շուկաների թույլ զարգացվածությունը Հայաստանում ինքնին բացասական երևույթ է, ուստի եթե սահմանի բացման պարագայում տեղի ունենա թուրքական առավել զարգացած ապահովագրական ընկերությունների մուտք հայկական շուկա, դա կարելի է դիտարկել դրական տեսանկյունից այն առումով, որ առավել զարգացած երկրի փորձը կներդրվի հայկական շուկայում ու կնպաստի դրա հետագա զարգացմանը: Սակայն, բնականաբար, երևույթը բացասական կլինի այն առումով, որ հայկական ընկերությունները գուցե և դուրս մղվեն շուկայից: Ուստի անհրաժեշտ է ապահովագրական համակարգի զարգացմանն ուղղված պետական ակտիվ քաղաքականություն՝ նման իրավիճակից խուսափելու համար: Այնուամենայնիվ հայ-թուրքական սահմանի վերաբացումը և տարածաշրջանում կայուն տնտեսական զարգացման ապահովումը կարող են մեծապես նպաստել Հայաստանում ներդրումների աճին և արժեթղթերի շուկայի զարգացմանը: Անհրաժեշտ է քայլեր իրականացնել արժեթղթերի շուկայի զարգացման համար համապատասխան ենթակառուցվածքներ և բարենպաստ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Թուրքիայում ինտերնետային ծառայությունները որակական առումով գերազանցում են Հայաստանի շուկայի համանման ծառայություններին, բայց ավելի էժան են: Հետևաբար, սահմանի բացումը առավել էժան և որակյալ ինտերնետային ծառայությունների ներմուծման հնարավորություն կտա, ինչն էլ կնպաստի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: Միևնույն ժամանակ, սահմանի բացման պարագայում, Հայաստանը ձեռք կբերի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համար նոր սպառման շուկա՝ ի դեմս Թուրքիայի:

Թուրքիայի հետ սահմանի վերաբացման դեպքում բեռնափոխադրման նոր հնարավորություններ կստեղծվեն դեպի Թուրքիա, Եվրոպա և ավելի հեռու ուղևորվող բեռների համար, քանի որ սևծովյան նավահանգիստների փոխարեն կօգտագործվեն Միջերկ-

րականի նավահանգիստները: Միջերկրականի նավահանգիստներում մրցակցությունն ավելի մեծ է, հետևաբար՝ սակագներն ավելի ցածր են, և ծառայություններն ավելի հաճախակի են իրականացվում: Եթե Թուրքիայի հետ սահմանը բացվի, դեպի ոչ ԱՊՀ երկրներ միջազգային փոխադրումները, նույնիսկ դեպի Արևելյան Ասիա կատարվողները, կանցնեն Թուրքիայի նավահանգիստներով, որոնք ավելի մոտ են հիմնական համաշխարհային փոխադրման ուղիներին: Արտահանման և ներմուծման ծախսերի կառուցվածքում տրանսպորտային ծախսերի տեսակարար կշիռը կազմում է ապրանքի ինքնարժեքի 20-25%-ը: Մասնավորապես կարճ ժամկետում (1 տարի) հայ-թուրքական սահմանի բացման արդյունքում ակնկալվում է տրանսպորտային ծախսերի տնտեսում ՝ դրանք նվազեցնելով 4.1%-ով: Դա կհանգեցնի ներմուծման 4.7% և արտահանման 5.9% աճի: Միջին ժամկետում (մինչև հինգ տարի) Թուրքիա արտահանման ծավալները 2003թ. համեմատությամբ կմեծանան մոտ 17.4 անգամ, իսկ Թուրքիայից ներմուծման ծավալները՝ մոտ 2.3 անգամ:

Եվ, ի վերջո, Թուրքիայում հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ավելի մեծածավալ ծախսերը, ինչպես նաև գիտության ավելի բարձր մակարդակը կարող են երկարաժամկետ հեռանկարում շատ ավելի արդյունավետ դարձնել Թուրքիայի տնտեսությունը: Այս հանգամանքն անհրաժեշտություն է առաջացնում Հայաստանում գործող կազմակերպությունների համար ստեղծել բարենպաստ պայմաններ գիտական հետազոտությունների զարգացման համար՝ ներդրումների ծավալների մեծացման միջոցով: Մասնավորապես անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մեխանիզմ՝ գիտական արդյունքն անմիջապես արտադրության մեջ փոխանցելու համար: Դա կարող է իրականացվել որևէ հիմնադրամի միջոցով, որը կապող օղակ կհանդիսանա ներդրողների և գիտական արդյունքի ստեղծման համար ֆինանսական աղբյուրների անհրաժեշտություն ունեցողների միջև: Հայ-թուրքական սահմանի բացման ազդեցությունը Հայաստանի (տվյալ դեպքում՝ ծառայությունների ոլորտի) զարգացման տեսանկյունից կունենա ավելի շատ դրական, քան բացասական ազդեցություն, եթե, իհարկե, նախապես իրականացվեն առանձին ոլորտների մրցունակության բարձրացմանն ուղղված քայլեր:

CONCLUSION

As the analysis testify RA commodity import surpasses export, the negative trade balance has a tendency to grow, export mainly has raw material structure, the greatest part of commodity turnover is connected with the far-well countries, external trade is concentrated on a certain group of countries, import includes commodities, which can be produced in Armenia. The import-export ratio regulation continues to stay as an important problem for the country, which can be regulated by stimulating the export and reducing the import, by developing the import substituting products, by foreign private investment attraction or by the perfection of trade commodity and geographic structure.

The study of the external trade showed that export and import have the following provincial distribution: the biggest part of export and import is reparted to Yerevan, Syunik and Kotayk and after the border opening the role of Shirak province in external trade, will activate perceptibly. The production and treatment of pearlite may reach big sizes, which mean that Aragacaton province will also activate, as the main share of pearlite mines are situated in this province.

Analysis of the assessments given by the international organizations to Armenian economy (indices of economic liberalization, competitiveness, etc) show that our country can be considered as “mostly liberalized”. This means that external economic limitations are on an acceptable level and the country needs to improve the state of trade not by removing the limitations, but by finding more optimal ways such as trade diversification. Thus it is more reasonable to fulfill export stimulating policy. For this reason the government must suggest tax, credit and insurance privileges to the firms which

produce for export, must reduce the export of raw materials and substitute them with the export of finished goods. RA also needs to form special branch agencies, which will support the export and will realize international marketing studies. International market information service formation will also have a big meaning. In the export structure of RA it is necessary to substitute the recourse-demanding and low technological commodity export with the middle and high technological commodity production and export. Armenia doesn`t have a big amount of resources thus for the further stable economic growth it is necessary to insure the economic development not by the quantitative, but by the qualitative expansion of resources. This aim can be reached only by the production of high technological goods. In order to make the influence of import on the economic growth more positive it`s necessary to enlarge the import of those industrial equipment and industrial raw materials, which can`t be produced in our country, because of climatic conditions or other reasons.

The studies show that Armenia exports to Turkey mostly leather and leather material, copper and items made of it, alumina and items made of it, black iron, wood and wooden items, coal, books, newspapers, publishing products. Armenia and Turkey perform trade relations, which in general are not regulated or managed in the state level. It leads to a raw of negative social-economic consequences, especially for Armenia which is an emerging economy. At the same time the facts show that the two countries have spheres, recourses and sectors of trade-economic relations, which are of great interest for the both sides.

The analysis of Turkish external trade system show that commodity structure of Armenian export to Turkey can be expanded, especially by the export of machinery (machines, equipments, transportation means, iron, etc) and chemical industry (plastic, organic and non-organic chemical combinations, chemical goods, etc). This greatly depends on the reanimation and development of the mentioned two spheres, taking into consideration the interest of Russia to these spheres.

As for the dozens of importing commodity groups, it`s possible

and reasonable to reduce it greatly, as Armenia is able to produce a number of those goods. These are particularly, dairy products, bird eggs, organic honey, vegetables, alcoholic and non alcoholic beverages, vinegar, meat, sweets, shoes, etc. In the nearest future the import of other goods might be limited or reduced too, as a result of economic activation of RA. The development and expansion of import substituting production can contribute to the regulation of trade balance, by means of import reduction and export volume expansion.

For the development of Armenian-Turkish trade-economic relations it is necessary to perform a number of economic activities. First of all we need to perform a correct and balanced customs policy. It will allow to stimulate the export/import of necessary goods or raw materials, and to limit or to stop the export/import of other goods or raw materials. The problems of internal market protection, formation and development of import substituting products must be basically considered. On the other side the import of those products and recourses, which are beneficial for the country, must be supported and stimulated by the government. As for customs regulation instruments both tariff (tax) and non-tariff (quantitative limitations, licenses, etc) methods can be used.

The correct performance of the external trade policy demands to fix all the trade-economic conditions, forms and possibilities by trade-economic agreements, as it is performed in the relations of Armenia and Russia, Armenia and Iran and in all cases of other bilateral economic cooperation.

The meeting of Armenian and Turkish businessmen should be organized more frequently and a clear economic cooperation program should be worked out by the active participation of the businessmen of both sides. An information base should be formed in accordance with the development of two countries' economies, market and price changes. Sales-exhibitions must be held periodically, which will give a complete idea of commodity structure, quality and prices. In the process of economic relations it is necessary to perform marketing and advertisement activities. Within the automobile and air cargo, the former railway between the two countries should also reopen and the

Black Sea cargo ways should be widely used. As the analysis showed by GDP growth Turkey is one of the most quickly developing countries in the world, but in 2009 the economy was hit by the financial crisis. The analysis of Turkish economic structure allowed us to reveal the spheres of great interest. Those are especially the tourism sphere, which has developed very rapidly during the last 20 years, the agriculture, banking system, construction, electronics, textile production, food industry, chemical industry, etc. Turkey also has a big and developing engineering industry. However, the analyses also made obvious Turkey`s dependence on the industries of the main big countries, which are mainly situated in the western states of the country.

Coming to Turkey`s external trade we need to mention, that during the last 10 years the gross volume of trade has increased rapidly. The growth has been registered both in export and import, but the trade balance continues to stay negative. On the other hand we found out the growth of the trade hasn`t been distributed evenly among the leading trade partners.

Turkey's number one trade partner is Germany. But if among the exporting partners Germany is able to keep its leading position, then Russia has become number one importing partner during the last years. This witnesses that Turkey`s external trade structure has changed essentially, by expanding the geographic distribution of export and import. In the geographic structure of export the most essential change is the significant reduction of Middle East countries` and the rise of EU countries' role.

The evaluation of Turkey`s role in world trade allowed us to draw out that Turkey`s share in world`s gross commodity turnover, as well as export and import, is not big. But in the Middle East region Turkey takes the role of the leader. In the case of service export Turkey also has a perceptible position. Among Armenia`s neighbor countries no doubt Turkey also gets the role of the leader, exceeding the second leading country's Iran`s turnover almost twice. At the same time Turkey gets the 60% of Armenia`s neighbor countries gross turnover, in the case when Armenia is on the last place.

The determination of the manufacturing sectors that would benefit or suffer when Turkey opens the borders has to do with the widely used method of Revealed Comparative Advantage (RCA). For example, Turkey has high positive RCA in 22 numbers, while Armenia has in 7 branches. In the case of border opening Turkey gets the opportunity to import those commodities to Armenia. This can be considered a positive thing for Armenia in the case if Armenia doesn`t have the possibility to produce those goods in inner market and is importing them anyways. If those goods are produced in Armenia, but not in the quantity which can make the bases for expanded export possibilities, then the import from Turkey can bring to the reduction of Armenian producer`s competitiveness and in some cases even to their bankruptcy. Such sphere is especially the cigarette production, where RA has a negative RCA, and Turkey has a positive one, in the case when Armenia has a rapidly developing production of cigarette.

During the analysis we have also revealed the possibilities of intra-industry trade, using the methodology of economists A. Arnon and A. Spivak. The ranking of Armenian and Turkish import and export showed that the two countries have matches of about 30% of the exported and imported goods. This witnesses that in the case of Armenia there could be two sources of intra-industry trade. One possible source of intra-industry trade is product differentiation: exporting the goods of those branches where the both of the countries have export possibilities. Another source of intra-industry trade is geographic location: Turkey might have comparative advantage in the certain production, but because Armenia is closer to Turkey's eastern provinces, Armenia might be able to export it to the eastern provinces of Turkey.

The analysis of Turkish-Armenian export and import commodity structure showed though both of the countries have export comparative advantages, the consequences of direct trade between the countries cannot be determined as totally positive or negative. It is clear that after the border opening some of the industrial sectors of Armenia will benefit and some of them will suffer. In the same time

the sectors which will benefit can make up the losses of the other ones and as a result, in general, the whole economy will benefit. Though the border opening with Turkey is being delayed the trade relations with this country are developing and the only party that suffers in the result is the Armenian consumer. Thus for the regulation of the relations with Turkey, for the diversification of trade (especially export) commodity structure and for the total usage of Armenian comparative advantages we suggest to form a "Temporary Intergovernmental Committee of Armenian-Turkish External Trade", which will systematize the external trade processes by putting them on complementary bases.

Our analysis showed that the productivity of industrial sectors in Turkey is higher than in Armenia. But in the cases of certain goods Armenia can compete with Turkey, as the wages in Armenia are lower. So the economic purpose of Armenia should be the rise of productivity within the increase of the wages by attracting big investments in certain sectors (education, communication, financial institutions). The active participation in the Black Sea Economic Cooperation (BSEC) can play an important role for deepening the economic relations, as Turkey is the origin country of the above mentioned integration cooperation. Moreover, as BSEC has an International Center of Studies, the fundamental scientific and applied researches of which can be also used in production, it can become a powerful instrument for the rapid and effective development of Armenia`s scientific and technical potential.

While paying attention on the macroeconomic indicators of Turkey, one can notice that it has a dynamic economic growth, and as for economic potential it is developing in the conditions of financial system stability and strict exchange rate policy. Though the economic crises of 2008 hit the Turkish economy significantly, but in 2010 the conditions stabilized much: Turkey become the 18th country in the world by GDP annual growth counted in basic prices and national currency rates. By the way economists predict a 4.6% GDP growth in Turkey for 2011. The fact that before the crisis Armenia was in the same level with Turkey by the economic growth rates and during the

years of crisis Turkey perceptibly surpasses Armenian growth, shows not only the healthy situation of Turkish economy, but also evidences the lack of economic interdependence between the two countries. The experience shows that the high rates of inflation are particular for the developing countries. This is one of the main problems for Armenian and Turkish economies too. In spite of inflation rate slowdown, it remains on a sufficiently high level compared with the average European countries` inflation level (can be compared only with the inflation level in Hungary, Latvia and Slovakia). If we take into account that average inflation rate in EU countries fluctuates in the limits of 1.5-2% during the last years, then in the case of Turkey`s membership to EU the inflation will increase and will demand more efforts in order to correct the situation and to reduce the inflation. In the case when the membership of Turkey doesn`t become a reality in the short-run and Turkey defeats the high level of inflation, then the membership with lower inflation rates will ensure a stable development for Turkey.

The biggest share of Turkish foreign investments goes to EU countries because of the processes of EU integration. Though after 2004 the capital flows of EU were mostly oriented towards the new member countries, but the origin countries still hold the perceptible part of the investments. Unlike Turkey, the role of EU countries in geographic structure of Armenian foreign investments is not that significant and is incomparable with the situation developed in Turkey. In these conditions Armenia and Turkey must perform all necessary activates in order to attract foreign investments from EU, which in its turn shows the importance of such factors as stability, low taxes, free competition, formation of free economic zones.

The lack of free competition and the impossibility of total privatization of big factories and consumer nets are the main obstacles of business development in Turkey. As the main characteristic of Turkish private sector can be considered the decisive role of the state during the business activity direction decision making process. In Armenia the lack of free competition can also be considered as an obstacle for business development, but it is not

connected with the impossibility of total privatization of big factories. It is connected with the centralization of productive power and economy in the conditions of oligarchy. The both of the cases contradict with the principles of business which are acceptable in EU. Even though the problems are different, still the identity of the aim can serve as a base for the cooperation between the countries.

Turkey`s GDP per capita is almost comparable with the same indicator of EU countries, but still it remains lower than in all European countries, which is connected with the relatively big amount of population. In Armenia mentioned indicator stays two times lower than in Turkey, and is not comparable with EU countries at all.

During the last two years of crisis the unemployment level of both Armenia and Turkey extremely increased, which was connected with the fact that many branches of the economy had suffered seriously. This problem is disturbing the EU countries as the Turkish labor force is trying to occupy the European labor market. For the solution of this problem perceptible investments are needed for the creation of new working places.

From the point of European integration processes it is interesting to study the external trade of Turkey and Armenia with the EU countries. The study showed that Turkey has obviously improved its indicators, but it is not enough for the performance of high level of integration. During the process of EU membership the Central and Eastern Europe (CEE) countries increased the level of their external trade integration to 60% and over, which can be considered as a threshold indicator for the decision of the integration level. From this point in 2005 Turkey had obviously approached the mentioned level, as the 55% of the external trade was connected with EU. In 2005 Armenia also registered its highest coefficient of 2000-2010 which made 38%.

We cannot deny that as opposed to Armenia, for the improvement of economic conditions Turkey has made a lot more efforts and succeeded greatly. As a result Turkey`s economy now is more powerful, than the economies of many new EU members, such as Bulgaria, Romania, Estonia, Latvia, Latvia. This confirms the

existence of Turkish economic potential. Thus, at the later date it will be hard for the EU Commission to find any disadvantages of qualitative and quantitative structure of Turkish economy. We also need to note that during the last two years Turkey didn`t try to meet all the requirements of the Europeans quickly and unconditionally. It tries to develop on its own rates without fastening the events artificially. Those requirements mostly concern to the Copenhagen second economic requirements, which even in the opinion of the Europeans, can be met only in the middle-term, in the conditions of structural reforms and stabilizing policy. As a result many Turkish specialists come to the conclusion that if the problem was only an economic one then Turkey already could be an EU member.

If in the past the main articles of Turkish export were textile and apparel, black metals and foodstuff, then as a result of customs union formation with EU the machinery industry and high technologies showed a big growth both in production and export volumes. In the import structure of Turkey petroleum, plastic and wooden items, knitted fabric, black metals, electronic mechanisms and equipments, alumina and dyestuff have a big unit weight. In the point of import from Armenia fish stuff and ores are of a big interest for Turkey.

There is an information, that Yerevan and Ankara are negotiating about the export of flour and cement from Armenia to Turkey, as well as it is expected that Armenia will deliver to Turkey 1.5 billion kv/h electricity. The economy of scale for Armenian producers will make a possibility of intra-industry trade of technically industrial goods. Investments in the Armenian-Turkish joint custodies will be a serious help for granting the economy of scale. Moreover, the amount of the similarities in export and import shows that the trade liberalization didn`t bring to trade diversion, while the trade creation will take place after the border opening with its outgoing positive effects. But there are a lot of steps to undertake before the border opening. If Armenia and Turkey really want to gain benefits from their mutual trade potential, first of all they need to undertake steps which are above the trade relations, but which will contribute the friendship of the two countries. This includes such actions as the

adoption of interrelation system in the sphere of energetic for the export of electricity, performance of joint efforts for the conservation of environment, the fulfillment of programs for the safety of historical monuments, etc. In this case the economic benefits and losses of Armenia will greatly depend on the further economic development rates and the availibility of competitive advantages of some goods, before the border opening. This is only possible by means of correct estimation of Armenian economic potential and development of the branches, which have competitive advantages.

Though the closed border and the lack of all kind of relations became an undefeatable obstacle for the development of trade relations between the two countries, however, the absence of diplomatic relation made the traders and businessmen to become the only connecting path between the two countries, and by time their activities started to cover many other spheres. In fact the closed border has some kind of conditional charachter as it just makes us to change the directions of trade flows and perform the trade by the territory of Georgia and Iran (the volume of trade realized by the terretory of Iran has a little volume in the gross trade of Armenia). The indirect trade continues to grow, though it increases the expenditures.

Because of its monopolistic status Georgia charges big amounts of money from Armenian importers and exporters both in formal and informal ways. The high trade expenditures in their turn are considered as obsticales for the developments of RA external trade. The analysis show that transportation fees make the Ω of Armenian import and export nominal value. This is one of the highest rates in the world, which puts Armenia and Mongolia on the same level, even though the distance of Mongolia from the closest bank is 10 times more than Armenia`s. Thus for Armenia it is an important problem to review the trade cooperation agreements with Georgia in order to weaken the transportation fee`s destroying effect on the competitiveness of domestic goods. Moreover, it is necessary to work out new approaches of effective utilization of the roads we have with Iran. On the same time the government one more time needs to reveal the spheres, which ensure a big value/volume ratio and

contribute the formation and export possibility enlargement of those spheres by financing them.

Though Turkey leaves Armenia behind by its economic sizes perceptibly, but the reason of the unequal trade is not only the competitiveness of the economy, but also the essentially asymmetric trade policy which Turkey performs towards Armenia. In spite of estimated serious potential Turkey continues to hamper the entrance of Armenian goods to its market by means of customs policy. This is something that is never performed in Armenian market. Though both of the countries are WTO members, still the WTO standarts function in one country and don`t function in the other one. However Turkey is a member of European Customs Union and thus all imported industrial elements from the third countries are taxed on the bases of common external tax specified for European Community. As opposed, Armenia has an enough liberelized importing policy. The avarage of the import taxes of all goods is approximately 8.5%.

Thus, the comparation of the customs-tarrif conditions of the two countries, shows that the import policy of Armenia is much more liberalized and predictible. The task of the trade partnership negotiations with Turkey must be the smoothing of this inequity. This proccess must be started both in the frames of WTO and EU integration. This will give an opportunity to Armenia to adopt the most-favoured treatments for its economy or to neutralize the direct influence of non-tariff limitations performed by Turkey. Moreover, Armenia can regulate the problems in this sphere, by using non-tariff instruments and limitations of import.

The obstacles of trade are not only based on the closed borders. The lack of diplomatic relations makes the contribution of the businessmen in the cases of trade disputes impossible. Moreover, as long as there are no diplomatic relations between the two countries it is meaningless to talk about the legalization of trade-economic relations. Besides it is worth to mention, that negotiations about Armenian export to Turkey mainly include such commodities and services on which the label ‚made in Armenia‛ will not be visible. Such goods are electricity, flour, cement from which later will be

produced goods with Turkish labels.

In these conditions a clear potential of export to Turkey have such industrial Armenian giants (unfortunately ex giants) as Nairit or Vanadzor chemical factory. But the problem gets sharper as for a particular Armenian businessman it is difficult to orient correctly and to make sufficient decisions about the export potential of different spheres. Thus the government has to undertake clear steps for the utilization of the export potential, as well as it must work out mechanisms in order to fill-in the information lack in the frames of business. This will give an opportunity of taking into possesion modern demanded directions and will create serious prerequisites for the massive export of those goods to Turkey. In this case, the fact that Turkish business frames and the eastern urban governments are eager to cooperate with Armenian partners, will be very useful. Thus the performance of joint marketing analysis, the organization of product exhibitions, the meetings of the businessmen of two countries, the mutual assignment of the information can bring to serious qualitative changes in Armenian-Turkish trade turnover. From this point a decisive importance gets the Representation of Armenian Industries and Businessmen established in Istanbul in 2009. The aim of this organization is to cooperate with the Turkish similar union, to become a linking chain between the Turkish and Armenian businessmen and to coordinate the development of mutual relations.

The analysis of Armenian and Turkish service sphere showed that the border opening will influence the mentioned sphere positivly, even though some losses connected with the competitivness of the Armenian firms are possible.

The analysis showed that the banking system of Armenia which occupies the 90% of the financial market, has a serious problems of efficiency. Indeed some of those problems come out of the economic situation of the country, but some of them can be solved in the case of existance of powerful and sufficient competitors. Thus in the case of Turkish-Armenian border opening the weaker banks of the banking system might be drawn out from the market and the stronger ones will have to use active mechanisms for increasing

the efficiency in order to stand the competition of Turkish banks. After mentioned changes the consumers will benefit unambiguously, as the banking rates will become lower as a result of sharp competition and the credit resources will become more accessible for wide layers of population. Though in Armenian market the presence of Turkish competitors will contribute the improvement of the competition, but we also have to take actions toward the improvement of local bank`s efficiency, in order to stand the Turkish competition.

The weak development level of insurance and stock markets of Armenia, is a negative phenomena itself. If in the case of border opening the Turkish developed insurance companies enter the Armenian market, it can be considered from a positive point of view, as the experience of more developed countries will be adopted by Armenian companies, which will contribute the further development. But on the other hand it can also have a negative influence, as the Armenian companies might be drawn out from the market. Thus we need a state active policy directed towards the insurance system development in order to avoid such situations. Nevertheless, the reopening of Armenian-Turkish border and the insurance of regional stable economic development may greatly contribute the investment growth and the development of Armenian stock market. We must also undertake some steps towards the development of adequate infrastructure of the stock market and towards the formation of favorable conditions.

In Turkey the internet services exceed the similar services of Armenia quality, but they cost cheaper. Thus the border opening will give an opportunity of cheap and qualitative internet service import, which will contribute the development of information technology sphere. On the same time in the case of border opening Armenia will get a new consumption market for the realization of information technologies.

In the case of border reopening new opportunities of cargo will be formed for the transfer of commodities to Turkey, Europe or other countries, as instead of Black Sea ports the Mediterranean ports can be used. In the ports of the Mediterranean the competition is stronger,

thus the tariffs are lower and the services are realized more frequently. If the border is open, the international transfers to non CIS countries and even to Eastern Asia will pass through Turkish ports, which are closer to world transportation ways. In the expenditure structure of export and import the unit weight of transportation fees makes the 20-25% of the cost price of the goods. After the border opening especially in the short-term (a year) a 4.1% transportation fee reduction is expected. It will bring to the increase of import by 4.7% and export by 5.9%. In the middle-term (up to 5 years) the export volumes to Turley will increase 17.4 times and the import volumes 2.3 times, compared with 2003.

Finally, the expenditures of Turkey made on development of researches, as well as the high level of science can make the economy of Turkey more efficient in the long-term. This fact points out the necessity of forming favorable conditions for the Armenian organizations for the development of scientific researches by investment growth. Particularly it is necessary to create a mechanism, which will help to pass the scientific results into the production process immediately. This can be realized by the means of some fund, which will be a linking chain between the investors and those who have a necessity of financial resources for the creation of scientific results. The influence of Armenian-Turkish border opening on the economic development of Armenia (in the given case on the service sphere), will have more positive, than negative effects, if some steps for the increase of competitiveness of different spheres are undertaken beforehand.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Համբարձումյանի

Հրատ. պատվեր № 366

Թուղթը՝ «օֆսեթ»: Չափսը՝ 60×84 1/16:

Ծավալը՝ 15 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում: